

ԾՈՆ ՊԻԿԻՐ

# ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Ապրիլ վիրաւորանքի

մահացու թակարդէն

ազատ

Թանկագի՛ն Շնկեր,

Այս ուղերձը շատ հնարաւոր է, որ դառնայ ամենակարեւոր առերեսումը ճշմարտութեան հետ, որ երբեք տեղի կ'ունենայ ձեր կեանքին մէջ: Ես վստահ եմ այս բանով, ոչ թէ որովհետեւ ես գրած եմ այս ուղերձը, այլ ստոր բովանդակութեան պատճառով: Այս ուղերձը երկիւնքէն է. անձամբ ես կը հաւատամ, որ միակ պատճառը, որ այս գիրքին վրայ գրուած է իմ անունը, այն է, որ ես առաջինն եմ, ով կարողացած է այն: Վիրաւորանքը, որ նոյն «Սատանայի խայծը» գիրքի թեման է, յաճախ ամենադժուար խոչընդոտներէն եւ ծուղակներէն մէկն է, որոնց մենք պետք է բախիւնք եւ յաղթահարենք:

Այս գիրքի լոյս տեսելուն անցած է տասը տարի, եւ ւաւելի, քան մէկ միլիոն օրինակ տպագրուած է ամբողջ աշխարհի տարածքին բազմաթիւ լեզուներով: Մենք ստացած ենք անթիւ վկայութիւններ ողջ աշխարհէն այն մասին, թէ ինչպէս այս ուղերձը հպած է մարդոց, ազատած է կապուածները եւ ուժ հաղորդած է շատերուն՝ ազատելու թշնամիի ճիրաններէն եւ ստանալու լաւագոյնը, որ Աստուած պատրաստած է իրենց համար:

Տերը պարզօրէն դրաւ իմ սրտին մէջ, ես պետք է հասցնեմ այս գիրքը ողջ աշխարհի տարածքին գտնուող հոգեւոր առաջնորդներուն եւ ապագայ առաջնորդներուն՝ որպէս իմ սիրոյ նշան, եւ որպէս գործիք, որուն միջոցով անոնք նոյնպէս կրնան օգնել ուրիշներուն բարձրանալ եւ ազատութիւն ստանալ:

Իմ Շնկեր, իմ կեանքը շրջադարձային կերպով փոխուեցաւ, երբ Աստուած տուաւ ինձի այս ուղերձը: Կ'աղօթեմ, որ ձեր կեանքը վերափոխուի, երբ բացայայտք այս գիրքին մէջ գտնուող ճշմարտութիւնները: Ես սիրով կը լսեմ ձեր վկայութիւնները այն մասին, թէ ինչպիսի ազդեցութիւն ձգեց այս ուղերձը ձեր եւ ձեր ծառայութեան մէջ գտնուող մարդոց կեանքերուն մէջ:

Ձեր եղբայրը Քրիստոսի մէջ,



Ճոն Պիվիո

[JohnBevere@gmail.com](mailto:JohnBevere@gmail.com)



**MESSENGER**  
INTERNATIONAL  
[MessengerInternational.org](http://MessengerInternational.org)

ԾՈՆ ՊԻՎԻՐ

ՍԱՏԱՆԱՅԻ  
ԽԱՅԾԸ

*Ապրիլ վիրաւորանքի*

*մահացու թակարդէն*

*ազատ*

The Bait of Satan by John Bevere, Western Armenian  
© 2020 Messenger International  
[www.MessengerInternational.org](http://www.MessengerInternational.org)  
Originally published in English as The Bait of Satan  
Additional resources in Western Armenian by John Bevere  
are available for free download at: [www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org)  
To contact the author: [JohnBevere@ymail.com](mailto:JohnBevere@ymail.com)

«Սատանայի խայծը», Ճոն Պիվիր, Արեւմտահայերէն  
© 2020 Messenger International  
[www.MessengerInternational.org](http://www.MessengerInternational.org)  
Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով,  
«The Bait of Satan» վերնագիրով  
Ճոն Պիվիրի այլ հեղինակային նիւթեր Արեւմտահայերէնով  
կրնաք անվճար ներբեռնել [www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org) կայքէն  
Հեղինակին հետ կապ հաստատելու համար. [JohnBevere@ymail.com](mailto:JohnBevere@ymail.com)





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<i>ՆԱԽԱԲԱՆ</i> .....	5
<i>ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ</i> .....	9
1. ՁԻՍ ՎԻՐԱԴՈՐԱԾ ԵՆ .....	15
2. ԶԱՆԳՈՒԲԱՅԻՆ ՎԻՐԱԴՈՐՈՒԾՈՒԹԻՒՆ .....	25
3. ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՐ ԱՍԻԿԱ ՀԵՏՍ ՊԱՏԱՀԻԼ .....	39
4. ՀԱՅՐ ԻՄ, ՀԱ՛ՅՐ ԻՄ .....	53
5. ԻՆՉՊԷՍ ՀՈԳԵՒՈՐ ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԾՆԻՆ .....	69
6. ՊԱՀՈՒԸՏԵԼՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ .....	85
7. ԱՄՈՒՐ ՀԻՄՔ .....	99
8. ԱՅՆ ԱՄԷՆԸ, ԻՆՉ ԿՐՆԱՅ ՇԱՐԺԻԼ, ԿԸ ՇԱՐԺԻ .....	115
9. ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՎԷՄԸ .....	135
10. ՅԱՆԿԱՐԾ ԶԳԱՅԹԱԿՂԵՑՆԵՆՔ .....	155
11. ԵԹԷ ՉՆԵՐԵՍ, ՉԵՍ ՆԵՐՈՒԻՐ .....	167
12. ՎՐԷԺՆՆԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԱԿԱՐԴ Է .....	183
13. ԱԶԱՏ ԹԱԿԱՐԴԷՆ .....	197
14. ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՆՊԱՏԱԿ .....	209
ՎԵՐԶԱԲԱՆ. <i>ԱՆՑՆԻԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ</i> .....	221

# ՆԱԽԱԲԱՆ

---

**Գ**իրքը, որ հիմա ձեր ձեռքն է, շատ հնարաւոր է, որ ձեզի համար դառնայ առճակատում այն ճշմարտութեան հետ, որուն դուք բախած էք կամ կը բախիք ձեր կեանքի ընթացքին:

Ասիկա կրնամ վստահութեամբ ըսել ոչ թէ այն պատճառով, որ ես գրած եմ այն, այլ անոր մէջ շօշափուող թեմային պատճառով: Վիրաւորանքի թեման, որ «Սատանայի խայծը» գիրքի հիմնական մասն է, յաճախ ամենադժուար խոչընդոտն է, որուն մարդը անպայման կը հանդիպի, եւ որ պէտք է յաղթահարել:

Յիսուսի աշակերտները ականատես եղան շատ հզօր եւ յիշարժան հրաշքներու. կոյրին աչքերը բացուեցան, եւ մեռածները յարութիւն առին, Յիսուսը հրամայեց կեանքին սպառնացող փոթորիկին, եւ այն հանդարտեցաւ: Աշակերտները տեսան, թէ ինչպէս հազարաւոր մարդիկ կշտացան քանի մը հացով եւ ծուկով:

Յիսուսի գործած հրաշքներն ու զարմանալի գործերը այնքան անսպառ էին, որ, համաձայն Աստուածաշունչին, աշխարհի գիրքերը ամբողջութեամբ չէին կրնար բովանդակել ատոնք: Նախկինին մարդ արարածը երբեք Աստուծոյ այդքան իրական եւ անթիւ հրաշագործութիւնները չէր տեսած: Աշակերտները ապշած եւ երկիւղած էին: Կասկածի պատճառը հրաշքները չէին: Ո՛չ, կասկածի այդ մարտահրաւերը պիտի գար աւելի ուշ՝ Յիսուսի երկրային ծառայութեան ամառոտի ժամանակ: Յիսուսը Իր աշակերտներուն սորվեցուցած էր. «Եթէ քու եղբայրը քեզի դէմ մեղանչէ... եթէ օրը եօթը անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթը անգամ քեզի դառնայ ու ըսէ՝ կ'ապաշխարեմ, ներէ՛ անոր»: Աշակերտները անմիջապէս արձագանգեցին Յիսուսին՝ ըսելով. «Մեր հաւատքը աւելցո՛ւր» (Ղուկ. 17.3-5): Հրաշքները անոր համար չէին, որ մարդիկ ձգտէին աւելի մեծ հաւատքի՝ մեռելներուն յարութիւն տալու կամ ծովը հանդարտեցնելու համար, այլ անոր համար, որ մարդիկ ներէին իրենց վիրաւորողներուն:

Յիսուսը ըսաւ. «Անկարելի է, որ գայթակղութիւններ (անգլերէնի մէջ՝ վիրաւորանքներ) չի գան» (Ղուկ. 17.1): Հոս խօսքը վիրաւորուած ըլլալու հնարաւորութեան ըլլալ-չըլլալու մասին չէ, այլ այն մասին, թէ ինչպիսին պիտի ըլլայ քու պատասխանը այդ վիրաւորանքներուն: Ցաւալի փաստ է, որ ոչ թէ ոմանք, այլ շատերը վիրաւորուած են եւ վիրաւորանքի գերի եղած: Արդէն տասը տարի է, ինչ այս գիրքը կեանքի կոչուած է: Այդ ժամանակահատուածին մէջ մենք ստացած ենք բազմաթիւ նամակներ ու վկայութիւններ անհատ մարդոց կեանքէն, ընտանիքներէն ու ծառայողներէն, որոնք բժշկուած եւ փոխուած են այս գիրքին մէջ տեղ գտած Աստուծոյ Խօսքի ճշմարտութիւններէն: Չեզ քաջալերելու համար մենք որոշ օրինակներ ներառած ենք այս գիրքին մէջ: Այդ բոլորին համար մենք կ'որախանանք եւ ողջ փառքը Աստուծոյ կու տանք:

Առաջնորդ մը կը վկայէր. «Մեր եկեղեցին պառակտման եզրին էր: Վիճակը անյոյս էր: Բոլոր աւագներուն տուի «Սատանայի խայծը» գիրքը: Պառակտումը կանխեցաւ, եւ այսօր մենք միաբան ենք»:

Շատ ամուսնություններ փրկուած են: Վերջերս, երբ կը քարոզէի Նեպրասքայի մէջ, քարոզէն յետոյ գոյգ մը մօտեցաւ ինծի: Կինը խոստովանեցաւ. «Տասը տարի առաջ ես վիրաւորուած էի այս եկեղեցւոյ աւագներէն: Մշտապէս պաշտպանելով անձս եւ իմ դիրքը՝ ես դարձած էի դառնացած ու կասկածամիտ: Իմ տառապանքէն կը տուժէր նաեւ իմ ամուսնութիւնը, եւ ամուսինս կը պատրաստուէր բաժնուիլ ինձմէ: Ան փրկուած չէր եւ չէր ուզեր եկեղեցւոյ հետ գործ ունենալ: Եկեղեցւոյ անդամներէն մէկը ինծի «Սատանայի խայծը» գիրքը տուաւ: Ես կարդացի եւ կարճ ժամանակ յետոյ ամբողջովին ազատագրուեցայ վիրաւորանքէն ու դառնութենէն: Երբ ամուսինս տեսաւ իմ մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները, ինքնակամ իր կեանքը յանձնեց Յիսուս Քրիստոսին եւ հրաժարեցաւ ամուսնալուծուելու գործընթացէն»: Ամուսինը կեցած էր կնոջ կողքին եւ կը ժպտար: Վկայութիւններէն մէկը ցնցեց զիս: Ֆլորիտայի Նեփլզ քաղաքին մէջ, քարոզէն առաջ ծանրամարմին մը՝ միջին տարիքի տղամարդ կեցած էր ժողովուրդին առջեւ, կու լար ու կը պատմէր իր ողբերգական պատմութիւնը. «Իմ ողջ կեանքի ընթացքին ես կը զգայի, որ պատնէշ կայ իմ եւ Աստուծոյ միջեւ: Ծառայութիւններու ժամանակ մարդիկ կը զգային Աստուծոյ ներկայութիւնը, իսկ ես մեկուսացած ու թմրած էի. ոչինչ կը զգայի: Նոյնիսկ աղօթելու ժամանակ ոչ մէկ թեթեւութիւն կը զգայի: Քանի մը շաբաթ առաջ իմ ձեռքը ինկաւ «Սատանայի խայծը» գիրքը: Ես մինչեւ վերջ կարդացի այն: Հասկցայ, որ տարիներ առաջ ես կլլած էի սատանային խայծը: Ես կ'ատէի իմ մայրը, քանի որ ան լքած էր զիս, երբ ես վեց ամսական էի: Հասկցայ, որ պէտք է անոր քով երթամ եւ ներեմ իրեն: Հեռաձայնեցի մօրս եւ երեսունվեց տարիներու ընթացքին երկրորդ անգամ ըլլալով խօսեցայ անոր հետ: Ես կու լայի եւ կ'ըսէի. «Մայրի՛կ, ես չէի կրնար ներել քեզի այն բանին համար, որ լքած էիր զիս»: Մայրս սկսաւ լալ եւ ըսաւ. «Որդի՛ս, ես երեսունվեց տարի շարունակ ատած եմ ինքզինքս՝ քեզ լքելուս համար»: Ես ներեցի մօրս, իսկ ան ալ ներեց ինքնիրեն: Այժմ մեր մէջ անհաշտութիւն չկայ: Ան շարունակեց. յետոյ այդ մարդը ըսաւ ամենակարեւորը. «Այժմ այն պատնէշը, որ



թոյլ չէր տար ինծի զգալ Աստուծոյ ներկայութիւնը, վերացած է»:

Աւարտելով իր պատմութիւնը՝ ան սկսաւ հեկեկալ: Ան կը պայքարէր այս վերջին բառերը արտաբերելու համար. «Հիմա ես Աստուծոյ ներկայութեան մէջ երեխայի պէս կու լամ»:

Ինծի ծանօթ են այդ գերութեան ուժն ու իրականութիւնը. տարիներ շարունակ ես եղած եմ այդ խայծի տանջանքի գերին:

Այս գիրքը տեսութիւն չէ, այն Աստուծոյ մարմին առած, ճշմարտութիւններով լեցուած Խօսքն է, ճշմարտութիւններ, որոնց միջոցով ես անձամբ անցած եմ: Ես կը հաւատամ, որ այն պիտի զօրացնէ քեզ: Երբ կարդաս, խնդրէ՛ Տիրոջմէն, որ աւելցնէ քու հաւատքը: Երբ դուն աճիս հաւատքի մէջ, Ան կը փառաւորուի, իսկ դուն կը լեցուիս ուրախութեամբ: Թո՛ղ Աստուած քեզ առատութեամբ օրհնէ:

– Ճոն Պիվիի

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

---

Եթե ոեւէ մէկը թակարդի օգնութեամբ կենդանիներ բռնած է, ապա գիտէ, որ յաջող որս ունենալու համար երկու բանի պէտք ունի: Թակարդը լարելու ժամանակ պէտք է այն խնամքով պահել եւ յուսալ, որ կենդանին պիտի սայթաքի: Բացի այդ, այն պէտք է գրաւիչ ըլլայ, որպէսզի կենդանին թակարդի մահացու ճիրաններուն մէջ նետէ:

Սատանան՝ մեր հոգիներու թշնամին, կը գործածէ այս երկու ռազմավարութիւնները, երբ կը դնէ իր խաբուսիկ եւ մահացու թակարդները: Ատոնք երկուքն ալ խնամքով պահուած են եւ խայթող:

Սատանան իր թիմակիցներուն հետ բացայայտ չի գործեր, որքան ալ որ այդպէս թուայ: Ան կը գործէ աննկատ եւ կը խաբէ հրապուրելով: Ան խորաթափանց է իր գործողութիւններուն մէջ, ճարպիկ է եւ խորամանկ: Մի՛ մոռնար, որ սատանան կրնայ քո-

ղարկուիլ որպէս լոյսի հրեշտակ: Եթէ Աստուծոյ Խօսքէն չենք սորված զանազանել բարին եւ չարը, մենք չենք ճանչնար անոր թակարդները: Եթէ մենք մարգուած չենք Աստուծոյ Խօսքով չարը բարիէն զանազանելու հարցին մէջ, ապա չենք գիտնար, թէ որոնք են անոր թակարդները, ինչպիսին ալ որ ատոնք ըլլան:

Սատանայի ամենախաբուսիկ եւ շատ վտանգաւոր խայծի տեսակներէն մէկը, որուն իւրաքանչիւր քրիստոնէայ բախած է, վիրաւորանքն է: Իրականութեան մէջ վիրաւորանքը ինքնին մահացու չէ, եթէ այն մնայ թակարդի մէջ: Բայց եթէ մենք փրցնենք այն, կլլենք եւ պահենք մեր սրտերուն մէջ, ատորմէ յետոյ կը դառնանք վիրաւորուած: Վիրաւորուած մարդոց սրտերը կը կոտորուին, եւ անոնք կ'ունենան բարկութեան, կատաղութեան, խանդի, զայրոյթի, կռուասիրութեան, դառնութեան, ատելութեան ու նախանձի պտուղներ: Վիրաւորուած ըլլալու հետեւանքներէն են անարգանքը, ուրիշներուն ցաւ պատճառելը, գրոհելը, բաժանումը, երկպառակութիւնը, փշրուած փոխյարաբերութիւնները, դաւաճանութիւնը, ուխտադրութիւնը ըլլալը, ուրանալը, անցեալով ապրիլը եւ այլն:

Յաճախ անոնք, որոնք վիրաւորուած են, նոյնիսկ չեն ալ պատկերացներ, որ թակարդի մէջ են: Անոնք չեն գիտակցիր իրենց իրական վիճակը, քանի որ չափազանց կեդրոնացած են այն սխալին վրայ, որ իրենց հանդէպ գործած են: Անոնք մերժուածութեան մէջ են: Մեզ կուրցնելու համար թշնամիի ամենաարդիւնատէտ ճանապարհը մեր ուշադրութիւնը մեր անձին վրայ կեդրոնացնելն է:

Այս գիրքը կը բացայայտէ մահացու թակարդը եւ ցոյց կու տայ, թէ ինչպէս խուսափիլ ատոր ճիրաններէն, ինչպէս ազատիլ թակարդի բռնակէն ու ազատ մնալ ծուղակէն: Վիրաւորանքէն ազատ ըլլալը քրիստոնէայի համար կարեւոր է, քանի որ Յիսուսը ըսաւ, որ այս կեանքին մէջ անհնար է ապրիլ եւ վիրաւորուած ըլլալու ոչ մէկ հնարաւորութիւն ունենալ (Ղուկ. 17.1):

Ուր որ ալ քարոզած են այս ուղերձը, ըլլայ ատիկա Ամերիկայի, թէ այլ երկիրներու եկեղեցիներուն մէջ, մարդոց մեծ մասը արծազանգած է ազատագրման կոչին: Չնայած որ ասիկա մեծ արծազանգ է, բայց տակաւին բոլորին կողմէն չէ: Հպարտութիւնը որոշ

մարդոց ետ կը պահէ այս կոչին արծազանգելէն: Ես տեսած եմ, թէ ինչպէս մարդիկ բժշկուած են, ազատագրուած են, լեցուած են Սուրբ Հոգիով եւ ստացած են իրենց աղօթքներու պատասխանները, երբ ազատած են թակարդէն: Սովորաբար անոնք կը վկայեն, որ այն, ինչ որ փնտռած են տարիներ շարունակ, ստացած են ազատագրուելէն յետոյ:

Քսաներորդ դարու վերջաւորութեան Աստուածային գիտութիւնը ակնյայտօրէն նկատելի է եկեղեցիին մէջ: Չնայած այս աճին՝ կը պարզուի, որ մենք հաւատացեալներու, աւագներու ու եկեղեցիներու մէջ աւելի յաճախ բաժանումներու ականատես կ'ըլլանք:

Պատճառը մէկն է՝ վիրաւորանքը, որ արագօրէն կ'աճի անկեղծ սիրոյ պակասէն: «Գիտութիւնը կը հպարտացնէ, բայց սէրը կը շինէ» (Ա. Կորնթ. 8.1): Այնքան շատ մարդիկ ինկած են այս խաբուսիկ թակարդին մէջ, որ մենք արդէն կը սկսինք համոզուիլ, որ ատիկա սովորական ապրելաոճ է:

Այնուամենայնիւ, մինչեւ Քրիստոսի վերադարձը, անկախ իրենց անցեալէն, ճշմարիտ հաւատացեալները միաբանած կ'ըլլան: Ես կը հաւատամ, որ այսօր բազմաթիւ մարդիկ կ'ազատագրուին վիրաւորանքի այս թակարդէն: Այդ ազատագրումն ալ կ'ըլլայ այս ազգը սրբացնող արթնութեան գլխաւոր օղակներէն մէկը: Անհաւատները Յիսուսը կը տեսնեն իրար նկատմամբ ունեցած մեր սիրոյ միջոցով, որուն բացակայութեան պատճառով ալ անոնք մինչեւ հիմա չեն տեսած Յիսուսը: Նախկինին անոնց աչքերը փակ էին Յիսուսին համար:

Ես չեմ կարծեր, որ գիրքը կը գրեն պարզապէս գրելու համար: Աստուած սրտիս մէջ բոցավառած էր այս ուղերձը, եւ ես տեսայ ատոր մնայուն պտուղները: Ծառայութենէ մը յետոյ, ուր այս ուղերձը կը քարոզէի, հովիւ մը ըսաւ ինձի. «Ես երբեք չեմ տեսած, որ մէկ անգամէն այդքան շատ մարդիկ ազատագրուին»:

Աստուած խօսած էր իմ սրտին, որ ասիկա դեռ միայն սկիզբն է: Շատերը, երբ կարդան այս գիրքը ու հնազանդին Հոգիի ուղղումներուն, կ'ազատագրուին, կը բժշկուին եւ կը վերականգնուին: Ես

Կը հաւատամ, որ երբ կարդաս այս գիրքի խօսքերը, Ուսուցիչն ու Խորհրդատուն ատոնք կիրառելի կը դարձնէ անձամբ քեզի համար: Երբ Ան գործէ, այդ բացայայտուած խօսքը քու կեանքին մէջ եւ ծառայութեան մէջ մեծ ազատութիւն կը բերէ:

Մինչեւ գիրքը կարդալը եկո՛ւր միասին աղօթենք.

*«Հայր, Յիսուսի անունով կը խնդրեմ Քեզի, որ այս գիրքը կարդալու ժամանակ Քու Հոգիով բացայայտես ինձի Քու խօսքը: Ցո՛յց տուր սրտիս ծածուկ տեղերը, որոնք խոչընդոտ հանդիսացած են՝ ետ պահելով զիս Քեզ ճանչնալէն եւ անմնացորդ ծառայելէն: Ես ուրախութեամբ կ'ընդունիմ Սուրբ Հոգիի յանդիմանութիւնը եւ կը խնդրեմ Քու շնորհքը՝ Քու կամքը կատարելու համար: Թո՛յլ տուր ինձի Քեզ աւելի մօտէն ճանչնալ եւ այս գիրքը կարդալու ժամանակ լսել Քու ծայնը»:*





# ՄԵՐ ԱՐՁԱԳԱՆԳԸ ՎԻՐԱԴՈՐԱՆՔԻՆ Կ'ՈՐՈՇԷ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

«Սատանայի խայծը» գիրքը փոխած է մեր կեանքն ու ծառայութիւնը: Տեսաժապաւէնը մենք դիտած ենք մօտ քսան անգամ եւ շարունակ կը կարդանք գիրքը: Մեր ծառայութիւնը այս գիրքն ու տեսաժապաւէնի ուսուցումները օգտագործած է ինչպէս մեր, այնպէս ալ ուրիշ շատ մարդոց կեանքերը փոխելու համար: Գիրքի պատգամը զօրաւոր է եւ ժամանակին համապատասխան»:

– Ս. Բ., ՔԸՆՆԵՔԹԻՔԸԹ

## ԶԻՍ ՎԻՐԱԿՈՐԱԾ ԵՆ

---

*«Անկարելի է, որ գայթակղություններ (անզլերէնի մէջ՝  
վիրաւորանքներ) չի գան»:*

– Դուկ. 17.1

Ըլլալով ծառայութեան մէջ՝ Միացեալ Նահանգներու մէջ ճանապարհորդելու ընթացքին ես կրցած եմ հանգամանօրէն ուսումնասիրել թշնամիի ամենամահացու եւ խաբուսիկ թակարդներէն մէկը: Այն կը կապէ բազմաթիւ քրիստոնէաներ, կը խզէ մարդոց փոխյարաբերութիւնները եւ կը մեծցնէ անոնց միջեւ գոյութիւն ունեցող ձեղքերը: Խօսքը վիրաւորանքի թակարդի մասին է:

Շատերը իրենց կեանքին մէջ ստացած վիրաւորանքի, վէրքերու եւ վնասուածքներու պատճառով չեն կրնար լիարժէք գործել իրենց կոչումին մէջ: Անոնք կը դառնան հաշմանդամ, եւ խոչըն-

դոտները կը խանգարեն զանոնք ամբողջութեամբ օգտագործելու իրենց ներուժը: Շատ յաճախ անոնք կը վիրաւորուին հաւատա-  
ցեալ մարդէն: Սաղմոս 55.12-14-ին մէջ Ղաւիթը կ'ողբայ.

«Որովհետեւ, եթէ թշնամին ինծի նախատինք տար, կը համ-  
բերէի, եւ եթէ զիս ատողը պարծենար իմ վրաս, կը պահուըտէի  
անորմէ: Բայց դուն ինծի հաւասար մարդ ես՝ իմ սրտակիցը եւ իմ  
բարեկամը: Որ մենք իրար հետ քաղցրութիւնով խորհուրդ կ'ը-  
նէինք եւ Աստուծոյ տունը կ'երթայինք ամբոխի հետ»:

Ատոնք այն մարդիկն են, որոնց կողքին մենք կը նստինք, միա-  
սին կը փառաբանենք, կամ ալ հաւանաբար ան է, որ կը քարոզէ:  
Մենք անոնց հետ կ'անցընենք մեր արծակուրդները, կը մասնակ-  
ցինք հասարակական միջոցառումներու եւ կը համագործակցինք:  
Թերեւս ատոնք այն մարդիկն են, որոնց հետ աւելի մտերիմ փոխ-  
յարաբերութիւններու մէջ ենք. մեծցած ենք միասին, կը վստա-  
հինք իրար եւ կ'ապրինք նոյն յարկին տակ: Որքան սերտ է փոխ-  
յարաբերութիւնը, այնքան աւելի մեծ ու ցաւոտ է վիրաւորանքը:  
Ամենամեծ ատելութիւնը դուն կը գտնես այն մարդոց փոխյարա-  
բերութիւններուն մէջ, որոնք ինչ որ ժամանակ մտերիմ եղած են:

Փաստաբանները քեզի կը պատմեն շատ ցաւալի եւ դաժան  
պատմութիւններ, որոնք տեղի կ'ունենան ամուսնալուծութիւննե-  
րու ժամանակ: Ամերիկեան լրատուամիջոցները մշտապէս կը տե-  
ղեկացնեն ընտանիքներուն մէջ կատարուած սպանութիւններու  
մասին, որոնք տեղի ունեցած են ընտանիքի յուսահատ անդամնե-  
րու ձեռքով: Ընտանիքը պէտք է ըլլայ պաշտպանութեան, ապա-  
հովութեան եւ հասունացման ապաստան, ուր կը սորվինք սիրել  
ու սիրուիլ, բայց յաճախ այն կը դառնայ մեր ցաւի ամենախորունկ  
արմատը: Պատմութիւնը ցոյց կու տայ, որ ամենաարիւնոտ պա-  
տերազմները քաղաքացիական պատերազմներն են, երբ եղբայրը  
դուրս կ'ելլէ եղբօր դէմ, որդին՝ հօր, հայրը՝ որդիին:

Վիրաւորուած ըլլալու հնարաւորութիւնները նոյնքան շատ են,  
որքան փոխյարաբերութիւնները, նշանակութիւն չունի, թէ որքան  
մեծ կամ փոքր է վիրաւորանքը: Եւ ճշմարտութիւնը այն է, որ քեզ  
կրնան վիրաւորել միայն անոնք, որոնք կարելոր են քեզի համար:  
Շատ բան կը սպասես միայն անոնցմէ, որոնց շատ նուիրուած ես:

Որքան մեծ են ակնկալիքները, այնքան մեծ է հիասթափությունը:

Մեր հասարակութեան մէջ կ'իշխէ եսասիրութիւնը: Այսօր մարդիկ զգուշաւոր դարձած են, քանի որ կը վախնան իրենց շրջապատողներու արհամարհանքէն եւ վիրաւորանքէն: Եւ ասիկա բոլորովին ալ պէտք չէ զարմացնէ մեզ: Աստուածաշունչը շատ յստակ կ'ըսէ, որ վերջին օրերուն մարդիկ կ'ըլլան «անծնասէր» (Բ. Տիմոթ. 3.2): Ասիկա մենք կը վերագրենք անհաւատներուն, բայց Պօղոսը չի դիմեր անոնց, որոնք եկեղեցիէն դուրս են: Պօղոսը նկատի ունէր անոնց, որոնք եկեղեցւոյ մէջ էին: Եկեղեցւոյ մէջ շատերը խոցուած, վիրաւորուած ու դառնացած են: Անոնք գայթակղած են, սակայն չեն գիտակցիր, որ ինկած են սատանայի թակարդին մէջ:

Արդեօ՞ք ասիկա մեր սխալն է: Յիսուսը շատ պարզ ըսաւ, որ անկարելի է ապրիլ այս աշխարհին մէջ եւ չվիրաւորուիլ ու չգայթակղիլ: Մինչդէռ շատ հաւատացեալներ կը ցնցուին, կը շփոթին ու կը զարմանան, երբ ատիկա տեղի կ'ունենայ: Մենք կը կարծենք, որ մենք միակն ենք, որուն հանդէպ սխալ վարուած են: Նման արծագանգի պատճառով դառնութիւնը կ'արմատաւորուի մեր ներսը: Ահա թէ ինչու մենք պէտք է պատրաստ ու զինուած ըլլանք վիրաւորանք չընդունելու համար, որովհետեւ մեր արծագանգը կ'որոշէ մեր ապագան:

## ԽԱՐՈՒՄԻԿ ԹԱԿԱՐԴԸ

Ղուկաս 17.1-ին մէջ օգտագործուած «վիրաւորանք» (հայերէն Աստուածաշունչին մէջ՝ «գայթակղութիւն») բառը կու գայ յունարէն «skandalon» (սքանտալոն) բառէն: Այս բառով սկիզբը կ'անուանէին թակարդի այն մասը, որուն վրայ կ'ամրացուէր խայծը: Հետեւաբար բառին իմաստը հետեւեալն է՝ «թակարդ դնել ինչ որ մէկու մը ճամբուն վրայ»: Նոր կտակարանին մէջ յաճախ այս բառով կը նկարագրուի թշնամիին կողմէն օգտագործուած ծուղակը: Վիրաւորանքը սատանայի գործիքներէն մէկն է, որուն միջոցով ան մարդոց դիրութեամբ գերութեան կը տանի: Պօղոսը կը սորվեցնէր երիտասարդ Տիմոթէոսին.



«Բայց Տիրոջ ծառային պէտք չէ կռիւ ընել, այլ ամէնուն հետ հեգահողի ըլլալ, սորվեցնող, դիւ չպահող, հակառակողներուն հանդարտութեամբ խրատել. թերեւս Աստուած անոնց ապաշխարութիւն տայ ճշմարտութիւնը գիտնալու համար: Եւ սատանային որոգայթէն զգաստանալու (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ ազատուելու), որմէ անոնք որսուած (բռնուած) են անոր կամքին ծառայելու համար»:

– Բ. Տիմոթ. 2.24- 26

Անոնք, որոնք կռուի ու հակառակութեան մէջ են, կ'իյնան թակարդի մէջ եւ կը դառնան բանտարկեալ՝ կատարելով սատանային կամքը: Շատ անգամ տագնապեցնող է այն, որ անոնք տեղեակ ալ չեն իրենց գերութեան մասին: Անառակ որդիին պէս անոնք պէտք է իրենք իրենց գալով հասկնան իրենց իրական վիճակը: Անոնք չեն պատկերացներ, որ իրենցմէ անելի շատ լեղի ջուր դուրս կ'ելլէ, քան մաքուր: Երբ մարդը խաբուած է, ան կը կարծէ, որ ինքը ճիշդ է, չնայած որ սխալ է:

Նշանակութիւն չունի, թէ ինչպիսիւն է սենարիօն (բեմագրութիւնը). բոլոր վիրաւորուածները կրնանք բաժնել երկու հիմնական խումբի՝ մարդիկ, որոնց նկատմամբ անարդար վարուած են, եւ մարդիկ, որոնք կը կարծեն, որ իրենց հետ անարդար վարուած են: Երկրորդ խումբի մարդիկ իրենց ողջ սրտով կը հաւատան, որ իրենց հանդէպ սխալ վարուած են: Անոնք յաճախ եզրակացութիւններ կ'ընեն ոչ ճշգրիտ տեղեկութիւններէն, կամ ալ անոնց տեղեկութիւնները ճիշդ են, բայց եզրակացութիւնը աղաւաղուած է: Ինչ որ է, այդպիսի մարդիկ խոցուած են, իսկ անոնց հասկացողութիւնը՝ մթազնաւ: Անոնք կը դատեն ենթադրութենէն, երեւոյթէն եւ բամբասանքներէն մեկնած:

### ՍՐՏԻ ԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Կայ ճանապարհ մը, որուն միջոցով թշնամին մարդը կը պահէ վիրաւորուած վիճակի մէջ: Ան վիրաւորանքը կը պահէ՝ ծածկելով զայն հպարտութեամբ: Հպարտութիւնը քեզ չի ձգեր, որ քու իրական վիճակդ խոստովանիս:

Անգամ մը եկեղեցւոյ մէջ ծառայող զոյգ մը խիստ վիրաւորած էր զիս: Մարդիկ ինծի կ'ըսէին. «Չենք կրնար հաւատալ, որ անոնք կրնային այդպէս վարուիլ քեզի հետ: Դուն վիրաւորուած չե՞ս»:

Ես անմիջապէս կը պատասխանէի. «Ո՛չ, ամէն բան հրաշալի է: Ես վիրաւորուած չեմ»: Ես գիտէի, որ վիրաւորուած ըլլալը սխալ բան է, ատոր համար ալ ժխտելով կը պահէի վիրաւորանքս: Ես կը համոզէի ինքզինքս, որ վիրաւորուած չեմ, բայց իրականութեան մէջ վիրաւորուած էի: Հպարտութիւնը ծածկած էր իմ սրտի իրական վիճակը:

Հպարտութիւնը քեզ ետ կը պահէ ճշմարտութենէն: Այն կը խեղաթիւրէ քու տեսիլքը: Երբ կը կարծես, որ ամէն բան հրաշալի է, դուն երբեք չես փոխուիր: Հպարտութիւնը կը կարծրացնէ քու սիրտը եւ կը մթագնէ հասկացողութիւնդ: Այն քեզ ետ կը պահէ սրտի փոփոխութենէն՝ ապաշխարութենէն: Միայն ապաշխարութիւնն է, որ քեզ կրնայ ազատել (տե՛ս Բ. Տիմոթ. 2.24-26):

Հպարտութիւնը կը ստիպէ, որ դուն քեզի նայիս որպէս զոհ: Դուն կը սկսիս մտածել այսպէս. «հետս սխալ վարուած են, իմ մասին սխալ կարծիք ունին, հետեւաբար ես արդարացի եմ իմ վարմունքին մէջ»: Քանի որ դուն կը կարծես, թէ անմեղ ես, ու քու դէմ սուտ մեղադրանք կը ներկայացնեն, չես ներեր: Չնայած որ քու սրտի իրական վիճակը ծածկուած է քեզմէ, այն Աստուծմէ ծածկուած չէ:

Եթէ նոյնիսկ քու նկատմամբ սխալ վարուած են, ատիկա քեզի իրաւունք չի տար, որ վիրաւորանքին գերի ըլլաս: Սխալին գումարած (առաւել) սխալ մը եւս, հաւասար չէ ճշմարտութեան:

## ԲՈՒԺՈՒՄԸ

Յայտնութեան գիրքին մէջ Յիսուսը, դիմելով Լաւոդիկէի եկեղեցիին, նախ կ'ըսէ, թէ ինչպէս անոնք իրենք զիրենք այդքան հարուստ, մեծցած եւ ոչ մէկ բանի կարիք ունեցող կը տեսնեն, իսկ յետոյ կը բացայայտէ անոնց սրտի իրական վիճակը՝ «թշուառ, ողորմելի, աղքատ, կոյր, մերկ» (Յայտն. 3.14-20): Անոնք սխալմամբ կը կարծէին, որ եթէ նիւթապէս զօրաւոր են, հոգեւոր առու-

մով ալ զօրաւոր են: Հպարտութիւնը թոյլ չէր տար անոնց տեսնելու իրենց իրական վիճակը:

Շատերը այսօր այս ընթացքին մէջ են: Անոնք չեն տեսներ իրենց սրտի իրական վիճակը, ինչպէս որ ես ալ չէի կրնար տեսնել այդ ծառայողներու հանդէպ ունեցած իմ գայրոյթը: Ես ինծի համոզած էի, որ վիրաւորուած չեմ: Յիսուսը լաւողիկեցիներուն խորհուրդ տուաւ, թէ ինչպէս կրնան դուրս ելլել ինքնախաբէութենէն. գնել Աստուծոյ ոսկին եւ տեսնել իրենց սրտի իրական վիճակը:

### ***Գնէ՛ Աստուծոյ ոսկին***

Ինքնախաբէութենէն ազատուելու համար Յիսուսի առաջին հրահանգը ասիկա էր. «Ինծմէ կրակին մէջ փորձուած ոսկի ծախու առ» (Յայտն. 3.18):

Ձտուած ոսկին փափուկ է ու դիւրութեամբ ծռող, այն իր մէջ չի պարունակեր ժանգ կամ այլ նիւթեր: Ահա թէ ինչու, երբ ոսկին կը խառնուի ուրիշ մետաղներու հետ (պղինձի, երկաթի, նիքելի եւ այլն), կը դառնայ ծանր, չծռող եւ շուտ ժանգոտող: Այդ խառնուրդը կը կոչուի համաձուլուածք: Ոսկիին մէջ որքան բարձր է այլ մետաղներու պարունակութեան տոկոսը, այնքան այն ծանր է, եւ հակառակը:

Մենք կրնանք անմիջապէս զուգահեռներ անցընել. «Մաքուր սիրտը նման է մաքուր ոսկիին. այն փափուկ է, նուրբ ու դիւրութեամբ խոնարհուող»: Եբրայեցիս 3.13-ը կը հաստատէ, որ սիրտը կը խստանայ մեղքի խաբէութեան պատճառով: Եթէ մենք չենք լուծեր վիրաւորանքի հարցերը, անկէ կը յառաջանան մեղքի այնպիսի պտուղներ, ինչպիսիք են դառնութիւնը, բարկութիւնը եւ գայրոյթը: Այդ ամէնը կը խստացնեն մեր սրտերը այնպէս, ինչպէս որ այլ մետաղները կը կարծրացնեն ոսկին: Այդ «համաձուլուածքը» կը նուազեցնէ կամ կը հեռացնէ մեր սրտի փափկութիւնը՝ առաջ բերելով նրբագացութեան կորուստ: Այսպիսով մենք կը կորսնցնենք Աստուծոյ ծայնը լսելու մեր ընդունակութիւնը: Մեր ճիշդ տեսնելու կարողութիւնը կը սկսի մթազնիլ: Եւ ասիկա կը ստեղծէ խաբէութեան համար նպաստաւոր միջավայր:

Ոսկին գտելու առաջին քայլը գայն փոշիի վերածելն է եւ ատոր

Ֆլուս (flux) (օքսիդահալիչ, թթուիտ, հոսող նիւթ) խառնելը: Անկէ յետոյ խառնուողը կը տեղադրեն հնոցի մէջ եւ բարձր ջերմութեան տակ կը հալեցնեն: Ֆլուսը իր մէջ կը քաշէ անմաքուր բաները եւ ատոնք կը բարձրացնէ վեր: Ոսկին (որ աւելի ծանր է) կը մնայ յատակը: Անմաքուր բաները կամ ոչ պիտանի մասը (ֆլուսի հետ միացած պղինձը, երկաթը եւ գինկը) կը հեռանան, եւ վերջաւորութեան կը մնայ մաքուր մետաղը:

Այժմ տեսնենք, թէ Աստուած ինչ կ'ըսէ.

«Ահա Ես քեզ մաքրեցի (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ զտեցի) եւ ոչ թէ արծաթի կերպով, Ես քեզ փորձեցի նեղութեան հալոցին մէջ»:

– Եսայիա 48.10

Եւ կրկին.

«Որ անորմով կ'ուրախանաք, թէ եւ հիմա, ինչպէս որ հարկը կը պահանջէ, քիչ մը տրտմած էք կերպ-կերպ փորձանքներու մէջ: Որ ձեր հաւատքի փորձառութիւնը աւելի պատուական գտնուի, քան կորստեան ոսկին, որ կրակով կը փորձուի, զովութեան, պատիւի եւ փառքի համար Յիսուս Քրիստոսի յայտնութեան մէջ»:

– Ա. Պետր. 1.6,7

Աստուած մարդը կը մաքրէ տրտմութիւններու, փորձութիւններու եւ նեղութիւններու միջոցով, որոնց կրակը կ'առանձնացնէ անմաքուր բաները, օրինակ՝ չներելը, բախումները, դառնութիւնը, բարկութիւնը, նախանձը եւ այլն, ու մեր կեանքերուն մէջ կը ձեւաւորուի Աստուծոյ բնաւորութիւնը:

Մեղքը դիւրութեամբ կը պահուրտի հոն, ուր չկայ նեղութիւններու եւ փորձութիւններու կրակը: Նոյնիսկ չար մարդը բարգաւաճման եւ յաջողութեան ժամանակ բարի ու մեծահոգի կ'երեւի:

Իմ կեանքին մէջ կար ժամանակ մը, երբ ես կ'անցնէի այնպիսի ուժգին փորձութիւններու միջոցով, որոնց նախկինին երբեք չէի հանդիպած: Ես կոպիտ ու դաժան դարձած էի իմ ամենամտերիմ մարդոց հետ: Ինձմէ սկսած էին խուսափիլ իմ ընտանիքի անդամներն ու ընկերները:

Ես աղաղակեցի Աստուծոյ՝ ըսելով. «Ուրկէ՞ կու գայ այս ամբողջ բարկութիւնը. նախկինին ատիկա չկար»:

Տէրը պատասխանեց. «Որդի՛ս, երբ ոսկին կրակի մէջ կը վերածեն հեղուկի, այդ ժամանակ ի յայտ կու գայ անմաքուր բաները»: Յետոյ Տէրը ինծի հարցում մը հարցուց, որ իմ կեանքը փոխեց. «Կրնա՞ս մինչեւ կրակին մէջ նետելը ոսկիի մէջ տեսնել այդ անմաքուր բաները»: «Ո՛չ», - պատասխանեցի ես:

«Բայց ատիկա չի նշանակեր, որ ատոնք հոն չկան,- ըսաւ Ան,- երբ փորձութիւններու կրակը կը հարուածէ քեզ, ի յայտ կու գան այդ անմաքուր բաները: Թէեւ ատոնք ծածուկ են քեզի համար, բայց միշտ տեսանելի են Ինծի: Այնպէս որ, դուն հիմա ընտրութիւն ունիս, որ կ'որոշէ քու ապագան: Կրնաս կա՛մ բարկացած մնալ՝ շարունակելով մեղադրել կինդ, ընկերներդ, հովիւդ եւ քեզի հետ աշխատող մարդիկ, կա՛մ ալ տեսնել մեղքի անպիտան զանգուածը, ինչպէս որ այն կայ, եւ ապաշխարել, ներում ստանալ, իսկ ես ալ այդ ժամանակ կը վերցնեմ Իմ շերտերը եւ քու կեանքէն կը հեռացնեմ այդ անմաքուր բաները»:

### ***Տե՛ս քու իրական վիճակը***

Յիսուսը ըսաւ, որ խաբէութենէն ազատ ըլլալու բանալիներէն մէկը իրավիճակը ճիշդ տեսնելն է: Յաճախ, երբ մենք կը վիրաւորւինք, մենք մեզի կը նայինք որպէս գոհ եւ կը մեղադրենք անոնց, որոնք վիրաւորած են մեզ: Հազիւ ի յայտ գան մեր դառնութիւնը, չներումը, բարկութիւնը, նախանձն ու զայրոյթը, մենք կ'արդարացնենք մեզ: Երբեմն նոյնիսկ կը զայրանանք անոնց վրայ, որոնք մեզ կը յիշեցնեն մեզ վիրաւորողներուն մասին: Այդ պատճառով ալ Յիսուսը խորհուրդ կու տար. «Դեղ դիր աչքերուդ, որ տեսնես» (Յայտն. 3.18): Իսկ ի՞նչը տեսնես: Քու իրական վիճակը: Ահա ասիկա է միակ ճանապարհը, որուն միջոցով մենք կրնանք «ջանք ընել եւ ապաշխարել», ինչպէս պատուիրեց Յիսուսը: Դուն կ'ապաշխարես միայն այն ժամանակ, երբ դադրիս ուրիշները մեղադրել:

Մենք կոյր ենք, եթէ կը մեղադրենք ուրիշները եւ պաշտպանենք մեր դիրքը: Մենք կը ջանանք մեր եղբօր աչքէն հեռացնել շիւղը այն պարագային, երբ մեր աչքին մէջ գերան կայ: Ճշմար-



տուրքեան բացայայտումն է միայն, որ մեզի ազատութիւն կու տայ: Երբ Սուրբ Հոգին մեզի ցոյց կու տայ մեր մեղքը այնպէս, որ մենք մեզ կը տեսնենք մեղքէն առանձնացած, ասիկա յանդիմանութիւն կը բերէ եւ ոչ թէ դատապարտութիւն:

Իմ աղօթքը այն է, որ, կարդալով այս գիրքը, Աստուծոյ Խօսքը լուսաւորէ քու հասկացողութիւնը, որպէսզի տեսնես քու իրական վիճակը եւ ազատիս որեւէ վիրաւորանքէ, որուն դուն առիթ տուած ես: Թոյլ մի՛ տար, որ հպարտութիւնը քեզ ետ պահէ քու իրական վիճակը տեսնելէն ու ապաշխարելէն:

# ՎԻՐԱԿՈՐՈՒՄԾ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԱՆ Է, ՈՐ Կ'ԸՆԴՈՒՆԻ ԿԵԱՆՔԸ, ԲԱՅՑ ՎԱԽԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՉԻ ԿՐՆԱՐ ԿԵԱՆՔ ՏԱԼ

«Քսան տարուան համատեղ կեանքէն յետոյ, տասը տարի առաջ իմ ամուսինը լքեց զիս, որովհետեւ ան «այլեւս երջանիկ չէր»: Ես ամբողջութեամբ կոտորուած էի: Երկար ժամանակ կը փորձէի յաղթահարել այն վիրաւորանքը, լքուածութիւնն ու մերժուածութիւնը, որ կը զգայի ամուսինիս հեռանալու պատճառով: Ես կը խնդրէի Աստուծմէ, որ օգնէ ինձի ներել անոր, եւ համոզուած էի, որ ունիմ ներելու կարողութիւն, բայց իմ սրտին մէջ ես տակաւին կը մնայի վիրաւորուած եւ չէի կրնար այն յաղթահարել: Ամէն անգամ, երբ կը տեսնէի ամուսինս, ցաւ կը վերապրէի: «Սատանայի խայծը» գիրքը կարդալէն յետոյ Սուրբ Հոգին մղեց զիս, որ խօսիմ ամուսինիս հետ ու խնդրեմ անորմէ, որ ներէ ինձի՝ վիրաւորուածութիւնը պահելու համար: Տասը տարուան մէջ մենք առաջին անգամ գրուցեցինք: Ես իսկապէս կը հաւատամ, որ բժշկուեցայ եւ ազատագրուեցայ: Ես շնորհակալ եմ Աստուծոյ, որ ազատեց զիս այդ գերութեան կապանքներէն, որոնք ստրկացուցած էին զիս»:

– Տ. Պ., ՆԻԻ ԵՈՐԸ

## ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ

---

*«Եւ այն ժամանակ շատերը պիտի գայթակղին (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ կը վիրաւորուին) եւ մէկզմէկ պիտի մատնեն եւ մէկզմէկ պիտի ատեն: Եւ շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորեցնեն: Եւ անօրէնութեան շատնալու պատճառով շատերուն սէրը պիտի պաղի: Բայց ով որ մինչեւ վերջ համբերէ, ան պիտի փրկուի»:*

– Մատթ. 24.10-13

**Մ**ատթէոս Աւետարանի այս գլխուն մէջ Յիսուսը կու տայ աշխարհի վերջի նշանները: Աշակերտները հարցուցին Անոր. «Ի՞նչ պիտի ըլլայ Քու գալուստին նշանը»:

Շատերը համաձայն են այն մտքին հետ, որ մենք կ'ապրինք Յիսուսին վերադարձի նախօրեակի ժամանակներուն մէջ: Անօգուտ

է փորձել յստակ նշել Անոր վերադարձի իրական օրը. միայն Հայրը գիտէ ատիկա: Բայց Յիսուսը ըսաւ, որ մենք պէտք է գիտնանք ժամանակը, եւ այն հիմա է: Նախկինին մենք երբեք եկեղեցւոյ մէջ, Իսրայէլի ու բնութեան մէջ չենք տեսած մարգարէութիւններու այդպիսի իրականացում: Ատոր համար ալ համարձակօրէն կրնանք ըսել, որ կը գտնուինք այն ժամանակահատուածին մէջ, որ Յիսուսը նկարագրեց Մատթէոս Աւետարանի 24-րդ գլուխին մէջ:

Ուշադրութիւն դարձուր նշաններէն մէկուն, որ պիտի ըլլայ Յիսուսի վերադարձի նախօրեակին. «Շատերը կը գայթակղին»: Ոչ թէ քիչերը, ոչ թէ ոմանք, այլ *շատերը*:

Առաջին հարցումը, որ պէտք է տանք, հետեւեալն է. «Իսկ որո՞նք են այդ վիրաւորուածները»: Անոնք քրիստոնէանե՞րն են, թէ՞ ողջ հասարակութիւնը: Պատասխանը կը գտնենք, երբ կը շարունակենք կարդալ. «Անօրէնութեան շատնալու պատճառով շատերու սէրը կը պաղի»: Այս խօսքին մէջ «սէր» բառը յունարէնի մէջ «*agape*» (ակափէ) բառն է: Նոր կտակարանին մէջ «սէր» բառի համար կ'օգտագործուին քանի մը յունարէն բառեր, բայց ամէնէն շատ ընդունուած երկու բառերը «*agape*» (ակափէ) եւ «*phileo*» (ֆիլիոյ) բառերն են:

«*Phileo*»-ն այն սէրն է, որ կը գտնենք ընկերներու մէջ: Ատիկա մտերմիկ սէրն է, որը պայմանական է: «*Phileo*»-ն կ'ըսէ. «Ղու՛ն ինծի հետ բարեացակամօրէն վարուի՛ր, եւ ես ալ քեզի հետ նոյն ձեւով կը վարուիմ»:

Իսկ «*agape*»-ն այն սէրն է, որ Աստուած դրած է Իր զաւակներուն սրտերուն մէջ: Ատիկա յատկապէս այն սէրն է, որ Յիսուսը առատօրէն մեզի կու տայ: Այս սէրը պայմանական չէ: Այն հիմնուած չէ որեւէ բան կատարելու կամ նոյնիսկ փոխհատուցելու վրայ: Նման սէրը կու տայ նոյնիսկ այն ժամանակ, երբ կը մերժուի:

Առանց Աստուծոյ մենք կրնանք միայն սիրել եսասիրական սիրով, որ, եթէ չստանայ եւ շահ չունենայ, չի կրնար տալ: Մինչդեռ «*agape*»-ն կը սիրէ անկախ արծազանգէն: «*Agape*»-ն այն սէրն է, որ Յիսուսը տուաւ, երբ խաչին վրայ ներեց: Այնպէս որ, «շատե-

րը» ըսելով՝ Յիսուսը նկատի ունի այն քրիստոնեաները, որոնց «agape»-ն պաղած է:

Կար ժամանակ, երբ ես ամէն ինչ կ'ընէի, որպէսզի անձնաւորութեան մը ցոյց տայի իմ սէրը: Եւ երբ սիրելու քայլ կ'ընէի, այդ անձը իր դժգոհութեամբ եւ կոպիտ վարմունքով կարծես գիտ թիկունքէն կը հարուածէր: Ասիկա շարունակուեցաւ չորս ամիս, եւ օր մըն ալ ես ծանծրացայ ատորմէ: Ես գանգատեցայ Աստուծոյ. «Ես ծանծրացած եմ: Այժմ Դուն պէտք է խօսիս հետս ասոր մասին: Ամէն անգամ ես ցոյց կու տամ Քու սէրը այդ անձնաւորութեան, իսկ փոխարէնը ան դէմքիս բարկութիւն կը շարտէ»:

Տէրը սկսաւ խօսիլ հետս. «Ճո՛ն, դուն պէտք ունիս Աստուծոյ սիրոյ մէջ հաւատքդ զարգացնելու»: «Տէ՛ր, Դուն ի՞նչ նկատի ունիս», - հարցուցի եւ: «Ան, որ կը սերմանէ մարմնին կամքը, ատոր հետ ապականութիւն պիտի հնձէ»: Տէրը բացատրեց. «Եւ Հոգիին մէջ սերմողը Հոգիէն յաւիտենական կեանք պիտի հնձէ: Եւ չձանձրանանք բարին գործելէն, որովհետեւ յարմար ժամանակին պիտի հնձենք, եթէ չթուլնանք» (Պաղատ. 6.8,9):

Դուն պէտք է հասկնաս, որ ցանցելով Աստուծոյ սէրը՝ պիտի հնձես Աստուծոյ սէրը: Դուն կարիք ունիս այս հոգեւոր օրէնքին մէջ հաւատքդ զարգացնելու՝ անկախ այն բանէն, որ թերեւս այդ սէրը չհնձես այն դաշտէն, որուն մէջ ցանած ես, հնարաւոր է նաեւ, որ ատիկա ըլլայ մէկ անգամէն՝ արագ, ինչպէս որ դուն կը ցանկաս:

Տէրը շարունակեց. «Երբ ես ամենամեծ կարիքի մէջ էի, Իմ ամենամտերիմ ընկերները լքեցին Ձիս: Յուդան մատնեց Ձիս, Պետրոսը ուրացաւ, իսկ մնացածը փախսան իրենց կեանքը փրկելու համար: Միայն Յովհաննէսը հեռուէն կը հետեւէր Ինձի: Ես երեք տարիէն աւելի անոնց համար հոգ տարած էի՝ կերակրելով եւ ուսուցանելով զանոնք: Բայց ես ներեցի անոնց, երբ աշխարհի մեղքերուն համար կը մահանայի: Ես բոլորին ալ ազատ արձակեցի՝ սկսեալ Իմ ընկերներէն, որոնք լքեցին Ձիս, մինչեւ հռովմայեցի զինուորները, որոնք խաչեցին Ձիս: Անոնք ներողութիւն չխնդրեցին, մինչդէռ ես առատ ձեւով անոնց ներում շնորհեցի: Հօր սիրոյ մէջ ես հաւատք ունէի: Քանի որ ես սէր սերմանած էի, ես գիտէի, որ Արքայութեան շատ որդիներէն եւ դուստրերէն ալ պիտի հնձեմ

այդ սէրը: Իմ սիրոյ զոհաբերութեան պատճառով անոնք կը սիրէին Ձիս: Չէ՞ որ Ես ըսի. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօ՛թք ըրէ՛ք ձեզ չարչարողներուն ու ձեզ հալածողներուն համար, որ որդիներ ըլլաք ձեր Հօր, որ երկինքն է, որովհետեւ Ան Իր արեգակը կը ծագեցնէ չարերուն ու բարիներուն վրայ եւ անծրեւ կը բերէ արդարներուն եւ անիրաւներուն վրայ: Որովհետեւ եթէ ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ վարձք ունիք. չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն: Եւ եթէ միայն ձեր եղբայրներուն բարեւ տաք, ի՞նչ աւելի բան կ'ընէք. չէ՞ որ մաքսաւորներն ալ այնպէս կ'ընեն: Արդ դուք կատարեա՛լ եղէք, ինչպէս ձեր Հայրը, որ երկինքն է, կատարեալ է» (Մատթ. 5.44-47):

### ՄԵԾ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

Ես հասկցայ, որ երբ սէր կու տայի, Հոգիին մէջ աստով կը ցանցէի, եւ վերջաւորութեան պիտի հնծէի այդ սիրոյ պտուղները: Ես չէի գիտեր, թէ ուրկէ պիտի հնծէի, բայց գիտէի, որ հունձք պիտի ըլլայ: Ես այլեւս իմ անձը ձախողած չեմ համարեր, երբ սէր չեմ ստանար անորմէ, որ կը սիրեմ: Ատիկա ինծի օգնած է նոյնիսկ այդ անձին աւելի շատ սիրել:

Եթէ աւելի շատ քրիստոնեաներ հասկնային ասիկա, չէին նահանջեր եւ չէին վիրաւորուեր: Սովորաբար մենք կ'ապրինք ոչ թէ ակափէ սիրով, այլ եսասիրական սիրով, որ դիւրութեամբ կը հիասթափեցնէ, երբ մեր սպասումները չեն իրականանար:

Եթէ ես սպասումներ ունիմ որոշակի մարդոցմէ, այդ մարդիկ կրնան հիասթափեցնել զիս: Եւ ատիկա կը շարունակուի այնքան ժամանակ, մինչեւ որ դադրիմ անոնցմէ սպասումներ ունենալէ: Բայց եթէ ես սպասումներ չունենամ ռեւէ մէկէն, ինչ որ ալ տրուի ինծի, ատիկա օրհնութիւն պիտի ըլլայ ինծի համար եւ ոչ թէ փոխհատուցում:

Մենք մեր մէջ հող կը պատրաստենք վիրաւորանքի համար, երբ առանձնայատուկ վարուելակերպ կը պահանջենք անոնցմէ, որոնց հետ փոխյարաբերութիւններ ունինք: Որքան շատ են մեր սպասումները, այնքան մեծ է վիրաւորանքի հնարաւորութիւնը:

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐ

«Վիրաւորուած եղբայրը ամուր քաղաքէն պինդ է, եւ վէճերը (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ տեսակէտները) բերդի նիգերուն (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ արգելապատերուն) նման են»:

– Առակ. 18.19

Աւելի դժուար է յաղթել վիրաւորուած եղբօրը կամ քրոջը, քան անառիկ քաղաքը: Ամուր քաղաքները իրենց շուրջը պարիսպներ ունէին, որոնք քաղաքը կը պահպանէին անցանկալի հիւրերէն եւ զաւթիչներէն: Քաղաքի բոլոր մուտքերը պաշտպանուած էին: Պարտք ունեցողներուն թոյլ չէր տրուեր մտնել քաղաք, մինչեւ պարտքը չվճարէին: Անոնք, որոնք սպառնալիք կը համարուէին քաղաքի բարեկեցութեան կամ ապահովութեան համար, կը մնային դուրսը:

Երբ կը վիրաւորուինք, ատորմով պարիսպներ կը կառուցենք մեր սրտերու պաշտպանութեան եւ հետագայ վիրաւորանքները կանխելու համար: Մենք կը փակենք մեր սրտի դռները բոլոր անոնց համար, որոնք կրնան վիրաւորել մեզ: Մենք կը հեռացնենք ոեւէ մէկը, որ, մեր կարծիքով, ինչ որ բան մը մեզի պարտք է: Մենք կը փակենք մեր սրտի մուտքը այնքան ժամանակ, մինչեւ որ այդ մարդիկ ամբողջութեամբ «վճարեն իրենց պարտքերը»: Մենք մեր կեանքը կը բանանք միայն անոնց առջեւ, որոնց մեր կողմնակիցները կը համարենք:

Յաճախ նոյն այդ «կողմնակիցներն» ալ կը վիրաւորեն մեզ: Եւ այդ մարդոց օգնելու փոխարէն մենք նորէն քարեր կը կուտակենք մեր մէջ կառուցած պարիսպներուն վրայ: Մենք չենք գիտակցիր, որ այդպէս վարուելով՝ պաշտպանութեան այդ պարիսպները կը վերածուին բանտի: Նման պարագաներուն մենք զգուշաւոր կը դառնանք ոչ միայն ներս մտնողներուն հարցին մէջ, այլեւ մենք վախէն չենք համարձակիր դուրս ելլել մեր ամրոցէն:

Վիրաւորուած քրիստոնէաները կեդրոնացած են իրենց դատողութեան եւ իրենց վրայ: Մենք զգուշօրէն կը սկսինք պահպանել մեր իրաւունքներն ու փոխյարաբերութիւնները:

Մեր եռանդն ու ուժը կը սպառի, երբ կը փորձենք ապագային մեզ ապահովագրել վիրաւորանքներէն: Եթէ մենք վախճանք վիրաւորուելէն, չենք կրնար անվերապահօրէն սիրել: Այդ սէրը ուրիշներուն իրաւունք կու տայ վիրաւորելու մեզ:

Սէրը իրենի՛նը չի փնտռեր, բայց վիրաւորուած մարդիկ կը դառնան աւելի մեկուսացած եւ իրենցի՛նը փնտռող: Այս պայմաններուն մէջ Աստուծոյ սէրը աստիճանաբար կը պաղի: Ըսուածին համար որպէս օրինակ կրնան ըլլալ Սուրբ երկրի մէջ գտնուող երկու ծովերը: Գալիլիայի ծովը առատօրէն ջուր կը ստանայ եւ ջուր կու տայ: Այն կեանքով լեցուն է, հոն կ'ապրին ծուկերու տարբեր տեսակներ, կայ բուսական կեանք: Գալիլիայի ծովուն ջուրը Յորդանան գետով կը թափի Մեռեալ ծով: Բայց Մեռեալ ծովը միայն ջուրը կը վերցնէ իր մէջ եւ իր մէջէն դուրս չի հաներ: Մեռեալ ծովուն մէջ ոչ մէկ կեանք կայ: Գալիլիայի ծովուն կենդանի ջուրերը կը մեռնին, երբ կը խառնուին Մեռեալ ծովու կուտակուած ջուրերուն: Կեանքը չի կրնար գոյատեւել, եթէ զայն անընդհատ մէկ տեղ պահեն: Կեանքը պէտք է առատութեամբ դուրս հոսի:

Այնպէս որ, վիրաւորուած քրիստոնէան անիկա է, որ իր մէջ կ'ընդունի կեանքը, բայց վախի պատճառով չի կրնար կեանք տալ: Վերջաւորութեան վիրաւորանքի պարիսպներէն կամ բանտերէն ներս մտած կեանքն ալ կը լճանայ: Նոր կտակարանը այս պարիսպները կը նմանցնէ բերդերու.

«Որովհետեւ մեր զինուորութեան գէնքերը մարմնաւոր չեն, այլ Աստուծոմով զօրաւոր բերդեր քանդելու. խորհուրդներ կը քանդենք եւ ամէն բարձրութիւն, որ կը գոռոզանայ Աստուծոյ զիտութեան դէմ, եւ գերի կը բռնենք ամէն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար»:

– Բ. Կորնթ. 10.4,5

Այս բերդերը կը ստեղծեն մտածելակերպի կաղապարներ, որոնց միջոցով կը մշակուի ներս մտնող ամբողջ տեղեկութիւնը: Չնայած որ այդ բերդերը սկիզբը կառուցուած էին պաշտպանութեան համար, հետագային կը դառնան տանջանքի եւ աղաւաղման աղբիւր, քանի որ ատոնք կը պատերազմին զԱստուած



Ճանչնալու կամ Աստուծոյ գիտութեան դէմ:

Երբ մենք ամէն ինչ կը գնահատենք անցեալի վիրաւորանքներու, մերժութիւններու, փորձառութիւններու տեսանկիւնէն, մեզի համար անկարելի կը դառնայ Աստուծոյ հաւատալը: Մենք չենք կրնար հաւատալ, որ Ան նկատի ունի այն, ինչ որ կ'ըսէ: Մենք կը սկսինք կասկածիլ Աստուծոյ բարութեանն ու հաւատարմութեան, երբ մեր կեանքին մէջ կը սկսինք Ջինք գնահատել մարդոց կողմէն դրուած չափանիշներով: Բայց Աստուած մարդ չէ: Ան չի կրնար սուտ խօսիլ (Թուոց 23.19): Անոր ճանապարհները մեր ճանապարհներուն պէս չեն, եւ Անոր մտքերը մեր մտքերուն պէս չեն (Եսայիա 55.8,9):

Վիրաւորուած մարդիկ ընդունակ են իրենց դիրքը պաշտպանելու համար Սուրբ գիրքէն մէջբերումներ գտնել, բայց ատիկա Աստուծոյ խօսքին ճշգրիտ մասը չէ: Առանց սիրոյ Աստուծոյ խօսքի գիտութիւնը կործանարար ուժ է, քանի որ հպարտութիւնը եւ օրինապահութիւնը կը գոռոզացնեն մեզ (Ա. Կորնթ. 8.1-3): Ատիկա ալ պատճառ կը դառնայ, որ մենք աւելի շատ արդարացնենք մեզ, չներելու համար ապաշխարելու փոխարէն: Ասիկա կը ստեղծէ մթնոլորտ մը, որուն մէջ մենք կրնանք խաբուած ըլլալ, քանի որ առանց սիրոյ գիտութիւնը կը տանի մոլորութեան:

Այն բանէն յետոյ, երբ Յիսուսը յայտարարեց, որ շատերը կը վիրաւորուին, զգուշացուց նաեւ սուտ մարգարէներէն՝ ըսելով. «Եւ շատ սուտ մարգարէներ դուրս պիտի ելլեն եւ շատերը պիտի մոլորեցնեն» (Մատթ. 24.11): Որո՞նք են այդ «շատերը», որոնց կը մոլորեցնեն սուտ մարգարէները: Պատասխանը հետեւեալն է՝ վիրաւորուածները, որոնց սէրը պաղած է (Մատթ. 24.12):

## ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ

Յիսուսը սուտ մարգարէներուն անուանեց «ոչխարներու հանդերձներով գայլեր» (Մատթ. 7.15): Իրենց ես-ը փնտռող մարդիկ կամ քրիստոնեայի արտաքին կերպարանքը ունեցողները («ոչխարներու հանդերձներ») ներսէն գայլի բնոյթ ունին: Գայլերը միշտ կը սիրեն ըլլալ ոչխարներուն շուրջ: Անոնց կրնաս տեսնել եկեղեց-

ւոյ համայնքին մէջ, ինչպէս նաեւ բեմին վրայ: Անոնք ուղարկուած են թշնամիի կողմէն, որպէսզի գաղտնի ձեւով մտնեն՝ վնասելու եւ մոլորեցնելու համար: Չանոնք կարելի է ճանչնալ իրենց պտուղներէն եւ ոչ թէ իրենց ուսուցումներէն կամ մարգարէութիւններէն: Յաճախ անոնց ուսուցումը կրնայ ճշացող երեւալ, բայց կեանքի ու ծառայութիւններու պտուղները՝ ոչ: Էականը այն է, թէ ծառայողը կամ քրիստոնեան ինչպէս կ'ապրի, այլ ոչ թէ ինչ կը քարոզէ:

Գայլերը միշտ կը հետապնդեն ոչ թէ առողջ կամ ուժեղ ոչխարները, այլ վիրաւոր ու փոքրիկ ոչխարները: Այս գայլերը մարդոց կը պատմեն այն, ինչ որ անոնք կը ցանկան լսել, եւ ոչ թէ այն, ինչի կարիքը ունին. անոնք առողջ ուսմունք չեն ցանկար լսել, այլ կը ցանկան լսել ինչ որ մէկու մը, որ կը շոյէ իրենց ականջները: Եկո՛ւր նայինք, թէ ինչ կ'ըսէ Պօղոսը վերջին օրերուն մասին.

«Ասիկա իմացի՛ր, որ վերջին օրերուն մէջ չար ժամանակներ պիտի գան: Որովհետեւ մարդիկ պիտի ըլլան... անհաշտ, որ աստուածապաշտութեան կերպարանքը ունին, բայց Անոր զօրութիւնը ուրացած են. անոնցմէ ալ ե՛տ քաշուիր... Որովհետեւ ժամանակ պիտի գայ, որ ողջամիտ վարդապետութեան պիտի չհամբերեն, այլ հաճելի բաներ լսելու մարմաջով, իրենց յատուկ ցանկութիւններուն համեմատ վարդապետներ պիտի դիզեն իրենց համար: Եւ իրենց ականջը ճշմարտութենէն ետ կը դարձնեն եւ առասպելներու ետեւէն պիտի մոլորին»:

– Բ. Տիմոթ. 3.1- 5, 4.3,4

Ուշադրութիւն դարձո՛ւր, որ անոնք աստուածապաշտութեան կամ «քրիստոնէութեան» կերպարանք կ'ունենան, բայց պիտի ուրանան այդ զօրութիւնը: Իսկ ինչպէ՞ս անոնք պիտի ուրանան այդ զօրութիւնը: Անոնք կը մերժեն այն փաստը, որ քրիստոնէութիւնը կրնայ փոխել իրենց կեանքը՝ չներող մարդէն դարձնելով ներող: Անոնք կը պարծենան, որ Յիսուսին հետեւորդներ են, եւ իրենք զիրենք կը համարեն «վերստին ծնածներ», բայց ատոնցմով պարծենալով հանդերձ թոյլ չեն տար, որ նոր կեանքը թափանցէ իրենց սրտին մէջ եւ ձեւաւորէ Քրիստոսի էութիւնը:

## ՏԵՂԵԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պօղոսը մարգարեական ձեւով կրցաւ տեսնել, որ այս խաբուած մարդիկ նախանձաւորութիւն ունին Աստուծոյ գիտութեան համար, բայց կը մնան չփոխուած, քանի որ երբեք չեն կիրառեր այդ գիտութիւնը: Պօղոսը նկարագրեց, որ անոնք «ամէն ժամանակ կը սորվին եւ երբեք դէպի ճշմարտութեան գիտութեան չեն կրնար գալ» (Բ. Տիմոթ. 3.7):

Եթէ Պօղոսը կենդանի ըլլար, ան կը վշտանար՝ տեսնելով, թէ ինչպէս կ'իրականանան իր կանխատեսումները: Ան կը տեսնէր բազմաթիւ մարդիկ, որոնք միասին բանակումներ կը կազմակերպեն, կը մասնակցին սեմինարներու եւ ատորմով կը կուտակեն միայն Սուրբ գիրքերու գիտութիւնը: Պօղոսը կը տեսնէր, թէ ինչպէս անոնք «նոր յայտնութիւններ» կ'որոնեն, որպէսզի ապրին աւելի եսասէր եւ բարեկեցիկ կեանքով: Ան կը տեսնէր, թէ ինչպէս Հոգիով լեցուած քրիստոնեաները, «արդարացի պատճառներէն» մեկնելով, մէկը միւսին կը նետէ դատական գործընթացներու մէջ, ինչպէս քրիստոնէական պարբերականները եւ ռատիոկայանները կը քննադատեն, անուանապէս յարձակում կը գործեն Աստուծոյ մարդոց վրայ: Ան կը տեսնէր, թէ ինչպէս «Հոգիով լեցուած» խարիզմաթիք քրիստոնեաները» կը վազեն եկեղեցիէ եկեղեցի՝ փախչելով վիրաւորանքէն: Չնայած որ անոնք բոլորն ալ Յիսուսին Տէր կը դաւանին, բայց չեն կրնար ներել: Եւ այս ամէնէն յետոյ Պօղոսը հաւանաբար կ'աղաղակէր. «Ապաշխարեցէ՛ք եւ ազատագրուեցէ՛ք ձեր մոլորութենէն, դուք ձեր ես-ը փնտռող կեղծաւորներու սերունդ էք»:

Նշանակութիւն չունի, թէ որքան նոր յայտնութիւններ ունիս, թէ որքան շատ սեմինարներու մասնակցած ես, Աստուածաշնչեան դպրոց յաճախած կամ ալ որքան շատ գիրքեր կարդացած ես, նոյնիսկ որքան շատ ժամեր անցուցած ես աղօթքի եւ ընթերցանութեան մէջ: Եթէ դուն վիրաւորուած ես ու չներող եւ կը հրաժարիս ապաշխարելէն, ուրեմն դուն չես հասած ճշմարտութեան գիտութեան: Դուն խաբուած ես եւ քու կեղծաւոր ապրելակերպով կը շփոթեցնես ուրիշները: Նշանակութիւն չունի, թէ ինչ յայտնութիւն ունիս, քու պտուղները այլ բան ցոյց կու տան: Այդպէս դուն կը

դառնաս լեղի ջուր բխեցնող աղբիւր մը, որ մոլորութիւն կը բերէ եւ ոչ թէ ճշմարտութիւն:

## ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

«Եւ այն ժամանակ շատերը պիտի գայթակղին (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ կը վիրաւորուին) եւ մէկգմէկ պիտի մատնեն եւ մէկգմէկ պիտի ատեն»:

– Մատթ. 24.10

Եկո՛ւր քննենք այս խօսքը: Եթէ մենք աւելի խորունկ ուսումնասիրենք այս տեղը, կրնանք աստիճանական զարգացում տեսնել: Վիրաւորութիւնը եւ գայթակղութիւնը կը տանին մատնութեան, իսկ մատնութիւնը՝ ատելութեան:

Ինչպէս արդէն ըսինք, վիրաւորուած մարդիկ պաշտպանութեան պարիսպներ կը կառուցեն: Ինքնապաշտպանութիւնը մեր նպատակը կը դառնայ: Մենք ամէն գնով կը պաշտպանուինք ու կ'ապահովենք մեր անվտանգութիւնը, եւ ասիկա ալ մեզ ունակ կը դարձնէ մատնելու: Մատնելով մենք կը փնտռենք մեր սեփական պաշտպանութիւնը կամ ալ ինչ որ մէկու մը հաշւոյն մեր շահը առջեւ կը քաշենք: Սովորաբար ատիկա այնպիսի մէկն է, որուն հետ մենք փոխարաբերութեան մէջ ենք: Այսպիսով՝ մատնութիւնը Աստուծոյ Արքայութեան մէջ կու գայ այն ժամանակ, երբ հաւատացեալ մը ուրիշ հաւատացեալի մը հաշւոյն կը փնտռէ իր սեփական շահը կամ պաշտպանութիւնը: Որքան սերտ ըլլայ յարաբերութիւնը, այնքան դաժան կրնայ ըլլալ մատնութիւնը: Ոեւէ մէկը մատնելը ուխտէն հրաժարելու ծայրայեղ վիճակն է: Երբ ի յայտ կու գայ մատնութիւնը, փոխարաբերութիւնը չի կրնար վերականգնիլ այնքան ժամանակ, քանի տակաւին իրական ապաշխարութիւն տեղի չէ ունեցած:

Ջարգանալով մատնութիւնը կը յանգեցնէ ատելութեան եւ վտանգաւոր հետեւանքներ կը յառաջացնէ: Աստուածաշունչը յստակ կը հաստատէ, որ ամէն ոք, որ կ'ատէ իր եղբայրը, մարդասպան է, եւ ոչ մէկ մարդասպան իր մէջ յաւիտենական կեանք չունի (Ա. Յովհ. 3.15):

Շատ ցաւալի է, որ մենք հաւատացեալներուն մէջ այսօր

կրնանք տեսնել վիրավորանքի, մատնութեան եւ ատելութեան բազում օրինակներ: Ասիկա այնքան տարածուած է մեր ընտանիքներուն եւ եկեղեցիներուն մէջ, որ կը համարուի սովորական վարքագիծ: Մենք այնքան զգայուն չենք, որ վշտանանք՝ տեսնելով, թէ ինչպէս ծառայողը ծառայողին դատարան կը տանի: Մեզ այլեւս չի գարնացներ, երբ քրիստոնէայ ամուսինները ամուսնալուծութեան համար միմեանց դատի կու տան: Եկեղեցական պառակտումները դարձած են սովորական եւ սպասելի: Ծառայութեան քաղաքական խաղերը այլեւս չափ ու սահման չեն ճանչնար եւ ձեւականօրէն ու առանց երկիւղի կը ներկայացուին որպէս Արքայութեան կամ եկեղեցւոյ շահերէն բխող տեսակէտներ:

«Քրիստոնէաները» կը պաշտպանեն իրենց իրաւունքները, որպէսզի ոչ մէկ ուրիշ քրիստոնէայ վատ վերաբերի եւ շահագործէ զիրենք:

Արդեօք մոռցա՞ծ ենք Նոր ուխտի յորդորը.

«Ինչո՞ւ դուք աւելի չէք գրկուիր եւ ինչո՞ւ դուք անիրաւութիւն չէք քաշեր»:

– Ա. Կորնթ. 6.7

Մոռցա՞ծ ենք Յիսուսի խօսքերը.

«Բայց ես կ'ըսեմ ձեզի. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօ՛թք ըրէք ձեզ չարչարողներուն եւ հալածողներուն համար»»:

– Մատթ. 5.44

Մոռցա՞ծ ենք Աստուծոյ պատուիրանը.

«Ոչ մէկ բան կ'ըլլայ գրգռումով եւ ոչ ալ սնապարծութիւնով, այլ խոնարհութիւնով թող մէկը միւսին իր անծէն աւելի լաւ համարէ»:

– Փիլիպ. 2.3

Ինչո՞ւ չենք ապրիր սիրոյ այս օրէնքներով: Ինչո՞ւ կը շտապենք մատնել միմեանց՝ մէկս միւսին համար մեր կեանքը դնելու փոխարէն: Պատճառը այն է, որ մեր սէրը պաղած է, որուն հետե-

ւանքով կը ջանանք պաշտպանել մեզ: Այդպէս մենք այլեւս չենք կրնար համարձակութեամբ մեր հոգեքը յանձնել Աստուծոյ, քանի որ կը փորձենք ինքնուրոյն հոգալ մեր կարիքները:

Երբ Յիսուսի հետ վատ վարուեցան, Ան նոյն ձեւով չհատուցեց, այլ Իր անձը յանձնեց Աստուծոյ, Որ արդարութեամբ կը դատէ: Մենք Անոր քայլերուն հետեւելու համար այսպիսի խրատ ունինք.

«Որովհետեւ դուք յատկապէս այդ բանին մէջ կանչուեցաք, որ Քրիստոսն ալ ձեզի համար չարչարուեցաւ եւ ձեզի ալ օրինակ ձգեց, որ Անոր հետքերուն հետեւիք: Որ մեղք չգործեց, եւ նենգութիւն չգտնուեցաւ Անոր բերնին մէջ, որ նախատուելու փոխարէն չէր նախատեր, չարչարուելու ժամանակ չէր սպառնար, բայց դատաստանը կը յանձնէր արդար Դատաւորին»:

– Ա. Պետր. 2.21-23

### ՅԱՂԹԵԼՈՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մենք պէտք է հասնինք այնպիսի մակարդակի, որ վստահինք ոչ թէ մեր մարմինին, այլ՝ Աստուծոյ: Շատերը Աստուծոյ միայն շուրթերով կը ծառայեն եւ Ձինք իրենց կեանքի աղբիւրը կ'անուանեն, մինչդէռ կ'ապրին որբերու պէս: Անոնք իրենց կեանքի դէկը իրենց ձեռքերուն մէջ առած են, թէւ իրենց շուրթերով կը դաւանին, թէ Ան իրենց Տէրն ու Աստուածն է:

Հիմա կը տեսնես, թէ որքան վտանգաւոր է վիրաւորուածութեան մեղքը: Եթէ այդ մեղքին հարցը չլուծուի, այն մահուան կը տանի, բայց երբ կը հակառակիս վիրաւորուած ըլլալու փորձութեան, Աստուած կը բերէ հզօր յաղթանակ:



# ԵԹԷ ՍԱՏԱՆԱՆ ԿԱՐԵՆԱՐ ԿՈՐԾԱՆԵԼ ՄԵՋ ՈՐԵԻԷ ԺԱՄԱՆԱԿ, ԱՆ ԿԱՂՈՒՑ ՄԵՋ ՈՉՆՉԱՑՈՒՑԱԾ Կ'ԸԼԼԱՐ

«Մինչեւ այս գիրքը կարդալը եւ Աստուծոյ հետ հաղորդակցութիւն չունէի: Ես փրկուած էի, բայց իմ եւ Աստուծոյ միջեւ ինչ որ բան մը կար, որ այնքան ալ ճիշդ չէր: Ես գիտէի, որ այդ պատճառով Աստուծոյ չէր, բայց չէի հասկնար, թէ ինչն էր խնդիրը: Օր մը իմ ընկերներէն մէկուն տունն էի: Ան ունէր ճոն Պիվիի «Սատանայի խայծը» գիրքը: Ես այն տուն բերի եւ սկսայ կարդալ: Ես չէի կրնար մէկ կողմ դնել գիրքը: Այն այնքան հզօր օծութիւն ունէր, որ իմ հոգին զայն ամբողջութեամբ ուղղակի «կլանէր»: Գիրքը ընթերցելու կէս ճանապարհին յանկարծ հասկցայ, որ իմ եւ Տիրոջ փոխարարութեան մէջ կանգնած այդ պատճառով վիրաւորութեան հոգին էր»:

– Բ. Բ., ՃՈՐԾԻԱ



## ԻՆՉՊԷ՞Ս ԿՐՆԱՐ ԱՍԻԿԱ ՀԵՏՍ ՊԱՏԱՀԻԼ

---

*«Եւ Յովսէփը ըսաւ անոնց. «...Եւ թէ եւ դուք ինծի դէմ  
չարութիւն խորհեցաք, բայց Աստուած զայն  
աղէկի դարձնել խորհեցաւ»»:*

**– ԾՆՆՊ. 50.19,20**

**Ա**ռաջին գլուխին մէջ բոլոր վիրաւորուած մարդոց բաժ-  
նեցինք երկու հիմնական խումբի՝ մարդիկ, որոնց հետ  
իսկապէս վատ վարուած են, եւ մարդիկ, որոնք կը մտածեն, որ  
իրենց հետ վատ վարուած են: Այս գլուխին մէջ ես կ'ուզեմ անդրա-  
դառնալ առաջին խումբի մարդոց:

Եկո՛ւր սկսինք հետեւեալ հարցումէն.

Եթէ քեզի հետ իսկապէս վատ վարուած են, դուն իրաւունք  
ունի՞ս վիրաւորուելու:

Պատասխանը գտնելու համար եկո՛ւր նայինք Յակոբի սիրելի որդիին՝ Յովսէփի կեանքին մէջ (տե՛ս Ծննդ. 37-48-րդ գլուխները):

### ԵՐԱԶՈ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՄՂՁԱԲԱՆՋ

Յովսէփը Յակոբի տասնմէկերորդ որդին էր: Մեծ եղբայրները արհամարհեցին զինք, որովհետեւ հայրը շատ կը սիրէր Յովսէփը եւ առանձնացուց զինք միւսներէն՝ նուիրելով խայտաբղէտ վերարկու: Աստուած երկու երագ տուաւ Յովսէփին: Առաջին երագին մէջ ան դաշտի մէջ հասկերու խուրձեր տեսաւ: Անոր խուրձը բարձրացաւ եւ ուղիղ կեցաւ, իսկ եղբայրներուն խուրձերը խոնարհեցան անոր խուրձին առջեւ: Երկրորդ երագին մէջ Յովսէփը տեսաւ, որ արեգակը, լուսինը եւ տասնմէկ աստղեր (որոնք անոր հօր, մօր եւ եղբայրներուն խորհրդապատկերներն էին) կ'երկըրպագէին իրեն: Երբ ան այս երագները պատմեց իր եղբայրներուն, հասկնալի է, որ անոնք չբաժնեկցեցան Յովսէփի խանդավառութիւնը: Եղբայրները աւելի շատ ատեցին Յովսէփը:

Կարճ ժամանակ յետոյ Յովսէփի տասը աւագ եղբայրները դաշտ գացին՝ արածեցնելու իրենց հօր ոչխարները: Յակոբը ուղարկեց Յովսէփը տեսնելու, թէ ինչպէս են անոնք: Երբ աւագ եղբայրները տեսան, որ Յովսէփը կու գայ, դաւադրութիւն կազմակերպեցին անոր դէմ՝ ըսելով. «Ահա կու գայ երագ տեսնողը: Եկէ՛ք սպաննենք զինք, յետոյ տեսնենք, թէ ինչ պիտի պատահի անոր երագներուն հետ: Ան կ'ըսէ, որ կը պատրաստուի մեր վրայ առաջնորդ դառնալու: Տեսնենք, թէ ինչպէս պիտի փորձէ առաջնորդել մեզ, երբ մահանայ»: Այսպիսով՝ անոնք Յովսէփը գուրըն տեսցին, որպէսզի մահանայ: Եղբայրները հանեցին Յովսէփի վերարկուն, պատառոտեցին այն, ներկեցին կենդանիի արիւնով, որպէսզի ատորմով համոզեն իրենց հայրը, թէ Յովսէփին վայրի գազան մը յօշոտած է:

Յովսէփը գուրբին մէջ նետելէն յետոյ անոնք տեսան խումբ մը իսմայէլցիներ, որոնք Եգիպտոս կ'երթային: Այդ ժամանակ Յուդան ըսաւ. «<է՛յ, տղանե՛ր, վայրկեան մը սպասեցէ՛ք: Եթէ ձգենք, որ ան մեռնի այդ գուրբին մէջ, օգուտ չենք ունենար: Եկէ՛ք զինք վաճառենք ստրկութեան ու քիչ մը դրամ շահինք: Յովսէփին համար ատիկա մեռնելէն ալ լաւ կ'ըլլայ եւ ալ երբեք պիտի չան-

հանգստացնել մեզ, իսկ աւարը կը բաժնուինք»։ Եւ այսպէս անոնք Յովսէփը վաճառեցին քսան դահեկանով։ Յովսէփը վիրաւորած էր եղբայրները, ատոր համար ալ անոնք մատնեցին Յովսէփը՝ զրկելով զինք ժառանգութենէն ու ընտանիքէն։ Յիշէ՛, որ Յովսէփին հետ այսպէս վարուողները անոր *եղբայրներն* էին՝ նոյն հորմէն, նոյն մարմնէն եւ արիւնէն։

Ամերիկեան մշակոյթը այնքան տարբեր է, որ մեզի համար շատ դժուար է հասկնալ այս մարդոց պատճառած դառնութիւնը։ Մեզի համար ամենավատ բանը միայն սպաննելն է։ Աստուածաշնչեան ժամանակներուն մէջ որդիներ ունենալը շատ կարեւոր բան էր։ Որդին կը կրէր հոր անունը եւ կը ժառանգէր այն ամէնը, ինչ որ ան ունէր։ Յովսէփին եղբայրները զինք զրկեցին իր հոր անունն ու ժառանգութիւնը ստանալէն։ Անոնք ջնջեցին Յովսէփին անունը՝ ինքնութիւնը։ Յովսէփը զրկուեցաւ բոլոր անոնցմէ, որոնք հարազատ էին իրեն։

Այդ ժամանակներուն մէջ, երբ ոեւէ անձ մը ստրկութեան կը վաճառուէր որեւէ երկիր, ան ստրուկ կը մնար մինչեւ իր մահը։ Այն կինը, որուն հետ ան կ'ամուսնանար, կը դառնար ստրկուհի, իսկ անոր բոլոր երեխաները՝ ստրուկներ։

Շատ դժուար բան էր ստրուկ ծնիլը, բայց ալ աւելի դժուար էր այն, որ մարդը կը ծնէր որպէս հարստութեան ժառանգորդ՝ մեծ ապագայով, եւ կրնար ընդմիշտ զրկուած մնալ այդ ամէնէն։ Աւելի դիւրին կ'ըլլար, եթէ Յովսէփը երբեք չիմանար, թէ ինչ կրնար տեղի ունենալ։ Փաստօրէն, Յովսէփը կենդանի դիակ էր։ Ես վստահ եմ, որ ան կը նախընտրէր, որ եղբայրները սպաննէին զինք։ Բայց փաստը այն էր, որ Յովսէփի եղբայրներուն ըրածը տանջալից էր եւ դաժան։

## ԿԱՏԱՐԵԱԼ ՀԵՏԵՒԱՆՔ

Երբ կը կարդայիր Յովսէփի պատմութեան նկարագրութիւնը, հաւանաբար արդէն գիտէիր աւարտը։ Շատ ոգեւորիչ է, երբ դուն գիտես այդ պատմութեան աւարտը։ Բայց Յովսէփը փորձառաբար չէր ապրեր ատիկա։ Կը թուար, թէ ան այլեւս պիտի չտեսնէր իր հայրը կամ ալ Աստուծմէ իրեն տրուած երազներու իրականա-

ցումը: Ան ստրուկ էր օտար ազգի մէջ: Յովսէփը չէր կրնար հեռանալ Եգիպտոսէն եւ ողջ կեանքին մէջ պէտք է ըլլար ինչ որ մէկու մը սեփականութիւնը:

Ջինք վաճառեցին Պետափրէս անունով մարդու մը: Պետափրէսը փարաւունին քով պաշտօնեայ էր եւ անոր պահակախումբի հրամանատարը: Յովսէփը ծառայեց անոր տասը տարի: Այդ տարիներուն Յովսէփը իր ընտանիքէն երբեք լուր չունեցաւ եւ համոզուած էր, որ հայրը հաւատացած էր, թէ ինքը մահացած է: Անոնց կեանքը կը շարունակուէր առանց Յովսէփին: Յովսէփը հայրական փրկագինի ոչ մէկ յոյս ունէր:

Երբ ժամանակը հասաւ, Յովսէփը իր տիրոջ արջեւ շնորհք գտաւ: Պետափրէսը Յովսէփին վերակացու նշանակեց իր տան մէջ գտնուողներուն եւ ողջ ունեցուածքին վրայ:

Բայց մարդկային խարդաւանքները կը շարունակէին հետապնդել Յովսէփը: Ինչ որ շատ սխալ բան կը հասուննար Պետափրէսի կնոջ մէջ: Երկար ժամանակ այդ կինը հայեացքներ կը նետէր Յովսէփին վրայ եւ կը ցանկար շնութիւն ընել անոր հետ: Ամէն օր ան կը փորձէր գայթակղեցնել Յովսէփը, բայց Յովսէփը կը մերժէր: Օր մը Պետափրէսի կինը տունը առանձին էր Յովսէփին հետ եւ, նեղի դնելով զինք, պահանջեց, որ ան կենակցի իրեն հետ: Յովսէփը մերժեց եւ դուրս վազեց տունէն՝ իր պատմուճանը ձգելով կնոջ ձեռքին մէջ: Երբ Յովսէփը այդպէս վարուեցաւ, կինը ամօթահար եղաւ ու ճչաց. «Բռնաբարութի՛ւն...»: Պետափրէսը նետեց Յովսէփը փարաւունին բանտը:

Փարաւունին բանտը ոչ մէկ բանով կը նմանէր այսօրուան Ամերիկայի բանտերուն: Ես ծառայութիւն ունեցած եմ քանի մը բանտերու մէջ, եւ որքան ալ ատոնք խիստ ըլլան, փարաւունի ստորգետնեայ խաւար բանտին հետ համեմատած՝ նման են գիւղական ակունքներու: Այդ բանտին մէջ ո՛չ արեւի լոյս կար, ո՛չ չոր տեղ, ատիկա ուրիշակի ստորգետնեայ սենեակ էր կամ գուբ, որ զուրկ էր լոյսէն ու ջերմութենէն: Նման պայմանները կը ստիպէին, որ մարդը վայրենանար եւ կորսնցնէր իր մարդկային յատկանիշները: Հոն կը նետէին բանտարկեալները, որպէսզի քայքայուին, քանի որ անոնք կը գոյատեւէին «չարչարանքին» (հայերէն Աստուածա-

շունչին մէջ՝ նեղութեան) (Գ. Թագ. 22.27) հացով ու ջուրով: Անոնց այնքան կերակուր կու տային, որ բաւարար էր միայն գոյատեւելու համար: Ըստ Սաղմոս 105.18- ին՝ Յովսէփի ուտքերը վնասուած էին շղթաներէն, եւ ան պառկած էր երկաթներու մէջ: Յովսէփը նետած էին այս բանտը, որպէսզի ան մահանար:

Եթէ Յովսէփը եզիպտացի ըլլար, կրնար ազատ արձակուելու հնարաւորութիւն ունենալ, բայց որպէս բռնաբարութեան մէջ մեղադրուած օտարազգի ստրուկ՝ ան նոյնիսկ ազատելու փոքր յոյս մը չունէր: Ասորմէ աւելի վատ բան չէր ալ կրնար ըլլալ: Յովսէփը ընկճուած էր այնպէս, ինչպէս մահուան շէմին գտնուող մարդը:

Կրնա՞ս այդ բանտի խոնաւ մթութեան մէջ լսել Յովսէփի մտածածը: *Ահա այն. «Ես տասը տարի ամբողջովին նուիրուած եւ ազնուութեամբ ծառայեցի իմ տիրոջը: Ես աւելի հաւատարիմ էի, քան անոր կինը: Ամէն օր փախչելով սեռական անբարոյականութենէն՝ ես հաւատարիմ մնացի Աստուծոյ եւ իմ տիրոջը: Ո՞րն էր իմ վարձքը: Ստորգետնեայ բա՞նտը: Փաստօրէն, ես կը փորձէի ճիշդ վարուիլ, եւ տեղի ունեցաւ ամենավատը: Ինչպէ՞ս կրնար Աստուած ասիկա թոյլ տալ: Մի՞թէ իմ եղբայրներուն յաջողեցաւ գողնալ նաեւ Աստուծոմէ՝ ինծի տրուած խոստումը: Ինչո՞ւ ուխտի ամենազօր Աստուած յանուն ինծի չմիջամտեց այս հարցին մէջ: Մի՞թէ սիրող հաւատարիմ Աստուած այսպէս հոգ կը տանի Իր ծառաներու համար: Ինչո՞ւ ես: Ի՞նչ ըրած եմ այս ամէնուն արժանանալու համար: Ես ընդամէնը հաւատացի այն ամէնուն, ինչ որ Աստուծոմէ լսած էի»:*

Ես վստահ եմ, որ Յովսէփը կը պայքարէր այս կամ նմանատիպ այլ մտքերու դէմ:

Յովսէփի ազատութիւնը շատ սահմանափակ էր, բայց ան դեռ իրաւունք ունէր արծագանգելու այն ամէնուն, ինչ որ պատահած էր: Արդեօ՞ք Յովսէփը կը վիրաւորուէր ու կը հրաժարէր իր եղբայրներէն, իսկ վերջաւորութեան ալ՝ Աստուծոմէ: Արդեօ՞ք ան կը կորսնցնէր խոստումի իրականացման ողջ յոյսը՝ ինքզինքը գրկելով ապրելու իր վերջին խթանէն:

### ***Մի՞թե Աստուած չի վերահսկեր***

Իմ կարծիքով Յովսէփի մտքով երբեք ալ չէր անցներ, որ այն ամէնը, ինչ որ կը կատարուէր, Աստուծոյ գործընթացն էր, որուն միջոցով Աստուած զինք կը նախապատրաստէր կառավարելու համար: Ապագային ան ինչպէ՞ս պիտի օգտագործէր իր իշխանութիւնը եղբայրներուն վրայ, որոնք մատնեցին զինք: Յովսէփը հնազանդութիւն կը սորվէր այն ամէնէն, ինչէն որ կը տառապէր: Աստուծոյ ձեռքին մէջ անոր եղբայրները հմուտ գործիքներ էին: Արդեօ՞ք Յովսէփը ծոմ կը պահէր խոստումին համար կամ զԱստուած կը փնտռէր այն իրականացնելու համար:

Հաւանաբար, երբ Յովսէփը տեսաւ իր երազները, ան այդ երազներուն նայեցաւ որպէս շնորհքի հաստատութիւն իր կեանքին վրայ: Ան դեռ չէր սորված, որ իշխանութիւնը կը տրուի ծառայելու եւ ոչ թէ ուրիշներէն տարբերելու համար: Յաճախ այս մարզումներու ընթացքին մենք Աստուծոյ մեծութեան վրայ կեդրոնանալու փոխարէն կը կեդրոնանանք մեր հանգամանքներու անկարելի ըլլալուն վրայ: Ասոր հետեւանքով ալ մենք կը յուսահատինք եւ կը մեղադրենք ինչ որ մէկը: Ատոր համար ալ մենք կը փնտռենք մէկը, որուն պատասխանատու կը համարենք մեր յուսահատութեան համար, իսկ երբ կը հանդիպինք այն փաստին, որ Աստուած կրնար կանխել մեր խառնաշփոթութիւնը եւ չկանխեց, այդ պարագային յաճախ կը մեղադրենք Զինք:

Շարունակ հետեւեալ միտքը կը զնգար Յովսէփին գլխուն մէջ. «Ես ապրած եմ զԱստուած ճանչնալու համաձայն եւ չեմ մեղանչած Աստուծոյ դիրքին կամ էութեան դէմ: Ես ընդամենը երազ մը կը կրկնէի, որ Աստուած Ինքը տուած էր: Եւ հետեւանքը ասիկա՞ եղաւ: Իմ եղբայրները մատնեցին զիս եւ վաճառեցին ստրկութեան: Իմ հայրը կը կարծէ, որ մեռած եմ, եւ երբեք զիս գտնելու համար Եգիպտոս չի գար»:

Յովսէփին համար ամենամեղաւոր մարդիկ իր եղբայրներն էին: Անոնք նպաստեցին, որ ինքը նետուեցաւ այդ ստորգետնեայ բանտը: Թերեւս Յովսէփը տարուած էր այն մտքերով, որ ամէն բան կրնար այլ ձեւով ընթանալ, եթէ ինքը իշխանութիւն ունենար,

Եթէ Աստուած զինք դնէր իշխանութեան այն դիրքին մէջ, ինչպէս որ ինքը տեսած էր իր երազներուն մէջ: Ամէն բան այլ ծելով կը դասաւորուէր, եթէ եղբայրները չկործանէին իր ապագան:

Որքա՞ն յաճախ մենք կը լսենք, թէ ինչպէս մեր եղբայրներն ու քոյրերը կ'իյնան այս նոյն մեղադրանքի թակարդին մէջ: Բերեմ այսպիսի մեղադրանքներու քանի մը օրինակ.

«Եթէ իմ կինը չըլլար, ես ծառայութեան մէջ կ'ըլլայի: Կինս խանգարեց զիս եւ կործանեց այն, ինչ որ կ'երազէի»:

«Եթէ իմ ծնողները չըլլային, սովորական կեանք կ'ունենայի: Այն վիճակին համար, որուն մէջ ես կը գտնուիմ, անոնք մեղաւոր են: Ինչո՞ւ միւսները լաւ ծնողներ ունին, իսկ ես... Եթէ իմ հայրիկն ու մայրիկը չբաժնուէին, ես աւելի շատ ազատ կ'ըլլայի իմ ամուսնութեան մէջ»:

«Եթէ իմ հովիւը չճնշէր իմ մէջ եղող այս պարգելը, ես ազատ կ'ըլլայի եւ խոչընդոտներ չէի ունենար: Հովիւը զիս ետ պահեց իմ ծառայութեան կոչումը իրականացնելէն: Ան իմ դէմ տրամադրած է եկեղեցւոյ մարդիկը»:

«Եթէ իմ նախկին ամուսինը չըլլար, իմ երեխաներն ու ես բոլոր այս նիւթական մտահոգութիւնները չէինք ունենար»:

«Եթէ չըլլար այդ կինը, ես մինչեւ հիմա շնորհք կ'ունենայի աւագներուն առջեւ: Այդ կինը իր բամբասանքով կործանեց զիս եւ յարգուած ըլլալու իմ յոյսը»:

Այս ցուցակը վերջ չունի: Դիւրին է քու խնդիրներուն համար ուրիշները մեղադրել եւ պատկերացնել, թէ որքան լաւ կ'ըլլար, եթէ ազատ ըլլայիր, ու անոնք քու շուրջը չըլլային: Դուն կը կարծես, որ անոնց մեղքով են քու հիասթափութիւնն ու վիրաւորանքը:

Ես կը ցանկամ ընդգծել հետեւեալը. «*Բացարձակապէս ո՛չ մէկ տղամարդ, ո՛չ մէկ կին, ո՛չ մէկ երեխայ կամ սատանայ երբեք չի կրնար քեզ դուրս հանել Աստուծոյ կամքէն: Քու ճակատագիրը միայն Աստուծոյ ձեռքերուն մէջ է եւ ուրիշ ո՛չ մէկու»*: Յովսէփի եղբայրները փորձեցին դաժան ծելով կործանել այն տեսիլքը, որ Աստուած տուած էր անոր: Անոնք կը կարծէին, որ Յովսէփի համար խափանեցին այդ տեսիլքը: Եղբայրները իրենց իսկ բերա-

նով ըսին. «Եկէ՛ք սպաննենք զինք եւ զուբերէն մէկուն մէջ նետենք զինք... եւ տեսնենք անոր երազները ինչ պիտի ըլլան» (Ծննդ. 37:20): Անոնք դուրս ելան Յովսէփը կործանելու: Յովսէփի հետ կատարուածը ամէնեւին ալ դժբախտ պատահար չէր: Ատիկա միտումնաւոր առնուած քայլ էր: Եղբայրները չէին ուզեր ոչ մէկ հնարաւորութիւն տալ Յովսէփին, որպէսզի ան հասնէր յաջողութեան:

Թերեւս դուն կը կարծես, որ երբ անոնք Յովսէփը վաճառեցին ստրկութեան, երկինքի մէջ Հայր Աստուած նայեցաւ Որդիին եւ Սուրբ Հոգիին ու ըսաւ հետեւեալը. «Ի՞նչ պէտք է հիմա ընենք: Տեսէք, թէ ինչ ըրին անոր եղբայրները: Անոնք խորտակեցին Յովսէփի համար նախատեսուած Մեր ծրագիրը: Աւելի լաւ է արագ ինչ որ բան մը մտածենք: Մենք այլ ծրագիր ունի՞մք»: Ասիկա յիմարութիւն է, մինչդեռ մենք կ'արծագանգենք ասոր՝ համարելով, որ այսպիսին է Աստուծոյ տեսակէտը:

Եկո՛ւր տեսնենք, թէ Յովսէփը ինչպէս ինքզինքը կը պահէր այսօրուան մեր եկեղեցիներուն մէջ: Եթէ ան մեզմէ շատերուն նման ըլլար, գիտե՞ս, թէ ինչ պիտի ընէր: Պիտի ծրագրէր վրէժխնդրութիւն: Ան պիտի մխիթարէր ինքզինքը այսպիսի խօսքերով. «Եթէ անոնք իյնան իմ ձեռքը, ես պիտի սպաննեմ զանոնք: Պիտի սպաննեմ զանոնք այն բանի համար, ինչ որ ըրին ինձի հետ: Անոնք պարտաւոր են հատուցելու ասոր համար»:

Բայց եթէ Յովսէփը իսկապէս ունենար այս դիրքը, Աստուած թոյլ կու տար, որ ան քայքայուէր այդ բանտին մէջ: Եթէ ան այս շարժառիթով դուրս ելլէր բանտէն, կը սպաննէր Իսրայէլի տասներկու ցեղերէն տասի առաջնորդները: Ասիկա ալ իր մէջ պիտի ներառէր Յուդան, որուն շառաւիղէն ալ պէտք է սերէր (հետագային ծնէր) Քրիստոսը:

Այո՛, անոնք, որոնք Յովսէփի հետ այդքան դաժան վարուեցան, Իսրայէլի նահապետներն էին, իսկ Աստուած խոստացած էր Աբրահամին, որ անոնցմէ ազգ մը պիտի սերի: Եւ, վերջապէս, անոնց միջոցով հետագային պէտք է գար Տէր Յիսուսը: Յովսէփը ազատ մնաց վիրաւորանքէն, եւ անոր ու իր եղբայրներուն կեանքին մէջ հաստատուեցաւ Աստուծոյ ծրագիրը:



## ԿՐՆԱՐ ԱԲԵԼԻ ՎԱՏԸ ՊԱՏԱՀԻԼ

Բանտը Յովսէփի համար «մաղուելու» ժամանակաշրջան էր, բայց նաեւ հնարաւորութեան ժամանակաշրջան: Յովսէփի հետ կային երկու բանտարկեալներ, եւ երկուքն ալ ունեցան խօսուն ու անհանգստացնող երագներ: Յովսէփը երկուքին երագներն ալ մեկնաբանեց ապշեցուցիչ ճշգրտութեամբ: Անոնցմէ մէկը պէտք է վերականգնուէր, մինչդեռ միւսը պէտք է մահապատիժի ենթարկուէր: Յովսէփը անոնցմէ մէկուն խնդրեց, որ, երբ վերականգնուի իր պաշտօնին ու վերստին արժանանայ փարաւոնին բարեհաճութեան, յիշէ զինք: Այդ մարդը կրկին վերադարձաւ փարաւոնին ծառայելու, բայց երկու տարի անցաւ, ու անոնցմէ ոչ մէկ լուր կար: Ատիկա Յովսէփի համար վիրաւորուելու եւ յուսահատելու եւս մէկ առիթ էր:

### *Աստուած միշտ ծրագիր ունի*

Որոշ ժամանակ յետոյ փարաւոնը տագնապեցնող երագ մը տեսաւ: Անոր կախարդներէն կամ իմաստուն մարդոցմէ ոչ մէկը կրցաւ երագը մեկնաբանել: Այդ ժամանակ վերստին իր պաշտօնին անցած ծառան յիշեց Յովսէփը: Ան պատմեց, թէ ինչպէս Յովսէփը բանտին մէջ մեկնաբանեց իր եւ իր ընկերոջ երագները: Յովսէփը բերին փարաւոնին առջեւ, ու ան մեկնաբանեց փարաւոնի երագը, թէ ինչ կը նշանակէր այն: Ըստ երագին՝ սովի ժամանակ մը պիտի գար: Յովսէփը իմաստուն ծելով փարաւոնին խորհուրդ տուաւ, թէ ինչպէս պէտք է պատրաստուիլ ճգնաժամին: Փարաւոնը Յովսէփին իրմէ յետոյ երկրորդը դարձուց ողջ Եգիպտոսի մէջ: Յովսէփը Աստուծմէ իրեն տրուած իմաստութեան միջոցով Եգիպտոսը նախապատրաստեց գալիք դաժան սովին դիմակայելուն:

Հետագային, երբ այս սովը եկաւ բոլոր ազգերուն վրայ, Յովսէփի եղբայրները ստիպուած էին գալ Եգիպտոս՝ աջակցութիւն գտնելու համար: Եթէ Յովսէփը իր սրտին մէջ որեւէ բան ունենար եղբայրներուն դէմ, յատկապէս այդ ժամանակ կրնար իրագործել իր սրտին ուզածը: Ան կրնար զանոնք մինչեւ մահ բանտ նետել կամ տանջանքի ենթարկել, կրնար նոյնիսկ սպաննել զանոնք ու չէր ալ մեղադրուեր, որովհետեւ դիրքով երկրորդն էր Եգիպտոսի մէջ: Փա-

րաւոնին համար անոր եղբայրները ոչ մէկ նշանակութիւն ունէին:

Յովսէփը անոնց անվճար հացահատիկ տուաւ: Յետոյ անոնց ընտանիքներուն յատկացուցին Եգիպտոսի լաւագոյն տարածքը, ու անոնք վայելեցին այդ տարածքի առատութիւնը: Որպէսզի ամէն բան ամբողջական դառնար, Եգիպտական երկրի ամենալաւ բաները անոնց տրուեցան: Յովսէփը ամէն բան աւարտին հասցուց՝ օրհնելով զանոնք, որոնք անիծած էին զինք, եւ բարիք ըրաւ անոնց, որոնք ատած էին զինք (տե՛ս Մատթ. 5.44):

Նախքան այս ամէնը Աստուած գիտէր, թէ ինչ պէտք է ընէին Յովսէփի եղբայրները: Փաստօրէն, նախքան Յովսէփին երազ տալը կամ ալ նախքան այդ տղաներուն ծնիլը Տէրը գիտէր, որ եղբայրները պիտի ընէին իրենց սեւ գործը:

Մէկ քայլ առջեւ երթալով՝ տեսնենք, թէ Յովսէփը ինչ ըսաւ եղբայրներուն, երբ տարիներ յետոյ անոնք հանդիպեցան. «Եւ հիմա մի՛ վշտանաք եւ մի՛ նեղուիք, որ զիս ծախեցիք հոս, *որովհետեւ Աստուած ուղարկեց զիս* ձեր առջեւ կէանք պահելու համար: Որովհետեւ երկրիս վրայ սովի երկրորդ տարին է այս, եւ տակաւին հինգ տարի կայ, որ վարուցան եւ հունձք չ'ըլլար: Եւ *Աստուած զիս ձեր առջեւ ուղարկեց*, որ երկրի վրայ ձեզի համար սերունդ պահէ եւ ձեզ ապրեցնէ մեծ ազատութիւնով: *Եւ արդ ոչ թէ դուք ուղարկեցիք զիս հոս, այլ Աստուած*, եւ զիս փարաւունին հայր եւ անոր բոլոր տանը տէր եւ Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրաւ» (Ծննդ. 45.5-8): Տեսնենք, թէ ինչ կ'ընէ սաղմոսերգուն. «Եւ սով կանչեց (Ան) երկրի վրայ եւ հացի ամէն զօրութիւնը կոտրեց: *Անոնց առջեւէն մարդ ուղարկեց. Յովսէփը ծառայութեան մէջ ծախուեցաւ*» (Սաղմ. 105.16,17):

Ո՞վ ուղարկեց Յովսէփը. անոր եղբայրնե՞րը, թե՞ Աստուած: Այս երկու վկայութենէն մեկնելով՝ կը տեսնենք, որ Աստուած ուղարկած էր զինք: Յովսէփը անկեղծօրէն ըսաւ իր եղբայրներուն. «Այդ դո՛ւք չէիք, որ ուղարկեցիք զիս»: Ուշադրութեամբ լսէ՛, թէ Հոգին ինչ կ'ընէ:

Ինչպէս արդէն հաստատեցինք, ո՛չ մէկ մահկանացու մարդ կամ սատանայ կրնար քու կեանքին մէջ գրաւել Աստուծոյ ծրագրին տեղը: Եթէ դուն այս ճշմարտութեան վրայ ամուր հաստատ-

լիս, այն քեզ կ'ազատէ: Բայց միայն մէկ անձնաւորութիւն կայ, որ կրնայ քեզ Աստուծոյ կամքէն դուրս հանել, աստիկա դո՛ւն ես:

Եկո՛ւր նայինք Իսրայէլի որդիներուն: Աստուած ուղարկած էր ազատարար մը՝ Մովսէսը, որպէսզի զանոնք դուրս հանէր Եգիպտոսի ստրկութենէն եւ առաջնորդէր դէպի Խոստմունքի երկիր: Մէկ տարի անապատին մէջ անցընելէն յետոյ առաջնորդները ուղարկուեցան խոստացուած երկիրը լրտեսելու: Լրտեսները վերադարձան դժգոհութեամբ: Անոնք վախցած էին երկրին մէջ ապրող ազգերէն, որոնք շատ էին եւ լաւ զինուած:

Բացի Յետւէն եւ Քաղէբէն, ողջ ժողովուրդը համաձայնեցաւ այդ առաջնորդներուն հետ: Այդ մարդոց կը թուար, որ Աստուած իրենց Եգիպտոսէն դուրս հանած էր մեռնելու համար: Անոնք վիրաւորուած էին Մովսէսէն եւ Աստուծմէ: Այս իրավիճակը շարունակուեցաւ մէկ տարիէն աւելի: Վիրաւորուածութեան հետեւանքով սերունդը երբեք չտեսաւ Աստուծոյ խոստացած երկիրը, որ անոնց պէտք է պատկանէր:

Շատ մարդիկ եռանդուն ձեւով ծառայած են Տիրոջը, բայց ինկած են կեանքի դժուար իրավիճակներու մէջ, քանի որ իրենց հետ վատ վարուած են կա՛մ չար մարդիկ, կա՛մ ալ մարմնաւոր քրիստոնեաները: Ճշմարտութիւնը այն է, որ անոնց հետ անարդար վարուած են: Բայց վիրաւորուելով անոնք կ'իրագործեն միայն թշնամիին նպատակը, իսկ այդ նպատակը զանոնք Աստուծոյ կամքէն դուրս հանելն է:

Եթէ դուն ազատ մնաս վիրաւորանքէն, ատորմով պիտի մնաս Աստուծոյ կամքին մէջ: Եթէ դուն վիրաւորուիս, կը նշանակէ, որ թշնամին քեզ գերի կը վերցնէ իր իսկ նպատակն ու կամքը իրականացնելու համար: Ուրեմն կատարէ՛ քու ընտրութիւնը: Դուն պիտի համոզուիս, որ աւելի օգտակար է վիրաւորանքէն ազատ մնալը:

Մենք պէտք է յիշենք, որ ոչ մէկ բան կրնայ պատահիլ առանց Տիրոջ իմացութեան: Եթէ աստանան կարենար իր կամքով կործանել մեզ, ապա վաղուց ոչնչացուցած կ'ըլլար, քանի որ ան կ'ատէ եռանդով լեցուած մարդը: Աստուծոյ Խօսքին այս յորդորը մի՛ շտ ունեցիր քու առջեւ.

«Ձեզի ուրիշ փորձութիւն չէ պատահած, բացի մարդկային փորձութենէն, բայց Աստուած հաւատարիմ է, որ չի ձգեր ձեզ ձեր կարողութենէն վեր փորձուելու, այլ փորձութեան հետ ելքն ալ կը պատրաստէ, որ կարենաք համբերել»:

– Ա. Կորնթ. 10.13

Ուշադրութիւն դարձուր, որ Խօսքը կ'ըսէ՝ «եւլքն ալ» եւ ոչ թէ «ինչ որ ելք մը»: Աստուած արդէն տեսած է ամէն վատ հանգամանք, որուն մենք պէտք է հանդիպինք, եւ նշանակութիւն չունի, թէ որքան մեծ կամ փոքր ըլլայ այն: Անկէ ազատելու համար Աստուած արդէն ունի ծրագրուած ճանապարհ: Եթէ մենք ազատ մնանք վիրաւորանքէն եւ ըլլանք հնազանդութեան մէջ, նոյնիսկ այն, ինչէն շատ կը վախնանք, այն, ինչ որ յաճախ կը թուայ, թէ կը խափանէ Աստուծոյ ծրագիրը, վերջաւորութեան փաստօրէն կը դառնայ այդ ծրագիրը իրականացնելու միջոց մը:

Յիշէ՛, չվիրաւորուելով Աստուծոյ հնազանդ կը մնան: Հակառակի՛ր սատանային, եւ ան կը փախչի քեզմէ (Յակոբ. 4.7): Չվիրաւորուելով մենք կը հակառակինք սատանային: Երազը կամ տեսիլքը թերեւս իրականանայ ոչ այնպէս, ինչպէս դուք կը կարծէք, բայց, միեւնոյնն է, Տիրոջ Խօսքն ու խոստումները երբեք չեն ձախողիր: Մեր անհնազանդութեամբ մենք միայն կ'երթանք ստոնք խափանելու ռիսքին:

## ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԱՅԼ ՏԵՍԱԿ

Ոչ բոլորը տառապած են այնպէս, ինչպէս Յովսէփը տառապեցաւ իր եղբայրներուն կողմէ: Ատիկա այդքան ցաւալի չէր ըլլար, եթէ այդպէս վարուէին անոր թշնամիները: Բայց չարութիւն գործողները անոր եղբայրներն էին՝ իր մարմինէն ու արիւնէն: Եղբայրները այն մարդիկն էին, որ պէտք է քաջալերէին, աջակցէին, պաշտպանէին զինք եւ հոգ տանէին անոր համար: Հնարաւոր էր վատ վերաբերմունքի աւելի վատ սենարիօ (բեմագրութիւն), քան այն, ինչին մէջ համբերեց Յովսէփը:



ԲԱՆ ՄԸՆ Է ՄԵՐԺՈՒԱԾՈՒԹԻՒՆ  
ԵՒ ՉԱՐՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՊՐԻԼ  
ԵՂԲՕՐ ԿԱՄ ՔՐՈՋ ԿՈՂՄԷՆ,  
ԲԱՅՑ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՈՒՐԻՇ ԲԱՆ  
ՄԸՆ Է ՀՕՐ ԿՈՂՄԷՆ ԱՅԴ ԱՄԷՆԸ  
ՎԵՐԱՊՐԻԼԸ

«Ես միջին եւ բարձր դասարաններու ուսուցիչ եմ: Վերջերս կարդացի «Սատանայի խայծը» գիրքը, որուն օգնութեամբ քանի մը յայտնութիւն ստացայ: Աշակերտներուն հետ դիտեցինք տեսաժապաւէնը, եւ մեր դասարանին մէջ այնքան զօրաւոր էր Սուրբ Հոգիին ներկայութիւնը, որ ամէն մէկը սկսաւ խոստովանիլ իր վիրաւորանքները եւ ներում խնդրել: Քանիներ կը վկայէին, որ ողջ տարուան մէջ այդ օրը ամենալաւ օրն էր իրենց համար: Աշակերտներէն մէկը հաշտուեցաւ իր հօր հետ, որմէ յուսահատած էր, ուրիշ մէկու մը քով սկսաւ մեծ մայրիկին վիրաւորանքէն բժշկուելու գործընթացը: Տէրը իսկապէս զօրաւոր ձեռով կը ծառայէր այս երեխաներուն: Շնորհակալութիւն Ձեզի այս պատգամին համար»:

– Ռ. Ֆ., ԻՆՏԻԱՆԱ

## ՀԱՅՐ ԻՄ, ՀԱՅՐ ԻՄ ...

---

*«Հայր իմ ... հասկցի՛ր եւ տե՛ս, որ իմ ձեռքը անօրէնութիւն  
չկայ, եւ քու դէմ յանցանք մը չեմ ըրած, բայց դուն  
կ'ուզես իմ անձը մեռցնել»:*

**– Ա. Թագ. 24.12**

**Ն**ախորդ գլուխին մէջ մենք տեսանք, թէ ինչպէս Յովսէփի եղբայրները կը փորձէին կործանել զինք: Մենք տեսանք, թէ ան ինչպիսի ցաւ վերապրեցաւ այս դաւաճանութենէն:

Միգուցէ դուն եւս նման իրավիճակի մէջ ես: Թերեւս դուն ալ մատնուած ես քու ամենամտերիմ մարդոց կողմէն, մարդոց, որոնցմէ դուն կը սպասէիր սէր եւ քաջալերանք:

Այս գլուխին մէջ կ'ուզեմ խօսիլ իրավիճակի մը մասին, որ աւելի ցաւոտ է, քան եղբօր կողմէն մատնութիւնը: Բան մըն է մերժը-

լածութիւն եւ չարութիւն վերապրիլ եղբօր կողմէն, բայց բոլորովին ուրիշ բան մերժուածութիւն եւ չարութիւն վերապրիլ հօր կողմէն: Երբ ես կը խօսիմ հայրերու մասին, ուղղակի նկատի չունիմ կենսաբանական հայրը, այլ ռեւէ աւագ, որուն Աստուած դրած է մեր վրայ: Ասոնք այն մարդիկն են, որոնց համար կը կարծենք, թէ պէտք է սիրեն մեզ, ուսուցանեն, քաջալերեն եւ հոգ տանին մեզի համար:

## ՍԻՐԵԼՈՒ ԵՒ ԱՏԵԼՈՒ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Մատնող հօր օրինակը դիտարկելու համար եկո՛ւր անդրադառնանք Սաւուդ թագաւորին եւ Դաւիթին միջեւ եղած փոխյարաբերութիւններուն (տե՛ս Ա. Թագ. 16-31-րդ գլուխներ): Անոնց կեանքերը իրար բախտեցան նոյնիսկ մինչեւ իրար հանդիպիլը, այն ժամանակ, երբ Աստուծոյ մարգարէ Սամուէլը Դաւիթը օծեց որպէս Իսրայէլի յաջորդ թագաւոր: Դաւիթը պէտք է, որ ոգեւորուած ըլլար՝ մտածելով, որ ասիկա այն նոյն մարդն էր, որ Սաւուդն ալ անորմէ օծուեցաւ. ուրեմն ինքը իսկապէս թագաւոր պիտի դառնայ:

Վերադառնալով պալատ՝ Սաւուդը չար հոգիի մը կողմէ տանջանքի կ'ենթարկուէր, քանի որ չէր հնազանդած Աստուծոյ: Սաւուդը կը խաղաղէր միայն այն ժամանակ, երբ ինչ որ մէկը տաւիղ կը նուագէր: Սաւուդի ծառաները սկսան փնտռել երիտասարդ մը, որ կրնար նստիլ անոր կողքին եւ ծառայել անոր: Թագաւորի ծառաներէն մէկը առաջարկեց կանչել Դաւիթը՝ Հեսաէի որդին: Սաւուդ թագաւորը մարդ ուղարկեց Դաւիթին ետեւէն եւ խնդրեց անորմէ պալատ գալ ու ծառայել իրեն:

Դաւիթը թերեւս այսպէս կը մտածէր. *«Աստուած արդէն կը պատրաստուի իրականացնելու մարգարէին միջոցով տուած Իր խոստումը: Ես, անկասկած, պիտի արժանանամ թագաւորի բարեհաճութեան: Ասորմով ալ մուտք կը գործեմ իմ դիրքին մէջ»:*

Անցաւ ժամանակ, եւ Դաւիթին հայրը խնդրեց անորմէ ուտելիք տանիլ իր աւագ եղբայրներուն, որոնք փոշտացիներուն դէմ պատերազմի մէջ էին: Հասնելով ռազմաճակատի գիծը՝ Դաւիթը տեսաւ փոշտացի հերոսը՝ Գողիաթը, որ կը ծաղրէր Աստուծոյ բանակը, եւ տեղեկացաւ, որ ասիկա կը շարունակուի արդէն



քառասուն օր: Դաւիթին յայտնի դարձաւ, որ թագաւորը իր աղջկան ձեռքը կ'առաջարկէր այն տղամարդուն, որուն ձեռքով պիտի տապալուէր այդ հսկան: Դաւիթը գնաց թագաւորին քով ու կռուելու համար թոյլտուութիւն խնդրեց: Ան սպաննեց Գողիաթը եւ ստացաւ Սաւուղին աղջիկը: Անկէ յետոյ ան արժանացաւ Սաւուղի բարեհաճութեան, եւ զինք բերին պալատ, որպէսզի ապրէր թագաւորին հետ: Սաւուղին աւագ որդին՝ Յովնաթանը, Դաւիթի հետ ընկերութեան յաւիտենական ուխտ կնքեց: Սաւուղը ինչ կը յանձնարարէր Դաւիթին, Դաւիթը կ'ընէր եւ կը յաջողէր, քանի որ Աստուծոյ ձեռքը անոր վրայ էր: Թագաւորը առաջարկեց, որ Դաւիթը իր որդիներուն հետ սեղան նստի:

Դաւիթի սիրտը կը թրթռար: Ան կ'ապրէր պալատին մէջ, կ'ուտէր թագաւորին սեղանէն, ամուսնացած էր թագաւորին աղջկան հետ, ընկերութիւն կ'ընէր Յովնաթանին հետ եւ յաջողակ էր իր բոլոր ընկերներուն հետ ունեցած փոխյարաբերութիւններուն մէջ: Դաւիթը նոյնիսկ արժանացած էր ամբողջ ժողովուրդի բարեհաճութեան: Ան կրնար տեսնել, թէ ինչպէս իր աչքին արջեւ կը սկսէր իրականանալ մարգարէութիւնը:

Միւս ծառաներուն արջեւ Սաւուղը ցոյց կու տար Դաւիթին հանդէպ իր սիրալիրութիւնը: Ան Դաւիթին համար հայր դարձած էր: Դաւիթը վստահ էր, որ Սաւուղը պիտի առաջնորդէ ու պիտի մարզէ զինք եւ օր մըն ալ մեծ պատիւով պիտի դնէ գահին վրայ: Դաւիթը կ'ուրախանար Աստուծոյ հաւատարմութեան եւ բարութեան համար: Բայց օր մը ամէն ինչ փոխուեցաւ:

Երբ Սաւուղն ու Դաւիթը միասին վերադարձան ճակատամարտէն, Իսրայէլի բոլոր քաղաքներէն կանայք պարելով ու երգելով դուրս ելան դիմաւորելու զանոնք. «Սաւուղը սպաննած է հազարները, իսկ Դաւիթը՝ տասը հազարները»: Ասիկա բարկացուց Սաւուղը, եւ այդ օրուրնէ սկսեալ՝ ան արհամարհեց Դաւիթը: Երկու անգամ, երբ Դաւիթը տաւիղ կը նուագէր Սաւուղի համար, ան փորձեց սպաննել զանիկա:

Աստուածաշունչը կ'ըսէ, որ Սաւուղը կ'ատէր Դաւիթը, որովհետեւ ան գիտէր, որ Աստուած Դաւիթի հետ էր եւ ոչ թէ իր: Դաւիթը իր կեանքը փրկելու համար ստիպուած էր փախուստի դիմել: Քա-

նի որ ան ոչ մէկ տեղ ունէր երթալու, անապատ փախաւ:

«Ի՞նչ տեղի կ'ունենայ,- կը մտահոգուէր Դաւիթը,- խոստումը կ'իրականանար, իսկ հիմա այն փշրուեցաւ: Այն մարդը, որ իմ առաջնորդն է, հիմա կը փորձէ սպաննել զիս: Ի՞նչ կրնամ ընել: Սաւուղը Աստուծոյ օծեալ ծառան է: Ան դուրս ելած է իմ դէմ, ես ի՞նչ ընեմ. ան է թագաւորը, ան է Աստուծոյ մարդը Աստուծոյ ազգին վրայ: Ինչո՞ւ Աստուած թոյլ կու տայ ասիկա»:

Սաւուղը Իսրայէլի երեք հազար ընտրեալ մարտիկներուն հետ Դաւիթը կը հետապնդէր անապատէ- անապատ եւ քարանձաւէ-քարանձաւ: Անոնց միակ նպատակը Դաւիթը կործանելն էր:

Այս ընթացքին խոստումը ուղղակի ստուերի մը պէս էր: Դաւիթը այլեւս պալատին մէջ չէր ապրեր, ոչ ալ թագաւորին սեղանէն կ'ուտէր: Ան կը բնակէր խոնաւ քարանձաւներուն մէջ եւ կ'ուտէր անապատի գազաններու մնացորդները: Դաւիթը կը հետապնդուէր այն մարդոցմէ, որոնք պատերազմի ժամանակ իր կողմէն եղած էին: Չկար այլեւս տաք անկողին, չկային իրեն համար հոգ տանող ծառաները: Անոր հարսնցուն ալ ուրիշ մէկու մը տուած էին: Դաւիթը վերապրեցաւ պանդուխտ մարդու միայնութիւնը:

Ուշադիր եղիր, որ Աստուած եւ ոչ թէ սատանան Դաւիթը դրած էր Սաւուղի խնամակալութեան ներքոյ: Ինչո՞ւ Աստուած ոչ միայն թոյլ տուած էր այս ամէնը, այլ ծրագրած էր: Ինչո՞ւ Դաւիթի աչքերուն առջեւ տակաւին նոր երեւցող շնորհքը անսպասելի վերցուեցաւ անորմէ: Այս ամէնը Դաւիթին համար ոչ միայն Սաւուղէն, այլեւ Աստուծմէ վիրաւորուելու նախադրեալ էին: Բոլոր այս չպատասխանուած հարցերը Դաւիթին մէջ Աստուծոյ իմաստութիւնն ու ծրագիրը կասկածի ենթարկելու գայթակղութիւն յառաջացուցին:

Սաւուղը այնքան վճռական էր այս երիտասարդը ամէն գնով սպաննելու մտադրութեան մէջ, որ անոր խելագարութիւնը երթալով կը խորանար: Սաւուղը դարձած էր յուսահատ մարդ: Նոք քաղաքի քահանաները ապահովեցին Դաւիթը ապաստարանով, սնունդով ու Գողիաթի սուրով: Անոնք ոչինչ գիտէին Սաւուղէն անոր փախուստի մասին եւ կը մտածէին, որ ան թագաւորին կողմէն ուղարկուած էր: Անոնք Աստուծմէ յայտնութիւն ունէին Դաւի-

թին համար եւ անոր ինչպէս որ հարկն էր ճանապարհ դրին:

Երբ Սաւուղին յայտնի դարձաւ ասիկա, կատղեցաւ: Ան սպաննեց Տիրոջ ութսունհինգ քահանաները եւ սուրի քաշեց ողջ Նոր քաղաքը՝ տղամարդիկը, կիները, երեխաները, կաթնակեր նորածինները, կովերը, աւանակները եւ ոչխարները: Սաւուղը այդ անմեղներուն դէմ դատաստան ըրաւ այնպէս, ինչպէս ատիկա կ'ընէր ամաղեկացիներուն դէմ: Ան մարդասպան էր: Աստուած ինչպէ՞ս երբեք կրնար Իր Հոգին դնել այդպիսի մարդու մը մէջ:

Յիշենք ուրիշ դէպք մը. Սաւուղը գիտցաւ, որ Ղաւիթը Ենգադդիի անապատին մէջ էր, եւ երեք հազար պատերազմողներու հետ ինկաւ անոր ետեւէն: Իրենց ճանապարհին անոնք կեցան հանգստանալու քարայրի մը մուտքին քով՝ չգիտնալով, որ Ղաւիթը պահուըտած է քարայրին խորքը: Սաւուղը հանեց իր վերարկուն եւ պառկեցաւ: Ղաւիթը հանգիստ դուրս ելաւ թաքստոցէն, վերարկուէն կտոր մը կտրեց ու գաղտագողի հեռացաւ:

Երբ Սաւուղը դուրս ելաւ քարայրէն, Ղաւիթը խոնարհեցաւ մինչեւ գետին եւ անոր ետեւէն աղաղակեց. «Եւ տե՛ս, հա՛յր իմ, տե՛ս, քու վերարկուի ծայրը իմ ձեռքն է... հասկցի՛ր ու տե՛ս, որ իմ ձեռքը *չարութիւն եւ անօրէնութիւն չկայ*, եւ քու դէմ յանցանք մը չեմ ըրած, բայց դուն կ'ուզես իմ անձը մեռցնել» (Ա. Թագ. 24.12): Ղաւիթի աղաղակը Սաւուղին այս էր. «Հա՛յր իմ, հա՛յր իմ»: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ Ղաւիթը կ'աղաղակէր՝ ըսելով. «Տե՛ս իմ սիրտը: Եղի՛ր ինձի հայր: Ես կարիք ունիմ առաջնորդի մը, որ պէտք է մարզէ զիս եւ ոչ թէ կործանէ»: Նոյնիսկ այն ժամանակ, երբ Սաւուղը կը փորձէր սպաննել Ղաւիթը, անոր սրտին մէջ տակաւին յոյս կար:

## Ո՞ՒՐ ԵՆ ՀԱՅՐԵՐԸ

Քրիստոսի մարմնին մէջ այս աղաղակը ես տեսած եմ բազմաթիւ մարդոց քով: Անոնցմէ շատերը իրենց կեանքին մէջ Աստուծոյ զօրաւոր կանչը ունեցող երիտասարդներ են: Անոնք կ'աղաղակեն իր համար, մարդու մը, որ կ'ուսուցանէ, կը սիրէ, կ'աջակցի եւ կը քաջալերէ զիրենք: Ահա ասոր համար ալ Աստուած կ'ըսէ, որ Ինքը «պիտի դարձնէ հայրերուն (աւագներուն, առաջնորդնե-

րուն) սիրտը դէպի որդիները (ժողովուրդը) եւ որդիներու սիրտը՝ դէպի իրենց հայրերը, որ թերեւս Ես գամ եւ երկիրը զարնեմ անէծքով» (Մաղաքիա 4.6):

Մեր ազգը (նկատի ունի ամերիկացիները) 1940-1950- ական թուականներուն կորսնցուց իր հայրերը (հայրիկները, առաջնորդները կամ ծառայողները), եւ այսօր մեր վիճակը երթալով աւելի կը վատանայ: Ի տարբերութիւն Սաւուղին մեր ընտանիքներու, ընկերութիւններու եւ եկեղեցիներու շատ առաջնորդներ աւելի մտահոգուած են իրենց նպատակներուն, քան թէ իրենց սերունդներուն համար:

Նման կեցուածքի պատճառով այս առաջնորդները Աստուծոյ ժողովուրդին կը նային որպէս իրենց տեսիլքին ծառայելու միջոցներ, անոնք չեն տեսներ, որ տեսիլքը միջոց է ժողովուրդին ծառայելու համար: Տեսիլքի յաջողութեան համար կ'անտեսուին մարդոց վիրաւորուած ու փշրուած կեանքերը: Իրենց յաջողութեան համար անոնք կը շրջանցեն արդարութիւնը, ողորմութիւնը, ազնուութիւնն ու սէրը: Անոնց որոշումները հիմնուած են դրամի քանակի եւ հետեւանքներու վրայ:

Ասիկա դուռ կը բանայ այնպիսի վերաբերմունքի համար, ինչպիսին ստացաւ Դաւիթը: Այս ամէնէն յետոյ Սաւուղը տակաւին կը պահպանէր իր թագաւորութիւնը: Նման վերաբերմունքը ընդունուած է աւագներու մտածելակերպին մէջ, քանի որ անոնք կը փնտռեն ունենալ յաջողակ Աւետարան:

Որքան շատ աւագներ կասկածանքի պատճառով հեռացուցած են իրենց պատասխանատուութեան տակ գտնուող մարդիկը: Ինչո՞ւ այս աւագները կասկածամիտ են: Պատասխանը այսպիսին է. անոնք Աստուծոյ չեն ծառայեր, այլ տեսիլքին: Սաւուղին պէս իրենց կոչումին մէջ անոնք անվստահելի են, եւ ատիկա ալ առաջ կը բերէ նախանձ ու հպարտութիւն: Այդ աւագները մարդոց մէջ կ'ընդունին որակական այն յատկանիշները, որոնք, ըստ իրենց, աստուածային են, եւ այդ մարդոց կ'օգտագործեն այնքան ժամանակ, քանի ատիկա իրենց օգուտ կը բերէ: Սաւուղը Դաւիթին յաջողութենէն բաւականութիւն կը ստանար այնքան ժամանակ, մինչեւ որ տեսաւ, որ ատիկա իրեն համար սպառնալիք էր:

Յետոյ Սաւուղը նսեմացուց Ղաւիթը եւ զինք կործանելու համար պատճառ կը փնտռէր:

Ես գրուցած եմ բազմաթիւ երիտասարդներու հետ, որոնք կը պահանջեն, որ ինչ որ մէկը պատասխանատու ըլլայ իրենց համար: Անոնք կ'ուզեն իրենց գլխուն աւագ ունենալ, որուն իրենք կը հետեւին: Անոնք իրենք զիրենք մեկուսացած ու միայնակ կը զգան եւ կը փնտռեն ինչ որ մէկը, որ իրենց համար հայր կը դառնայ: Բայց Աստուած թոյլ տուած է, որ անոնք անցնին մերժուածութեան մէջէն, քանի որ Աստուած կ'ուզէ անոնց մէջ ծեւաւորել այն, ինչ որ ըրած էր Ղաւիթին մէջ: Ուշադիր լսէ՛, թէ Հոգին ինչ կ'ըսէ:

Սաւուղը կը հաւատար, որ Ղաւիթը ապստամբ ու չար էր, իսկ Ղաւիթը մտահոգուած էր յատկապէս ասոր համար: Ղաւիթը կը քննէր իր սիրտը՝ ըսելով. «Ո՞ւր սխալած եմ: Ինչպէ՞ս եղաւ, որ Սաւուղին սիրտը այդքան արագ շրջուեցաւ իմ դէմ»: Ահա թէ ինչու ան կ'աղաղակէր. «Ինչ որ մէկը կը համոզէր ինձի, որ սպաննեմ քեզ, բայց ես չըրի ասիկա: Ես ընդամենը կտրեցի քու վերարկուի ծայրը, որպէսզի դուն կարենայիր *գիտնալ եւ տեսնել, որ իմ ձեռքը չկայ ո՛չ չարութիւն, ոչ ալ ապստամբութիւն*» (տե՛ս Ա. Թագ. 24.12): Ղաւիթը կը կարծէր, որ եթէ ինքը Սաւուղին նկատմամբ ունեցած իր սէրը կարենար ապացուցել, ապա Սաւուղին քով նորէն շնորհք կը գտնէր, եւ մարգարէութիւնը իրականութիւն կը դառնար:

Այն մարդիկ, որոնք հօր կամ աւագի կողմէն մերժուածութիւն ապրած են, հակուած են ամէն ինչի մէջ զիրենք մեղադրել: Անոնք կ'իյնան այսպիսի տանջող մտքերու գերութեան տակ՝ *«Ի՞նչ ըրի ես»*, կամ *«Թերեւս իմ սիրտը անմաք՞ուր է»*: Անոնք երբեմն ալ կը կարծեն, թէ *ինչ որ մէկը փոխած է աւագի վերաբերմունքը իրենց նկատմամբ*: Այնուհետեւ անընդհատ կը փորձեն ապացուցել աւագներուն նկատմամբ իրենց անմեղութիւնը: Անոնք կը մտածեն, որ եթէ միայն կարենան ցոյց տալ իրենց հաւատարմութիւնն ու արժանիքը, կ'ընդունուին: Ցաւոք, որքան շատ կը փորձեն ասիկա ընել, այնքան շատ մերժուածութիւն կը զգան:

## Ո՞Վ ԿՐԷԺԵՆՆԴԻՐ Կ'ԸԼԼԱՅ ԻՆԾԻ ՀԱՄԱՐ

Սաւուղը ճանչցաւ Դաւիթի բարութիւնը, երբ տեսաւ, որ Դաւիթը կրնար սպաննել զինք, բայց չսպաննեց: Սաւուղը եւ անոր մարդիկ հեռացան: Դաւիթը պէտք է որ մտածէր հետեւեալը. «*Հիմա թագաւորին արջեւ շնորհք կը գտնեմ: Հիմա կ'իրականանայ մարգարէութիւնը: Ան իսկապէս տեսաւ իմ սիրտը եւ հիմա ինձի հետ աւելի լաւ պիտի վարուի*»: Ոչ այդքան շուտ, Դաւիթ: Ընդամէնը կարճ ժամանակ մը յետոյ մարդիկ Սաւուղին տեղեկացուցին, որ Դաւիթը Եքեղայի բլուրներուն վրայ էր: Սաւուղը նոյն երեք հազար զինուորներով նորէն ինկաւ Դաւիթի ետեւէն: Ես վստահ եմ, որ ասիկա ցնցեց Դաւիթը: Ան հասկցաւ, որ կատարուածը թիրիմացութիւն չէր, այլ, իսկապէս, Սաւուղը առանց սադրանքի, դիտաւորեալ կը փնտռէ զինք: Որքան մերժուած պէտք է զգար Դաւիթ ինքզինքը: Սաւուղը գիտէր Դաւիթի սիրտը եւ տակաւին կը շարունակէր դուրս ելլել անոր դէմ:

Դաւիթը Աբեսսային հետ Սաւուղին ճամբարը մտաւ: Ոչ մէկ պահապան զինուոր տեսաւ անոնց, որովհետեւ Աստուած անոնց բռլորին խոր քուն տուած էր: Այս երկուքով զաղտնի ձեւով շրջեցան ամբողջ բանակով մէկ եւ հասան հոն, ուր քնացած էր Սաւուղը:

Աբեսսան խօսեցաւ Դաւիթին հետ. «Աստուած այսօր քու թշնամին քու ձեռքը մատնեց, եւ հիմա թող տո՛ւր, որ նիզակով մէկ անգամով գետին զարնեմ զինք եւ չկրկնեմ» (Ա. Թագ. 26.8):

Աբեսսան շատ հիմնաւոր պատճառներ ունէր, երբ կը մտածէր, որ Դաւիթը թոյլ կու տար իրեն սպաննել Սաւուղը: Առաջին պատճառը այն էր, որ Սաւուղը սպաննած էր ութսունհինգ անմեղ քահանաներ՝ անոնց ընտանիքի անդամները արեան մէջ ձգելով:

Երկրորդը այն էր, որ ան երեք հազարանոց բանակով դուրս ելած էր սպաննելու Դաւիթը եւ անոր հետեւորդները: Աբեսսան կը մտածէր այսպէս. «Եթէ դուն առաջինը չսպաննես թշնամին, ապա ան անպայման կը սպաննէ քեզ»: Ասիկա ինքնապաշտպանութիւն է: Դատական օրէնքով ատիկա թոյլատրելի է:

Երրորդը այն էր, որ Աստուած Սամուէլին միջոցով Սաւուղէն յետոյ Դաւիթը օժած էր որպէս Իսրայէլի թագաւոր: Դաւիթը պէտք

է տէր կանգնէր իր ժառանգութեան, եթէ չուզէր մեռնիլ, նոյնիսկ եթէ չիրականանար մարգարէութիւնը:

Չորրորդը այն էր, որ Աստուած այս ողջ բանակը դրած էր խորունկ քունի մէջ, որպէսզի Դաւիթն ու Աբեսսան ուղիղ երթան Սաւուղին քով: Ալ ինչո՞ւ Աստուած այդպէս ըրած էր: Աբեսսան կը կարծէր, որ Դաւիթը այդպիսի առիթ ալ երբեք չէր ունենար:

Բոլոր այս պատճառները լաւ կը հնչէին: Կը թուար, թէ Դաւիթը քաջալերանք կը ստանար ուրիշ եղբօր մը կողմէն: Ուրեմն, եթէ Դաւիթը քիչ մըն ալ վիրաւորուած ըլլար, ապա ամբողջովին ինքզինքը արդարացած կը զգար եւ թոյլ կու տար Աբեսսային, որ նիգակով խոցէ Սաւուղը:

Հիմա լսէ՛ Դաւիթին արծագանգը. «Մի՛ մեռցնէր զանիկա, որովհետեւ Տիրոջ օծեալին ո՞վ կրնայ ձեռքը մեկնել եւ անպարտ ըլլալ... Տէրը կենդանի է, որ Տէրը զանիկա կը զարնէ, կամ անոր օրը կու գայ, կը մեռնի, կամ թէ պատերազմի մէջ կը մտնէ եւ կը մեռնի: Տէրը չընէ, որ ես ձեռքս մեկնեմ Տիրոջ օծեալի դէմ» (Ա. Թագ. 26.9-11):

Դաւիթը չսպաննեց Սաւուղը, չնայած որ Սաւուղը անմեղ մարդիկ սպաննած էր եւ կը ցանկար սպաննել նաեւ Դաւիթը: Դաւիթը ինքը վրէժխնդիր չեղաւ, այլ վրէժխնդրութիւնը յանձնեց Աստուծոյ ձեռքերուն մէջ:

Անշուշտ, աւելի դիւրին կ'ըլլար այս ամէնուն վերջ տալ ճիշդ հոս: Ատիկա դիւրին կ'ըլլար ե՛ւ Դաւիթին, ե՛ւ Իսրայէլի ժողովուրդին համար: Դաւիթը գիտէր, որ իր ազգը նման է հովիւ չուսեցող ոչխարի հօտին: Ան գիտէր, որ գայլ մը կը յափշտակէր զանոնք իր եսասիրական ցանկութիւններուն համար: Դաւիթի համար դըժուար էր իրեն չպաշտպանելը, բայց հաւանաբար աւելի դժուար էր իր սիրած ժողովուրդին կատղած թագաւորէն չազատիլը: Դաւիթը վրէժխնդիր չըլլալու այս որոշումը կայացուց՝ գիտնալով, որ Սաւուղի միակ մխիթարութիւնը զինք կործանելու մտադրութիւնն էր: Դաւիթը իր սրտին մաքրութիւնը ապացուցեց այն ժամանակ, երբ առաջին անգամ խնայեց Սաւուղը: Մինչդեռ, երբ Դաւիթը Սաւուղը սպաննելու համար երկրորդ հնարաւորութիւնը ունեցաւ, դարձեալ ձեռք չտուաւ անոր: Սաւուղը Տիրոջ օծեալն էր, եւ Դաւիթը

դատաստանի համար զանիկա յանձնեց Աստուծոյ ձեռքերուն մէջ:

Իսկ այսօր կա՞ն արդեօք մարդիկ, որոնք Դաւիթի սրտին նման սիրտ ունին: Այսօր մենք այլեւս ֆիզիքական սուրերով չենք սպաններ, այլ մէկս միւսին կը կործանենք մէկ այլ տեսակի սուրով, որ լեզուն է. «Սահն ու կեանքը լեզուի ձեռքն են» (Առակ. 18.21):

Վիրաւորուածութենէն եւ յուսախաբէութենէն սկիզբ առած խօսքերու ուժեղ յարձակումէն եկեղեցիները կը մասնատուին, ընտանիքները կը բաժնուին, կը քայքայուին ամուսնութիւնները, եւ սէրը կը մեռնի: Ընկերներէն, ընտանիքէն եւ աւագներէն վիրաւորուելով՝ մենք կը սկսինք զինուիլ դառնութեամբ ու բարկութեամբ լեցուած խօսքերով: Հնարաւոր է, որ մեր ունեցած տեղեկութիւնները իրական եւ ճշգրիտ ըլլան, բայց կրնան մաքուր չըլլալ շարժառիթները:

Առակաց 6.16-19-ն կ'ըսէ, որ եղբայրներու մէջ տարածայնութիւն կամ բաժանութիւն սերմանելը զգուելի է Տիրոջ առջեւ: Եթէ մենք ինչ որ բան մը անընդհատ կ'ընենք փոխյարաբերութիւններն ու մարդիկ բաժնելու կամ զանոնք վնասելու դիտաւորութեամբ, անկախ այն բանէն՝ ճիշդ է այն, թէ ոչ, միեւնոյնն է, ատիկա նոյնպէս անարգանք է Աստուծոյ:

## ԱՐԴԵՕ՞Ք ԱՍՏՈՒԲԾ Կ'ՕԳՏԱԳՈՐԾԷ ԶԻՍ ԱՒԱԳԻՍ ՄԵՂՔԵՐԸ ԲԱՑԱՅԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախքան Աստուած ինձի եւ իմ կնոջը այս ծառայութեան մէջ բերէր, եօթը տարի շարունակ ես ամբողջութեամբ կը ծառայէի օգնութիւններու ծառայութեան մէջ եւ երիտասարդներու հովիւ էի: Այդ ժամանակ մարդ մը կար, որ զիս չէր սիրեր, եւ այն պատգամը, որ ես կը քարոզէի, անոր հաճելի չէր գար: Սովորաբար ատիկա զիս չէր մտահոգեր, բայց այդ մարդը իշխանութեան դիրք ունէր իմ վրաս:

Ես հաւատացած էի, որ Աստուած զիս ըսած էր մաքրութեան ու համարձակութեան զօրաւոր խօսքեր տալ այդ երիտասարդներուն: Այդ մարդուն որդին ալ իմ խումբին մէջ էր:

Յանդիմանութիւնը շարժած էր այդ երիտասարդին (անոր որ-



դիհին) սիրտը: Օր մը ան լալով մեր քով եկաւ: Տղան վրդովուած էր, քանի որ զգացած էր, որ այն ապրելառճը, որ կը տեսնէր իր ընտանիքին մէջ, չէր տաներ այն նպատակին, որուն համար կոչ ըրած էի անոր եւ միւս երիտասարդներուն:

Այս դէպքէն եւ անձնական միւս բախումներէն կ'երեւէր, որ անոր հայրը որոշած էր ազատիլ ինձմէ: Ան զացած էր աւագ հովիւին քով, որպէսզի սուտ մեղադրանքներով վերջինիս բարկութիւնը բորբոքէր իմ դէմ: Յետոյ ան մօտեցաւ ինձի եւ ըսաւ, թէ ինչպէս ինքը պաշտպանած էր զիս, երբ աւագ հովիւը դէմ եղած էր ինձի: Ի յայտ եկած էին տեսակաւորուած քննադատական համառօտ գրութիւններ, որոնց հեղինակը իբրեւ թէ ես էի, բայց ատոնցմէ ոչ մէկը իմ անունը կը կրէր: Ատոնք անուղակիօրէն կը հաստատէին իմ ինքնութիւնը: Այդ մարդը կը ժպտար իմ երեսին, բայց մտադրութիւն ունէր կործանելու զիս:

Երիտասարդներու խումբէն քանի մը անդամներ ըսին, որ իրենք լսած են, թէ զիս պէտք է հանեն ծառայութենէն: Այդ մարդու որդին տարածած էր այդ լուրերը, եւ ատիկա ըրած էր ոչ թէ չարասրտօրէն, այլ ուղղակի կրկնած էր այն, ինչ որ լսած էր տանը: Ես բարկացած ու շփոթած էի: Գացի այդ մարդուն քով, եւ ան խոստովանեցաւ, որ ըսած է ատիկա, բայց անելցուց, որ ուղղակի կրկնած է աւագ հովիւին կարծիքը:

Անցան ամիսներ: Կը թուար, որ իրավիճակը մեղմացնելու ոչ մէկ յոյս կար: Ան հասցուցած էր խեղաթիւրել աւագ հովիւի եւ իմ միջեւ եղած յարաբերութիւնները: Նոյնը տեղի կ'ունենար ոչ միայն հետս, այլեւ բոլոր այն հովիւներուն, որոնք նոյնպէս չէին արժանանար այդ մարդու բարեհաճութեան:

Իմ ընտանիքը կը գտնուէր մշտական ճնշումի տակ: Չէինք զիտեր՝ պիտի մնանք եկեղեցւոյ մէջ, թէ դուրս պիտի ելլենք: Մենք տուն գնած էինք, կինս ալ յղի էր, ու ոչ մէկ տեղ կրնայինք երթալ: Ես չէի ուզեր այլ աշխատանք փնտռել: Հաւատացած էի, որ Աստուած զիս բերած էր այդ եկեղեցի, եւ երթալու այլ տարբերակ չունէի:

Իմ կինը ջղայնացած ու կոտորուած էր: «Սիրելի՛ս, ես գիտեմ, որ անոնք կը պատրաստուին հանել քեզ: Բոլորը ինձի ատիկա կ'ըսեն»:

«Անոնք դուրս չեն հաներ զիս եւ չեն կրնար հանել զիս առանց Աստուծոյ հաւանութեան», - ըսի կնոջս: Կինս կը կարծէր, թէ ես կը թերագնահատեմ ստեղծուած իրավիճակը, եւ խնդրեց ինծմէ լռել:

Վերջապէս տեղեկացանք, որ զիս արծակելու որոշումը կայացած է: Աւագ հովիւը յայտարարեց եկեղեցւոյ, որ երիտասարդներու խումբի ղեկավարման մէջ փոփոխութիւններ պիտի ըլլան: Ես տակաւին չէի խօսած աւագ հովիւիս հետ իմ աւագին հետ ունեցած խնդիրին մասին: Որոշեցի յաջորդ օրը հանդիպիլ աւագ հովիւին եւ այդ աւագի հետ: Աստուած շատ իւրայատուկ ձեւով մղեց, որ չպաշտպանեմ անձս:

Երբ յաջորդ օրը հանդիպեցայ աւագ հովիւին, անակնկալի եկայ. ան առանձին էր գրասենեակը: Հովիւը նայեցաւ ինձի եւ ըսաւ. «Ճո՛ւն, Աստուած քեզ ուղարկած է այս եկեղեցին: Ես թոյլ չեմ տար, որ երթաս»: Ես հանգստացայ: Աստուած պաշտպանած էր զիս վերջին պահուն:

Աւագ հովիւը հարցուց ինձի. «Ինչո՞ւ այդ մարդը ինկած է քու ետեւէն: Կը խնդրեմ, գնա՛ անոր քով, եւ վերականգնեցէ՛ք ձեր յարաբերութիւնները»:

Այս հանդիպումէն կարճ ժամանակ յետոյ ես ստացայ այդ աւագին որոշումի փաստացի գրութիւնը, որ կը վերաբերէր իմ պարտաւորութիւններու ոլորտին: Այն կը բացայայտէր անոր իրական շարժառիթները: Ես պատրաստ էի այն ներկայացնել աւագ հովիւին:

Այդ օրը ես երկար քալեցի եւ մօտ քառասունհինգ վայրկեան կ'աղօթէի՝ փորձելով յաղթահարել այն տհաճ զգացումը, որ ունէի: Ես շարունակ կ'ըսէի. «Աստուա՛ծ իմ, այդ մարդը անագնիս եւ չար եղած է: Անոր իրական դէմքը պէտք է բացայայտուի: Ան վտանգաւոր խոչընդոտ է այս ծառայութեան մէջ: Ես պէտք է պատմեմ հովիւին, թէ իրականութեան մէջ ով է ան»:

Յետոյ ես կ'արդարացնէի իմ մտադրութիւնները զինք բացայայտելու համար: «Այն ամէնը, ինչ որ ես պիտի տեղեկացնեմ, փաստ է եւ ապացուցուած, ոչ թէ յօրինուած: Եթէ ան կանգ չառնէ, անոր չարութիւնը կը տարածուի ողջ եկեղեցւոյ մէջ»:

Վերջապէս յուսահատութեան մէջ, առանց մտածելու, ես բացականչեցի. «Աստուած իմ, Դուն չես ուզեր, որ ես բացայայտեմ զինք, այնպէս չէ՞»:

Երբ ես ըսի այս խօսքերը, Աստուծոյ խաղաղութիւնը հեղեղեց իմ սիրտը: Ջարմանքէն բռնեցի գլուխս: Իմացայ, որ Աստուած չէր ուզեր, որ որեւէ բան ընեմ, աստոր համար ալ մէկ կողմ դրի փաստերը: Հետագային, երբ ես կրցայ այդ դէպքին աւելի անկողմնակալ հայեացք նետել, հասկցայ, որ աւելի շատ ցանկացած եմ անծնապէս վրէժխնդիր ըլլալ, քան թէ ծառայութեան մէջ ինչ որ մէկը պաշտպանել: Ես ինծի համոզած էի, թէ իմ շարժառիթները եսասիրական չեն: Տեղեկութիւնը, որ պէտք է յայտնէի աւագ հովիւին, ճշգրիտ էր, բայց իմ շարժառիթները մաքուր չէին:

Անցաւ ժամանակ, ու օր մը, երբ ժամերով կ'աղօթէի, եկեղեցւոյ գրասենեակին առջեւ տեսայ, թէ ինչպէս այդ աւագը ինքնաշարժով եկեղեցի եկաւ: Աստուած մղեց զիս, որ երթամ անոր քով եւ անծնապէս խոնարհիմ: Իմ մէջ խօսեցաւ ես-ը. «Ո՛չ, Տէ՛ր, ան պէտք է քովս գայ: Ան այս բոլոր խնդիրներուն պատճառն է»:

Ես շարունակեցի աղօթել, բայց նորէն Տէրը պնդեց, որ անմիջապէս երթամ անոր քով ու խոնարհեցնեմ իմ անծը, եւ ես գիտէի, որ Աստուած էր մղողը: Ես հեռաձայնեցի անոր իմ գրասենեակէն ու գացի անոր քով: Բայց այն, ինչ որ ըսի եւ ինչպէս որ ըսի, շատ տարբեր էր անորմէ, թէ ինչպէս պիտի ըսէի, եթէ Աստուած չգործէր ինծի հետ:

Ամենայն անկեղծութեամբ ես խնդրեցի անոր ներումը: Ես խոստովանեցայ. «Ես քննադատող եւ դատապարտող եղած եմ քու նկատմամբ»:

Ան անմիջապէս մեղմացաւ, եւ մենք մօտ մէկ ժամ զրուցեցինք: Այդ օրուընէ սկսեալ՝ իմ դէմ անոր յարձակումները դադրեցան, չնայած որ տակաւին խնդիրներ կային անոր եւ միւս հովիւներուն միջեւ:

Վեց ամիս յետոյ, երբ ես կը ծառայէի երկրէն դուրս, այդ աւագի բոլոր սխալները բացայայտուած էին աւագ հովիւին առջեւ: Ատոնք կապուած էին ծառայութեան միւս ոլորտներուն հետ: Այն,

ինչ որ ան ըրած էր, աւելի վատ էր, քան այն, ինչ որ ես գիտէի: Ան անմիջապէս հեռացուեցաւ:

Դատաստանը եղաւ, բայց ոչ իմ ձեռքով: Այն ամէնը, ինչ որ ան կը փորձէր ընել ինծի հետ, պատահեցաւ իրեն հետ: Այնուամենայնիւ, երբ ատիկա պատահեցաւ անոր հետ, ես ուրախ չէի: Ես վշտացայ անոր եւ անոր ընտանիքին համար: Ես կը հասկնայի այդ աւագի ցաւը, քանի որ անոր պատճառով ես վերապրած էի նոյնը:

Քանի որ ես անոր ներած էի վեց ամիս առաջ, հիմա կը սիրէի զինք եւ չէի ցանկար, որ ատիկա պատահէր անոր հետ: Եթէ ան հեռացուէր մէկ տարի առաջ, երբ ես բարկացած էի անոր վրայ, կ'ուրախանայի: Ես հասկցայ, որ արդէն ազատ եմ այն վիրաւորանքէն, որուն տեղ տուած էի: Խոնարհութիւնը եւ այն, որ ես մերժեցի վրէժխնդիր ըլլալու մարդկային ցանկութիւնս, վիրաւորուածութեան գերութենէն զիս ազատելու բանալին էին:

Մէկ տարի յետոյ ես զինք օղակայանը տեսայ: Ես լեցուած էի Աստուծոյ սիրով: Վազեցի եւ գրկեցի զինք: Ես իսկապէս ուրախ էի, երբ ան ըսաւ, որ իր կեանքին մէջ ամէն ինչ լաւ է: Եթէ ամիսներ առաջ ես չերթայի եւ անոր գրասենեակը չխոնարհեցնէի ինքզինքս, ունակ չէի ըլլար այդ օրը նայելու անոր աչքերուն մէջ: Տարիներ անցած են այն պահէն, երբ ես վերջին անգամ տեսայ զինք, բայց ես միայն սէր կը զգամ անոր հանդէպ եւ անկեղծ ցանկութիւն ունիմ Աստուծոյ կամքով տեսնելու զինք:

Դաւիթը իմաստուն գտնուեցաւ, երբ թոյլ տուաւ, որ Աստուած ըլլար Սաւուղին դատաւորը: Դուն պիտի հարցնես. «Այդ պարագային Աստուած որո՞ւ օգտագործեց Սաւուղը դատելու համար, Իր ծառայի՞ն»: Ո՛չ, փղշտացիներուն: Սաւուղը իր որդիներուն հետ մահացաւ, երբ կը պատերազմէր փղշտացիներուն դէմ: Երբ լուրը հասաւ Դաւիթին, ան տօն չկազմակերպեց: Ան ողբաց:

Մարդ մը պարծեցաւ Դաւիթին քով, որ ինքը սպաննած էր Սաւուղը: Ան յոյս ունէր, որ այս լուրը տալով՝ պիտի արժանանայ Դաւիթի բարեհաճութեան, բայց տեղի ունեցաւ հակառակը: «Ինչպէ՞ս չվախցար, երբ ձեռքդ վերցուցիր կործանելու Տիրոջ օծեալը»,-

հարցուց Դաւիթը: Ան հրամայեց, որ այդ մարդը մահապատիժի ենթարկեն (տե՛ս Բ. Թագ. 1.14,15):

Յետոյ Դաւիթը Հրէաստանի ժողովուրդի համար երգ գրեց՝ ի պատիւ Սաւուղի եւ անոր որդիներու: Ան յանձնարարեց ժողովուրդին փոշտացիներու քաղաքներու փողոցներուն մէջ չհռչակել Սաւուղին մահը՝ թոյլ չտալով, որ թշնամին ուրախանայ: Ան կը հռչակէր, որ անձրեւ եւ ցօղ չըլլայ այն վայրը, ուր Սաւուղը ինկաւ: Ան կողջ ըրաւ ողջ Իսրայէլին ողբալ Սաւուղի վրայ: Ասիկա վիրաւորուած մարդու սիրտ չէր: Վիրաւորուած մարդը կ'ըսէր. «Ան ստացաւ այն, ինչին արժանի էր»:

Դաւիթը նոյնիսկ ատելի հեռուն գնաց: Ան Սաւուղի ընտանիքի նկատմամբ բարութիւն ցուցաբերեց: Դաւիթը անոնց հողատարածք ու կերակուր տուաւ եւ Սաւուղին հետնորդներէն մէկուն թոյլ տուաւ նստիլ թագաւորի սեղանի քով: Արդեօ՞ք ասիկա վիրաւորուած մարդու քայլ է: Չնայած որ Դաւիթը մերժուած էր անոր կողմէն, որ պէտք է իրեն հայրութիւն ընէր, ան նոյնիսկ Սաւուղի մահէն յետոյ ալ անոր հաւատարիմ մնաց: Դիւրին է հաւատարիմ մնալ այն աւագին կամ հօրը, որ կը սիրէ քեզ, իսկ ի՞նչ պիտի ըսես անոր մասին, որ դուրս ելած է քեզ կործանելու: Դուն կ'ըլլա՞ս Աստուծոյ սրտին համեմատ մարդ, թէ՞ անձնապէս վրէժխնդիր կ'ըլլաս:

ԱՐԴԱՐԱՑԻ Է, ԵՐԲ ԱՍՏՈՒԱԾ  
ՎՐԷԺԽՆԴԻՐ Կ'ԸԼԼԱՅ  
ԻՐ ԾԱՌԱՆԵՐԷՆ, ԲԱՅՑ  
ԱՆԱՐԴԱՐԱՑԻ Է, ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԾԱՌԱՆԵՐԸ ԻՐԵՆՔ  
ՎՐԷԺԽՆԴԻՐ Կ'ԸԼԼԱՆ

«Պարո՛ն Պիվիր, ես հազիւ այսօր աւարտեցի Ձեր «Սատա-  
նայի խայծը» գիրքի ընթերցանութիւնը եւ չէի կրնար այն մէկ  
կողմ դնել: Անշուշտ, ասիկա լաւագոյն գիրքերէն մէկն է, որ ես  
երբեք կարդացած եմ»:

– Փ. Ա., ՄԻՍՍՈՒՐԻ

## ԻՆՉՊԷՍ ՀՈԳԵԻՈՐ ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԾՆԻՆ

---

*«Աստուած չընէ, որ Տիրոջ օծեալին՝ իմ տիրոջը, այս բանը  
ընեն, որ իմ ձեռքը անոր վրայ երկնցնեն, որովհետեւ ան  
Տիրոջ օծեալն է: Եւ Դաւիթը այս խօսքերով իր մարդիկը  
զսպեց եւ անոնց թոյլ չտուաւ,  
որ Սաուղին վրայ յարձակին»:*

– Ա. Թագ. 24.7,8

Կերջին գլխուն մէջ մենք տեսանք, թէ ինչպէս Դաւիթին հետ վաւատ վարուեցաւ այն մարդը, որուն համար Դաւիթը յոյս ունէր, թէ իր հայրը պիտի ըլլայ: Դաւիթը շարունակ կը փորձէր հասկնալ, թէ ինք ուր սխալած էր: Ի՞նչ ըրած էր, որ Սաուղը դուրս ելած էր իր դէմ եւ կը մտածէր, թէ ինչպէս կրնար Սաուղին սիրտը շահիլ: Խնայելով Սաուղին կեանքը՝ Դաւիթը ապացուցեց իր հաւատարմութիւնը, չնայած որ Սաուղը կ'ուզէր սպաննել զինք:

Գլուխը գետնին խոնարհած՝ Դաւիթը կ'աղաղակէր Սաւուղին՝ ըսելով. «Տե՛ս, որ ոչ մէկ չարութիւն կամ ապստամբութիւն կայ իմ ձեռքը, եւ ես չեմ մեղանչած քու դէմ»:

Դաւիթի խիղճը հանգիստ էր, ան գիտէր, որ ցոյց տուած է առաջնորդի նկատմամբ իր հաւատարմութիւնը: Յետոյ ան աւելի ցնցող լուր առաւ: Ան իմացաւ, որ Սաւուղը տակաւին կը ցանկար կործանել զինք: Բայց Դաւիթը հրաժարեցաւ ձեռքը բարձրացնել մէկու մը դէմ, որ կը փնտռէր սպաննել զինք, չնայած որ Աստուած բանակի վրայ քուն իջեցուցած էր եւ տուած էր մէկու մը, որ իր համաձայնութիւնը կը խնդրէր Սաւուղը սպաննելու համար: Դաւիթը ներքուստ կը զգար, որ բանակին քնացած ըլլալը ուրիշ նպատակի մը կը ծառայէր, եւ այդ նպատակը անոր սրտի խորքը քննելն էր:

Աստուած կ'ուզէր տեսնել, թէ արդեօ՞ք Դաւիթը պիտի սպաննէր Սաւուղը, որպէսզի անորմէ յետոյ հաստատէր իր թագաւորութիւնը, թէ՞ թոյլ պիտի տար, որ Աստուած հաստատէր անոր գահը արդարութեան մէջ յաւիտեան:

«Ձեր անձերուն համար վրէժխնդրութիւն մի՛ առնէք, սիրելիներ՛, այլ բարկութեան տեղ տուէք, որովհետեւ գրուած է՝ վրէժխնդրութիւնը Իմն է, Ես հատուցումը պիտի տամ, կ'ըսէ Տէրը»:

– Հռովմ. 12.19

Արդարացի է, երբ Աստուած վրէժ կը լուծէ Իր ծառաներէն, բայց անարդարացի է, երբ Աստուծոյ ծառաները իրենք վրէժ կը լուծեն: Սաւուղը մարդ մըն էր, որ ինքը վրէժխնդիր կ'ըլլար: Ան տասնչորս տարի կը հետապնդէր Դաւիթը, որ պատիւ ունեցող մարդ էր: Սաւուղը սպաննեց նաեւ քահանաներն ու անոնց ընտանիքները:

Երբ Դաւիթը կանգնեցաւ քնացած Սաւուղին քով, առիկա այն պահն էր, երբ ան դէմ առ դէմ հանդիպեցաւ կարեւոր փորձութեան մը: Ասիկա կը բացայայտէր, թէ արդեօ՞ք Դաւիթը դեռ հովիւի ազնիւ սիրտ ունէր, թէ՞ կրնար դառնալ եւս մէկ Սաւուղ: Արդեօ՞ք ան պիտի մնար Աստուծոյ սրտի համեմատ մարդ:

Սկիզբը ամէն ինչ աւելի դիւրին կը թուար, երբ մենք ամէն բան կը լուծէինք մեր ձեռով, Աստուծոյ արդար դատաստանին սպասե-



լու փոխարեն:

Աստուած Իր ծառաները կը ստուգէ հնազանդութեան միջոցով: Ան մեզ կը դնէ այնպիսի իրավիճակներու մէջ, ուր մեր գործողութիւնները արդարացնելու համար ի յայտ կու գան կրօնական եւ հասարակական չափանիշները: Աստուած թոյլ կու տայ ուրիշներուն, յատկապէս մեր մտերիմներուն, որպէսզի քաջալերեն մեզ ինքնապաշտպանութեան խնդիրին մէջ: Մենք նոյնիսկ կրնանք մտածել, որ երբ վրէժխնդիր կ'ըլլանք, ատով կը պաշտպանենք ուրիշները: Բայց ասիկա Աստուծոյ ճանապարհը չէ: Ատիկա աշխարհի իմաստութեան ճանապարհն է, այն երկրային է եւ մարմնաւոր:

Երբ ես կը դիտարկեմ այն հնարաւորութիւնը, որ ունէի իմ վրայ դրուած աւագին արարքները բացայայտելու համար, կը յիշեմ, որ կը պայքարէի այն մտքերուն դէմ, ըստ որոնց՝ ան կրնար վնասել ուրիշները, եթէ զինք չբացայայտէին:

Ես շարունակ կը մտածէի. *«Ես ընդամենը կը պատմեմ ճշմարտութիւնը: Եթէ ես չընեմ ասիկա, այս ամէնը տակաւին երկար պիտի շարունակուի»*: Ուրիշները զիս կը քաջալերէին, որ բացայայտեմ անոր արարքները:

Այնուամենայնիւ, այսօր ես գիտեմ, որ Աստուած այդ աւագի մասին զիս տեղեկութիւն տուած էր մէկ նպատակով՝ զիս ստուգելու: Արդեօ՞ք ես կը նմանէի այն մարդուն, որ կը փնտռէր կործանել զիս, կամ եթէ այդ մարդը ապաշխարէր, կը յանձնէի՞ զինք Աստուծոյ դատաստանին ու ողորմութեան:

### ԻՆՉՊԷՍ ԱՍՏՈՒԱԾ ԿՐՆԱՅ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՆԵՆԳԱՄԻՏ ԱՒԱԳՆԵՐԸ

Շատ մարդիկ կը հարցնեն. «Ինչո՞ւ Աստուած մարդոց կը դնէ այնպիսի աւագներու ենթակայութեան ներքոյ, որոնք լուրջ սխալներ կ'ընեն եւ նոյնիսկ այնպիսի սխալներ, որոնք շատ չար են»:

Նայի՛ր Սամուէլի մանկութեան (տե՛ս Ա. Թագ. 2-5-րդ գլուխները): Աստուած՝ Ինքը, եւ ոչ թէ սատանան էր այն Միակը, որ այս փոքրիկ տղան դրած էր Հեղի անունով քահանայի մը եւ անոր երկու անբարոյական որդիներու՝ Ոփնիի եւ Փենէիէսի իշխանութեան

ներքոյ: Անոնք եւս քահանաներ էին: Այս մարդիկ շատ չար էին: Անոնք, մարդոց ձեռնածութեան ու նենգափոխութեան ենթարկելով, զոհաբերութիւններ կ'առնէին եւ պոռնիկութիւն կ'ընէին այն կիներուն հետ, որոնք կը հաւաքուէին ժողովքի խորանի դրան քով:

Կրնա՞ս պատկերացնել, որ դուն երբեք ծառայէիր աւագի մը, որ կ'ապրէր այսպիսի կեանքով: Ծառայողի մը, որ զգայուն չէր Հոգիին նկատմամբ, չէր հասկնար աղօթքի մէջ եղող կինը եւ կը մեղադրէր զինք զինովութեան մէջ: Հեղին այնքան մարմնաւոր էր, որ շատ անտարբեր դարձած էր: Ան այնքան փոխզիջող էր, որ ոչինչ կը ձեռնարկէր իր որդիներուն համար, որոնք պոռնիկութիւն կ'ընէին եկեղեցւոյ մէջ:

Շատ քրիստոնէաներ այսօր վիրաւորուած կը հեռանան եւ կը փնտռեն ուրիշ եկեղեցի՝ ըսելով, որ կը հեռանան իրենց նախկին հովիւի եւ աւագներու չար ապրելաոճին պատճառով: Նման այլասերուածութեան մէջ գտնուողին ես կը սիրեմ պատմել, թէ ինչպէս վարուեցաւ երիտասարդ Սամուէլը. «Եւ Սամուէլ մանուկը Հեղիին առջեւ Տիրոջը ծառայութիւն կ'ընէր...» (Ա. Թագ. 3.1):

Բայց այդ այլասերուածութիւնը իր հետեւանքները ունեցաւ. «...Եւ այն օրերը Տիրոջ խօսքը հագուագիւտ էր, յայտնի տեսիլք չկար» (Ա. Թագ. 3.1): Կը թուար, թէ Աստուած հեռու էր ողջ հրեայ հասարակութենէն: Տիրոջ տաճարին մէջ Աստուծոյ ճրագը մօտիկ էր մարելուն: Արդեօ՞ք Սամուէլը երկրպագութեան համար զնաց այլ վայր փնտռելու: Արդեօ՞ք ան զնաց երէցներուն քով, որպէսզի բացայայտէր Հեղիին ու անոր որդիներու չարութիւնը:

Արդեօ՞ք Սամուէլը յանձնաժողով մը ստեղծեց՝ Հեղիին ու անոր որդիներուն հովուութենէն զրկելու համար: Ո՛չ: Սամուէլը Տիրոջը կը ծառայէր:

Աստուած դրած էր Սամուէլը հոն, եւ ան պատասխանատու չէր Հեղիի կամ անոր որդիներուն վարքին համար: Սամուէլը դրուած էր անոնց իշխանութեան ներքոյ ոչ թէ դատելու, այլ ծառայելու համար: Սամուէլը գիտէր, որ Հեղին Աստուծոյ եւ ոչ թէ իր ծառան էր: Ան գիտէր, որ Աստուած իրաւասու է գործ ունենալու Իր ծառաներուն հետ:

Երեխաները չէ՛, որ կ'ուղղեն հայրերը, այլ հայրերուն պարտականությունն է ուղղել երեխաները ու սորվեցնել անոնց: Մենք գործ ունինք եւ կ'առնչուինք անոնց հետ, որոնց Աստուած տուած է մեզի սորվեցնելու համար: Մեր պատասխանատուութիւնը այն է, որ քաջալերենք եւ յորդորենք մեր իսկ մակարդակի վրայ գտնուող եղբայրներն ու քոյրերը: Բայց այս գլուխին մէջ, ինչպէս որ նախորդին, մենք կը խօսինք այն մասին, թէ ինչպէս պէտք է արծագանգենք անոնց, որոնք մեր վրայ իշխանութիւն ունին:

Սամուէլը, որքան կրնար, խոնարհաբար ծառայեց Աստուծոյ նշանակած ծառայողին՝ առանց շտկելու, ուղղելու կամ դատելու ձգտում ունենալու: Միակ պահը, երբ Սամուէլը շտկման խօսք ըսաւ, այն պահն էր, երբ Հեղին եկաւ անոր քով ու հարցուց, թէ նախորդ գիշեր Աստուած ինչ մարգարէութիւն տուած էր Սամուէլին իրեն համար: Բայց նոյնիսկ այդ ժամանակ շտկելու խօսքը Աստուծո՞ւ էր, ոչ թէ Սամուէլէն: Եթէ շատ մարդիկ ամուր բռնէին այս ճշմարտութիւնը, մեր եկեղեցիները ուրիշ կ'ըլլային:

## ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐԸ ՍՐՃԱՐԱՆՆԵՐ ԶԵՆ

Այսօր մարդիկ անմիջապէս կը լքեն եկեղեցիները, երբ աւագներու մէջ ինչ որ սխալ բան մը կը տեսնեն: Թերեւս հեռանալու պատճառը այն է, որ հովիւը գոհաբերութիւն կը հաւաքէ, կամ թերեւս անոնց հաճելի չէ, թէ եկեղեցւոյ մէջ ինչպէս կը ծախսուի գումարը: Եթէ անոնց հաճելի չէ այն, ինչ որ կը քարոզէ հովիւը, անոնք կը հեռանան: Հովիւը կամ այնպիսին է, որուն անհնար է մօտենալ, կամ ալ չափազանց մտերիմ է: Նման ցուցակը վերջ չունի: Դժուարութիւններու հանդիպելու ժամանակ յոյսը պահպանելու փոխարէն անոնք կը փախչին հոն, ուր կը թուայ, թէ ոչ մէկ բախում կայ:

Եկէք մեր աչքին առջեւ միշտ ունենանք այն, որ միակ կատարեալ Հովիւը Յիսուսն է: Ուրեմն ինչո՞ւ կը փախչինք Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող դժուարութիւններէն աստոնց դէմ առ դէմ կանգնելու եւ աստոնց միջոցով գործելու փոխարէն: Երբ մենք այս հակառակութիւններուն գլխէն չենք հարուածեր, սովորաբար վիրաւորուած կը հեռանանք: Երբեմն մենք կ'ըսենք, որ իրականութիւն չդարձաւ մեր մարգարէական ծառայութիւնը: Ատորմէ՛ յետոյ

մենք կ'երթանք եկեղեցիէ-եկեղեցի՝ փնտռելով վայր մը, ուր կան անթերի աւագներ:

Քանի որ կը գրեմ այս գիրքը, ըսեմ, որ անցեալ տասնչորս տարիներու ընթացքին միայն երկու եկեղեցւոյ անդամ եղած եմ, որոնք երկու տարբեր նահանգներու մէջ էին: Շատ առիթներ ունեցած եմ իմ վրայ դրուած աւագներէն վիրաւորուելու համար (կրնամ աւելցնել, որ ատոնցմէ շատերուն մէջ եղած է իմ թերութիւնը կամ չհասունցած ըլլալը): Ես կրնայի քննադատող ու դատապարտող դառնալ աւագներու նկատմամբ, բայց հեռանալը հարցի լուծում չէր:

Շատ դժուար հանգամանքի մը մէջ օր մը Տէրը խօսեցաւ ինձի Սուրբ գիրքէն համարի մը միջոցով եւ ըսաւ, որ կ'ուզէ՝ եկեղեցիէն ահա այսպէս հեռանալ:

«Որովհետեւ դուք ուրախութեամբ դուրս պիտի ելլէք եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք»:

– Եսայիա 55.12

Շատերը այսպէս չեն հեռանար եկեղեցիէն: Անոնք կը մտածեն, որ եկեղեցիները նման են սրճարաններու, ուր կրնան առնել եւ ընտրել այն, ինչ որ իրենց հաճելի կու գայ: Անոնք հոն մնալու ազատութիւն կը զգան այնքան ժամանակ, քանի տակաւին խնդիրներ չկան: Բայց այս երեւոյթը իր դրսեւորմամբ չի համապատասխաներ Աստուածաշունչի ուսմունքին: Դուն չես, որ պէտք է ընտրես, թէ որ եկեղեցին երթաս: Աստուած կ'ընտրէ: Աստուածաշունչը չ'ըսեր, որ «Աստուած դրած է անդամները՝ անոնցմէ ամէն մէկը մարմինի մէջ, *ինչպէս իրենք կամեցած են*»: Ընդհակառակը, այն կ'ըսէ. «Բայց հիմա Աստուած անդամները՝ անոնցմէ ամէն մէկը դրաւ մարմինի մէջ *ինչպէս (Ան) կամեցաւ*» (Ա. Կորնթ. 12.18):

Յիշէ՛, որ եթէ դուն այն տեղն ես, ուր Աստուած կ'ուզէ, որ ըլլաս, սատանան փորձ կ'ընէ քեզ վիրաւորանք պատճառելով դուրս հանել հոնկէ: Սատանան կը ցանկայ արմատախիլ ընել մարդոց այն տեղէն, ուր Աստուած տնկած է զանոնք: Եթէ սատանան կարենայ քեզ դուրս հանել, յաջողութիւն կ'ունենայ: Եթէ դուն նոյնիսկ ամենամեծ հակառակութիւններու պարագային քու տեղէն չես շարժիր, ատորմով կ'ոչնչացնես սատանայի ծրագիրը:

## ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽԱԲԷՌԻԹԻՒՆ

Տարիներ շարունակ ես կը գտնուէի եկեղեցւոյ մը մէջ: Այդ եկեղեցւոյ հովիւը Ամերիկայի լաւագոյն քարոզիչներէն մէկն էր: Երբ առաջին անգամ գացի այդ եկեղեցին, մեծ ակնածանքով, բերանս բաց նստած կը լսէի հովիւին բերանէն դուրս ելած աստուածաշնչեան ուսուցումները:

Ժամանակ անցաւ: Իմ ծառայողական դիրքի պատճառով ես բաւականին մտերիմ էի հովիւին հետ ու կրնայի տեսնել անոր թերութիւնները: Սկսայ կասկածի տակ դնել անոր ծառայողական որոշումներէն քանի մը հատը: Դարձայ քննադատող ու դատապարտող, եւ իմ մէջ տեղ գտաւ վիրաւորութիւնը: Ան կը քարոզէր, եւ ես ոչ մէկ աստուածային ներշնչանք կամ օծութիւն կը զգայի: Անոր քարոզը այլեւս չէր ծառայեր ինծի:

Կար նաեւ ամուսնացած զոյգ մը, որոնք եկեղեցւոյ աշխատակազմէն էին, եւ անոնց հետ մենք ընկերութիւն կ'ընէինք: Կը թուար, որ անոնք եւս նոյն բանը կը զգային: Աստուած զանոնք դուրս ուղարկեց այդ եկեղեցիէն, եւ անոնք սկսան իրենց առանձին ծառայութիւնը: Այդ զոյգը խնդրեց ինձմէ երթալ իրենց հետ: Անոնք գիտէին, թէ ինչպիսի պայքարի մէջ էինք մենք, եւ մեզ կը քաջալերէին, որ մեր կոչումին մէջ մտնէինք:

Անոնք մեզ կը պատմէին, որ այն ամէնը, ինչ որ կ'ընէին այդ եկեղեցւոյ հովիւը, անոր կինը եւ աւագները, սխալ էր: Մենք միասին ցաւ ու յուսահատութիւն կը զգայինք, կը զգայինք, որ թակարդի մէջ էինք:

Կը թուար, որ այդ զոյգը անկեղծօրէն կը մտահոգուէր մեր բարեկեցութեան համար: Բայց այդ քննարկումները կը բորբոքէին մեր դժգոհութեան եւ վիրաւորութեան կրակը: Առակաց 26.20-ը կը պարզաբանէ. «Առանց փայտի կրակը կը մարի, եւ եթէ քսու չըլլայ, կռիւը կը դադրի»: Այն, ինչ որ անոնք կ'ըսէին մեզի, հնարաւոր է, որ ճշգրիտ տեղեկութիւններ էին, բայց ատիկա սխալ էր Աստուծոյ աչքերուն, որովհետեւ այն փայտ կ'աւելցնէր վիրաւորութեան կրակին ինչպէս անոնց, այնպէս ալ մեր մէջ:

Անոնք կ'ըսէին. «Մենք գիտենք, որ դուն Աստուծոյ մարդ ես,

ատոր համար ալ խնդիրներ ունիս հոս»: Ասիկա լաւ կը հնչէր:

Ես եւ կինս իրարու ըսինք. «Ատիկա այդպէս է: Մենք վատ իրավիճակի մէջ ենք: Մենք դուրս գալու կարիք ունինք: Այս միւս հովիւը ու անոր կինը կը սիրեն մեզ: Անոնք հովուութիւն կ'ընեն մեզի, եւ նոր եկեղեցւոյ մարդիկ կ'ընդունին մեզ ու այն ծառայութիւնը, որ Աստուած տուած է մեզի»:

Մենք լքեցինք մեր եկեղեցին եւ սկսանք յաճախել այդ ամուսնացած զոյգի եկեղեցին, բայց ընդամենը քանի մը ամիս... Կը մտածէինք, որ փախած ենք մեր խնդիրներէն, բայց շուտով նկատեցինք, որ այն թերեւս գոյութիւն ունի մեզի համար: Մեր հոգիները ուրախութիւն չունէին: Մենք բռնուած էինք վախով մը, որ պիտի յայտնուինք այն վիճակին մէջ, որմէ հազիւ նոր հեռացած էինք: Կը թուար, որ այն ամէնը, ինչ ըրինք, ստիպողաբար էր եւ անբնական: Մենք չէինք կրնար համապատասխան ծելով իյնալ Հոգիի հոսքին մէջ: Հիմա ալ մեր յարաբերութիւնները լարուեցան այդ նոր հովիւին եւ անոր կնոջ հետ:

Վերջապէս գիտակցեցայ, որ պէտք է վերադառնամ մեր եկեղեցին: Երբ մենք ըրինք ատիկա, անմիջապէս հասկցանք, որ կը վերադառնանք Աստուծոյ կամքին մէջ:

Յետոյ Աստուծոյ ըսածը ցնցեց զիս. «Ճո՛ւն, Ես քեզ երբեք չէի ըսած, որ լքես այս եկեղեցին: Դուն վիրաւորութենէն մեկնած հեռացար եկեղեցիէն»: Եկեղեցիէն հեռանալու պատճառը մեր եկեղեցւոյ հովիւի եւ անոր կնոջ մեղքով չէր, այլ մեր: Անոնք կը հասկնային մեր վիատութիւնը եւ կը փորձէին նոյն խնդիրը լուծել իրենց սրտերուն մէջ: Երբ դուն Աստուծոյ կամքէն դուրս կը գտնուիս, դուն օրհնութիւն կամ օգնութիւն չես կրնար ըլլալ որեւէ այլ եկեղեցւոյ համար: Երբ դուն Աստուծոյ կամքէն դուրս ես, նոյնիսկ լաւ փոխարաբերութիւնները կը վատանան: Մենք դուրս ելած էինք Աստուծոյ կամքէն:

Վիրաւորուած մարդիկ իրավիճակէն կը նահանջեն եւ կ'ընեն բաներ, որոնք ճիշդ կը թուան, չնայած որ ատոնք ներշնչուած չեն Աստուծոյ կողմէն: Մենք կանչուած ենք ոչ թէ նահանջելու, այլ գործելու համար:

Եթէ մենք հնազանդ ենք Աստուծոյ ու կը փնտռենք Ձինք, բայց Ան չի խօսիր, ապա գիտե՞ս, թէ որն է պատասխանը: Ան հաւանաբար կ'ըսէ. «Մնա՛ ճիշդ այնտեղ, ուր կաս: Ոչինչ փոխէ՛»:

Յաճախ, երբ որեւէ ճնշում կը զգանք, մեզի հանգստութիւն բերելու համար Աստուծմէ խօսք կը սպասենք: Բայց Աստուած մեզ կը դնէ այս շատ անյարմար «ծուլարանին մէջ», որպէսզի հասունցնէ, զտէ եւ զօրացնէ եւ ոչ թէ կործանէ մեզ:

Մէկ ամսուան ընթացքին ես հնարաւորութիւն ունեցայ հանդիպելու իմ առաջին եկեղեցւոյ հովիւին հետ: Ես ապաշխարեցի, որ քննադատող եւ ապստամբ եղած եմ: Ան ներողամիտ գտնուեցաւ: Մեր փոխարաբերութիւնները վերականգնեցան, եւ սիրտս կրկին լեցուեցաւ ուրախութեամբ: Ես անմիջապէս ընդունեցի անոր ծառայութիւնը եւ շատ տարիներ մնացի այդ եկեղեցւոյ մէջ:

## ՏՆԿՈՒԱԾՆԵՐՈՐ ԿՐ ԲՈՒՍՆԻՆ

Սաղմոս 92.13-ին մէջ կ'ըսուի. «Տիրոջ տան մէջ *տնկուածները* մեր Աստուծոյն սրահներուն մէջ *պիտի բուսնին*»:

Ուշադրութիւն դարձո՛ւր, որ անոնք կը բուսնին, որոնք «տնկուած» են Տիրոջ տան մէջ: Ի՞նչ կը պատահի այն բոյսի հետ, երբ ամէն երեք շաբաթը մէկ փոխպատուաստես այն: Ձեզմէ շատերը գիտեն, որ բոյսի արմատային համակարգը կը թուլնայ, ու այն ոչ ծիլ կու տայ, ոչ կ'աճի: Եթէ դուն շարունակես անընդհատ պատուաստել բոյսը, այն տեղաշարժերու հետեւանքով պիտի մահանայ:

Շատ մարդիկ կը տեղափոխուին եկեղեցիէ եկեղեցի, ծառայողական մէկ խումբէն միւսը՝ ատով փորձելով զարգացնել իրենց ծառայութիւնը: Եթէ Աստուած անոնց դրած է տեղ մը, ուր անոնց չեն հասկնար կամ չեն քաջալերեր, ապա դիրութեամբ կը գայթակղին ու կը վիրաւորուին: Եթէ անոնք համաձայն չեն եկեղեցւոյ մէջ կատարուող որեւէ բանի հետ, կը գայթակղին ու կ'երթան՝ մեղադրելով աւագները: Այդպիսիք կոյր են իրենց բնաւորութեան որեւէ թերութեան նկատմամբ եւ չեն հասկնար, որ Աստուած կը ցանկայ զտել ու հասունցնել զանոնք այն ճնշման միջոցով, որուն տակ կը գտնուին:

Եկո՛ւր սորվիմք բոյսերու եւ ծառերու մասին Աստուծոյ տը-  
լած օրինակներէն: Երբ պտղաբեր ծառը կը տնկեն հողի մէջ, այն  
պարտադիր կը հանդիպի անձրեւային հողմերուն, արեւի սոթին  
եւ քամիին: Եթէ երիտասարդ ծառը կարենար խօսիլ, հաւանա-  
բար պէտք է ըսեր. «Կը խնդրե՛մ, ինձի այնպիսի տեղ մը տնկեցէ՛ք,  
ուր այրող ջերմութիւն կամ փոթորիկներ չկան»:

Եթէ այգեպանը լսէր այդ ծառին, իրականութեան մէջ պիտի  
վնասէր զինք: Ծառերը կը դիմակայեն արեւի ջերմութեան եւ անձ-  
րեւային փոթորիկներուն՝ աւելի խորունկ նետելով իրենց արմատ-  
ները: Ձախորդութիւնը, որուն կը հանդիպին ծառերը, վերջիվերջոյ  
կը դառնայ անոնց կայունութեան հզօր ակունքը: Ծառերուն շրջա-  
պատող արգելքները պատճառ կը դառնան, որ անոնք փնտռեն  
կեանքի մէկ այլ աղբիւր: Եւ օր մը նոյնիսկ ամենամեծ փոթորիկնե-  
րը չեն կրնար ազդել անոնց պտղաբերութեան վրայ:

Քանի մը տարի առաջ ես կ'ապրէի Ֆլորիտա նահանգի քա-  
ղաքներէն մէկը, որ կիտրոնագգի (նարնջագգի) պտուղներու կեդ-  
րոնն է: Շատ ֆլորիտացիներ գիտեն, որ որքան աւելի ցուրտ ըլ-  
լայ ծմեռը, այնքան աւելի քաղցր կ'ըլլան նարինջները: Եթէ մենք  
այդքան արագ չփախչինք հոգեւոր դիմադրութենէն, աւելի խ-  
որունկ արմատներ կը նետենք եւ աւելի զօրաւոր կը դառնանք, մեր  
պտուղները Աստուծոյ աչքին պիտի ըլլան ամառ եւ աւելի քաղցր,  
իսկ Անոր ժողովուրդին համար՝ աւելի համեղ: Մենք պէտք է աւելի  
շատ պտուղ բերող ծառեր ըլլանք, որոնք Տիրոջը հաճելի են, քան  
թէ նմանինք պտուղ չտալու համար արմատախիլ եղած այն ծա-  
ռերուն (Ղուկ. 13.6-9): Մենք պէտք չէ դէմ կանգնինք այն ամէնուն,  
ինչ որ Աստուած կ'ուղարկէ մեզ հասունցնելու համար:

Սուրբ Հոգիով ներշնչուած սաղմոսերգու Ղաւիթը կը նկարագ-  
րէ վիրաւորութեան, Աստուծոյ օրէնքին եւ մեր հոգեւոր աճի  
միջեւ եղած կապը: Սաղմոս 1-ին մէջ ան կը գրէ.

«Երանելի է այն մարդը... որուն կամքը Տիրոջ օրէնքին  
մէջ է եւ ցերեկ ու գիշեր Անոր օրէնքին վրայ կը մտածէ»:

– Սաղմ. 1.1,2

Յետոյ Սաղմոս 119.165- ին մէջ ան մեզ աւելի բացայայտ կ'ըսէ



այն մարդոց մասին, որոնք կը սիրեն Աստուծոյ օրէնքը:

«Շատ խաղաղութիւն կայ Քու օրէնքը սիրողներուն (կամ հաճեցողներուն) համար, եւ գայթակղութիւն չկայ անոնց համար (անգլերէնին մէջ՝ «...եւ ոչ մէկ բան կը վիրաւորէ զանոնք»)»:

Իսկ Սաղմոս 1.3-րդ խօսքը կը նկարագրէ այսպիսի մարդու ճակատագիրը.

«Եւ ան ջուրերու գնացքին մէջ տնկուած ծառերու պէս է, որ իր պտուղը կու տայ իր ժամանակին, եւ անոր տերեւը չի թափիր, եւ ամէն ինչ, որ կ'ընէ, կը յաջողի»:

Այլ խօսքով ըսելու համար, եթէ հաւատացեալը կ'ընտրէ Աստուծոյ խօսքով հաճոյք ստանալը, ծախորդութեան մէջ ան կը խուսափի վիրաւորուելէն: Այդ անձնաւորութիւնը կը նմանի այն ծառին, որուն արմատները կը նետուին անելի խորունկ, ուր Հոգին կու տայ ամրութիւնը եւ սնուցումը: Ան իր հոգիին մէջ կը նետուի դէպի Աստուծոյ խորունկ ջրհորը: Այս ընթացքը կը բերէ այն վիճակին, երբ ծախորդութիւնը կը նպաստէ, որ պտուղի յառաջացման գործընթացը արագնայ: Հալելո՛ւ իա:

Հիմա եկո՛ւր անդրադառնանք Յիսուսի՝ սերմնացանի մասին առակի մեկնաբանութեան.

«Նոյնպէս ալ քարքարոտ տեղը սերմուածները անոնք են, որոնք երբ որ խօսքը կը լսեն, շուտով ուրախութեամբ կ'ընդունին զինք եւ իրենց մէջ արմատ չունին, այլ առժամանակեայ են, յետոյ, երբ որ այն խօսքին համար նեղութիւն կամ հալածանք կ'ըլլայ, շուտով կը գայթակղին (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ անմիջապէս կը վիրաւորուին)»:

– Մարկ. 4.16,17

Հազիւ որ դուն կը լքես այն տեղը, ուր Աստուած ընտրած է քեզի համար, քու արմատներուն աճը կը սկսի դադրիլ: Նման պարագային քեզի համար անելի դիւրին կ'ըլլայ փախչիլ ծախորդութենէն, քանի որ խորունկ արմատ նետելու համար դուն զօրութիւն

չունիս: Ի վերջոյ դուն կը հասնիս վիճակի մը, երբ դժուարութեան կամ հալածանքին համբերելու համար կ'ունենաս շատ քիչ զօրութիւն կամ զօրութիւն ալ չես ունենար:

Անկէ յետոյ դուն կը դառնաս հոգեւոր թափառական՝ թափառելով մէկ տեղէ միւսը, կը դառնաս կասկածամիտ եւ կը վախնաս, որ ուրիշները վատ կը վերաբերին քեզի հետ: Ճշմարիտ հոգեւոր պտուղներ տալու քու կարողութիւնը խեղանդամ դարձնելով եւ պահելով՝ դուն կը սկսիս պայքարիլ եսակեդրոն կեանքի դէմ եւ կ'ուտես ուրիշներուն պտուղներու մնացորդները:

Եկո՛ւր նայինք Կայէնին եւ Աբէլին՝ Ադամի ամառաջին որդիներուն: Կայէնը Տիրոջը զոհաբերութիւն բերաւ իր ձեռքի աշխատանքէն՝ իր խաղողի այգիի պտուղներէն: Այդ պտուղը քրտնաջան աշխատանքի արդիւնք էր: Կայէնը դժուարութեամբ հողը մաքրած էր քարերէն, կոճղերէն եւ մոլախոտերէն: Ան դժուարութեամբ հերկած եւ մշակած էր հողը: Դժուարութեամբ տնկած, ջրած, պարարտացուցած եւ պաշտպանած է իր բերքը: Շատ ջանք գործադրած է Աստուծոյ ամօքէ իր ծառայութեան մէջ: Բայց ատիկա աւելի շատ անոր անձնական զոհաբերութիւնն էր, քան Աստուծոյ ուզած ուղիին հնազանդութիւնը: Կայէնին արարքը կը խորհրդանշէր այն պաշտամունքը, երբ մարդը Աստուծոյ աւելի շատ կը պաշտէ իր սեփական ուժերով եւ կարողութեամբ, քան թէ Աստուծոյ շնորհքով:

Աբէլը, ընդհակառակը, բերաւ հնազանդութեան զոհաբերութիւն մը՝ ընտրելով իր հօտի ամառանածիններուն եւ գէրերուն: Աբէլը Կայէնին նման չէր աշխատած այս զոհը բերելու համար, բայց այն իրեն համար սուղ էր: Երկու եղբայրներն ալ լսած էին, թէ ինչպէս հայրն ու մայրը փորձած էին իրենց մերկութիւնը ծածկել թզենիի տերեւներով, որ կը խորհրդանշէր ծնողներու՝ սեփական գործերու պատճառով ըրած մեղքերը թաքցնելու ցանկութիւնը: Բայց Աստուած ցոյց տուաւ ընդունելի զոհը՝ ծածկելով Ադամն եւ Եւան անմեղ կենդանիի մորթով: Ադամին ու Եւային ծանօթ չէր մեղքերու այդ անընդունելի ծածկոցը, քանի որ անոնց ցոյց տրուած էր Աստուծոյ ուղին, եւ ոչ անոնք, ոչ ալ անոնց զաւակները այլեւս անտեղեակ էին:

Կայէնը կը փորձէր Աստուծոյ ընդունելութեան արժանանալ առանց Անոր խորհուրդին: Աստուած ալ արձագանգեց՝ ցոյց տալով, որ Ինքը կ'ընդունի անոնց, որոնք Իրեն քով կու գան Իր շնորհքի չափանիշներով (Աբէլի գոհը), եւ կը մերժէ այն, ինչ որ կը փորձեն ընել «բարիի եւ չարի գիտութեան» (Կայէնի կրօնական գործերը) գործերով: Յետոյ Աստուած սորվեցուց Կայէնին, որ եթէ ան բարին ընէ, կ'ընդունուի, բայց եթէ չընտրէ բարին ընելը, մեղքը պիտի տիրէ անոր:

Կայէնը վիրաւորուած էր Տիրոջմէն: Ապաշխարելու եւ ճիշդ վարուելու, այս իրավիճակէն իր բնաւորութիւնը փոխելու փոխարէն Կայէնը իր բարկութիւնը թափեց Աբէլի վրայ եւ վիրաւորուեցաւ Աստուծմէ: Ան սպաննեց Աբէլը: Աստուած ըսաւ Կայէնին.

«Եւ հիմա դուն անիծեալ ըլլաս այն երկրէն, որ իր բերանը բացաւ եղբորդ արիւնը քու ձեռքէն ընդունելու: Երբ որ երկիրը գործես, ան այլեւս իր արդիւնքը չտայ քեզի, երկրի վրայ աստանդական ու թափառական ըլլաս»:

– ԾՆՆԴ. 4.11,12

Միակ բանը, որմէ ամենաշատը կը վախնար Կայէնը, Աստուծմէ մերժուած ըլլալն էր, որուն համար ալ ան իրեն վրայ դատաստան բերաւ: Միակ տարբերակը, որուն միջոցով Կայէնը փորձեց արժանանալ Աստուծոյ հաւանութեան, այժմ անիծուած էր իր իսկ ձեռքով (նկատի ունի երկիրը): Տեղի ունեցած արիւնահեղութիւնը անէծք բերաւ: Երկիրը այլեւս իր արդիւնքը պիտի չտար Կայէնին: Միայն մեծ ջանքերու միջոցով պիտի ըլլային պտուղները:

Վիրաւորուած քրիստոնեաները նոյնպէս կը կորսնցնեն պտուղներ տալու իրենց կարողութիւնը: Սերմնացանի առակին մէջ Յիսուս սիրտը կը համեմատէր հողին հետ: Ինչպէս որ Կայէնի դաշտերը անբերրի էին, այնպէս ալ վիրաւորուած սիրտը անպտուղ է, դառնութեամբ թունաւորուած: Վիրաւորուած մարդիկ կրնան իրենց կեանքին մէջ հրաշքներ վերապրիլ, խօսքեր արձակել, ունենալ հզօր քարոզներ եւ բժշկութիւններ, բայց ասոնք Հոգիի պարգեւներն են եւ ոչ թէ պտուղները: Մենք պիտի դատուինք մեր պտուղներու եւ ոչ թէ պարգեւներու համաձայն: Պարգեւը կը

տրուի, իսկ պտուղը մշակելով կ'աճեցնեն:

Ուշադրութիւն դարձուր, Աստուած ըսաւ, որ Կայէնը փախըստական եւ թափառական պիտի դառնայ իր գործողութիւններու հետեւանքով: Այսօր մեր եկեղեցիներուն մէջ կան բազմաթիւ հոգեւոր փախստականներ ու թափառականներ: Անոնց երգելու, քարոզելու, մարգարէանալու եւ այլ պարգեւները չեն ընդունուած իրենց նախկին եկեղեցւոյ աւագներուն կողմէն, ատոր համար ալ անոնք կը հեռանան:

Անոնք աննպատակ կը փախչին եւ կը կրեն վիրաւորանքը, կը փնտռեն այն կատարեալ եկեղեցին, որ կ'ընդունի իրենց պարգեւը ու կը բժշկէ իրենց վէրքերը:

Անոնք խոցուած ու հալածուած կը զգան: Անոնք իրենց անձերը մեր օրերու «Երեմիաներու» պէս կը զգան: Միայն իրենք եւ Աստուած, մնացած ամէն ոք դէմ է անոնց: Անոնք կը դառնան չտրվող, ձեռք կը բերեն այն, ինչ որ եւ կը կոչեն հալածանքի բարդոյթ, այսինքն՝ «բոլորը ինձի դէմ դուրս ելած են» մտածելակերպը: Անոնք կը մխիթարեն իրենց անձերը՝ մտածելով, որ իրենք հալածուող սուրբ են կամ Աստուծոյ մարգարէ: Այդպիսիք կասկածամիտ են ամէն մէկուն նկատմամբ: Ասիկա ճիշդ այն է, ինչ որ տեղի ունեցաւ Կայէնի հետ: Նայի՛ր, թէ ինչ կ'ընէ Կայէնը.

«Եւ երկրի վրայ աստանդական ու թափառական պիտի ըլլամ, եւ պիտի ըլլայ, որ ամէն զիս գտնողը զիս պիտի սպաննէ»:

– Ծանոթ. 4.14

Ուշադրութիւն դարձուր, որ Կայէնը ունէր հալածանքի բարդոյթ՝ ամէն ոք անոր դէմ դուրս ելած էր: Ասիկա իրական է նաեւ այսօր: Վիրաւորուած մարդիկ կը հաւատան, որ ամէն ոք իրենց դէմ դուրս ելած է: Այս կեցուածքով անոնք չեն տեսներ իրենց կեանքի այն ոլորտները, որոնք փոփոխութեան կարիք ունին: Անոնք կը մեկուսացնեն իրենց անձերը եւ այնպէս կը վարուին, որ իրենց վարքագիծը վիրաւորանքի կը դրդէ:

«Ինքնահաճոյ մարդը ցանկութիւն կ'որոնէ (անգլերէն Աստուածաշունչին մէջ՝ Այն մարդը, որ կը մեկուսացնէ

ինքզինքը, կ'որոնէ իր ցանկութիւնը). ամէն յաջողակութեան դէմ կը բորբոքի»:

– Առակ. 18.1

Աստուած մեզ չէ ստեղծած, որ ապրինք մէկս միւսէն առանձնացած եւ անկախ: Աստուծոյ հաճելի է, երբ Իր զաւակները հոգ կը տանին իրար մասին եւ կը բարձրացնեն միմեանց: Աստուած կը տխրի, երբ մենք վատ տրամադրութիւն կ'ունենանք, եւ ցաւ կը զգայ, երբ կը փորձենք ուրիշները պատասխանատու դարձնել մեր երջանկութեան համար: Աստուած կը ցանկայ, որ մենք ըլլանք Իր ընտանիքի գործունեայ անդամները: Ան կը ցանկայ, որ մենք մեր կենսունակութիւնը ձեռք բերենք Իրմէ: Մեկուսացած մարդը կը փնտռէ միայն իր սեփական ցանկութիւնը եւ ոչ թէ Աստուծոյնը: Ան ոչ մէկ խրատ կ'ընդունի եւ հակուած կը դառնայ խաբէութեան:

Ես չեմ խօսիր այն ժամանակներու մասին, երբ Աստուած անհատները կը կանչէ առանձնանալու, որպէսզի զանոնք սպառազինէ եւ վերստին թարմացնէ: Ես նկատի ունիմ այն մարդիկ, որոնք իրենք զիրենք բանտարկած են: Անոնք կը թափառին եկեղեցի- եկեղեցի, մէկ փոխարարութենէ դէպի մէկ ուրիշը եւ կը մեկուսանան իրենց սեփական աշխարհին մէջ եւ կը կարծեն, որ անոնք, որոնք համաձայն չեն իրենց հետ, սխալ են եւ իրենց դէմ են: Այդ մեկուսացած մարդիկ իրենք իրենց անձերը կը պաշտպանեն եւ ապահով կը զգան այն վերահսկող միջավայրին մէջ, որ իրենք ստեղծած են: Անոնք այլեւս չեն պայքարիր իրենց բնաւորութեան թերութիւններուն դէմ: Ընդհակառակը, հանդիպելով դժուարութիւններու՝ անոնք կը փորձեն փախչիլ ստուգուելէն: Բնաւորութեան զարգացումը, որ տեղի կ'ունենայ միայն այն պարագային, երբ անոնք կը գործեն ուրիշներու հետ, այդ բախումներէն կը կորսուի, քանի որ կրկին կը սկսի վիրաւորանքի փուլը:

ՎԻՐԱԴՈՐՈՒԵԼՈՎ ԴՈՒՆ ՔԵՋ ԵՏ  
ԿԸ ՊԱՀԵՍ ՔՈՒ ԲՆԱԴՈՐՈՒԹԵԱՆ  
ՍԽԱԼՆԵՐԸ ՏԵՍՆԵԼԷՆ, ՔԱՆԻ ՈՐ  
ԱՅԴ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ  
ՈՒՂՂՈՒԱԾ Է ՈՒՐԻՇԻՆ

«Որպէս ամուսնացած զոյգ՝ մենք երկար տարիներ չէինք ներեր միմեանց եւ վերքեր կը կրէինք: Մենք հասած էինք այնպիսի վիճակի մը, որ շատ քիչ ընկերներ ունէինք, եւ ես ինձի մեկուսացած ու չսիրուած կը զգայի, չնայած որ հաւատարմօրէն կը յաճախէի հոյակապ եկեղեցի մը: Յետոյ ես կարդացի Ձեր «Սատանայի խայծը» գիրքը, եւ ամէն ինչ փոխուեցաւ: Ես դէմ դուրս ելայ իմ վիրաւորանքներուն եւ չներելուն ու Աստուծոյ օգնութեամբ ազատագրուեցայ»:

– Բ. Կ., ՊԵԼՖԱՍԹ, ԻՐԼԱՆՏԱ

## ՊԱՀՈՒԸՏԵԼՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹԵՆԵՆ

---

*«Որ (անոնք) ամեն ժամանակ կը սորվին եւ երբեք դէպի  
ճշմարտութեան գիտութիւնը չեն կրնար գալ»:*

**– Բ. Տիմոթ. 3.7**

**Յ**աճախ ինծի կը հարցնեն. «Ես ե՞րբ պէտք է հեռանամ որեւէ եկեղեցիէ կամ ծառայողական խումբէ: Ինչպէ՞ս գիտնամ, որ այն արդէն ինծի համար չէ»: Ես կը պատասխանեմ. «Իսկ ո՞վ քեզ ուղարկած է այն եկեղեցին, որ հիմա կը յաճախես»: Շատերը կը պատասխանեն՝ Աստուած: Ես կը պատասխանեմ. «Եթէ Աստուած ուղարկած է քեզ, մի՛ հեռանար այնքան ժամանակ, մինչեւ որ Աստուած քեզ ազատ չարձակէ հոնկէ: Եթէ Տէրը կը լռէ, Ան յաճախ այդ պարագային կ'ըսէ. «Ոչինչ փոխէ, մի՛ հեռանար: Մնա՛ հոն, ուր Ես քեզ դրած եմ»»:

Երբ Աստուած քեզ պատուիրէ հեռանալ, դուն դուրս պիտի ելլես խաղաղութեամբ, նշանակութիւն չունի, թէ ինչ իրավիճակի մէջ է քու ծառայութիւնը:

«Որովհետեւ դուք ուրախութեամբ դուրս պիտի ելլէք եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք»:

– Եսայիա 55.12

Հետեւաբար քու հեռանալը հիմնուած չ'ըլլար ուրիշներու գործողութիւններուն կամ վարքին, այլ Հոգիի առաջնորդութեան վրայ: Այնպէս որ, որեւէ ծառայութենէն հեռանալը հիմնուած չ'ըլլար այն բանին վրայ, թէ որքան վատ է ամէն բան:

Եկեղեցիէն վիրաւորուած կամ քննադատող հոգիով հեռանալը Աստուծոյ ծրագիրը չէ: Ատիկա աւելի շատ կը նշանակէ նահանջել, քան թէ գործել Անոր առաջնորդութեան համաձայն: Հռովմայեցիս 8.14-ն կ'ըսէ. «Որովհետեւ անոնք, որ Աստուծոյ Հոգիով կը վարուին, անոնք Աստուծոյ որդիներ են»: Ուշադրութիւն դարձո՛ւր, որ այն չ'ըսեր. «Որովհետեւ անոնք, որ կը նահանջեն դժուար իրավիճակներէն, անոնք Աստուծոյ որդիներ են»:

Գրեթէ ամէն անգամ «որդի» բառը կ'օգտագործուի Նոր կտակարանին մէջ: Այն կը ծագի յունարէն երկու բառերէն՝ «*teknon*» (թեքնոն) եւ «*huios*» (հիւոս): Վայնի բացատրական բառարանին մէջ «*teknon*»-ը կը թարգմանուի «երեխայ»: Այս բառին բացատրութիւնը հետեւեալն է. «Սէկը, որ որդի է լոկ միայն ծննդեան փաստով»:

Երբ իմ առաջին որդին՝ Էտիսընը, ծնաւ, ան ճոն Պիվիի որդին էր լոկ այն փաստով, որ ծնած էր իմ կնոջմէն եւ ինձմէ: Երբ ան միւս նորածիններուն հետ մանկական սենեակին մէջ էր, որեւէ առանձնայատկութեամբ դուն չէիր կրնար ճանչնալ զինք որպէս իմ որդի: Երբ ընկերներս ու հարազատներս եկան այցելութեան, անոնք չէին կրնար ճանչնալ զինք: Անոնց օգնեց մանկական մահճակալի վրայ կցուած անուան պիտակը: Էտիսընը իրեն վրայ առանձնացող ոչինչ կը կրէր: Ան կը համարուէր ճոն եւ Լիզա Պիվիներու «*teknon*»-ը:

Մենք «*teknon*» բառը կը գտնենք Հռովմայեցիս 8.15,16-ին մէջ:



Այն կ'ըստ, քանի որ մենք ստացած ենք որդեգրութեան հոգին, ապա «նոյն Ինքը Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին, որ մենք Աստուծոյ որդիներ («teknon») ենք»: Երբ անձը կ'ընդունի Յիսուս Քրիստոսը որպէս Տէր, ան Աստուծոյ երեխայ է՝ համաձայն վերըստին ծնունդի փորձառութեան փաստին (տե՛ս Յովի. 1.12):

Միւս յունարէն բառը, որ Նոր կտակարանին մէջ կը թարգմանուի որպէս «որդիներ», «*huios*» (հիւոս) բառն է: Վայնի բացատրական բառարանը այն կը թարգմանէ «որդի»: Յաճախ այն Նոր կտակարանին մէջ կ'օգտագործուի նկարագրելու համար «մէկուն, որ կրնայ ճանչցուիլ որպէս որդի, քանի որ կը ցուցաբերէ իր ծնողներու բնաւորութիւնը կամ առանձնայատկութիւնները»:

Երբ իմ որդի Էտիսընը մեծցաւ, ան սկսաւ նմանիլ իր հօրը եւ գործել անոր նման: Երբ Էտիսընը վեց տարեկան էր, Լիզան ու ես ճամբորդեցինք եւ զինք ձգեցինք իմ ծնողներուն հետ: Երբ վերադարձանք, մայրս ըսաւ կնոջս, որ Էտիսընը իր հայրիկին պատճէնն է: Այդ տարիքին որպէս անհատականութիւն ան շատ կը նմանէր ինծի: Երբ Էտիսընը մեծցաւ, աւելի նմանեցաւ իր հայրիկին: Հիմա զինք կրնային ճանչնալ որպէս ճոն Պիվիի որդի ոչ միայն անոր ծնունդի փաստով, այլ այն բնաւորութեամբ ու առանձնայատկութիւններով, որ նման էր իր հօր բնաւորութեան ու առանձնայատկութիւններուն:

Այսպիսով՝ պարզաբանելու համար ըսենք, որ յունարէն «*teknon*» (թեքնոն) բառը կը նշանակէ «մանուկներ կամ դեռահաս որդիներ», իսկ յունարէն «*huios*» (հիւոս) բառը շատ յաճախ կ'օգտագործուի նկարագրելու համար «*հասուն որդիները*»: Վայնի «Նոր կտակարանի բառերուն բացատրական բառարան»-ին մէջ հեղինակը այս հզօր պնդումները կ'ընէ բացատրելու համար ծնունդով երեխայի (*teknon*) եւ նմանութեամբ որդիի (*huios*) միջեւ եղած տարբերութիւնը: Ահա այն. «Տարբերութիւնը, որ կայ հաւատացեալներու միջեւ որպէս «Աստուծոյ երեխաներ»-ու՝ «*teknon*» (թեքնոն),

եւ «Աստուծոյ որդիներ»-ու՝ «*huios*» (հիւոս), վերցուած է Հռովմայեցիս 8.14-21-էն: Հոգին վկայութիւն կու տայ անոնց հոգիին, որ իրենք «Աստուծոյ երեխաներն» են, եւ որպէս այդպիսին՝ անոնք

Իր ժառանգորդներն ու Քրիստոսի ժառանգակիցներն են» (16,17-րդ խօսքերը): Միս կողմէն, քանի որ «անոնք կ'առաջնորդուին Աստուծոյ Հոգիով, անոնք են Աստուծոյ որդիները», այսինքն՝ «անոնք եւ ուրիշ ոչ մէկը»: Հոգիով առաջնորդուիլը ապացոյցն է այն բանին, որ անոնք փոխարարութիւն ունին Աստուծոյ հետ եւ նմանութիւն ունին Աստուծոյ բնաւորութեան:

Տէր Յիսուսը կը կարեւորէր «*huios*» (հիւս) բառը «Աստուծոյ որդիներու կոչման» մէջ եւ կ'ըսէ. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները... եւ աղօ՛թք ըրէք ձեզ չարչարողներուն համար... որ որդիներ ըլլաք (դառնաք) ձեր Հօր, որ երկինքն է» (Մատթ. 5.44,45): Աշակերտները պէտք է ընէին այս բաները ոչ թէ անոր համար, որ աստորմով Աստուծոյ երեխաները դառնային, այլ, ըլլալով երեխաներ (ուշադիր եղիր, որ միշտ կայ «ձեր Հայրը» արտայայտութիւնը), անոնք պէտք է փաստացի հռչակէին իրենց բնաւորութիւնը, քանի որ արդէն իսկ որդիներ էին (տե՛ս նաեւ Բ. Կորնթ. 6.17,18-ը):

Կրկին դիտարկելով Հռովմայեցիս 8.14-ը՝ կը կարդանք. «Որովհետեւ անոնք, որ Աստուծոյ Հոգիով կը վարուին, անոնք Աստուծոյ որդիներ են (*huios*)»: Մենք հասկնալի ձեւով կրնանք տեսնել, որ Աստուծոյ Հոգիով առաջնորդուողներն են յատկապէս հասուն որդիները: «Դեռահաս» (չհասունցած) քրիստոնեաները աւելի քիչ հաւանական է, որ հետեւին Աստուծոյ Հոգիի առաջնորդութեան: Ամէնէն յաճախ անոնք կը նահանջեն կամ ալ զգացմունքայնօրէն ու բանականութիւնով կ'արձագանգեն իրենց դէմ առ դէմ հանդիպած հանգամանքներուն: Անոնք դեռեւս չեն վարժուած գործել միայն Աստուծոյ Հոգիի առաջնորդութեամբ:

Երբ Էտիսընը մեծնայ, ան առաջընթաց կ'ունենայ բնաւորութեան զարգացման մէջ: Որքան հասուն դառնայ, այնքան աւելի շատ պատասխանատուութիւն կը դնեմ անոր վրայ: Անոր համար սխալ է չհասունցած մնալը: Աստուծոյ կամքը չէ, որ մենք մանուկներ մնանք:

Միակ ճանապարհը, որուն միջոցով իմ որդիին բնաւորութիւնը հասունցաւ, դժուար իրավիճակներուն դէմ առ դէմ հանդիպիլն էր: Երբ ան սկսաւ դպրոց երթալ, հանդիպեցաւ որոշ անկարգ փոքրցայիններու: Ես կը լսէի որոշ բաներու մասին, թէ ինչպէս այս

կոպիտ երեխաները կը վարուէին իմ որդիին հետ եւ ինչ կ'ըսէին անոր: Կ'ուզէի երթալ եւ լուծել անոնց հարցերը, բայց գիտէի, որ ատիկա ճիշդ չէր ըլլար. իմ միջամտութիւնը խոչընդոտ պիտի հանդիսանար Էտիսընի հասունացման համար:

Ես ու իմ կինը կը շարունակէինք անոր խորհուրդներ տալ տանը: Մենք զինք կը նախապատրաստէինք դպրոցի հալածանքներուն հանդիպելու համար: Ան հասունցաւ բնաւորութեան մէջ, երբ իր չարչարանքներուն մէջ հնազանդեցաւ մեր խորհուրդին:

Ասիկա նման է այն ամէնուն, ինչ որ Աստուած կ'ընէ մեզի հետ: Աստուածաշունչը կ'ըսէ. «Թէեւ Ան (Յիսուսը) Որդի «*huios*» (հիւս) էր, այն *չարչարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ*» (Եբր. 5.8):

Ֆիզիքական աճը ժամանակի հետ կապուած գործողութիւն է: Ոչ մէկ երկու տարեկան երեխայ երբեք ունեցած է մօտ 1.8 մեթր հասակ: Մտաւոր աճը սորվելու հետ կապուած գործողութիւն է: Հոգեւոր աճը գործողութիւն մըն է, որ կապ չունի ո՛չ ժամանակին եւ ոչ ալ սորվելու հետ: Հոգեւոր աճը հնազանդութեան հետ կապուած գործողութիւն է: Այժմ տե՛ս, թէ ինչ կ'ըսէ Պետրոսը.

«Արդ Քրիստոսը, որ մարմինով մեզի համար չարչարուեցաւ, դուք ալ նոյն մտքով զինուորուեցէք, որ մարմինով չարչարուողը մեղքէն դադրեցաւ»:

– Ա. Պետր. 4.1

Այն անձը, որ «դադրած» է մեղքէն, Աստուծոյ կատարելապէս հնազանդ երեխան է: Նման մարդը կ'ընտրէ Աստուծոյ ճանապարհը եւ ոչ թէ իր սեփական ուղին: Ինչպէս որ Յիսուսը հնազանդութիւն սորվեցաւ այն բաներէն, որոնցմով չարչարուեցաւ, այնպէս ալ մենք հնազանդութիւն կը սորվինք մեզի հանդիպած դժուարութիւններէն: Երբ մենք կը հնազանդինք Աստուծոյ՝ Սուրբ Հոգիին միջոցով ըսուած խօսքին, ատորմով կ'աճինք ու կը հասունանանք բախումներու եւ չարչարանքներու ժամանակ: Սուրբգրային գիտելիքները բանալի չեն: Բանալին հնազանդութիւնն է:

Հիմա մեզի համար հասկնալի է, թէ ինչու եկեղեցւոյ մէջ կան մարդիկ, որոնք քսան տարի է, քրիստոնէայ են, որոնք կրնան գոց ըսել Աստուածաշունչի համարներն ու գլուխները, որոնք լսած են

հազարաւոր քարոզներ եւ կարդացած են շատ գիրքեր, բայց մինչեւ հիմա հոգեւոր առումով մանուկներ են:

Ամէն անգամ, երբ անոնք կը հանդիպին դժուար իրավիճակներու, Աստուծոյ Հոգիով առաջնորդուելու փոխարէն կը փնտռեն իրենց անձերը սեփական ճանապարհով պաշտպանելը: Անոնք «Ամէն ժամանակ կը սորվին եւ երբեք դէպի ճշմարտութեան գիտութիւնը չեն կրնար գալ» (Բ. Տիմոթ. 3.7): Անոնք երբեք չեն գար ճշմարտութեան գիտութեան, որովհետեւ չեն կիրառեր ասիկա:

Եթէ մենք կը պատրաստուինք աճիլ ու հասուննալ, ապա պէտք է թոյլ տանք, որ ճշմարտութիւնը իր ճանապարհը ունենայ մեր կեանքին մէջ: Առանց հնազանդելու ճշմարտութեան՝ մտաւոր համաձայնութիւն տալը բաւական չէ: Նոյնիսկ եթէ շարունակ սորվինք, անհնազանդութեան պատճառով երբեք չենք հասուննար:

### ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Վիրաւորուածութիւնը տարածուած պատրուակ է անհնազանդութեան միջոցով սեփական անձը պաշտպանելու համար: Կեղծ ինքնապաշտպանութեան զգացում կայ վիրաւորանքին ապաստան տալու մէջ: Այն քեզ ետ կը պահէ քու բնաւորութեան թերութիւնները տեսնելէն, քանի որ այդ պարագային մեղադրանքը ուղղուած է ուրիշներուն: Դուն երբեք չես հանդիպիր քու իսկական դէմքին, քու չհասունցած վիճակին կամ ալ քու մեղքին, քանի տակաւին կը տեսնես միայն վիրաւորողին թերութիւնները: Հետեւապէս քու մէջ բնաւորութիւն զարգացնելու Աստուծոյ փորձը, որ տեղի կ'ունենայ հակառակութիւններու միջոցով, կը ծախողի: Վիրաւորուած անձը կը խուսափի վիրաւորանքի ակունքէն եւ վերջիվերջոյ կը փախչի՝ դառնալով հոգեւոր թափառական:

Վերջերս կին մը պատմեց ինձի իր ընկերուհիին մասին, որ հեռացած էր եկեղեցիէն եւ սկսած էր յաճախել ուրիշ եկեղեցի մը: Ան նոր հովիւը հրաւիրած էր ճաշի: Զրոյցի ժամանակ հովիւը հարցուցած էր, թէ ինչու ան լքած էր առաջին եկեղեցին: Կինը պատմած էր հովիւին այն բոլոր խնդիրներուն մասին, որոնք կային իր նախկին եկեղեցւոյ աւագներուն մէջ:

Հովիւը լսած էր զինք եւ փորձած էր մխիթարել: Որպէս փորձառու՝ ես համոզուած եմ, որ այդ հովիւը իմաստուն քայլ առած պիտի ըլլար, եթէ Աստուծոյ Խօսքով քաջալերէր այդ կինը, որպէսզի ան լուծէր իր վիրաւորուած եւ քննադատող կեցուածքի հարցերը: Եթէ անհրաժեշտութիւն ըլլար, հովիւը պէտք է առաջարկէր այդ կնոջ վերադառնալ իր նախկին եկեղեցին, մինչեւ որ Աստուած Ինքը անոր այնտեղէն խաղաղութեամբ ազատ արձակէր:

Երբ Աստուած քեզ խաղաղութեամբ ազատ արձակէ, դուն քեզ ճնշուած չես զգար՝ ուրիշներուն քով արդարացնելով քու հեռանալը:

Դուն եկեղեցիէն հեռանալէն ետք ստիպուած չես ըլլար դատապարտել կամ քննադատաբար բացայայտել քու նախկին եկեղեցւոյ ունեցած խնդիրները: Ես գիտէի, որ որոշ ժամանակ յետոյ այդ կինը այս նոյն հովիւին ու անոր աւագներուն հետ պիտի վարուէր այնպէս, ինչպէս նախկիններուն հետ: Երբ մենք վիրաւորանքը կը պահենք մեր սրտերուն մէջ, ամէն ինչ կ'անցընենք ստոր միջոցով:

Կայ հին առակ մը, որ կը համապատասխանէ այս իրավիճակին: Ժամանակներ առաջ Արեւմուտքը նոր-նոր սկսած էր բնակեցուիլ նորաբնակներով: Իմաստուն մարդ մը կը կանգնի Արեւմուտքի նոր քաղաքներէն մէկուն քով գտնուող բլուրին վրայ: Եւ երբ նորաբնակները կու գան, առաջինը, որուն անոնք կը տեսնեն, իմաստունը կ'ըլլայ: Անոնք կը հարցնեն, թէ ինչպիսին են այդ քաղաքի մարդիկ:

Իմաստուն մարդը անոնց կը պատասխանէ հարցումով մը. «Իսկ ինչպիսի՞ն էին այն քաղաքի մարդիկ, որմէ դուք հագիւ նոր դուրս ելած էք»:

Քանիներ կ'ըսեն. «Այն քաղաքը, ուրկէ դուրս ելած ենք, այլատերուած էր: Մարդիկ դաժան բամբասողներ էին եւ վրէժ կը լուծէին անմեղ մարդոցմէ: Քաղաքը լեցուած էր գողերով եւ խաբեբաներով»:

Իմաստուն մարդը կը պատասխանէ. «Այս քաղաքն ալ այդպիսին է, ինչպէս այն մէկը, որմէ դուրս ելած էք»:

Անոնք շնորհակալություն կը յայտնեն այդ մարդուն, որ փրկեց զանոնք այն հոգերէն, որուն միջէն հազիւ նոր դուրս ելած էին: Անոնք կը փոխեն իրենց շարժման ուղղութիւնը: Այնուհետեւ նորաբնակներու ուրիշ խումբ մը կու գայ եւ նոյն հարցումը կու տայ. «Ինչպիսի՞ն է այս քաղաքը»:

Իմաստուն մարդը կրկին կը հարցնէ. «Ինչպիսի՞ն էր այն քաղաքը, ուրկէ դուրս ելած էք»:

Անոնք կը պատասխանեն. «Այն հրաշալի էր, մենք ունէինք թանկագին ընկերներ: Ամէն մէկը հետաքրքրուած էր միւսներով: Ոչ մէկ բանի պակասութիւն կար, քանի որ բոլորն ալ հոգ կը տանէին մէկը միւսին համար: Եթէ ոեւէ մէկը մեծ նախագիծ մը ունենար, ողջ համայնքը կը հաւաքուէր անոր օգնելու: Հեռանալը ծանր որոշում էր, բայց գալով Արեւմուտք՝ մենք նպատակ ունինք ճանապարհ պատրաստել ապագայ սերունդներուն համար»: Իմաստուն ծերունին անոնց կ'ըսէ այն, ինչ որ ըսած էր միւս խումբին. «Այս քաղաքն ալ այդպիսին է, ինչպէս այն մէկը, որմէ դուք դուրս ելած էք»: Մարդիկ ուրախացած կը գոչեն. «Եկէ՛ք բնակինք հոս»:

Ինչպիսի կարծիք որ անոնք ունէին հին բնակութեան վայրին մէջ մարդոց հետ իրենց ունեցած յարաբերութիւններու մասին, նոյնը կը սպասուէր անոնց նաեւ նոր վայրին մէջ:

Ինչ ճանապարհով որ դուն կը ձգես որեւէ եկեղեցի կամ փոխյարաբերութիւն, նոյն ճանապարհով ալ դուն կը մտնես յաջորդ եկեղեցի կամ փոխյարաբերութեան մէջ: Յիսուսը Յովհաննէս 20.23-ին մէջ ըսաւ. «Որոնց մեղքը որ թողուք, թողուած պիտի ըլլայ անոնց, որոնց որ բռնէք, բռնուած պիտի ըլլայ»:

Երբ մենք կը վերցնենք վիրաւորանքը եւ տեղ կու տանք զարոյթին, ատորմով կը բռնենք ուրիշ մարդոց մեղքերը: Եթէ եկեղեցիէ մը կամ փոխյարաբերութենէն մենք կը հեռանանք զայրոյթով լեցուած եւ դառնացած, այդ նոյն կեցուածքով ալ մենք կը մտնենք յաջորդ եկեղեցին: Եւ եթէ հոս նոյնպէս խնդիրներ կը յառաջանան, այս միւս փոխյարաբերութենէն եւս կը հրաժարինք: Մենք գործ կ'ունենանք ոչ միայն այն վիրաւորանքներուն հետ, որոնք յառաջացած են այդ նոր փոխյարաբերութեան մէջ, այլ այն վիրաւո-

րանքներուն հետ, որոնք կու գան նախկին փոխյարաբերութենէն:

Վիճակագրական տուեալները ցոյց տուած են, որ ամուսնալուծուած մարդոց 60-65 տոկոսը երկրորդ անգամ ամուսնանալէն յետոյ նորէն կը բաժնուին (ըստ Ռոքֆըրտ համալսարանի «Ամերիկայի ընտանիքի կենդրոն»-ի տուեալներուն): Պատճառը, որուն հետեւանքով անձը կը հեռանայ իր առաջին ամուսնութենէն, կը վճռէ այն ընթացքը, որուն միջոցով ան կ'երթայ երկրորդ անգամ ամուսնանալու քայլին: Չներելու բեռը, որ անոնք կը տանին իրենց առաջին կողակիցէն, ապագային կը դառնայ խոչընդոտ երկրորդ կողակիցի համար: Երբ կը մեղադրեն ուրիշը, կը դառնան կոյր իրենց արարքներուն կամ բնաւորութեան թերութիւններուն նկատմամբ: Երթալով ամէն բան կը վատանայ, եւ յետոյ անոնք վիրաւորուած ըլլալու համար կրկին կը վախնան:

Այս սկզբունքը չի գործեր միայն ամուսնութեան եւ ամուսնալուծութեան մէջ: Այն կը վերաբերի բոլոր փոխյարաբերութիւններուն: Մարդ մը, որ նախկինին աշխատած էր մէկ այլ ծառայողի քով, եկաւ աշխատելու մեր ծառայողական խումբին մէջ: Ան վիրաւորուած էր իր նախկին աւագէն: Ժամանակ անցաւ, եւ ես զգացի, որ Տէրը կ'առաջնորդէ զիս՝ խնդրեմ անորմէ, որպէսզի զայ ու մեզի հետ աշխատի: Ես կը հաւատայի, որ ան այս վիրաւորանքը յաղթահարելու գործընթացի մէջ էր:

Ես կանչեցի անոր նախկին աւագը եւ բաժնեկցեցայ անոր հետ այդ մարդը աշխատակազմ բերելու իմ ծրագրի մասին: Ան քաջալերեց զիս եւ կը մտածէր, որ ատիկա լաւ միտք էր, որովհետեւ զիտէր, թէ ես անոնց երկուքին համար ալ հոգ կը տանիմ: Այդ աւագը հաւատացած էր, որ բժշկութիւնը ամբողջական պիտի դառնայ, երբ իրենց եկեղեցւոյ նախկին ծառայողը աշխատի մեզի հետ: Ես այդ երկուքին ալ ըսի, որ կ'աղօթեմ իրենց փոխյարաբերութեան վերականգնման եւ բժշկութեան համար:

Երբ այդ մարդը միացաւ մեր ծառայողական խումբին, անմիջապէս խնդիրներ յառաջացան: Ես պէտք է անդրադառնայի խնդրի բուն արմատին միայն այն բանին համար, որպէսզի տեսնէի ատոր ժամանակաւոր լուծումը: Կը թուար, որ այդ մարդը չէր կրնար մէկ կողմ դնել իր նախկին փոխյարաբերութիւններուն մէջ

եղած խնդիրը: Ատիկա կը շարունակէր հետապնդել զինք: Ան նոյնիսկ կը մեղադրէր զիս, որ ես ալ կ'ընեմ այն նոյն բաները, ինչ իր նախկին աւագը:

Ես մտահոգուած էի, քանի որ ինձի համար աւելի կարեւոր էր, որ այս մարդը լաւ վիճակի մէջ ըլլար, քան այն, թէ որպէս ծառայող ան ինչ պիտի ընէր ինձի համար: Ես անոր համար բացառութիւն ըրած էի (ուրիշ ծառայող չէի առած), քանի որ կը ցանկայի զինք բժշկուած տեսնել:

Ընդամենը երկու ամիս յետոյ այդ մարդը հրաժարական տրուաւ: Ան կը զգար, որ ինչպէս նախկինին, հիմա ալ այդ նոյն իրավիճակի թակարդի մէջ էր: Ան հեռացաւ՝ ըսելով. «Ճո՛ւն, ես ալ երբեք նորէն չեմ աշխատիր ուրիշ ծառայութեան մը համար»:

Ես օրհնեցի զինք, եւ ան զնաց: Մենք կը սիրենք զինք ու անոր կինը: Տխուր է, բայց փաստ, որ զօրաւոր կոչում մը կար անոր կեանքին համար յատկապէս այն բանին մէջ, ինչչէն հեռացաւ, չնայած ատիկա չի նշանակեր, որ ան այլեւս միւս ոլորտներուն մէջ յաջողութիւն պիտի չունենար:

Ես մտահոգուած էի անոր հեռանալէն յետոյ, ատոր համար կը փնտռէի Տիրոջ երեսը: Ես հարցուցի Անոր. «Ինչո՞ւ ան այդքան արագ հեռացաւ»:

Քանի մը շաբաթ յետոյ Տէրը օգտագործեց իմ ընկերներէն մէկը՝ իմաստուն հովիւ մը՝ այս հարցումին պատասխանելու համար: Ան ըսաւ. «Շատ անգամ Աստուած թոյլ կու տայ, որ մարդիկ փախչին այն իրավիճակներէն, որոնց Աստուած կը ցանկայ, որ հանդիպին, եթէ անոնք իրենց սրտին մէջ որոշած են փախչիլ ատորմէ՛»: Յետոյ ան պատմեց Եղիայի պատմութիւնը, որ կը փախչէր Յեզաբելէն (տե՛ս Գ. Թագ. 18,19-րդ գլուխները): Եղիան հազիւ նոր մահապատիժի ենթարկած է Բահաղի եւ Աստարովթի չար մարգարէները: Անոնք այն մարդիկն էին, որոնք ազգը առաջնորդած էին կռապաշտութեան մէջ եւ կ'օգտուէին Յեզաբելի սեղանէն: Երբ Յեզաբելը լսեց ատոր մասին, սպառնաց քսանչորս ժամուան ընթացքին Եղիան սպաննել:

Աստուած կ'ուզէր, որ Եղիան դիմադրէր Յեզաբելին, բայց այդ-



պէս վարուելու փոխարէն ան փախաւ: Ան այնքան յուսահատած էր, որ կ'աղօթէր մահանալու համար: Եղիան ի վիճակի չէր իրականացնելու այն, ինչին համար որ կանչուած էր: Աստուած հրեշտակ մը ուղարկեց անոր, որպէսզի կերակրէր երկու նկանակով, եւ թոյլ տուաւ, որ Եղիան քառասուն օր ու գիշեր վազէ դէպի Քորեթ լեռը:

Երբ ան տեղ հասաւ, առաջինը, որ Աստուած հարցուց անոր, այս էր. «Ի՞նչ կ'ընես դուն հոս, Եղիա՛»:

Կը թուար, թէ ասիկա տարօրինակ հարցում մըն էր: Տէրը անոր ճամբորդութեան համար կերակուր տուաւ, թոյլ տուաւ անոր երթալ միայն այն բանին համար, որ, երբ տեղ հասնէր, հարցնէր անոր, թէ ի՞նչ կ'ընէ հոս: Աստուած գիտէր, որ Եղիան կը փախչէր դժուար իրավիճակէն: Ան թոյլ տուած էր այս ամէնը, չնայած որ Աստուծոյ հարցումէն ակնյայտ էր, որ ատիկա Իր սկզբնական ծրագիրը չէր:

Յետոյ Աստուած ըսաւ Եղիային. «Ե՛տ դարձիր, գնա՛ քու ճանապարհով՝ անապատով Դամասկոս, եւ երբ գաս... Նամեսսիի որդի Յէուն ալ թագաւոր օժէ՛ Իսրայէլի վրայ եւ Աբելմաուլացի Սափատի որդի Եղիսէն ալ մարգարէ օժէ՛ քու տեղը» (Գ. Թագ. 19.15,16): Եղիսէի եւ Յէուի ծառայութիւններու ժամանակ անառակ թագուհին եւ անոր չար համակարգը կործանուեցան (Դ. Թագ. 9,10-րդ գլուխներ): Այս ամէնը կատարելու պարտականութիւնը Եղիան չէր, որ ամբողջական դարձուց, այլ Եղիային յաջորդած այն մարդիկ, որոնց համար Աստուած անոր ըսած էր, որ օժէ իր տեղը:

Հովիւը ըսաւ ինծի. «Եթէ մենք մեր սրտերուն մէջ հաստատ որոշած ենք խուսափիլ դժուար իրավիճակներէն, իրականութեան մէջ Աստուած ազատ կը ձգէ մեզ այս որոշումին մէջ նոյնիսկ այն ժամանակ, երբ ատիկա Իր կատարեալ կամքը չէ»:

Հետագային ես յիշեցի դէպք մը Թուոց 22-րդ գլուխէն, որ կը լուսաբանէ այս նոյն երեւոյթը: Բաղասանը կ'ուզէր անիծել Իսրայէլը, որովհետեւ անձամբ իրեն համար մեծ վարձատրում կար: Առաջին անգամ ան հարցուց Տիրոջը, թէ ինքը կրնա՞ր երթալ, եւ

Աստուած ցոյց տուաւ անոր, որ Բաղասամին համար Իր կամքը չերթալն է: Երբ Մովսէփ իշխանները վերադարձան աւելի շատ դրամով եւ պատիւով, Բաղասամը նորէն գնաց Աստուծոյ քով: Անհեթեթ է մտածել, որ այդ պարագային Աստուծոյ միտքը փոխուած էր այն բանէն, որ այժմ աւելի շատ դրամ եւ պատիւ կար Բաղասամին համար: Բայց այս անգամ Աստուած ըսաւ, որ Բաղասամը երթայ անոնց հետ:

Ինչո՞ւ Աստուած փոխեց Իր միտքը: Պատասխանը այն է, որ Աստուած չփոխեց Իր միտքը: Բաղասամը այնքան վճռական էր երթալու համար, որ Աստուած թոյլ տուաւ անոր երթալ: Ահա թէ ինչու Անոր բարկութիւնը բարձրացաւ Բաղասամին դէմ, երբ ան գնաց:

Մենք կրնանք Տէրը ձանձրացնել ինչ որ բանի վերաբերեալ անընդհատ հարցնելով, որուն համար Ան արդէն մեզ ցոյց տուած է Իր կամքը: Ատորմէ յետոյ Ան թոյլ պիտի տայ մեզի ընել այն, ինչ որ կ'ուզենք, նոյնիսկ եթէ ատիկա դէմ է Իր սկզբնական ծրագրին, նոյնիսկ եթէ ատիկա մեր օգուտին համար չէ: Յաճախ Աստուծոյ ծրագիրը պատճառ կը դառնայ, որ մենք դէմ առ դէմ հանդիպինք այն վիրաւորանքներուն եւ վարմունքներուն, որոնց չենք ուզեր հանդիպիլ: Ատորմով մենք կը փախչինք մեր կեանքին մէջ ամբարանում բերող ամենամեծ բանէն: Երբ կը մերժենք լուծել վիրաւորանքի հարցերը, ատորմով չենք ազատեր մեզ խնդիրէն: Ատիկա ընդամենը ժամանակաւոր հանգստութիւն է, իսկ նման պարագային խնդիրին արմատը կը մնայ անվնաս:

Ես վիրաւորանքներու եւ փոխյարաբերութիւններու մասին դաս մը սորվեցայ քովս աշխատող երիտասարդ մարդու մը հետ ունեցած յարաբերութիւններու փորձառութենէն: Անհնար է առողջ փոխյարաբերութիւն հաստատել այն անձին հետ, որ մէկ այլ փոխյարաբերութենէն հեռացած է դառնացած ու վիրաւորուած: Նման պարագային անպայման պէտք է բժշկութիւն տեղի ունենայ: Չնայած որ այդ երիտասարդը կը շարունակէր ըսել, որ ներած է իր նախկին աւագին, բայց ոչինչ մոռցած էր:

Սէրը կը մոռնայ սխալները, այնպէս որ, ապագայի համար յոյս կայ: Եթէ մենք ճշմարտապէս յաղթած ենք վիրաւորուածութեան,

ապա լրջօրէն փորձենք խաղաղութիւն փնտռել: Թերեւս ճիշդ ժամանակը չէ, բայց մեր սրտերուն մէջ մենք կրնանք աշխատանք տանիլ վերականգնման համար:

Հետագային իմաստուն ընկեր մը ըսաւ ինձի. «Հին առակի մը մէջ կ'ըսուի, որ եթէ շունը մէկ անգամ խաշուած է եռացող ջուրին մէջ, ան կը վախնայ նաեւ պաղ ջուրէն»: Որքա՞ն մարդիկ այսօր կը վախնան պաղ ջուրէն, որ թարմութիւն կը բերէ: Եւ ատիկա այն պատճառով, որ ինչ որ ժամանակ անոնք վառած են տաք ջուրի մէջ եւ չեն կրնար մոռնալ:

Յիսուսը կը ցանկայ բժշկել մեր վերքերը: Բայց մենք յաճախ Անոր թոյլ չենք տար բժշկելու մեզ, որովհետեւ բուժումը ընդունիլը ամենադժուրին ճանապարհը չէ: Խոնարհութեան եւ անձնուրացութեան ճանապարհը կ'առաջնորդէ դէպի բժշկութիւնն ու հոգեւոր հասունութիւնը: Բժշկութիւն կը բերէ այն որոշումը, երբ քեզի համար աւելի կարեւոր է ուրիշի լաւ ըլլալը, քան քու, նոյնիսկ եթէ այդ մարդը քեզի շատ մեծ վիշտ պատճառած է:

Հպարտ մարդը չի կրնար ճամբորդել այս ճանապարհով: Այս ճանապարհը միայն անոնց համար է, որոնք, երթալով մերժութեան ռիսքին, խաղաղութիւն կը ցանկան: Ատիկա ճանապարհ մըն է, որ կ'առաջնորդէ դէպի խոնարհութիւն եւ հեզութիւն: Ատիկա այն ճանապարհն է, որ կ'առաջնորդէ դէպի կեանք:

ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ ՄԵՆՔ ԿԸ ՍՈՐԿԻՆՔ  
ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ,  
ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՍՈՐԿԻԼ ՄԱՐԴՈՑ  
ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Ես կարդացած եմ «Սատանայի խայծը» գիրքը: Իմ տեսակետը Աստուծոյ Խօսքին նկատմամբ ամբողջովին փոխուեցաւ: Ես ցաւալի իրավիճակի մը մէջ էի, եւ եթէ չըլլար այս գիրքի ուղերձը, կրնայի յաւիտեան ծուղակի մէջ ըլլալ»:

– Ֆ. Ն., ՄԱԼԵԶԻԱ

## ԱՄՈՒՐ ՀԻՄՔ

---

*«Այսպէս կ'ըսէ Եհովա Տէրը. «Ահա ես եմ, որ Սիօնի մէջ դրած եմ վէմը, ընտիր վէմ, պատուական անկիւն (անգլերէնի մէջ՝ թանկարժէք անկիւնաքար), հաստատահիմն հիմունք. ով որ Անոր հաւատայ, չի փախչիր»:*

**– Եսայիա 28.16**

**Ո**վ որ հաւատայ, չի փախչիր: Ան, որ կը փախչի, անհաստատ մարդ է, քանի որ անոր գործողութիւնները բաւականաչափ հիմնաւորուած չեն: Այսպիսի անծը դիրութեամբ կը սասանի եւ կը տարուբերի հալածանքներու ու փորձութիւններու փոթորիկներէն: Եկո՛ւր նայինք, թէ ինչ տեղի ունեցաւ Սիմոն-Պետրոսին հետ: Յիսուսը գացած էր Փիլիպպոսի Կեսարիոյ կողմերը եւ Իր աշակերտներուն հարցուց. «Մարդիկ Ինծի համար ո՞վ կ'ըսեն, որ մարդու Որդին ըլլայ» (Մատթ. 16.13):

Քանի մը աշակերտներ խանդավառութեամբ բաժնեկցեցան ամբոխի կարծիքը այն մասին, թէ ով էր Յիսուսը: Յիսուսը սպասեց, մինչեւ որ անոնք ասարտեցին, յետոյ նայեցաւ անոնց եւ վճռական հայեացքով հարցուց. «Իսկ դուք ո՞վ կ'ըսէք Ինծի համար, թէ ըլլամ» (Մատթ. 16.15):

Ես համոզուած եմ, որ երբ աշակերտները կը մտածէին ասոր մասին, անոնցմէ շատերուն դէմքին շփոթութիւններ էին վախ կար: Անոնց բերանները կիսաբաց մնացած էին, աշակերտները պապանձուած էին: Անոնք, որոնք շատ եռանդուն ձեւով կը յայտնէին ուրիշներուն կարծիքները, անսպասելիօրէն լռեցին. հաւանաբար երբեք այս հարցումը իրենք իրենց լրջօրէն չէին հարցուցած: Ինչպիսին ալ որ ըլլար իրավիճակը, անոնք այդ ժամանակ հասկեցան, որ ոչ մէկ պատասխան ունին: Յիսուսը իր արարքին մէջ միշտ ճիշդ էր: Ան մէկ հարցումով ցոյց տուաւ աշակերտներուն սրտերու վիճակը՝ ատորմով բացայայտելով, թէ ինչ կ'ընէին անոնք առանց իմանալու: Անոնք աւելի շատ կ'ապրէին ուրիշներու կարծիքներով, քան իրենց սրտերուն մէջ այն համոզումները ունենալով, թէ իրականութեան մէջ ով է Յիսուսը: Անոնք իրենց անձերուն հետ հաշուի չէին նստեր:

Սիմոնը, որուն Յիսուսը անուանեց Պետրոս, աշակերտներէն միակն էր, որ կրցաւ պատասխանել: Ան անսպասելիօրէն պոռթկեց՝ ըսելով. «Դուն ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Մատթ. 16.16):

Յետոյ Յիսուսը արձագանգեց անոր՝ ըսելով. «Երանի՛ քեզի, Սիմոն՝ Յովնանի որդի, որովհետեւ մարմինը եւ արիւնը չյայտնեցին քեզի, բայց Իմ Հայրը, որ երկինքն է» (Մատթ. 16.17):

Յիսուսը բացատրեց Սիմոն-Պետրոսին այս յայտնութեան ակունքի մասին: Սիմոն-Պետրոսը այս գիտութիւնը չստացաւ ուրիշներուն կարծիքը լսելէն կամ ալ իր սորվածէն, այլ Աստուած յայտնեց անոր:

Սիմոն-Պետրոսը մեծ քաղց ունէր Աստուծոյ բաները իմանալու համար: Ամենաշատ հարցումները ան կու տար: Պետրոսն էր, որ քալեց ջուրին վրայէն, իսկ այդ ժամանակ միւս տասնմէկը կը դի-

տէին: Ան մարդ մըն էր, որ չէր հիմնուեր ուրիշ մէկու մը կարծիքին վրայ: Պետրոսը կը ցանկար լսել անմիջապէս Աստուծոյ բերանէն:

Յիսուսի մասին յայտնութեամբ եկած այս գիտութիւնը անոր զգացումներէն չէր: Ասիկա պարգեւ մըն էր, որ լուսաւորուեցաւ անոր սրտին մէջ՝ որպէս արծագանգ Աստուծոյ նկատմամբ ունեցած իր քաղցին: Շատերը տեսած էին ու վկայած այն, ինչ որ Սիմոն-Պետրոսը տեսաւ ու վկայեց, բայց Աստուծոյ կամքը ճանչնալու համար անոնց սրտերը այնքան քաղց չունէին, որքան Պետրոսի սիրտը:

Յովհաննէսի առաջին թուղթի 2.27-ն կ'ըսէ. «Եւ այն օծութիւնը, որ դուք Անորմէ ընդունեցիք, կը բնակի ձեր մէջ, եւ դուք պէտք չունիք, որ մէկը սորվեցնէ ձեզի, այլ ինչպէս այն օծութիւնը կը սորվեցնէ ձեզ ամէն բանի համար, ճշմարիտ ալ է եւ սուտ չէ, եւ ինչպէս ան սորվեցուց ձեզի, մնացէ՛ք անոր մէջ»:

Այս օծութիւնը սորվեցուցած էր Սիմոն-Պետրոսին: Ան լսեց բոլորին եւ յետոյ նայեցաւ իր ներսը Աստուծոյ յայտնածին: Հազիւ որ դուն յայտնութեամբ եկած գիտութիւն ստանաս Աստուծմէ, ոչ մէկը կրնայ քեզ ապակողմնորոշել: Երբ Աստուած որեւէ բան մը կը յայտնէ քեզի, այլեւս նշանակութիւն չունի, թէ ինչ կ'ըսէ ամբողջ աշխարհը: Անոնք չեն կրնար փոխել քու սիրտը:

Յետոյ Յիսուսը Սիմոն-Պետրոսին եւ մնացած աշակերտներուն ըսաւ. «Այդ վէմի վրայ (Աստուծմէ բացայայտուած գիտութեան վրայ) կը շինեն Իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները չեն յաղթեր անոր» (Մատթ. 16.18): Մենք պարզ կը տեսնենք, որ Աստուծոյ յայտնութեամբ եկած Խօսքին մէջ գոյութիւն ունի ամուր հիմք: Այդ հիմքի պատճառով Պետրոսը հասկցած էր, որ Յիսուսը Աստուծոյ Որդին էր:

## ԼՈՒՍԱԲՈՐՈՂ ԽՕՍՔԸ

Ես յաճախ կ'ըսեմ եկեղեցիներուն եւ անհատներուն, որ երբ կը քարոզեմ, իմ ծայնի միջոցով լսեն Աստուծոյ ծայնը: Շատ յաճախ մենք նշումներ ընելու համար այնքան զբաղած ենք, որ միայն գրի կ'առնենք այն, ինչ որ կ'ըսուի: Ասիկա ալ կը տանի Սուրբ գիրքերու եւ աստուծոյ մեկնութիւններու մտաւոր հասկացողութեան, որուն

Ժամանակ գլխավոր տեղը կը գրաւէ գիտելիքը:

Երբ մենք միայն կ'ունենանք գիտութիւն, որ գլխավորող է, երկու բան կրնայ տեղի ունենալ.

1. Մենք դիրւութեամբ դիրազգաց կը դառնանք ձախողման եւ զգացմունքայնութեան նկատմամբ:
2. Մենք կը սահմանափակուինք մեր բանականութեամբ: Բայց ասիկա չէ այն ամուր հիմքը, որուն վրայ Յիսուսը կը կառուցէ Իր եկեղեցին: Ան ըսաւ, որ եկեղեցին պիտի հիմնուի յայտնութեամբ եկած Խօսքի, ոչ թէ ուղղակի անգիր սորված համարներու վրայ:

Երբ մենք կը լսենք օրինուած ծառայողի մը խօսքը կամ երբ գիրք մը կը կարդանք, պէտք է ուշադիր ըլլանք այն խօսքերու կամ արտայայտութիւններու նկատմամբ, որոնք «կը պայթին» մեր հոգիներուն մէջ: Ասիկա ճիշդ Աստուծոյ Խօսքն է, որ կը բացուի մեզի: Այն լոյս եւ հոգեւոր հասկացողութիւն կը փոխանցէ: Ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ. «Խօսքերուդ յայտնութիւնը (անգլերէնին մէջ)՝ Քու խօսքին մէջ մուտք ունենալը» լոյս կու տայ եւ իմաստուն կ'ընէ պարզամիտները» (Սաղմ. 119.130): Երբ Անոր Խօսքը կը մտնէ մեր սրտերու մէջ եւ ոչ թէ մտքերու, կը լուսաւորէ եւ հասկնալի կը դարձնէ ամէն բան: Յաճախ ծառայողը կրնայ խօսիլ թեմայէ մը, մինչդէռ Աստուած կրնայ ինչ որ այլ բան լուսաբանել իմ սրտի մէջ: Միւս կողմէն ալ Աստուած կրնայ օժել այդ ծառայողի ճշգրիտ խօսքերը, եւ ատոնք կրնան «պայթիլ» իմ ներսը: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ նման պարագաներուն մէջ ատիկա Աստուծոյ բացայայտուած Խօսքն է ինծի համար: Ահա թէ ինչը կը փոխէ մեզ՝ պարզամիտ ըլլալէն դարձնելով իմաստուն: Մեր սրտերու մէջ եղող այս լուսաւորող Խօսքն է այն հիմքը, որուն համար Յիսուսը խօսեցաւ, եւ որու վրայ պիտի կառուցուի Իր եկեղեցին:

Յիսուսը Աստուծոյ յայտնութեամբ եկած խօսքը համեմատեց վէմի հետ: Վէմը կայունութեան եւ ամրութեան խորհուրդն է: Վերջինքն էրկու տուններու առակը, անոնցմէ մէկը կառուցուեցաւ ժայռի վրայ, իսկ միւսը՝ ավազի: Երբ ձախողութիւնները՝ հալածանքները, փորձութիւնը, տառապանքը եւ փոթորիկները, դուրս ելան



այդ երկու տուներուն դէմ, այն տունը, որ կառուցուած էր աւագի վրայ, կործանեցաւ, մինչդեռ վեմի վրայ կառուցուածը կանգուն մնաց: Որոշ բաներ, որ մենք կարիք ունինք Աստուծոյ լսելու, չենք կրնար գտնել Աստուածաշունչին մէջ: Օրինակ՝ «Որո՞ւն հետ պէտք է ամուսնանանք», «Ո՞ր պէտք է աշխատինք», «Ո՞ր եկեղեցիին պէտք է միանանք»: Եւ այս ցուցակը կը շարունակուի: Մենք նման որոշումներու համար պէտք է Աստուծոյ Խօսքի յայտնութիւնը ունենանք: Առանց այս յայտնութեան մեր որոշումները պիտի հիմնուին աւագի վրայ:

Այն, ինչ Աստուած կը բացայայտէ Իր Հոգիով, չի կրնար առնուիլ մեզմէ: Ասիկա ալ պէտք է ըլլայ այն բոլոր բաներու հիմքը, որ մենք կ'ընենք: Առանց այդ հիմքի մենք դիրութեամբ կը վիրաւորուինք այն ապրումներէն եւ փորձութիւններէն, որոնք մեր չսպասած ուղղութենէն անակնկալ ձեւով կը յարձակին մեր վրայ:

Կրկին վերոյիշենք, թէ Յիսուսը ինչ ըսաւ այն Խօսքի մասին, որ կը լսուի եւ խանդավառութեամբ կ'ընդունուի, մինչդեռ արմատ չի նետեր մեր սրտերու մէջ. այն ուրախութեամբ կ'ընդունուի մեր մտքին եւ զգացումներուն մէջ:

«Անոնք, երբ որ Խօսքը կը լսեն, շուտով ուրախութեամբ կ'ընդունին զայն: Եւ իրենց մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տեսնեն, յետոյ, երբ այն Խօսքին համար ներդրութիւն կամ հալածանք կ'ըլլայ, շուտով կը գայթակղին (անգլերէնի մէջ՝ կը վիրաւորուին)»:

– Մարկ. 4.16,17

Մենք դիրութեամբ կրնանք «արմատ» բառի փոխարէն դնել «հիմք» բառը, քանի որ այս երկուքն ալ ցոյց կու տան բոյսի կամ կառոյցի ամրութիւնը կայունացնողին եւ ակունքին: Եթէ անձը հաստատուած կամ հիմնուած չէ Աստուծոյ յայտնութեամբ եկած Խօսքի վրայ, ապա ան վիրաւորանքի փոթորիկէն տեղաշարժելու համար շատ յարմար թեկնածու է: Որքա՞ն շատ մարդիկ նման են այն աշակերտներուն, որոնց յանդիմանեց Յիսուսը: Անոնք կ'ապրին ուրիշներու ըսածին կամ քարոզին վրայ հիմնուելով, ուրիշներու կարծիքներն ու պնդումները կ'ընդունին որպէս ճշմարտու-

թիւն՝ առանց փնտռելու Հոգիի խորհուրդն ու վկայութիւնը: Մենք կրնանք ապրիլ միայն անորմով ու հռչակել այն, ինչ որ մեզի յայտնուած է Աստուծմէ: Ահա ասոր վրայ Յիսուսը կը կառուցէ Իր եկեղեցին:

Տարիներ առաջ ես ունէի չամուսնացած գործավարուհի մը, որ կը հանդիպէր մեր եկեղեցիին մէջ աշխատող երիտասարդի մը հետ: Անոնք օրէ օր աւելի կը մտերմանային: Պարզ կ'երեւէր, որ անոնց փոխյարաբերութիւնը վերջ ի վերջոյ պիտի աւարտէր ամուսնութեամբ: Անոնք արդէն լրջօրէն քննարկած էին այդ հարցը:

Կիրակի մը երեկոյեան աւագ հովիւը անոնց դուրս կանչեց եւ ըսաւ. «Այսպէս կ'ընէ՞՞ Տէրը՝ դուք երկուքով կ'ամուսնանաք»:

Յաջորդ առաւօտեան աղջիկը գրասենեակ մտաւ մռայլած: Ան շատ յուզուած էր եւ հարցուց ինծի, թէ կը ցանկա՞մ արդեօք անցընել իրենց պսակադրութեան արարողութիւնը: Ես ըսի, որ ատիկա ինծի համար պատիւ կ'ըլլայ: Խորհրդատուութեան համար հանդիպում նշանակեցի:

Բայց ես մտահոգուած էի: Երբ անոնք ներս մտան իմ գրասենեակս, հոգիս անհանգստութեան մէջ էր: Ես նայեցայ իմ գործավարուհիին եւ հարցուցի, թէ համոզուա՞ծ է, որ այս երիտասարդն է այն մէկը, որուն Աստուած ընտրած էր իրեն համար: Ան խանդավառութեամբ արծազանգեց՝ ըսելով՝ այո՛:

Յետոյ ես նայեցայ երիտասարդին ու հարցուցի. «Դուն կը հաւատա՞ս, որ այս աղջկայ հետ ամուսնանալը ճիշդ Աստուծոյ կամքն է քեզի համար»:

Տղան պահ մը կիսաբաց բերանով նայեցաւ ինծի, յետոյ կախեց իր գլուխը եւ դողալով ուրիշ ձեւով ըսաւ. «Ո՛չ, ես վստահ չեմ»:

Ես նայեցայ այդ երկութիւն եւ այնուհետեւ խօսեցայ երիտասարդին հետ. «Ես չեմ ամուսնացներ ձեզ: Ինծի չի հետաքրքրեր, թէ ով մարգարէացած է ձեր վրայ, կամ ինչ ըսած են: Ինծի չի մտահոգեր, թէ քանի հոգի ըսած են, որ շատ յարմար զոյգ էք: Եթէ Աստուած ձեր սրտին մէջ չէ յայտնած Իր կամքը, դուք գործ չունիք այդ ամուսնութեան հետ»:

Ես շարունակեցի՝ խօսքս ուղղելով տղուն. «Եթէ դուն կ'ա-

մուսնանաս առանց այդ մասին Աստուծո՛մէ յայտնութիւն ունենալու, ապա, երբ փոթորիկները գան, իսկ ատոնք անպայման պիտի գան, քու մէջ այսպիսի հարցումներ պիտի ծագին. «Ի՞նչ պիտի ըլլար, եթէ ես ամուսնանայի ուրիշ աղջկայ մը հետ», «Կ'ունենայի՞ այս խնդիրները», «Ես պէտք է վստահ ըլլամ, թէ իրապէ՞ս անոր հետ ամուսնանալը Աստուծոյ կամքն էր», «Ես թակարդի մէջ էի...» Յետոյ քու սիրտը երթալով պիտի ծանծրանայ, եւ դուն ի վիճակի չես ըլլար պայքարելու այն ձախորդութեան դէմ, որ կը հարուածէ քու ամուսնութեան: Դուն կ'ըլլաս քու բոլոր ճանապարհներու մէջ անհաստատ տատանող մարդ»:

Ես անոնց ազատ արծակեցի եւ ըսի, որ անիմաստ է ինծի նորէն հանդիպիլը: Երիտասարդը թեթեցաւ: Աղջիկը շատ զարմացած էր: Յաջորդ շաբաթ շատ տհաճ մթնոլորտ էր մեր գրասենեակին մէջ, բայց ես գիտէի, որ ճշմարտութիւնը խօսած եմ: Այդ աղջկան համար ասիկա փորձուելու ժամանակ էր: Եթէ իսկապէս Աստուած խօսած էր անոր, որ այդ մարդն էր իր երկրորդ կէսը, ան պիտի վստահէր Տիրոջը, որ Ան Իր կամքը պիտի յայտնէ նաեւ այդ երիտասարդին, ու ան ազատ պիտի ըլլար նաեւ ինծո՛մէ եւ Աստուծո՛մէ վիրաւորուած ըլլալէն: Ես այդ աղջկան ըսի, որ հեռու մնայ տղայէն ու թոյլ տայ, որ ան առանձնանայ իր սենեակին մէջ եւ լսէ Աստուծոյ կամքը: Աղջիկը այդպէս ալ ըրաւ:

Անցաւ երեք տարի: Օր մը անոնք եկան եւ խնդրեցին ուրիշ հանդիպումի համար: Ես անմիջապէս ուրախութեան զգացում ունեցայ: Այս անգամ, երբ անոնք մտան գրասենեակ, տղան նայեցաւ ինծի փայլող աչքերով եւ ըսաւ. «Առանց կասկածի գիտեմ, որ ան այն աղջիկն է, որուն հետ Աստուած կը ցանկայ, որ ես ամուսնանամ»: Եօթը ամիս յետոյ անոնք ամուսնացան:

Երբ դուն գիտես, որ Աստուած քեզ դրած է որեւէ փոխարաբերութեան կամ եկեղեցւոյ մէջ, ապա թշնամիին շատ դժուար պիտի ըլլայ քեզ հոնկէ դուրս հանելու համար: Եթէ դուն կը հիմնուիս Աստուծոյ յայտնութեամբ եկած Խօսքին վրայ, ապա պիտի գործես նաեւ բախումներու մէջ, եթէ նոյնիսկ ասիկա անկարելի թուայ:

## ԱՅԼԸՆՏՐՈՒՄԸ ՉԿԱՅ

Մեր ամուսնութեան առաջին հինգ տարիները իմ կնոջ եւ ինծի համար շատ դաժան էին: Մենք մէկս միւսին այնքան լրջօրէն կը վիրաւորէինք, որ կը թուար, թէ անկարելի էր փրկել սիրոյ այն փոխարաբերութիւնը, որ մենք նախկինին ունէինք:

Միայն մէկ բան մեզ իրար հետ կը պահէր. մենք երկուքով ալ գիտէինք, որ Աստուած հաստատած էր մեր ամուսնութիւնը: Հետեւապէս ամուսնալուծութիւնը մեր ընտրութիւնը չէր: Մեր միակ ընտրութիւնը հաւատալն էր, որ Ան պիտի բժշկէ եւ պիտի փոխէ մեզ: Մենք երկուքով ալ ներգրաւուած էինք այս գործընթացին մէջ, եւ մեզի համար նշանակութիւն չունէր, թէ որքան ցաւալի պիտի ըլլար այն:

Երբ ես նահանջելու մտքեր կ'ունենայի, կը յիշէի այն խոստումները, որ Աստուած տուած էր մեր ամուսնութեան վերաբերեալ: Ես չէի պատրաստուեր «վիժեցնել» այն, ինչ որ Աստուած ծրագրած է «հրամանագրած էր» մեր երկուքի միութեան համար:

Խոստումներէն մէկը, որ Աստուած տուած էր մեզի, այն էր, որ իմ կինն ու ես պէտք է միասին ծառայէինք: Այն ժամանակ, երբ Աստուած տուաւ ասիկա, ես կը մտածէի. *«Ատիկա պարզ կ'երեւայ: Անոր ձեռքը մեր երկուքի վրայ է ծառայութեան համար»:*

Մեր ամուսնական փոթորիներուն մէջ ես այլեւս պարզօրէն չէի տեսներ այդ խոստումը, բայց թոյլ չէի տար, որ այն հեռանայ իմ աչքերուն առջեւէն: Մեր ամուսնութեան մէջ մուտք գործած պայքարի եւ հպարտութեան պատճառով իրական յոյսը հեռացած էր: Բայց իմ սրտին մէջ տակաւին կեանքի գերբնական սերմ մը կար: Այդ խոստումը խարիսխ մը կամ հիմք էր, որու կարիքը ես ունէի այդ ժամանակ:

Ամէն բան փոխուեցաւ, եւ Աստուած ոչ միայն բժշկեց մեր փոխարաբերութիւնը, այլ այն աւելի ամուր դարձուց, քան նախկինին էր: Բախումներէն մենք աճեցանք՝ ներելով մէկս միւսին, եւ ատոնցմէ դասեր առինք: Հիմա մենք կը ծառայենք միասին: Ես իմ կինը կը համարեմ ո՛չ միայն իմ ամենասիրելիին եւ լաւագոյն ընկերը, այլեւ ծառայողը, որու վրայ ես շատ պատասխանատուութիւն

կը դնեն: Ես անոր ասելի կը վստահիմ, քան որեւէ այլ անձի:

Առաջին հինգ տարիներու այդ դժուարութիւններու միջոցով անցնելէն յետոյ ես հասկցայ, որ Աստուած տեսած էր մեր երկուքի կեանքին եւ փոխարաբերութեան մէջ եղող թերութիւնները ուստոնք բերած էր լոյսի մէջ:

Մեր ամուսնութեան համար ես ակնածանքով իմաստութիւն կը փնտռէի: Մինչեւ Լիզային հանդիպիլը ես ջերմեռանդ կ'աղօթէի այն կնոջ համար, որու հետ օր մը պիտի ամուսնանայի: Աւետարանին հնազանդելէն յետոյ այդ ընտրութիւնը իմ կեանքի երկրորդ ամենակարեւոր որոշումն էր: Քանի որ ես աղօթած էի ու իմ կողակիցին համար ստացած էի Աստուծոյ ընտրութիւնը, ատոր համար ալ կը մտածէի, որ ես ուրիշներուն պէս խնդիրներ պիտի չունենամ իմ ամուսնութեան մէջ: Օ՛, որքա՛ն սխալ էի ես:

Աստուած ինձի համար ընտրեց կին մը, որ իմ սրտի ցանկութիւնն էր, բայց կինս նոյնպէս բացայայտեց այն եսասիրութիւնը, որ պահուրտած էր իմ մէջ: Եւ այն շա՛տ էր: Եթէ ես ընտրէի ամուսնալուծութիւնը կամ մեղադրէի կինս՝ բախումէն փախչելու համար, ատորմով ես ընդամէնը իմ տհասութիւնը կը թաղէի պաշտպանութեան ուրիշ կեղծ շերտի մը տակ, որ կը կոչուի վիրաւորութեան: Ամուսնութեան համար Աստուծոյ խօսքը գիտնալը ետ պահեց զիս նահանջելէն: Հոս պէտք է հասնիմ այս գլուխի գլխաւոր հատուածին: Ձեզմէ ոմանք, որոնք կը կարդան ասիկա, հնարաւոր է մտածեն, *որ իրենք փրկուած չէին, երբ ամուսնացան:*

Մեզի համար ալ Աստուած կ'ըսէ. «Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ, ոչ թէ ես, այլ Տէրը, որ կինը չբաժնուի իր մարդէն: Ապա եթէ բաժնուի ալ, թող առանց ամուսնանալու մնայ կամ իր մարդուն հետ հաշտուի, եւ որ մարդն ալ կինը չծօգէ... Ամէն մէկը ինչ կոչումի մէջ, որ կանչուեցաւ, եղբայրնե՛ր, թող անոր մէջ մնայ Աստուծոյ առջեւ» (Ա. Կորնթ. 7.10,11,24):

Թող ամուսնութեան ուխտի այս խօսքը արմատաւորուի քու սրտին մէջ, որպէսզի դուն քու հաստատութեան պատճառով չսասանիս վիրաւորանքի թակարդէն: Քու ամուսնութեան վերաբերեալ փնտռէ՛ Տէրը Իր յայտնութեամբ եկող խօսքին մէջ:

Ձեզմէ ոմանք, նոյնիսկ որպէս հաւատացեալներ, հնարաւոր է, չեն ամուսնացած Աստուծոյ կամքով: Որպէսզի մտնես ամուսնութեան համար նախատեսուած Աստուծոյ օրհնութեան մէջ, պէտք է ապաշխարես այն բանի համար, որ մինչեւ ամուսնութիւնդ չես փնտռած Անոր խորհուրդը, ու Ան պիտի ներէ քեզի: Հաստատէ՛ ասիկա քու սրտին մէջ, որ երկու սխալէ մէկ ճիշդ չի յառաջանար: Վիրաւորութեան պատճառով ամուսնութեան ուխտը դրժելը հարցի լուծում չէ: Ամուսնական յարաբերութիւններու մէջ ծագած խնդիրները լուծելու համար փնտռէ՛ Տէրը Իր Խօսքի մէջ:

### ԱՄՈՒՐ ԺԱՅՌ

Աստուծոյ յայտնութեամբ եկած Խօսքը ամուր ժայռ է, որու վրայ մենք կը կառուցենք մեր կեանքն ու ծառայութիւնը: Բազմաթիւ մարդիկ պատմած են ինծի շատ եկեղեցիներու կամ ծառայողական խումբերու մասին, որոնց անդամները եղած են ընդամէնը կարճ ժամանակով: Իմ սիրտը կը վշտանայ, երբ կը լսեմ, թէ ինչպէս անոնք դուրս ելած են փորձութիւններու պատճառով եւ ոչ թէ Աստուծոյ ցուցմունքով: Անոնք կը յայտարարեն, թէ որքան սխալ բաներ կան, կամ թէ որքան վատ վերաբերած են իրենց եւ ուրիշներու հետ: Անոնք զիրենք արդար կը զգան իրենց որոշումներուն մէջ: Բայց այդ ամէնուն հիմքին ինկած է մոլորութեան ուրիշ շերտ մը, որ կը պահէ զանոնք, որպէսզի անոնք չփնտռեն եւ չտեսնեն վիրաւորանք ու իրենց բնավորութեան թերութիւնները:

Անոնք կ'ըսեն, որ ծառայողներուն եւ եկեղեցիներուն հետ իրենց ներկայ յարաբերութիւնը այժմ «ժամանակաւոր է», կամ ալ «ասիկա այնտեղն է, որ Աստուած ինծի համար հիմա ունի»: Ես նոյնիսկ լսեցի, թէ ինչպէս մարդ մը կ'ըսէ. «Ես փոխարինող եմ այս եկեղեցւոյ մէջ»: Անոնք այս յայտարարութիւնները կ'ընեն այն բանին համար, որ երբ դժուարութիւն ըլլայ, փախուստի ճանապարհ ունենան: Իրենց ընտրած նոր վայրերու մէջ կանգնելու համար անոնք հիմք չունին: Փոթորիկները դիրութեամբ կրնան հարուածելով զանոնք տանիլ դէպի միւս նաւահանգիստը:

## ՄԵՆՔ Ո՞ՒՐ ԿՐՆԱՆՔ ԵՐԹԱԼ

Վերադառնալով այն օրինակին, ուր Յիսուսը կը հարցնէ Իր աշակերտներուն, թէ մարդիկ ինչ կ'ըսեն Իր մասին՝ մենք կը տեսնենք այն կայունութիւնը, որ առաջ կու գայ, երբ դուն գիտես Աստուծոյ բացայայտած կամքը: Նայի՛ր Սիմոն-Պետրոսին:

Այն բանէն յետոյ, երբ Պետրոսը ըսաւ, թէ Հայրը ինչ յայտնած էր իր սրտին, Յիսուսը ըսաւ. «Ես ալ կ'ըսեմ քեզի, որ դուն ես Պետրոս, եւ այդ վէմին վրայ պիտի շինեմ Իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները չեն յաղթեր անոր» (Մատթ. 16.18):

Յիսուսը Սիմոնին անունը փոխեց Պետրոսի: Ասիկա կարելոր է, քանի որ «Սիմոն» անունը կը նշանակէ «լսել»: «Պետրոս» անունը յունարէնին մէջ «petros» (պետրոս) բառն է, որ կը նշանակէ «քար»: Որպէս հետեւանք՝ իր սրտին մէջ Աստուծոյ բացայայտուած խօսքը լսելուն պէս Սիմոնը դարձաւ «քար» մը: Տունը, որ կը կառուցուի քարէն՝ ժայռի պինդ հիմքի վրայ, կը դիմակայէ փոթորիկներու ժամանակ:

Այս համարի մէջ «ժայռ» (վէմ) բառը կը ծագի յունարէն «petra» (Փեթրա) բառէն, որ կը նշանակէ «մեծ ժայռ»: Յիսուսը կ'ըսէր Սիմոն-Պետրոսին, որ ան ամուր հիմք էր, որու վրայ ալ պէտք է տունը հիմնուէր:

Աւելի ուշ ան Պետրոսի առաջին թուղթի 2.5-ին մէջ կը գրէ. «Դուք ալ կենդանի քարերու պէս շինուիք հոգեւոր տաճար»: Քարը մեծ ժայռի մէկ մասն է: Ամրութիւնը, կայունութիւնը եւ զօրութիւնը Աստուծոյ յայտնութեամբ եկած խօսքի ժայռի մէջ են, եւ այն մարդը, որ կ'ընդունի ատիկա, իր կեանքին մէջ պտուղ կ'ունենայ: Այդ մարդը կը զօրանայ Յիսուս Քրիստոսի զօրութեամբ, Որ Աստուծոյ կենդանի խօսքն է:

Ինչպէս Պողոս առաքեալը կը գրէ Կորնթացիս առաջին թուղթի 3.11-ի մէջ. «Որովհետեւ ոչ ոք ուրիշ հիմք կրնայ դնել, քան թէ որ դրուած է, որ Յիսուս Քրիստոսն է»: Եթէ մենք կը փնտռենք Ձինք, որ Աստուծոյ կենդանի խօսքն է, Ան պիտի յայտնուի մեզի, եւ մենք ալ պիտի հաստատուինք:

Յովհաննէս Աւետարանի 5.16-ին մէջ մենք կը տեսնենք, որ Յի-

սուսի երկրային կեանքի վերջին օրերուն կեանքը աւելի դժուար դարձաւ Իր ծառայողական խումբի համար: Կրօնական առաջնորդներն ու հրեաները կը հալածէին Յիսուսը՝ ցանկալով սպաննել Զինք: Երբ մարդիկ տեսան Յիսուսին գործած հրաշքները, կ'ուզէին Զինք ստիպողաբար տանիլ ու թագաւոր դարձնել, սակայն Յիսուսը դարձեալ «միայնակ գնաց լեռք» (տե՛ս Յովհ. 6.15):

Աշակերտներու համար Անոր քայլը անհասկնալի թուաց. «Ինչո՞ւ Ան այդպէս ըրաւ: Ասիկա Յիսուսի, ինչպէս նաեւ մեր հնարաւորութիւնն էր»: Անոնք կը մտահոգուէին. փոթորիկները կը զօրանային:

«Մենք ձգած ենք մեր տունը, մեր աշխատանքը՝ այս մարդուն հետեւելու համար: Մենք շատ բաներու յոյս ունէինք: Մենք կը հաւատանք, որ Ան է այն Մէկը, որ պիտի գայ: Այս ամէնէն գատ Յովհաննէս Մկրտիչն ալ հռչակեց ասիկա, եւ մենք լսեցինք, թէ ինչ ըսաւ Սիմոն-Պետրոսը Կեսարիոյ մէջ: Անոնք երկու վկաներ են: Բայց ինչո՞ւ Ան կը շարունակէ զայրացնել առաջնորդները: Ինչո՞ւ Ան կը փորէ Իր սեփական գերեզմանը: Ինչո՞ւ Ան այդպիսի խիստ յայտարարութիւն ըրաւ մեզի համար, թէ «ո՛վ անհաւատ եւ խտորեալ սերունդ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ», մեզի՝ Իր սեփական աշակերտներուն»:

Վիրաւորութիւնը կը սկսէր բարձրանալ այս մարդոց մէջ. անոնք ամէն ինչ ձգած էին Յիսուսին հետեւելու համար:

Յետոյ տեղի ունեցաւ գլխաւորը: Յիսուսը ինչ որ բան քարոզեց, որ անոնց սարսռեցնող թուաց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մարդու Որդիի մարմինը չուտէք եւ Անոր արիւնը չխմէք, կեանք չունիք ձեր անձերու մէջ» (Յովհ. 6.54):

«Հիմա ի՞նչ կը քարոզէ ան, միմեանց կը հարցնէին անոնք, ասիկա արդէն չափազանց շատ եղաւ»: Յիսուսը այս բաները ըսաւ նաեւ Կափառնայումի ժողովարանին մէջ՝ առաջնորդներու առջեւ: Աշակերտներու համար ասիկա «ուղտի մէջքը կոտորող ծղօտն էր»:

«Եւ Անոր աշակերտներէն շատերը, որ լսեցին, ըսին.  
«Խիստ է այդ բանը, ո՞վ կրնայ լսել ասիկա»»:

– Յովհ. 6.61

Ուշադրութիւն դարձո՛ւր Յիսուսի արձագանգին.



«Բայց երբ որ Յիսուսը իմացաւ Իր անձին մէջ, թէ Իր աշակերտները կը տրտնջային ատոր համար, անոնց ըսաւ. «Ատիկա կը գայթակղեցնէ՞ ձեզ»» (անգլերէնին մէջ՝ ատիկա կը վիրաւորէ՞ ձեզ):

– Յովի. 6.62

Ասոնք ալ Յիսուսի աշակերտներն էին: Յիսուսը մէկ կողմ չի դնէր ճշմարտութիւնը, այլ, ընդհակառակը, կը դիմակայէ այս մարդոց: Ան գիտէր, որ ոմանք կ'ապրին սխալ հիմքի վրայ: Յիսուսը բացայայտեց այդ հիմքը եւ անոնց հնարաւորութիւն տուաւ տեսնելու իրենց սրտերը: Բայց անոնք նման չէին Սիմոն-Պետրոսին կամ ալ միւս աշակերտներուն, որոնք քաղցած էին ճշմարտութեան: Նայի՛ր անոնց արծազանգին:

«Ասոնցմէ յետոյ Անոր աշակերտներէն շատերը ետ գացին եւ այլեւս չէին պտըտեր Անոր հետ»:

– Յովի. 6.67

Ուշադրութիւն դարձո՛ւր, որ քանի մը հոգիներ չէին, այլ «շատերը»: Անոնցմէ ոմանք անկասկած այն նոյն մարդիկն էին, որոնք աւելի վաղ՝ Փիլիպպէի Կեսարիոյ մէջ ըսած էին. «Ոմանք՝ թէ Յովհաննէս Մկրտիչն է, իսկ միւսները՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը» (Մատթ. 16.14): Անոնք հիմնուած չէին Աստուծոյ բացայայտուած Խօսքի վրայ:

Վիրաւորանքը հասցուց այն կէտին, ուր Յիսուսին հետեւողներէն շատերը ըրին այն, ինչ որ այսօր կ'ընեն շատ քրիստոնէաներ. անոնք հեռացան: Անոնք կը մտածէին, որ զիրենք խաբած են ու վատ ձեռով վարուած են իրենց հետ, բայց ատիկա այդպէս չէր: Այդ աշակերտները ճշմարտութիւնը չէին տեսներ, քանի որ անոնց աչքերը կեդրոնացած էր իրենց իսկ եսասիրական ցանկութիւններու վրայ:

Այժմ նայի՛ր, թէ ինչ տեղի ունեցաւ Սիմոն-Պետրոսի հետ, երբ Յիսուսը յանդիմանեց աշակերտները.

«Յիսուսն ալ ըսաւ այն տասներկուքին. «Մի՞թէ դուք ալ կ'ուզէք երթալ»: Սիմոն-Պետրոսն ալ պատասխանեց Անոր. «Տէ՛ր, որո՞ւն քով երթանք, յաւիտենական կեանքի խօսքեր ունիս Դուն: Եւ մենք հաւատացինք եւ ճանչցանք, թէ Դուն ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին»»:

– Յովհ. 6.68-70

Յիսուսը չխնդրեց այդ մարդոցմէ՝ ըսելով. «Կը խնդրեմ, մի՛ հեռանաք: Ես հազիւ նոր կորսնցուցի Իմ աշակերտներէն շատերը: Ես ի՞նչ պիտի ընեմ առանց ձեզի»: Ո՛չ, Ան յանդիմանեց զանոնք. «Դո՞ւք ալ կ'ուզէք հեռանալ»:

Ուշադի՛ր եղիր, թէ ինչ պատասխանեց Սիմոն-Պետրոսը, չնայած որ ան եւս ներքուստ կը պայքարէր գայթակղած ըլլալու այդ նոյն հնարաւորութեան հետ: Ան ըսաւ. «Տէ՛ր, որո՞ւն քով երթամ»:

Այն, ինչ որ ան լսեց, պէտք է, որ շփոթեցնէր Պետրոսը, բայց անոր մէջ յայտնութիւն մը կար, որ ուրիշները չունէին: Փիլիպպէի Կեսարիոյ մէջ Պետրոսը ունեցաւ յայտնութիւն մը, թէ իրականութեան մէջ ով էր Յիսուսը (Մատթ. 16.16):

Եւ փորձութեան այս հնոցին մէջ Պետրոսը խօսեցաւ այն, ինչ որ արմատացած էր իր սրտին մէջ. «Մենք հաւատացինք եւ ճանչցանք, թէ Դուն ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին»: Ասոնք ճշգրիտ խօսքերն էին, որ պոռթկացին անոր ներսէն Փիլիպպէի Կեսարիոյ մէջ: Պետրոսը քար մըն էր, որ դրուած էր Աստուծոյ կենդանի խօսքի հաստատուած ժայռի վրայ: Ան չէր հեռանար վիրաւորուած:

## ԱՐՁԱԳԱՆԳ ՃՆՇՈՒՄԻ ՏԱԿ

Ես յաճախ կ'ըսեմ, որ ստուգումները կ'որոշեն անձի տեղը: Այլ խօսքերով ըսելու համար՝ ատոնք կ'որոշեն, թէ հոգեւոր առումով ուր կ'ընթանաս: Ատոնք կը բացայայտեն քու սրտի իրական վիճակը: Ճնշումի տակ քու արծագանգը ցոյց պիտի տայ, թէ որքան իրական է քեզի համար արծագանգելը:

Դուն կրնաս ունենալ տուն մը, որ կառուցուած է աւազի վրայ,

բայց հինգ յարկ ունի, գեղեցիկ է, զարդարուած է մանրակրկիտ մշակուած նիւթերով եւ մեծ վարպետութեամբ: Քանի տակաւին արեգակը կը փայլի, քու տունը նման է ուժի եւ գեղեցկութեան ամրոցի:

Ատոր կողքին դուն կրնաս տեսնել սովորական մէկ յարկանի պարզ տուն մը: Այն գրեթէ աննկատելի է ու անհրապօրիչ՝ համեմատած իր կողքի գեղեցիկ կառոյցի հետ: Բայց այն կառուցուած է այնպիսի ժայռի մը վրայ, որ չես կրնար տեսնել:



Քանի տակաւին փոթորիկ չկայ, հինգ յարկանի տունը շատ գեղեցիկ տեսք ունի: Բայց երբ անսպասելի փոթորիկ ըլլայ, այն կը փլի եւ աւերակի կը վերածուի: Այդ տունը կրնայ պահպանուիլ մեղմ քամիներէն, բայց ոչ՝ մրրիկէն: Իսկ սովորական մէկ յարկանի կառոյցը կը պահպանուի: Որքան ընդարձակ է տունը, այնքան աւելի ծանր եւ ակներեւ է ատոր անկումը:

Եկեղեցիին մէջ որոշ մարդիկ նման են Փիլիպպէի Կեսարիոյ մէջ այն աշակերտներուն, որոնք շատ արագ էին խօսելու մէջ, բայց յետոյ բացայայտուեցան: Անոնք կրնան նման ըլլալ «հինգ յարկանի» քրիստոնեաներուն՝ զօրաւոր, կայուն եւ գեղեցիկ տեսքով: Անոնք կրնան դիմանալ միայն փոքր եւ միջին քամիներու, բայց երբ զօրաւոր փոթորիկ ըլլայ, կը սասանին իրենց տեղէն:

Վստա՛հ եղիր, որ դուն պէտք է կառուցես քու կեանքը Աստուծոյ բացայայտուած խօսքի վրայ եւ ոչ թէ այն բանի, ինչ որ ուրիշները կ'ըսեն: Շարունակէ՛ փնտռել Տէրը եւ լսէ՛ քու սրտին: Մի՛ ընդեր կամ ըսեր այնպիսի բաներ, որոնք բոլորն ալ կ'ընեն: Փնտռէ՛ Զինք եւ կեցուր քու սիրտը լուսաւորող խօսքին վրայ:



**MESSENGER**  
INTERNATIONAL  
MessengerInternational.org



ՀԱՄԱՂԻ

# ՅԻՍՈՒՄԻ

ԱԲՏԱՐԱՆԸ՝ ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ, ՄԵՐ ՓԱՓԱՔԸ, ՄԵՐ ՇԱՐԺԱՌԻԹԸ



# ԴԱՂՑԱԴԻՍՏՈՒ

ԻՐԱՉԵԿԵԼ, ԿԱՌՈՒՑԵԼ, ԿՐԹԵԼ,  
ԱԲԱՆԴԵԼ ԵՒ ՑՈՒՑԱԴՐԵԼ








ՄԵՐ ԴԱՐՏՔՆ Է ՓՈՒՍԱՆՅԵԼ  
ԿԵԱՆԵՐ ՓՈՒՍՈՂ

**ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ**





# ՆԻԹԵՐ

ՈՐՈՋԷ ՈՎՁՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐԴՊԿ ԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒԻՆ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ  
ԳՏՆՈՒՈՂ ՀՈՎԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ















מחנכים ומומחים מרחבי הארץ יתאחדו לראשונה בתולדות ישראל לסימפוזיון "האדם המודרני" ב-19 במרץ 2012





# האדם המודרני



# Մեր յանձնարարականը

«ԳԱՅԷՔ, ԲՈՒՈՐ ԱԶԳԵՐԸ ԱՇԱԿԵՐՏԵՑԷ...  
ԱՆՈՆՑ ՍՈՐԿԵՏՆԵԼՈՎ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ,  
ՈՐ ՁԵԶԻ ՊԱՏՈՒԻՐԵՑԻ, ՊԱՐՅԵՆ»:  
ՄԱՏԹԵՈՍ 28:19-20



ԻՄԱՅԷՔ ԱԲԵԼԻՆ  
WWW.CLOUDLIBRARY.ORG



ԵՐԲ ԹՇՆԱՄԻՆ ՏԵՂԷՆ ԿԸ  
ՇԱՐԺԻ, ԱՏԻԿԱ ԿՈՐԾԱՆԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ Է, ԲԱՅՑ ՆՄԱՆ  
ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՄ ԱՍՏՈՒԱԾ ԱՅԼ  
ՆՊԱՏԱԿ ՈՒՆԻ

«Շնորհակալ եմ Աստուծոյ «Սատանայի խայծը» ուղերձին համար: Իմ կեանքին մէջ ճեղքում ըլլալու համար ես ծոմ պահած եւ աղօթած եմ: Տէրը Ինքը առաջնորդեց զիս դէպի այս ուղերձը, եւ այն արմատապէս փոխեց իմ կեանքը: Ասիկա պարտադիր պէտք է ընթերցեն բոլոր անոնք, որոնք աւագներ են»:

– Բ. Փ., ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ

## ԱՅՆ ԱՄԷՆԸ, ԻՆՉ ԿՐՆԱՅ ՇԱՐԺԻԼ, ԿԸ ՇԱՐԺԻ

---

*«...Եւ հիմա խոստացած է եւ կ'ըսէ, թէ միւս անգամ եւս պիտի շարժեմ, ոչ միայն երկիրը, բայց երկինքն ալ: Բայց այն միւս անգամը ցոյց կու տայ, որ շարժուած բաները, իբրեւ եղածներ, պիտի փոխուին, որ անշարժ բաները հաստատ մնան»:*

– Եբր. 12.26,27

Նախորդ գլուխին մէջ մենք տեսանք, որ Աստուծոյ յայտնութեամբ եկած Խօսքն է այն հիմքը, որուն վրայ Յիսուսը կը կառուցէ Իր եկեղեցին: Մենք նկատեցինք, որ Սիմոն-Պետրոսը կանգուն մնաց նոյնիսկ այն պարագային, երբ միւս աշակերտները գայթակղած հեռացան: Նոյնիսկ այն ժամանակ, երբ Յիսուսը անոր հնարաւորութիւն տուաւ հեռանալու, Սիմոն-Պետրոսը խօսեցաւ այն, ինչ որ հաստատուած էր իր սրտին մէջ:

Այժմ եկո՛ւր անդրադառնանք Սիմոն-Պետրոսի կեանքին մէջ տեղի ունեցած մէկ այլ փորձութեան: Ատիկա այն գիշերն էր, երբ Յիսուսը մատնուեցաւ:

Երբ Յիսուսը Իր տասներկու առաքելներուն հետ գոհութիւն կը յայտնէր եւ հաղորդութիւն կը մատուցէր, ապշեցուցիչ յայտարարութիւն մը ըրաւ. «Սակայն ահա Իմ մատնողի ձեռքը Ինձի հետ սեղանի վրայ է: Եւ մարդու Որդին կ'երթայ, ինչպէս սահմանուած է, բայց վա՛յ այն մարդուն, որու ձեռքով կը մատնուի» (Ղուկ. 22.21,22): Ինչպիսի՛ յայտարարութիւն: Այսօրուան բառերով մենք կրնանք ըսել, որ Յիսուսը այս խօսքերով «ռումբ նետեց»:

Զնայած որ Յիսուսը սկիզբէն ալ գիտէր, որ Ջինք պիտի մատնեն, բայց եւ այնպէս Անոր աշակերտները առաջինն էին, որ լսեցին ատոր մասին: Կրնա՞ս պատկերացնել այն սարսափելի զգացումը, որ տիրեց սենեակին մէջ, երբ Յիսուսը ըսաւ, որ անոնցմէ մէկը, որ սկիզբէն ալ Իրեն հետ էր եւ մտերիմ ընկեր էր, կը պատրաստուէր մատնել Ջինք:

Ահա արծազանգը. «Եւ անոնք սկսան հարցուփորձ ընել իրենց մէջ, թէ իրենցմէ ով է արդեօք ան, որ այն բանը պիտի գործէ» (Ղուկ. 22.23): Անոնք ցնցուեցան՝ լսելով, որ իրենցմէ մէկը ընդունակ է ընելու այդ սարսափելի բանը: Աշակերտներու հարցուփորձի ժամանակ անոնց շարժառիթը մաքուր չէր: Մենք ասիկա կը գիտնանք անոնց զրոյցի աւարտէն: Անոնց հարցուփորձի հիմքը եսասիրական էր եւ լեցուած էր հպարտութեամբ: Ուշադի՛ր եղիր Սուրբ գիրքի յաջորդ խօսքին.

«Անոնց մէջ վէճ մըն ալ եղաւ, թէ իրենցմէ ով մեծ պիտի համարուի»:

– Ղուկ. 22.24

Փորձէ՛ պատկերացնել այդ պահը: Յիսուսը ըսաւ անոնց, որ շուտով Ինքը պիտի մատնուի քահանայապետներուն, որ Իրեն մահուան պիտի դատապարտեն եւ պիտի յանձնեն հռովմայեցիներուն, որպէսզի ծաղրի ենթարկեն, չարչարեն եւ սպաննեն: Այն մէկը, որ պիտի ընէր այս բանը, Անոր հետ նստած էր սեղանին քով:

Աշակերտները հարցուփորձ կ'ընէին, թէ ով էր այդ անձը, եւ

ատիկա աւարտեցաւ բանավէճով մը, որուն ժամանակ կը քննարկէին, թէ իրենցմէ ով պէտք է ըլլար ամենամեծը: Ասիկա անարգալից վերաբերմունք էր, նման այն բանին, երբ երեխաները կը վիճին ժառանգութեան համար: Անոնց Յիսուսը չէր հետաքրքրեր, այլ իշխանութիւնը եւ դիրքը: Ինչպիսի՛ աներեւակայելի եսասիրութիւն:

Նման իրավիճակի մէջ ես կը հարցնէի, թէ անոնք լսեցի՞ն իմ ըսածը կամ մի՞թէ մտահոգուած չեն: Այս իրավիճակէն մենք Տիրոջմէն սիրոյ եւ համբերութեան մէջ ընթանալու հիանալի օրինակ մը կը վերցնենք: Մեզմէ շատերը, եթէ ըլլային Յիսուսի փոխարէն, պիտի ըսէին. «Ամէնքդ դո՛ւրս կորսուեցէք: Ես Իմ ամենամեծ կարիքի մէջ եմ, իսկ դուք կը մտածէք ձեր մասին»: Յիսուսի համար վիրաւորուելու ինչպիսի՛ հնարաւորութիւն էր ասիկա:

Մենք կրնանք կռահել, թէ աշակերտներու մէջ ով նախածեռնեց վէճը: Ատիկա Սիմոն-Պետրոսն էր, քանի որ ան խումբի ամենախշտող անհատն էր եւ սովորաբար այն մէկն էր, որ առաջինը կը խօսէր:

Հաւանաբար Պետրոսը շտապեց յիշեցնել միւսներուն, թէ ինչպէս յատկապէս ինքը քալեց ջուրի վրայէն, կամ, հաւանաբար, թարմացուց անոնց յիշողութիւնը, թէ ինչպէս ունեցաւ առաջին յայտնութիւնը այն մասին, թէ իրականութեան մէջ Ով է Յիսուսը: Յետոյ թերեւս Պետրոսը նորէն անոնց հետ բաժնեկցեցաւ այն փորձառութենէն, որ ունեցաւ այլակերպութեան լերան վրայ՝ Յիսուսի, Մովսէսի եւ Եղիայի հետ: Պետրոսը միանգամայն վստահ էր, որ տասներկուքի մէջ ինքն է ամենամեծը: Բայց այս վստահութիւնը արմատաւորուած չէր սիրոյ մէջ: Ընդհակառակը, այն խաբիս նետած էր հպարտութեան մէջ:

Յիսուսը նայեցաւ բոլորին ու ըսաւ, որ անոնք կը վարուին ոչ հասուն մարդոց նման եւ ոչ արքայութեան որդիներու պէս: «Ազգերու թագաւորները կը տիրապետեն անոնց վրայ, եւ անոնց վրայ իշխանութիւն ընողները «բարերար» կը կոչուին: Բայց դուք ոչ այնպէս (անզլերէնին մէջ՝ այդպէս պէտք չէ ըլլայ ձեր մէջ), այլ ձեր մէջի մեծը թող փոքրագոյնին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ ծառայողին պէս: Որովհետեւ ո՞վ է մեծ՝ սեղան նստողը, թէ՞ ծառայողը, չէ՞ որ սեղան նստողը, բայց Ես ձեր մէջ ծառայողի պէս եմ» (Ղուկ. 22.25-27):

### ՍԱՂՈՒԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Զնայած որ Սիմոն-Պետրոսը յայտնութիւն ստացած էր այն մասին, թէ Ով էր Յիսուսը, ան տակաւին չէր քալեր Քրիստոսի խոնարհութեան ու բնաւորութեան մէջ: Պետրոսը իր կեանքն ու ծառայութիւնը կը կառուցէր անցեալի յաղթանակներու ու հպարտութեան վրայ: Պօղոսը Կորնթացիս առաջին թուղթի 3.10-ին մէջ մեզ կը խրատէ, որ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս Քրիստոսի մէջ կը կառուցենք մեր հիմքը:

Սիմոն-Պետրոսը չէր կառուցուեր Աստուծոյ Արքայութեան մէջ անհրաժեշտ «նիւթերով», այլ այնպիսի յատկանիշներով, ինչպիսիք են կամքի ուժը եւ ինքնավստահութիւնը: Սակայն ան չէր գիտեր, որ դեռ իր բնաւորութիւնը պէտք է փոխուեր: Պետրոսի այդ բնաւորութիւնը կու գար «կեանքի ամբարտաւանութենէն» (Ա. Յովհ. 2.16):

Հպարտութիւնը երբեք չէր կրնար այնքան զօրաւոր ըլլալ, որ զինէր Պետրոսը, որպէսզի ան Քրիստոսին մէջ իրականացնէր իր ճակատագիրը: Եթէ այս հպարտութիւնը չհեռացուէր, վերջ ի վերջոյ պիտի կործանէր Պետրոսը: Եզեկիէլի 28.11-19-ին մէջ մենք կը տեսնենք, որ այս հպարտութիւնը բնաւորութեան այն թերութիւնն էր, որ գտնուեցաւ Արուսեակի՝ Աստուծոյ օծուած քերովբէի մէջ՝ պատճառ դառնալով անոր անկման:

Այժմ տե՛ս, թէ ինչ կ'ընէ Յիսուսը Սիմոն-Պետրոսին.

«Եւ Տէրը ըսաւ. «Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ձեզ ուզեց, որ մաղէ ցորենի պէս»»:

– Դուկ. 22.31

Հպարտութիւնը դուռ բացաւ թշնամիին համար, որ ան ներս մտնէ եւ մաղէ Սիմոն-Պետրոսը: «Մաղել» բառը յունարէն «sin-iazo» (սինիազօ) բառի թարգմանութիւնն է: Ըստ «Լոկոս» ուսուցողական Աստուածաշունչի՝ այն կը նշանակէ «մաղել, շարժել, ցնցել մաղի մէջ», այսինքն՝ դրդելու եւ համոզմունքները փոխելու միջոցով փորձել մէկուն հաւատքը հասցնել կործանման եզրին:

Եթէ Յիսուսը այն ժամանակ ունենար այդ մտածելակերպը,



որ այսօր եկեղեցւոյ մէջ շատերը ունին, կ'ըսէր. «Եկէ՛ք աղօթենք, տղանե՛ր, եւ կապենք սատանայի այս յարձակումը: Մենք չենք պատրաստուիր թոյլ տալ սատանային, որ այդ բանը ընէ մեր սիրելի Սիմոնի հետ»: Բայց նայի՛ր, թէ Յիսուսը ինչ կ'ըսէ.

«Բայց Ես աղաչեցի քեզի համար, որ քու հաւատքը չպակսի, եւ երբ որ դառնաս, եղբայրներդ հաստատէ՛»:

– Ղուկ. 22.32

Յիսուսը չաղօթեց, որ Սիմոն-Պետրոսը ազատէր կործանում բերող այդ ցնցումէն: Ան աղօթեց, որ Պետրոսի հաւատքը չպակսի այդ գործընթացի մէջ: Յիսուսը գիտէր, որ այս փորձութեան մէջէն ի յայտ պիտի գայ նոր բնաւորութիւն մը: Այդ նոր բնաւորութիւնը միակ բանն էր, որու կարիքը ունէր Սիմոն-Պետրոսը՝ իրեն համար նախասահմանուածը իրագործելու եւ իր եղբայրները ամրապնդելու համար:

Սատանան իրաւունք ստացած էր շարժելու Սիմոն-Պետրոսը այնքան դաժանօրէն, որ ան կորսնցնէր իր հաւատքը: Թշնամիին մտադրութիւնն էր կործանել այս մեծ ներուժ ունեցող մարդը, որ ստացած էր այդ մեծ յայտնութիւնը: Բայց Աստուած շարժելու համար այլ նպատակ ունէր, եւ, ինչպէս միշտ, Աստուծոյ ճանապարհը բարձր է սատանային ճանապարհէն: Ան թոյլ տուաւ թշնամիին ընել այդ բանը, որպէսզի ատորմով Սիմոն-Պետրոսի մէջ շարժեր այն ամէնը, ինչ որ շարժելու կարիք ունէր:

Աստուած կնոջս՝ Լիզային, ցոյց տուաւ, որ որեւէ բան տեղէն շարժելը ունի հինգ նպատակ.

1. Սօսենալ հիմքին:
2. Հեռացնել այն, ինչ որ մեռած է:
3. Հաւաքել այն, ինչ որ հասունցած է:
4. Արթնցնել:
5. Միացնել կամ խառնել ինչ որ բանի մը հետ, որպէսզի այն այլեւս չկարենան առանձնացնել:

Շարժելու ժամանակ որեւէ մտային գործընթաց կամ սրտի կեցուածք, որ արմատաւորուած է եսասիրութեան կամ

հպարտութեան մէջ, կը զտուի: Այս վիթխարի ցնցումին հետեւանքով Սիմոն-Պետրոսի ողջ ինքնավստահութիւնը պիտի հեռանար, իսկ այն ամէնը, ինչ որ կանգուն պիտի մնար, պիտի ըլլար Աստուծոյ ամուր հիմքը: Պետրոսը կը սթափէր իր իրական վիճակէն, մեռած պտուղները կը հեռացուէին, եւ հասուն պտուղները կը հաւաքուէին՝ զինք անելի մօտեցնելով իր ճշմարիտ հիմքին: Պետրոսը այլեւս անկախ չէր գործեր, այլ փոխկապակցուած պիտի ըլլար Տիրոջը: Պետրոսը յամառօրէն հակադրուեցաւ Յիսուսի խօսքերուն. «Տէ՛ր, ես պատրաստ եմ Քեզի հետ գալ ե՛ւ բանտ, ե՛ւ մահուան»: Այս յայտարարութիւնը ծնաւ ոչ թէ Հոգիէն, այլ անոր ինքնավստահութենէն: Ան չէր կրնար տեսնել, թէ ինչ նպատակ ունէր այստեղէն շարժիլը:

### ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ՅՈՒՂԱՆ ՀԱԿԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Ոմանք կը մտածեն, որ Պետրոսը մեծախօս ու վախկոտ էր: Բայց Գեթեմանի պարտէզին մէջ, երբ տաճարի պահակախումբը եկաւ Յիսուսը ձերբակալելու, Պետրոսը հանեց իր սուրը եւ կտրեց քահանայապետի ծառայի աջ ականջը (Յովհ. 18.10): Շատ վախկոտներ չեն համարձակիր նման բան ընել, երբ թշնամիի զօրքերու թիւը կը գերազանցէ իրենց թիւը: Այնպէս որ, Պետրոսը զօրաւոր էր, բայց այդ ուժը անոր անհատականութեան մէջ էր եւ ոչ թէ Աստուծոյ խոնարհութեան մէջ, քանի որ մաղուելու գործընթացը չէր սկսած:

Պատահեցաւ այնպէս, ինչպէս Յիսուսը կանխատեսած էր: Այդ նոյն համարձակ, զօրաւոր Սիմոն-Պետրոսը, որ պատրաստ էր մեռնելու Յիսուսի համար, որ զինուորներով շրջապատուած այգիի մէջ ձեռքը սուրը առաւ, աղախինէ մը պարտուեցաւ: Պետրոսը վախցաւ այդ կնոջմէն եւ ուրացաւ՝ ըսելով, որ չի ճանչնար Յիսուսը:

Ոմանք կը մտածեն, թէ մեծ բաները պատճառ կը դառնան մարդոց սայթաքելուն: Բայց յաճախ ամենափոքր բաները մեզ տեղէն կը շարժեն: Ասիկա ցոյց կու տայ ինքնավստահութեան անօգուտ ըլլալը:

Յետոյ Պետրոսը երեք անգամ ուրացաւ Յիսուսը: Աքաղաղը

կանչելուն պէս Պետրոսը դառնօրէն լացաւ: Ան կորսնցուցած էր իր ինքնավստահութիւնը եւ կը մտածէր, որ ալ երբեք չի բարձրանար ինկած տեղէն: Այն ամէնը, ինչ որ Պետրոսը ձգած էր (չնայած որ ան չէր ալ գիտակցեր ատիկա), այն էր, ինչ որ Հոգին անոր յայտնած էր:

Սիմոն-Պետրոսը եւ Յուդան որոշ հարցերու մէջ իրար կը նմանէին, ներառեալ այն փաստը, որ անոնք երկուքն ալ մերժեցին Յիսուսը Անոր կեանքի վճռական օրերուն: Սինչդեռ այս երկու մարդոց մէջ հիմքային տարբերութիւն կար:

Յուդան Յիսուսի կողքին ըլլալով հանդերձ այնպէս չէր ճանչցած Ջիւնք, ինչպէս Սիմոն-Պետրոսը: Յուդան Յիսուսի մէջ հիմք չունէր: Կը թուար, թէ ան կը սիրէր Յիսուսը այն օրուրնէ սկսեալ, երբ ձգեց ամէն բան՝ Անոր հետեւելու համար: Ան ճամբորդած էր Յիսուսի եւ միւս աշակերտներու հետ եւ նոյնիսկ մնացած էր հալածանքի կրակի տակ: Յուդան դեւեր կը հանէր, հիւանդները կը բժշկէր եւ Աւետարանը կը քարոզէր (Յիշէ՛, որ Յիսուսը տասներկուքը ուղարկեց քարոզելու, բժշկելու եւ ազատագրելու համար եւ ոչ թէ տասնմէկը): Բայց Յուդայի զոհողութիւնները չէին բխէր Յիսուսի նկատմամբ ունեցած սէրէն կամ այն յայտնութենէն, թէ Ով էր Ան:

Յուդան սկիզբէն ալ ունէր իր նեղ անձնական պատկերացումները: Ան երբեք ալ չապաշխարեց իր ես-ը փնտռող դրդապատճառներէն: Անոր բնաւորութիւնը ի յայտ եկաւ հետեւեալ յայտարարութենէն. «Ի՞նչ կը կամենաք ինձի տալ...» (Մատթ. 26.15): Ան Յիսուսի ծառայութեան գանձարանէն դրամ կ'առնէր անձնական օգտագործման համար (Յովհ. 12.4-6): Եւ այս ցուցակը կը շարունակուի: Յուդան երբեք չճանչցաւ Տէրը, չնայած որ երեքուկէս տարի Յիսուսի խումբի մէջ էր:

Այս երկու մարդիկ ալ զոջացին իրենց ըրածի համար: Բայց Յուդան չունէր այն հիմքը, որ Պետրոսը ունէր, որովհետեւ ան երբեք Յիսուսը ճանչնալու համար քաղց չունէր. ան Յիսուսի մասին յայտնութիւն չունէր: Եթէ Յուդան Յիսուսի մասին յայտնութիւն ունենար, ապա երբեք չէր մատներ Ջիւնք: Երբ զօրաւոր փոթորիկ մը եղաւ անոր կեանքին մէջ, ամէն ինչ տեղէն շարժեցաւ եւ փշրուեցաւ: Ահա՛ թէ ինչ տեղի ունեցաւ.

«Այն ժամանակ Անոր մատնիչը՝ Յուդան, տեսնելով, որ դատապարտուեցաւ, զղջաց, եւ այն երեսուն արծաթը ետ դարձուց քահանայապետներուն ու ծերերուն: Եւ ըսաւ. «Ես մեղք գործեցի՝ անմեղ արիւն մատնելով»: Անոնք ալ ըսին. «Մեզի՞ ինչ, դուն տես»: Եւ ան արծաթը նետեց տաճարի մէջ, հեռացաւ եւ գնաց ինքզինքը խեղդեց»:

– Մատթ. 27.3-5

Յուդան խղճի խայթ ունեցաւ, զղջաց եւ գիտէր, որ ինքը մեղանչած է: Բայց ան չէր ճանչնար Քրիստոսը: Յուդան չէր գիտակցեր, թէ որքան մեծ կարեւորութիւն կը ներկայացնէր այն, թէ Որու մատնած էր: Ան ընդամէնը ըսաւ. «Ես անմեղ արիւն ունեցող մը մատնած եմ»: Եթէ ան Սիմոն-Պետրոսի պէս յայտնութիւն ունենար Քրիստոսի մասին, ապա պիտի վերադառնար Յիսուսի քով եւ պիտի ապաշխարէր՝ գիտնալով Տիրոջ բարութիւնը: Սինչդեռ ինքնասպանութիւն կատարելը Աստուծոյ շնորհքէն անկախ ապրելու մէկ այլ գործողութիւն էր: Այս ցնցումը բացայայտեց, որ նոյնիսկ երեք տարի Տիրոջ հետեւելէն յետոյ Յուդան ոչ մէկ հիմք ունէր:

Բազմաթիւ նորադարձներ աղօթած են «փրկութեան աղօթքը», յաճախած են եկեղեցի, եղած են աշխոյժ եւ ուսումնասիրած են Աստուածաշունչը: Բայց եւ այնպէս այս ամէնը տեղի ունեցած է առանց Յիսուսի մասին յայտնութիւն ունենալու: Անոնք չեն գիտեր, թէ իրականութեան մէջ Ով է Յիսուսը, չնայած որ իրենց շուրթերով Չինք Տէր կը դաւանին: Երբ հիասթափութիւն կ'ունենան, կը գայթակղին ու կը վիրաւորուին Աստուծմէ եւ այլեւս գործ չեն ունենար Անոր հետ: «Աստուած ալ երբեք ոչինչ կ'ընէ ինձի համար», «Ես փորձեցի քրիստոնէայ ըլլալ, բայց իմ կեանքը միայն ատելի թշուառացաւ», «Ես աղօթեցի եւ խնդրեցի Աստուծմէ ընել ասիկա, իսկ Ան չըրաւ»: այսպիսի խօսքեր եւ շատ լսած են: Այդպիսի մարդիկ երբեք իրենց կեանքը չեն յանձնած Յիսուսին, այլ փորձած են սեփական շահի համար իրենց անձը դնել Աստուծոյ հետ հաւասար մէկ դիրքի վրայ: Անոնք ծառայած են Աստուծոյ իրենց անձնական ակնկալիքները բաւարարելու համար: Այդպիսիք դիւրութեամբ կը գայթակղին ու կը վիրաւորուին:

«Ոմանք, երբ որ խօսքը կը լսեն, շուտով ուրախութեամբ կ'ընդունին զայն եւ իրենց մէջ արմատ չունին, այլ առժամանակեայ են, յետոյ, երբ այն խօսքի համար նեղութիւն կամ հալածանք կ'ըլլայ, շուտով կը գայթակղին»:

– Մարկ. 4.16,17

Ուշադրութիւն դարձո՛ւր, Յիսուսը ըսաւ, որ անոնք շուտով կը գայթակղին, որովհետեւ ոչ մէկ հիմք ունին: Իսկ ինչի՞ մէջ պէտք է արմատաւորուած ըլլանք: Պատասխանը մենք կը գտնենք Եփեսացիս 3.16-18-ին մէջ: Մենք պէտք է արմատաւորուած եւ հաստատուած ըլլանք սիրոյ մէջ: Աստուծոյ նկատմամբ սէրն է մեր հիմքը: Յիսուսը ըսաւ. «Ոչ ոք Անոնցմէ աւելի մեծ սէր ունի, որ մէկը իր անձը դնէ իր բարեկամներուն համար» (Յովհ. 15.13):

Մենք չենք կրնար մեր կեանքը դնել այն մարդու համար, որուն չենք վստահիր: Մենք չենք կրնար մեր կեանքը դնել Աստուծոյ համար, մինչեւ չճանչնանք Ջինք այն աստիճան, որ վստահինք: Մենք պէտք է ճանչնանք եւ հասկնանք Աստուծոյ էութիւնն ու բնաւորութիւնը: Մենք պէտք է համոզուած ըլլանք, որ Աստուած երբեք որեւէ բան չ'ըներ մեզ վնասելու համար:

Աստուած միշտ ուշադիր է այն ամէնուն հարցին մէջ, ինչ մեր լաւագոյնի համար է: Այն, ինչ որ մեզ կը յուսահատեցնէ, միշտ պիտի շրջուի եւ բարի պիտի դառնայ մեզի համար, եթէ մենք չկորսնցնենք մեր հաւատքը: Աստուած սէր է, ոչ մէկ եսասիրութիւն եւ չարիք կայ Անոր մէջ: Սատանան է, որ կը ցանկայ կործանել մեզ: Յաճախ մեր կեանքի իրավիճակներուն մենք կը նայինք «կարճատեսի» ակնոցով: Իսկ ատիկա կ'աղաւաղէ իրական պատկերը: Այն, ինչին մէջէն, որ մենք կ'անցնինք, Աստուած կը տեսնէ ասոր ամբողջական պատկերը: Եթէ մենք իրավիճակներուն կը նայինք մեր սահմանափակ «դիտակէտէն», երկու բան կրնայ պատահիլ. նախ, որ Աստուծոյ գտնան գործընթացին մէջ մենք դիւրութեամբ կը դառնանք վիրաւորանքի զոհը. կա՛մ կը վիրաւորուինք Աստուծմէ, կա՛մ Անոր ծառայողներէ ունէ մէկէն, եւ երկրորդը այն է, որ մենք դիւրութեամբ կրնանք խաբուիլ թշնամիին կողմէ: Սատանան կ'օգտագործէ ինչ որ բան, որ ճիշդ կը թուայ այդ պահուն,

բայց անոր հիմնական ծրագիրը այդ թուացեալ «ճիշդ»-ը մեր անծի կործանման կամ մահուան համար օգտագործելն է: Երբ մենք ամուր կանգնած ենք Աստուծոյ վստահելու մէջ, չենք կրնար դուրս ելլել Հօր խնամակալութենէն: Մենք մեզ պահպանելու համար պէտք չէ յանձնուինք փորձութեան:

## ԿԱՆՈՒԱԾ ԸԼԼԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԲՆԱԻՈՐՈՒԹԵՆԵՆ

Միակ միջոցը, որու միջոցով սատանան կը փորձէ մեզ ետ պահել Աստուծոյ վստահելէն, այն է, երբ ան կը խեղաթիւրէ Աստուծոյ բնաւորութեան մասին մեր պատկերացումը: Ան այդպէս վարուեցաւ Եդէմի պարտէզին մէջ Եւայի հետ, երբ հարցուց անոր. «Իրա՞ւ Աստուած ըսաւ, որ պարտէզի ոչ մէկ ծառէն ուտես» (Ծննդ. 3.1): Ան խեղաթիւրեց Աստուծոյ պատուիրանը, որպէսզի աստորմով յարձակէր Աստուծոյ բնաւորութեան վրայ եւ աղաւաղէր այն:

Աստուած ըսած էր. «Պարտէզի ամէն ծառէն համարձակ կեր, բայց բարիի եւ չարի գիտութեան ծառէն մի ուտեր, որովհետեւ անորմէ կերած օրդ մահով պիտի մեռնիս» (Ծննդ. 2.16,17):

Հիմնականին օձը ասիկա նկատի ունէր, երբ ըսաւ Եւային. «Աստուած քեզմէ պահած է ամէն բարի բան»: Բայց Աստուած զխաւորապէս նկատի ունէր հետեւեալը. «Ղուն համարձակ կրնաս ուտել, բացի...»: Աստուած մարդ արարածին տուած էր ողջ Եդէմի պարտէզը, որպէսզի ան, բացառութեամբ մէկէն, վայելէր բոլոր պտուղները:

Օձը ըսաւ կնոջը. «Իրականութեան մէջ Աստուած հոգ չի տանիր ձեզի համար: Ի՞նչ բարի բան կայ, որ Ան կը պահէ ձեզմէ, Ան չի սիրեր ձեզ, ինչպէս դուք կը կարծէք: Ան բարի Աստուած չէ»: Կինը խաբուեցաւ եւ հաւատաց Աստուծոյ բնաւորութեան վերաբերող սուտի մը: Այնուհետեւ յառաջացաւ մեղանչելու ցանկութիւնը, քանի որ Աստուծոյ խօսքը այլեւս կեանք չէր, այլ օրէնք: Իսկ «մեղքի զօրութիւնը օրէնքն է» (Ա. Կորնթ. 15.56):

Այսօր ալ թշնամին կը գործադրէ այս միջոցը: Ան Հայր Աստուծոյ բնաւորութիւնը կ'աղաւաղէ Անոր զաւակներու աչքերու մէջ:

Մենք բոլորս ունեցած ենք մեր վրայ հեղինակություններ, օրինակ՝ հայրեր, ուսուցիչներ, կառավարիչներ, որոնք եսասեր եղած են եւ չեն սիրած մեզ: Քանի որ անոնք հեղինակութիւն եղած են մեզի համար, դիրքին է անոնց էութենէն մեկնած Աստուծոյ բնաւորութեան մասին պատկերացում կազմել, քանի որ Ան է գլխաւոր հեղինակութիւնը:

Թշնամին վարպետօրէն խեղաթիրած է Հօր բնաւորութիւնը՝ մեր երկրային հայրերու օրինակով աղաւաղելով մեր տեսողութիւնը: Աստուած կ'ըսէ, որ մինչեւ Յիսուսի վերադարձը հայրերու սրտերը ետ պիտի դառնան դէպի զաւակները (Մաղաքիա 4.6): Աստուծոյ բնաւորութիւնը կամ էութիւնը տեսանելի պիտի ըլլայ Անոր աւագներուն մէջ, եւ ասիկա պիտի ըլլայ դեղամիջոց բժշկութեան համար:

Երբ դուն գիտես, որ Աստուած երբեք չընէր որեւէ բան՝ քեզ վնասելու կամ կործանելու համար, եւ ինչ ալ որ Ան քու կեանքի մէջ կ'ընէ կամ չ'ընէր, քու լաւագոյնի համար է, այդ ամէնէն յետոյ քու կեանքը ամբողջութեամբ կը յանձնես Անոր: Դուն կը դառնաս անձ մը, որ ուրախութեամբ իր կեանքը կը դնէ Տիրոջ համար:

Եթէ դուն քեզ ամբողջովին նուիրած ես Յիսուսին եւ յանձնուած ես Անոր խնամակալութեան, ապա չես կրնար վիրաւորուիլ, քանի որ քու անձը քեզի չի պատկանիր: Այն մարդիկ են վիրաւորուած եւ յուսահատած, որոնք Աստուծոյ եկած են բանի մը պատճառով՝ ի՞նչ պիտի ընէ Յիսուսը իրենց համար: Անոնց դրդապատճառը Ջինք ճանչնալը չէ:

Երբ մենք այս դիրքին մէջ ենք, դիրութեամբ կը յուսահատինք: Ինքնակեդրոնացումը պատճառ կը դառնայ, որ մենք «կարճատես» դառնանք: Մենք չենք կրնար մեր անմիջական հանգամանքներուն նայիլ հաւատքի աչքերով: Երբ մեր կեանքը իրապէս բոլորովին Յիսուսի մէջ է, մենք կը ճանչնանք Անոր բնաւորութիւնը եւ մասնակից կ'ըլլանք Անոր ուրախութեան ու չենք սասանիր:

Երբ մենք կը դատենք ըստ մեր բնական միջավայրի կամ հանգամանքներու, դիրութեամբ կը վիրաւորուինք: Ասիկա հոգիի աչքերով տեսնելը չէ: Յաճախ Աստուած չի պատասխաներ ինձի

այն պահուն, երբ ես զգամ ասոր բացարձակ անհրաժեշտութիւնը: Բայց երբ ես ետ կը նայիմ եւ կը քննեմ դէպքերը, կը հասկնամ այդ լռութիւնը ու կը տեսնեմ Անոր իմաստութիւնը:

Երբեմն մեր երեխաները չեն հասկնար մեր այն մեթոտներն ու տրամաբանութիւնը, որոնք դաստիարակելու նպատակով են: Երբ անոնք կը մեծնան, մենք կը փորձենք բացատրութիւններ տալ, որպէսզի անոնք կարենան օգուտ քաղել իմաստութենէն: Բայց կայ տարիք, երբ անոնք կրնան չհասկնալ կամ չհամաձայնիլ իրենց հասունցած չըլլալու պատճառով: Ոչի՛նչ, յետոյ կը հասկնան: Թերեւս ասորմով մենք կը ստուգենք անոնց հնազանդութիւնը, սէրն ու հասունութիւնը: Նոյնը կը վերաբերի նաեւ մեր երկնային Հօրը: Այս իրավիճակներու մէջ հաւատքով լեցուած անձը կ'ըսէ. «Տէ՛ր, ես կը վստահիմ Քեզի, չնայած որ չեմ հասկնար»:

Եբրայեցիս 11.35-39-ի մէջ մենք կը գտնենք վկայութիւն այն մարդոց մասին, որոնք երբեք չտեսան Աստուծմէ՛ իրենց տրուած խոստումներու իրականացումը, բայց շարունակեցին անսասան մնալ. «Ուրիշներն ալ խիստ չարչարուեցան՝ չընդունելով ազատութիւնը, որ լաւագոյն յարութեան հասնին: Միւսներն ալ առանց նախատինքների, ծեծերու, կապանքների եւ բանտի փորձը. քարկոծուեցան, սղոցուեցան, փորձանքի մէջ ինկան, սուրով սպաննուած մեռան, ոչխարի մորթերով եւ այծի կաշիներով եկան կարօտութիւն քաշելով, նեղուած, չարչարուած, որ աշխարհը անոնց արժանի չէր: Մոլորուեցան անապատներու մէջ, լեռներու, այրերու եւ երկրի խռռչներու մէջ: Եւ ասոնք ամէնքը հաւատքով վկայութիւն առին, բայց խոստումնքը չընդունեցին»:

Անոնք որոշած էին, որ Աստուած է այն ամէնը, ինչ անոնք կը ցանկային՝ կարելորութիւն չտալով, թէ ինչ գին պէտք է վճարէին: Անոնք հաւատարիմ մնացին Աստուծոյ մինչեւ իրենց մահը, չնայած որ այդպէս ալ չտեսան խոստումներու իրականացումը: Անոնք չէին կրնար վիրաւորուիլ:

Ուրեմն մենք արմատաւորուած ու հաստատուած ենք, երբ ծնունդ կու տանք այդ մեծ սիրոյն եւ կը վստահինք Աստուծոյ: Այդ պարագային նշանակութիւն չունի, թէ որքան զօրաւոր է փոթորիկը, միեւնոյնն է, այն երբեք չի կրնար մեզ տեղաշարժել: Ասոր



պատճառը զօրաւոր կամքը կամ անհատականութիւնը չէ. ասիկա շնորհքի պարգեւ է բոլոր անոնց համար, որոնք զիրենք կը վստահին Աստուծոյ՝ մէկ կողմ ձգելով ինքնավստահութիւնը:

Քեզ ամբողջութեամբ Անոր կամքին յանձնելով՝ դուս պէտք է ձանձնաս այն Մէկը, Որ կը պահէ քու կեանքը:

## ՇՆՈՐՀՔԸ ԽՈՆԱՐՀՆԵՐՈՒՆ ԿԸ ՏՐՈՒԻ

Սիմոն-Պետրոսը այլեւս չէր կրնար պարծենալ մեծ ըլլալուն համար: Ան կորսնցուցած էր իր բնական ինքնավստահութիւնը: Պետրոսը ամէն բան շատ պարզորոշ տեսաւ, այսինքն՝ ան տեսաւ իր զօրաւոր կամքի անօգուտ ըլլալը: Պետրոսը խոնարհեցաւ: Հիմա ան Աստուծոյ շնորհքի համար կատարեալ թեկնածու մըն էր: Աստուած Իր շնորհքը խոնարհներուն կու տայ: Խոնարհութիւնը նախապայման է: Պետրոսի հոգիին մէջ բոցավառած դաս մը կար, երբ ան գրեց իր ուղերձին մէջ. «Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ» (Ա. Պետր. 5.5):

Պետրոսը հեռացած էր նահանջելու եզրէն: Մենք ասիկա կը գիտնանք այն պատգամէն, որ Տիրոջ հրեշտակը Մարիամ Մագդաղենացիին տուաւ գերեզմանի քով. «Բայց գացէ՛ք, Անոր աշակերտներուն եւ Պետրոսին ըսէք, թէ Ան ձեզմէ առաջ պիտի երթայ Գալիլիա, հոն պիտի տեսնէք Ձինք, ինչպէս որ Ան ձեզի ըսաւ» (Մարկ. 16.7): Հրեշտակը Պետրոսին առանձնացուց խումբէն: Պետրոսը նաւաբեկութեան վտանգի մէջ էր, բայց Աստուած տակաւին կը շարունակէր հիմնուիլ անոր վրայ: Այդ ցնցումներէն Պետրոսը չսասանեցաւ, այլ ամրապնդուեցաւ:

Յիսուսը ոչ միայն ներեց Պետրոսին, այլեւ վերականգնեց: Քանի որ Պետրոսը անցած էր ցնցումներու մէջէն, ան արդէն պատրաստ էր դառնալ եկեղեցոյ կեդրոնական դէմքերէն մէկը: Ան համարձակօրէն կը հռչակէր Քրիստոսի յարութիւնը: Ատորմէ յետոյ ան մեծ իշխանութեամբ եւ համարձակութեամբ դէմ առ դէմ կեցաւ ատեանին առջեւ: Պատմութիւնը կը տեղեկացնէ (ըստ Ճ. Տ. Տուկլասի «Նոր Աստուածաշնչեան բառարան»-ին), որ շատ տարիներ

հաւատարիմ ծառայելէն յետոյ Պետրոսը պահանջեց, որ գլխիվայր խաչուի: Ան ըսաւ, որ ինքը արժանի չէ մեռնելու այն նոյն մահով, ինչպէս իր Տէրը մահացած էր, ատոր համար ալ զինք խաչեցին գլխիվայր: Ան այլեւս չէր վախնար: Պետրոսը ժայռի ամուր հիմքի վրայ կառուցուած քար մըն էր:

Այս կեանքի մէջ դժուարութիւնները կը բացայայտեն այն, ինչ որ կայ քու սրտի մէջ՝ ըլլայ ատիկա վիրաւորուածութիւն Աստուծմէ, թէ ուրիշներէն: Քննութիւնները կամ քեզ դառնացած կը դարձնեն Աստուծոյ եւ քու քոյրերու ու եղբայրներու նկատմամբ, կամ ա՛լ աւելի կը զօրացնեն քեզ: Եթէ դուն լաւ յանձնես քննութիւնը, քու արմատները աւելի խորունկ պիտի թափանցեն հողին մէջ, որպէսզի ամրապնդեն քեզ եւ քու ապագան: Իսկ եթէ դուն ձախողիս, պիտի դառնաս վիրաւորուած ու պիտի լեցուիս դառնութեամբ:

ՏԷՐ, ԵՍ ԾԱՌԱՅԱԾ ԵՄ ՔԵԶԻ,  
ՌԻԵՄՆ՝ ԻՆՉՈ՞Ւ...

Երբ ես հովիւ էի, երիտասարդներու խումբին մէջ կար տասնչորս տարեկան ազդեցիկ տղայ մը, որ շատ յարգուած էր իր ընկերներուն եւ աւագներուն կողմէն: Ան շատ լաւ ուսանող եւ հմուտ մարզիկ էր: Աստուծոյ բաներու նկատմամբ նախանձաւոր ըլլալով՝ երիտասարդ տղան հաւատարմօրէն կը ծառայէր եւ որեւէ գործին մէջ կ'առաջարկէր իր մասնակցութիւնը: Ան մեզի հետ եկաւ առաքելական ճամբորդութեան մը, որու ընթացքին կը վկայէր իրեն հանդիպած ամէն մէկուն:

Կար ժամանակահատուած մը, երբ ան օրական չորս ժամ կ'անցընէր աղօթքի մէջ: Տղան շատ բաներ կը լսէր Տիրոջմէն եւ ատոնցմով կը բաժնեկցէր միւսներուն հետ: Այն, ինչով ան կը բաժնեկցէր, միշտ օրհնութիւն էր: Տղան գիտցաւ ծառայութեան մէջ իր կոչումը եւ կ'ուզէր հովիւ ըլլալ միւսներէ քսան տարեկան դառնալը: Կը թուար, որ ան անսասան ժայռ էր: Ես կը սիրէի այս երիտասարդը՝ ճանչնալով անոր կեանքին համար Աստուծոյ կոչումը, եւ շատ ժամանակ կը յատկացնէի անոր հետ հաղորդակցելուն: Միայն բանէ մը կը մտահոգուէի. անոր մէջ մեծ ինքնավստահութիւն կը

նկատէի: Ես ինչոր բան կ'ուզէի ըսել անոր, բայց աստիկա ընելու ազատութիւն չունէի: Ես գիտէի, որ փոփոխութիւն պիտի գար: Ան հանդիպեցաւ քանի մը դժուար յաղթահարելի փոթորիկներու եւ դիմակայեց: Երբեմն ես կասկածի տակ կը դնէի այն, ինչ զգացած էի, երբ կը տեսնէի, թէ ինչպէս ան կը համբերէր դաժան փորձութիւններուն:

Անցան տարիներ: Ան տեղափոխուեցաւ, իսկ ես սկսայ անընդ-հատ ճանապարհորդել, բայց անոր հետ կապը կը պահպանէի: Գիտէի, որ ան տակաւին պիտի անցնէր կոտորման ընթացքի մէջէն: Ես չէի գիտեր, թէ ինչ պէտք է պատահեր, բայց կը հասկնայի, որ աստիկա անհրաժեշտ էր անոր՝ իր կոչումը իրականացնելու համար: Ասիկա նման էր Սիմոն-Պետրոսի մաղուելու գործընթացին:

Երբ այս երիտասարդը տասնինը տարեկան էր, բժիշկները անոր հօր քով քաղցկեղ յայտնաբերեցին: Երիտասարդը իր մօր հետ ծոմ կը պահէր ու կ'աղօթէր՝ հաւատալով, որ հայրը պիտի բժշկուի: Ուրիշներն ալ միացան անոնց: Տղուն հայրը այդ դէպքէն ընդամենը ամիսներ առաջ Յիսուսը ընդունած էր որպէս Տէր ու Փրկիչ:

Հօր վիճակը երթալով աւելի կը վատանար: Ալապամայի մէջ կը ծառայէի, երբ կինս հեռաձայնեց ինձի եւ ըսաւ, որ շտապ հեռա-ձայնեմ այդ երիտասարդին: Ես խօսեցայ անոր հետ եւ հասկցայ, որ տղան քաջալերանքի կարիք ունէր:

Իմ վերջին ծառայութենէն յետոյ ես ճամբորդեցի եւ առաւօտեան ժամը չորսին հասայ անոնց տունը: Տղուն հօր վիճակը այնքան ծանր էր, որ բժիշկներուն ըսելով՝ անոր հաշուուած օրեր մնացած էին ապրելու համար: Ան նոյնիսկ չէր կրնար խօսիլ: Երիտասարդ տղան համոզուած էր, որ հայրը պիտի բժշկուի: Ես ծառայեցի այդ ընտանիքին եւ քանի մը ժամ յետոյ հեռացայ: Յաջորդ առաւօտեան մենք զանգ ստացանք. հիւանդին վիճակը աւելի կը վատանար:

Լիզան եւ ես անմիջապէս աղօթեցինք: Երբ մենք կ'աղօթէինք, Աստուած իմ կնոջը տեսիլք մը տուաւ. Յիսուսը կեցած էր այդ մարդու կողքին եւ կը պատրաստուէր տանելու զինք: Երեսուն վայրկեան յետոյ երիտասարդը հեռաձայնեց եւ ըսաւ, որ հայրը

մահացած է: Կը թուար, թէ ան նոյն ինքնավստահ անձնաւորութիւնն էր: Բայց ասիկա ընդամէնը սկիզբն էր:

Այդ գիշեր ան հեռաձայնեց իր մտերիմ ընկերներուն, որպէսզի տեղեկացնէր իր մահուան մասին: Ընկերները կու լային, երբ ան հեռաձայնեց: Տղան հետաքրքրուեցաւ, թէ այդ ինչպէս պատահեցաւ, որ անոնք այդքան շուտ գիտցան իր իր մահուան լուրը: Իրականութեան մէջ անոր ընկերներուն ոչ ոք ըսած էր: Տղաները կու լային պատահարի մը զոհ դարձած իրենց լաւագոյն ընկերներէն մէկուն համար: Մէկ օրուան մէջ տղան կորսնցուց հայրը եւ շատ լաւ ընկերը:

Ցնցումը սկսած էր: Տղան շփոթած էր, յուսախաբ ու անտարբեր: Կը թուար, թէ Աստուծոյ ներկայութիւնը հեռացած էր իրմէ:

Մէկ ամիս յետոյ, երբ ան ինքնաշարժով տուն կու գար, ականատես եղաւ ինքնաշարժի արկածի մը, որ հազիւ նոր տեղի ունեցած էր: Տղան ունէր արկածներու ժամանակ առաջին օգնութիւն ցուցաբերելու համապատասխան գիտելիքներ, ուստի շտապեց օգնել: Երկու ինքնաշարժներուն մէջ կը գտնուէին անոր մտերիմ ընկերները: Երբ ան կը փորձէր օգնել, երկուքը մահացան անոր ձեռքերու մէջ:

Իմ երիտասարդ ընկերը հասաւ իր սահմանին: Ան երեք ժամ անցուց անտառներու մէջ՝ աղաղակելով Աստուծոյ. «Ո՞ր ես Դուն: Դուն ըսիր, թէ իմ Մխիթարիչը պիտի ըլլաս, իսկ ես ոչ մէկ մխիթարութիւն ունիմ»:

Կը թուար, թէ Աստուած երես դարձուցած էր անորմէ: Տղուն սեփական ուժն ու վստահութիւնը չէին օգներ անոր:

Տղան բարկացաւ Աստուծոյ վրայ: «Ինչո՞ւ Աստուած թոյլ տուաւ ասիկա»: Ան բարկացած չէր հովիւի, իր ընտանիքի կամ իմ վրայ: Ան վիրաւորուած էր Աստուծմէ: Տղան վհատութենէն սպառած էր: Աստուած յուսախաբ ըրած էր զինք իր ամենամեծ կարիքի ժամանակ:

Երիտասարդը կ'աղօթէր. «Տէ՛ր, ես ծառայած եմ Քեզի եւ շատ բաներ ձգած եմ Քեզի հետեւելու համար, իսկ հիմա Դուն լքած ես զիս»: Ան կը կարծէր, որ Աստուած պարտք էր իրեն այն ամէնուն

համար, ինչ ան ձգած էր Աստուծոյ ծառայելու համար:

Շատ մարդիկ վերքեր ստացած են եւ յուսախաբութիւններ վերապրած են, որոնցմէ մէկ քանիներ շատ ծանր են, մէկ քանիներն ալ՝ քիչ: Շատերը կը վիրաւորուին Տիրոջմէն: Անոնք կը հաւատան, որ Տէրը պիտի վճարէ այն ամէնուն համար, ինչ որ անոնք ըրած են յանուն Աստուծոյ:

Անոնք Աստուծոյ կը ծառայեն սխալ հիմքերով: Մենք պէտք չէ ծառայենք Տիրոջը այն բանին համար, թէ ինչ կրնայ Ան ընել, այլ թէ Ով է Ան եւ ինչ արդէն ըրած է մեզի համար: Անոնք, որոնք վիրաւորուած են, չեն հասկնար, որ արդէն Տէրը վճարած է զիրենք ազատելու համար: Անոնք մոռցած են, թէ ինչպիսի մահէ ազատագրուած են: Անոնք կը տեսնեն աւելի շատ ֆիզիքական աչքերով, քան յաւիտենական:

Այս երիտասարդը սկսաւ եկեղեցի չերթալ եւ կը հաղորդակցէր սխալ միջավայրի հետ՝ յաճախելով գինետուններ, գիշերային ակումբներ եւ խրախճանքի այլ վայրեր: Իր վիատութեան մէջ ան ոչ մէկ գործ կ'ուզէր ունենալ Տիրոջ հետ: Ան կը ցանկար խուսափիլ Աստուծոյ հետ որեւէ մէկ հաղորդակցութենէ:

Տղան այս կենսառճը պահեց ընդամէնը երկու շաբաթ. ան ներքին դատապարտութիւն կը զգար, բայց տակաւին կը շարունակէր մերժել Տիրոջ մօտենալը: Ասիկա վեց ամիս տեւեց: Նոյնիսկ յետոյ կը թուար, թէ երկինքը քարացած էր, չկար Տիրոջ ներկայութիւնը:

Անցաւ շուրջ մէկ տարի: Քանի մը իրավիճակներու մէջ յայտնուելով՝ ան տեսաւ, որ Աստուած տակաւին կը գործէր իր կեանքի մէջ: Տղան մօտեցաւ Աստուծոյ, բայց ասիկա արդէն ուրիշ մօտեցում էր: Ան եկաւ խոնարհութեամբ: Այս փորձութիւններու շրջանէն յետոյ Տէրը ցոյց տուաւ, թէ ինչպէս Ինքը երբեք չէր լքած զինք: Երբ վերականգնուեցաւ անոր հոգեւոր ընթացքը, ան սորվեցաւ իր վստահութիւնը արմատաւորել Աստուծոյ շնորհքի մէջ եւ ոչ թէ իր սեփական ուժին:

Ես կը պահէի անոր հետ հաղորդակցութիւնը: Մէկուկէս տարի յետոյ տղան պատմեց բաներ, որոնք տեսած էր իր մէջ, որոնց տեղը երբեք չէր իմացած: «Ես առանց բնաւորութեան մարդ մըն էի,

Իսկ իմ բոլոր փոխարարներու փութիւնները մակերեսային էին:

Հայրս զիս դաստիարակած էր արտաքինէն զօրաւոր մարդ, ես ինծի ձեւաւորող մարդ էի եւ երբեք չեմ աճած Աստուծոյ ուզած ձեւով: Ես շնորհակալ եմ Տիրոջը, որ զիս չլքեց այդ վիճակի մէջ:

Բայց այն, ինչ որ ամէնէն շատ կը վշտացնէր իմ սիրտը, գիշերային ակումբներու եւ խնձոյքներու մէջ ժամանակ անցընելը չէր, այլ այն, որ ես երես դարձուցած էի Սուրբ Հոգիէն: Ես Ձիւնք շատ-շատ կը սիրեմ: Սուրբ Հոգիին հետ իմ ընկերութիւնը երբեք այդքան քաղցր չէր եղած, ինչպէս հիմա է»:

Շատ ցնցումներ տեղի ունեցան անոր կեանքին մէջ: Ինքնավստահութիւնը ոչնչացաւ: Բայց այս երիտասարդը ունեցաւ այնպիսի հիմք, ինչպիսին ունէր Սիմոն-Պետրոսը, եւ ատիկա չեն կրնար առնել անորմէ: Իր կեանքն ու ծառայութիւնը հպարտութեան միջոցով կառուցելու փոխարէն ան կը կառուցէր Աստուծոյ շնորհքով:

Վիրաւորանքները կը բացայայտեն թուլութիւնները եւ կը փխրեցնեն մեր կեանքի ամրապնդած «տեղերը»: Յաճախ այն «տեղը», ուր կը կարծենք, թէ զօրաւոր ենք, իրականութեան մէջ մեր թուլութեան ծածկուած վայրն է: Այն ծածկուած պիտի մնայ այնքան ժամանակ, մինչեւ որ զօրաւոր փոթորիկ մը փչէ, եւ այդ ծածկոցով այլեւս չես քողարկուիր: Պօղոս առաքեալը գրեց. «Քանի որ մենք ենք թլփատութիւնը, որ հոգիով կը պաշտենք զԱստուած եւ կը պարծենանք Քրիստոս Յիսուսով եւ *մարմինի վրայ վստահութիւն չունինք*» (Փիլիպ. 3.3):

Մեր սեփական կարողութեամբ մենք ոչինչ կրնանք ընել յաւիտենական արժէքի համար: Այսպէս վարուիլը դիւրին է, բայց այս ճշմարտութիւնը մեր էութեան մէջ խորութեամբ արմատաւորելը ուրիշ բան մըն է:



ՅԻՍՈՒՍԸ ՉԷՐ ՀԵՌԱՆԱՐ  
ՃՇՄԱՐՏՈՒԹԵՆԷՆ՝ ՄԱՐԴԻԿ  
ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ԸԼԼԱԼՈՒ ՎՏԱՆԳԷՆ  
ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Ձեր՝ «Սատանայի խայծը» գիրքը վերջապես բացաւ իմ աչքերը: Ես եւ ամուսինը ծառայութեան մէջ էինք, եւ ես այնպիսի տպաւորութիւն ունէի, որ իմ կեանքի մէջ ամէն բան լաւ էր Տիրոջ հետ: «Սատանայի խայծը» ցոյց տուաւ ինձի, որ տասնհինգ տարի ես իմ մէջ վիրաւորանք ունեցած եմ հորաքրոջս հանդէպ: Մեզի միշտ սորվեցուցած են որպէս քրիստոնէաներ ներել, բայց ես երբեք ասիկա սրտիս մէջ չէի դրած: Ձեր ուղերձը ստիպեց, որ հանդիպիմ իմ անցեալի այդ յատուկ վերքին»:

– Ռ. Մ., ԹԵՆՆԵՍԻ



## ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՎԷՄԸ

---

*«Ահա Սիոնի մէջ՝ անկիւնի գլուխ, ընտիր, պատուական քար կը դնեմ, եւ Անոր հաւատացողը չ'ամչնար: Արդ ձեր՝ հաւատացեալներուդ պատուական է, բայց անհաւատներուն այն քարը, որ շինողները անարգեցին, Ան անկիւնի գլուխ եղաւ: Եւ գլորման քար եւ գայթակղելու (անգլերէնին մէջ՝ վիրաւորուածութեան) վէմ, որ կը գայթակղին խօսքին չհաւատալով, որ անոր համար ալ դրուած են»:*

– Ա. Պետր. 2.6-8

Այսօր «հաւատալ» բառին իմաստը թուլցած է: Շատերուն աչքերուն մէջ այն դարձած է միայն որոշակի փաստի ճանաչում: Շատերուն համար ալ այն գործ չունի հնազանդութեան հետ: Բայց վերոնշեալ մէջբերումին մէջ «հաւատալ» եւ «անհնազանդութիւն» բառերը ներկայացուած են որպէս հակադիր բառեր:

Սուրբ գիրքը կը յորդորէ. «Որ ամէն Անոր (Յիսուս Քրիստոսին) հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3.16): Քանի որ մենք կը դիտարկենք *«հաւատալ»* բառը, ըսենք, որ շատերը կը մտածեն, թէ այն ամէնը, ինչ որ իրենցմէ կը պահանջուի, հաւատալն է, որ Յիսուսը գոյութիւն ունի եւ մահացաւ խաչին վրայ, իսկ իրենք լաւ դիրքի մէջ են Աստուծոյ հետ: Եթէ ասիկա ըլլար միակ պահանջը, ապա դեւերը Անոր հետ լաւ դիրքի մէջ կ'ըլլային: Սուրբ գիրքը նաեւ կ'ըսէ. «Դուն կը հաւատաս, որ Աստուած մէկ է, լաւ կ'ընես. *Դեւերն ալ կը հաւատան* եւ կը սարսափին» (Յակոբ. 2.19): Մինչդեռ դեւերուն համար փրկութիւն չկայ:

Սուրբ գիրքին մէջ *«հաւատալ»* բառը աւելի շատ իմաստներ ունի, քան միայն փաստի մը գոյութիւնը ընդունիլը կամ ատոր ուղղակի մտային համաձայնութիւն տալը: Մնալով վերոնշեալ համարի իրական համաթեքսթի մէջ՝ մենք կրնանք ըսել, որ հաւատալու գլխաւոր տարրը հնազանդութիւնն է: Մենք կրնանք այս ձեւով կարդալ. «Ատոր համար ալ ձեզի համար, որ կը *հնազանդիք*, Ան թանկարժէք է, բայց անոնց համար, որոնք *անհնազանդ* են, «այն քարը, որ շինողները մերժեցին, դարձաւ գլխաւոր անկիւնաքարը» եւ *«գլորման քար ու վիրաւորութեան (զայթակրութեան) վէմ»*:

Դժուար չէ հնազանդիլ, երբ դուն կը ճանչնաս այն մէկուն բնավորութիւնն ու սէրը, որուն կ'ենթարկուիս: Սէրը Տիրոջ հետ մեր փոխարարութեան «էութիւնն է». ոչ թէ սկզբունքներու կամ ուսուցումներու նկատմամբ եղած սէրը, այլ Յիսուս Քրիստոս Անձի նկատմամբ մեր ունեցած սէրը: Եթէ այդ սէրը իր տեղը ամուր չէ, մենք զգայուն կ'ըլլանք վիրաւորանքի եւ սայթաքելու նկատմամբ:

Իսրայէլցիները, որոնց Տէրը կանչած էր «շինողներ» ըլլալու, մերժեցին Աստուծոյ գլխաւոր Անկիւնաքարը՝ Յիսուսը: Անոնք սիրեցին Հին կտակարանի իրենց ուսմունքները: Անոնք բաւարարուած էին իրենց մեկնաբանութիւններով, որովհետեւ ատորմով կրնային ամուր բռնուիլ իրենց շահէն եւ օգտագործել այն ուրիշները վերահսկելու համար: Յիսուսը, ընդհակառակը, մարտահրաւեր նետեց ողջ օրինապահութեան, որմէ այդքան ամուր կառչած էին իսրայէլցիները: Յիսուսը անոնց ըսաւ. «Քննեցէ՛ք գիրքերը, որ դուք կը կարծէք, թէ անոնցմով ունիք յաւիտենական կեանք, եւ

անոնք են, որ Ինծի համար կը վկայեն» (Յովհ. 5.39):

Անոնք չէին կրնար հասկնալ այն գաղափարը, որ ճիշդ սկիզբէն Աստուած կը ցանկար որդիներ եւ դուստրեր, որոնց հետ Ան կրնար փոխյարաբերութիւն ունենալ: Օրէնքին հետեւողները կը ցանկային կառավարել եւ թագաւորել: Անոնց աչքերուն մէջ օրէնքը բարձր էր փոխյարաբերութենէն: Անոնք մերժեցին այն, ինչ որ վաստակելու փոխարէն ծրի տրուած էր իրենց: Այնպէս որ, Աստուծոյ Պարգելը՝ Յիսուս Քրիստոսը, դարձաւ անոնց փրկութեան ու կեանքի յոյսը, «գլորման քար մը եւ գայթակղութեան վէմ մը»:

Սիմէօնը, երբ իր ձեռքերու մէջ առաւ մանուկ Յիսուսը, տաճարին մէջ մարգարէացաւ. «Ահա այս Մանուկը կայ Իսրայէլի մէջ՝ շատերուն համար իյնալու եւ կանգնելու եւ հակառակութեան նշան» (Ղուկ. 2.34): Ուշադրութիւն դարձուր «իյնալու եւ կանգնելու» արտայայտութեան: Այն Անձը, Որ եկած էր աշխարհ խաղաղութիւն բերելու, ի վերջոյ բաժանման սուր բերաւ անոնց, որոնց քով Ան ուղարկուած էր (Մատթ. 10.34), եւ կեանք բերաւ անոնց, որոնք շինողներու (այդ օրուան ծառայողներու) զոհը դարձած էին:

### ՅԻՍՈՒՍԸ ԵՒ ՎԻՐԱՒՈՐԱՆՔՆԵՐԸ

Կիրակնօրեայ դպրոցի մէջ Յիսուսը յաճախ կը ներկայացուէր որպէս Հովի մը, Որ Իր ուսերու վրայ կը տանէր կորսուած գառնուկը, կամ ալ կը ներկայացուէր Իր գրկի փոքրիկ երեխաներ օրինող Յիսուս, Որ ժպտալով կ'ըսէ. «Ես կը սիրեմ ձեզ»: Այս նկարագրութիւնները բոլորն ալ իրական են, բայց ատոնք ամբողջական պատկերը չեն տար:

Այս նոյն Յիսուսը նաեւ պախարակեց փարիսեցիները իրենց ինքնարդարութեան համար: «Օձե՛ր, իժերու ծնունդնե՛ր, դուք ինչպէ՞ս պիտի փախչիք գեհե՛նի դատաստանէն» (Մատթ. 23.33): Ան տաճարի մէջ տակնուվրայ ըրաւ դրամափոխներու սեղանները եւ զանոնք դուրս վճռեց (Յովհ. 2.13-22): Այն մարդը, որ կ'ուզէր թաղել իր հայրը, յետոյ միայն հետեւիլ Յիսուսին, Ան ըսաւ. «Թող մեռելները իրենց մեռելները թաղեն, իսկ դուն գնա՛ Աստուծոյ Արքայութիւնը քարոզէ» (Ղուկ. 9.59, 60): Այս թուարկումը կարելի է

երկար շարունակել:

Երբ անելի մօտիկէն կը նայինք Յիսուսի ծառայութեան, կը բացայայտուի Մարդ մը, Որ շատերը կը գայթակղեցնէր (Անորմէ կը վիրաւորուէին), երբ կը ծառայէր: Եկո՛ւր նայինք քանի մը օրինակներու:

### ***Յիսուսէն կը վիրաւորուէին փարիսեցիները***

Շատ պարագաներու Յիսուսը կը հակադրուէր եւ կը վիրաւորէր այդ առաջնորդները: Քանի որ փարիսեցիները վիրաւորուած էին, Յիսուսը դէպի խաչը ուղարկեցին: Անոնք կ'ատէին Յիսուսը: Բայց Յիսուսը այնքան կը սիրէր փարիսեցիները, որ ճշմարտութիւնը կը խօսէր. «Կեղծաւորն է՛ր, լաւ մարգարէացաւ Եսայիան ձեր մասին՝ ըսելով. «Այս ժողովուրդը իր բերանով կը մօտենայ Ինձի եւ շրթունքներով Ձիս կը պատուէ» (Մատթ. 15.7-9): Այս յայտարարութիւնը վիրաւորեց զանոնք:

Ուշադրութիւն դարձո՛ւր, թէ ատորմէ անմիջապէս յետոյ Յիսուսէն ինչ խնդրեցին աշակերտները. «Այն ժամանակ Անոր աշակերտները, քովը գալով, ըսին Անոր.

«Գիտե՞ս, որ փարիսեցիները այն խօսքը լսելով գայթակղեցան (անգլերէնին մէջ՝ վիրաւորուեցան)»:

– Մատթ. 15.12

Քննէ՛ Անոր պատասխանը.

«Ամէն տունկ, որ Իմ երկնաւոր Հայրը չտնկեց, կը փրցուի: Ձգեցէք զանոնք. կոյր են ու կոյրերու առաջնորդներ, եւ երբ որ կոյրը կոյրին առաջնորդէ, երկուքն ալ փոսի մէջ կ'իյնան»:

– Մատթ. 15.13,14

Յիսուսը ցոյց տուաւ, որ իրականութեան մէջ վիրաւորանքները արմատախիլ կ'ընեն զանոնք, որոնք ճշմարտապէս տնկուած չեն Իր Հօր կողմէն: Որոշ մարդիկ կրնան միանալ եկեղեցիներու ծառայողական խումբերուն, բայց կրնան ուղարկուած չլլալ Աստուծոյ կողմէն կամ Աստուծոմէ չեն: Վիրաւորանքը, որ կու գայ ճշմար-

տուրփինը քարոզելու ժամանակ, կը բացայայտէ անոնց իրական շարժառիթները եւ պատճառ կը դառնայ, որ իրենք զիրենք արմատախիլ ընեն:

Այցելելով ուրիշ եկեղեցիներ՝ ես ականատես եղած եմ շատ պարագաներու, երբ հովիւները վշտացած են իրենց համայնքէն կամ աշխատակազմէն հեռացած մարդոց համար: Շատ պարագաներու այդ մարդոց քով վրդովմունք յառաջացուցած է այն, որ քարոզուած է ճշմարտութիւնը, որ չէ համապատասխանած իրենց ապրելաոճին: Այդպիսիք կը դառնան եկեղեցւոյ տեսակէտները քննադատող եւ կը հեռանան:

Այն հովիւները, որոնք կը կարչին իրենց դռներէն ներս մտնող իւրաքանչիւր հաւատացեալէ, վերջ ի վերջոյ ստիպուած կ'ըլլան զիջիլ ճշմարտութեան: Ես անոնց կ'ըսեմ. «Եթէ դուք կը քարոզէք ճշմարտութիւնը, ատորմով կարելի է, որ մարդիկ վիրաւորէք, եւ անոնք արմատախիլ կ'ըլլան ու կը հեռանան: Մի՛ դադրիք կերակրելէ եւ հոգ տանելէ անոնց համար, որոնց Աստուած ուղարկած է ձեզի»:

Որոշ աւագներ կը խուսափին հակամարտութենէն՝ վախճալով մարդիկ կորսնցնել: Ոմանք ալ ընդհանուր առմամբ կը տատանին, քանի որ անոնց, որոնց մէջ կարիք կայ հակադրելու, մեծ զոհաբերութիւններ տուողներ են կամ ալ եկեղեցւոյ եւ համայնքի մէջ ազդեցութիւն ունեցող մարդիկ են: Միւսներն ալ կը վախճան գայթակղութեան պատճառ դառնալ կամ վիրաւորել ինչ որ մէկուն զգացումները, որ երկար ժամանակ իրենց կողքին եղած է: Որպէս հետեւանք՝ հովիւները կը կորսնցնեն Աստուծոյ տրուած իշխանութիւնը, որ պաշտպանելու եւ կերակրելու համար է այն ոչխարներուն, որոնց Աստուած վստահած է իրենց:

Երբ ես առաջին անգամ հովուական դիրքի մէջ մտայ, իմաստուն մարդ մը զգուշացուց զիս. «Մնա՛ քու իշխանութեան մէջ, եթէ ոչ, ինչ որ մէկը պիտի վերցնէ այն քեզմէ եւ քու դէմ պիտի օգտագործէ»:

Սամուէլը Աստուծոյ մարդ էր, որ ճշմարտութիւնը չէր զիջեր ոեւէ մէկուն հաճոյանալու համար, նոյնիսկ թագաւորին ալ չէր զիջեր: Երբ Սաուղը չհնազանդեցաւ Աստուծոյ, Տէրը Սամուէլին ըսաւ,

որ հակադրել գինք: Ան այդպէս ալ ըրաւ: Դժբախտաբար, Սաւուղը Տիրոջ խօսքին չարծագանգեց ճշմարիտ ապաշխարութեամբ: Ան աւելի մտահոգուած էր, թէ մարդիկ ինչ կարծիք ունէին իրեն մասին: Երբ Սամուէլը ուզեց լքել գինք, Սաւուղը բռնեց անոր պատմուճանէն: Պատմուճանին ծայրը պատռուեցաւ: Սամուէլը ըսաւ Սաւուղին. «Տէրը այսօր քու վրայէն Իսրայէլի թագաւորութիւնը պատռեց» (Ա. Թագ. 15.28):

Ասիկա այն չէր, ինչ որ Սամուէլը կը ցանկար Սաւուղի համար: Ան վշտացած էր Սաւուղի համար: Ան Սաւուղը թագաւոր օծած էր, սորվեցուցած էր կառավարել եւ գինք կ'առաջնորդէր գահին: Սամուէլը Սաւուղի ընկերն էր: Բայց լսէ՛, թէ Աստուած ինչպէս կ'արծագանգէր Սաւուղի համար Սամուէլի վիշտին. «Մինչեւ ե՞րբ Սաւուղի համար սուգ պիտի ընես, որովհետեւ *Ես գինք մերժեցի*, որ Իսրայէլի վրայ չթագաւորէ. *եղջիւրդ իւղով լեցո՛ւր*, եւ եկո՛ւր քեզ ուղարկեմ...» (Ա. Թագ. 16.1): Աստուած կ'ըսէր, որ նախքան թարմ իւղով կամ օծութեամբ շարժիլ շարունակելը Սամուէլը պէտք է հասկնար, որ Աստուծոյ սէրն ու դատաստանը կատարեալ են: Եթէ Սամուէլը ետ երթար Սաւուղի քով այն բանէն յետոյ, երբ Աստուած մերժած էր գինք, թարմ իւղ չէր ունենար: Եթէ Սամուէլը շարունակէր սգալ, ան տեղ մըն ալ չէր երթար:

Այն հովիւները, որոնք կը վշտանան եւ կը սգան այն մարդոց համար, որոնք լքած են եկեղեցին, կամ այն հովիւները, որոնք կը մերժեն հակադրել անդամները, քանի որ անոնք ընկերներ են, անոնց կեանքին մէջ օծութեան իւղը կը չորնայ: Որոշ ծառայութիւններ կը մահանան, կան ծառայութիւններ ալ, որոնք կը ձեւացնեն, թէ կենդանի են: Զգիտնալով, անգիտակցաբար անոնք մարդոց հետ փոխյարաբերութիւնը վեր դասած են Աստուծոյ հետ ունեցած իրենց փոխյարաբերութենէն:

Աստուածաշունչը չ'ըսէր, որ Յիսուսը կ'արծագանգէր ոեւէ մէկուն, որ կը հեռանար Անորմէ:

Անոր միակ ցանկութիւնը Հօր կամքը կատարելն էր: Եթէ Յիսուսը երթար ամէն մէկուն ետեւէն, պիտի ունենար մեծաքանակ հետեւողներ:

Ես երբեք չեմ մոռնար այն ժամանակը, երբ կը քարոզէի Հոգիով լեցուած եկեղեցւոյ մը մէջ: Մօտաւորապէս մէկ տարի մենք կը պատրաստուէինք ասոր: Առաջին կիրակնօրեայ ծառայութեան ժամանակ ես քարոզեցի ապաշխարութեան եւ առաջին սիրոյն վերադառնալու պարզ ուղերձ մը: Ես դիմադրութիւն կը զգայի, բայց գիտէի, որ ասիկա այն ուղերձն էր, որ պէտք էր տայի:

Ծառայութենէն յետոյ հովիւը ըսաւ. «Աստուած ինձի ցոյց տուած էր, թէ ինչ պէտք է քարոզէիր այս առաւօտ, բայց ես չեմ կարծեր, որ իմ ժողովուրդը պատրաստ է աստոր համար»:

Իմ կինը Սուրբ Հոգիէն դրդուած հարցուց անոր. «Ո՞վ է եկեղեցւոյ հովիւը՝ դո՞ւն, թէ՞ Յիսուսը»:

Հովիւը գլուխը կախեց. «Ասիկա ճիշդ այն է, ինչին մասին Տէրը ըսաւ ինձի մէկ ամիս առաջ: Ան ըսաւ ինձի, որ Ինքը գիտէ, թէ այս ժողովուրդին հետ ինչպէս վարուի»: Հովիւը ըսաւ մեզի, որ իրեն եկեղեցւոյ մէկ երրորդը «հին նաւերու» հոգեբանութեամբ մարդիկ էին, որոնք ոչ մէկ փոփոխութիւն կ'ուզէին ո՛չ ծառայութեան, ո՛չ փառաբանութեան, ո՛չ ալ քարոզի մէջ: Մենք քաջալերեցինք զինք ուժեղ ըլլալ եւ հնազանդիլ Տիրոջը:

Այդ եկեղեցւոյ մէջ մենք ունեցանք եւս չորս ծառայութիւն, եւ աստոնք բոլորն ալ ծանր կ'ընթանային: Երբ մենք կը հեռանայինք այդ քաղաքէն, ինձի կը թուար, թէ իմ ներսը աւազի տոպրակ կայ: Երթալով ծանրութեան զգացողութիւնը աւելի կը մեծնար եւ աւելի տհաճ կը դառնար: Սովորաբար, երբ ես կը հեռանամ որեւէ եկեղեցիէ, իմ սիրտը ուրախութեամբ կը լեցուի: Ես չէի գիտեր, թէ ինչն էր սխալը:

Երբ ես վերջապէս մինակ մնացի Տիրոջ հետ, հարցուցի Զինք. «Հա՛յր, ի՞նչ սխալ ըրեր եմ: Ինչո՞ւ հոգիս ծանրացած է: Չըլլա՞յ թէ չարաշահած եմ ինձի տրուած իշխանութիւնը այդ հովիւին հաշտւոյն»:

Տէրը պարզ ըսաւ. «Փռչին թա՛փ տուր քու ոտքերէն» (տե՛ս Դուկ. 9.5):

Ես ցնցուեցայ: Երբ շարունակեցի աղօթել եւ նորէն հարցնել Անոր, լսեցի նոյն խօսքերը. «Փռչին թա՛փ տուր քու ոտքերէն»:

Վերջապէս ես հնազանդեցայ: Եվ երբ այդ բանը ըրի, ծանրութիւնը հեռացաւ, եւ ուրախութիւն եկաւ իմ սրտի մէջ: Չարմացած ես նորէն հարցուցի Անոր. «Տէ՛ր, անոնք չյարծակեցան իմ վրայ եւ չվննտեցին քաղաքէն: Ինչո՞ւ փոշին թափ տալ»:

Տէրը ցոյց տուաւ ինձի, որ աւագներն ու մարդոցմէ շատերը մերժած են իրենց տրուած Աստուծոյ խօսքը: «Տէ՛ր, անոնց աւելի շատ ժամանակ տուր», - խնդրեցի ես: «Եթէ Ես անոնց տամ եւս յիսուն տարի, անոնք չեն փոխուիր: Անոնք կարծրացուցած են իրենց սրտերը», - պատասխանեց Աստուած:

Ես իմացայ, որ այդ հովիւը Աստուծոյ հնազանդելու փոխարէն ընտրած էր փոխզիջման միջոցով խաղաղութիւնը պահպանելը: Անոր եղջիւրը լեցուած չէր թարմ իւղով:

Ան ունէր Հոգիով լեցուած ըլլալու արտաքին կերպարանք, մինչդեռ անոր մէջ պակաս էր Աստուծոյ զօրութիւնը կամ ներկայութիւնը: Յետոյ ես լսեցի, որ ան հրաժարած էր եկեղեցին հովուելէ, եւ որ եկեղեցին, ինչպէս նախկինին, մասնատուած էր:

Յիսուսին չէին վերահսկեր ուրիշները: Ան կը խօսէր ճշմարտութիւնը, եթէ նոյնիսկ աստիկա հակամարտութիւն եւ վիրաւորանք նշանակէր: Եթէ դուն կը ցանկաս արժանանալ մարդոց հաւանութեան, Աստուծոյ օժութիւնը չի կրնար թափիլ քու վրայ: Դուն պէտք է քու սրտին մէջ նպատակ դնես խօսիլ Աստուծոյ խօսքը եւ կատարել Անոր կամքը՝ երթալով նոյնիսկ ուրիշները վիրաւորելու ռիսքին:

### ***Յիսուսէն վիրաւորուեցան անոնք, որոնք Իր հայրենի քաղաքէն էին***

Յիսուսը եկաւ Իր հայրենի քաղաքը՝ ծառայելու: Բայց Ան չկրցաւ անոնց ազատութիւն եւ բժշկութիւն բերել, ինչ որ այնքան շատ ըրած էր միւս քաղաքներուն մէջ: Տե՛ս, թէ ինչ ըսին անոնք.

«Չէ՞ որ ասիկա հիւսնի որդին է, չէ՞ որ ասոր մայրը Մարիամ կը կոչուի եւ եղբայրները՝ Յակոբոս, Յովսէս, Սիմոն եւ Յուդա: Եւ չէ՞ որ ասոր բոլոր քոյրերը մեր քովն են, ապա ուրկէ՞ է ասոր այս անէն բաները: Եւ կը գայթակղէին Անոր վրայ: Յիսուսն ալ անոնց ըսաւ.



«Մարգարէ մը անարգուած չէ, բայց միայն իր գաւառին եւ իր տան մէջ»»:

– Մատթ. 13.55- 57

Կրնա՞ս լսել, թէ ինչպէս Նազարէթի այս տղամարդիկ եւ կանայք կ'ընէին. «Ի՞նչ կարծիք ունի Ան Իր մասին, որ մեզ իշխանութեամբ կը սորվեցնէ: Մենք գիտենք, թէ Ով է Ան: Ան հոս մեծցած է: Մենք Անոր մեծերն ենք: Ան պարզապէս հիւսնի որդի է: Ան ոչ մէկ պաշտօնական ուսուցում ունեցած է»:

Կրկին Յիսուսը ետ չկանգնեցաւ ճշմարտութենէն, որպէսզի գանոնք հեռու պահէր վիրաւորուելէն: Մարդիկ այնքան բարկացած էին, որ կը փորձէին ժայռէն նետելով սպաննել Ջինք (Ղուկ. 4.28-30): Նոյնիսկ այն ժամանակ, երբ Յիսուսին կէանքը վտանգի մէջ էր, Ան կը շարունակէր խօսիլ ճշմարտութիւնը: Այսօր որքա՞ն մեծ է այդպիսի մարդոց կարիքը:

### ***Յիսուսէն վիրաւորուեցան Իր ընտանիքի անդամները***

Նոյնիսկ անոնք, որոնք Իր տունէն էին, վիրաւորուեցան Անորմէ: Անոնց համար հաճելի չէր այն ճնշումը, որ Յիսուսի պատճառով կ'ըլլար իրենց վրայ: Եկո՛ւր նայինք:

«Եւ Անոր ընտանիքը լսելով դուրս ելան Ջինք բռնելու, որովհետեւ կ'ընէին, թէ «Խելած է»... Եւ յետոյ Անոր եղբայրները եւ մայրը եկան եւ դուրսը կանգնած՝ Անոր քով ուղարկեցին, կանչեցին Ջինք: Եւ ժողովուրդը Անոր չորս կողմը նստած էր եւ ըսին Անոր. «Ահա մայրդ եւ եղբայրներդ դուրսը Քեզ կ'ուզեն»: Եւ Ան պատասխանեց անոնց եւ ըսաւ. «Ո՞վ է Իմ մայրը կամ Իմ եղբայրները»: Եւ Իր չորս կողմը նստողներուն նայեցաւ եւ ըսաւ. «Ահա Իմ մայրը եւ Իմ եղբայրները: Որովհետեւ ով որ կատարէ Աստուծոյ կամքը, անիկա է Իմ եղբայրը, եւ քոյրը, եւ մայրը»»:

– Մարկ. 3.21,31- 35

Յիսուսի ընտանիքը կը մտածէր, թէ Ան խելած է: Ուշադրութի՛ւն դարձուր, Սուրբ գիրքը կ'ըսէ, որ Յիսուսի ընտանիքը դուրս ելած էր Ջինք տուն վերադարձնելու: Մարկոսը կը հաստատէ, որ

այդ ազգականները Յիսուսի մայրն ու եղբայրներն էին, որոնք յետոյ Ջինք կը գտնեն ինչ որ մէկու մը տունը քարոզելու ժամանակ: Նոյնիսկ Յովհաննէսի Աւետարանը կ'ըսէ. «Որովհետեւ Իր եղբայրներն ալ չէին հաւատար Անոր» (Յովհ. 7.5):

Շատերը չեն հասկցած, որ Յիսուսը մերժուեցաւ նոյնիսկ անոնց կողմէն, որոնք մտերիմ էին Անոր: Բայց Ան չէր փնտրեր Իր տնեցիներու ընդունելութիւնը: Յիսուսին չէին վերահսկեր անոնց ցանկութիւնները: Ան պիտի կատարէր Հօր ծրագիրը անկախ այն բանէն՝ անոնք պիտի հաւնէին, թէ ոչ:

Ես շատեր տեսած եմ, մասնաւորապէս ամուսնացած զոյգեր, որոնք չեն հետեւած Յիսուսին իրենց կողակիցներէն կամ ընտանիքի անդամներէն վիրաւորուած ըլլալու վախէն: Եւ որպէս հետեւանք՝ անոնք ետ կ'երթան կամ ալ երբեք չեն հասնիր իրենց կոչման ամբողջական ներուժին:

Մեր տանը ես առաջինն էի, որ վերստին ծնայ: Ընտանիքիս մնացած անդամները կաթողիկէներ էին, եւ ես չէի բաժնեկցեր անոնց հետ իմ նոր գտած հաւատքի համար ունեցած ուրախութեամբ: Յատկապէս մօրս համար հաճելի չէր կաթողիկէ եկեղեցին ձգելու իմ որոշումը, քանի որ ան զիս տարած էր այդ եկեղեցին: Անշուշտ, կան կաթողիկէներ, որոնք կը սիրեն զԱստուած, բայց ես գիտէի, որ Աստուած էր զիս դուրս կանչած:

Ծնողներուս համար երկրորդ հարուածը այն էր, երբ տեղեկացուցի ծառայութեան մէջ մտնելու իմ որոշումի մասին: Ես հազիւ նոր աւարտած էի Փուրտեու համալսարանը եւ ստացած էի մեքենական չափագիտութեան աստիճանը: Ծնողներս մեծ յոյսեր ունէին ինձի համար: Ես գիտէի, թէ Տէրը ինչ կը ցանկար ինձի համար, նաեւ գիտէի, որ ատիկա պիտի վիրաւորէր իմ հարազատները: Տարիներ շարունակ մեր ընտանիքի մէջ լարուած իրավիճակ էր: Շատ հարցերու մէջ իրար չէինք հասկնար: Բայց ես որոշած էի, որ կարեւորութիւն պիտի չտայի, թէ որքան պիտի բարկանան անոնք, միեւնոյնն է, ես պէտք է հետեւիմ Յիսուսին:

Սկիզբը կը փորձէի Աւետարանով յաղթել անոնց: Ես անոնց կ'ըսէի, որ եկեղեցական պատարագներուն յաճախելով չեն փրկուիր:

Այդպես ընելով՝ ես զանոնք կը կեցնէի փակուղիի մը առջեւ, որ իմաստուն քայլ մը չէր իմ կողմէն: Յետոյ Աստուած սորվեցուց ինձի, որ անոնց առջեւ ապրիմ քրիստոնէական կեանքով եւ թոյլ տամ տեսնել իմ բարի գործերը: Եւ անկէ յետոյ ալ շարունակեցի փոխզիջման չերթալ զանոնք հաճեցնելու համար:

Այսօր իմ ծնողները շատ կ'աջակցին ինձի, իսկ իմ պապիկը, որ ամենաշատը կը պայքարէր իմ դէմ, ութսունինը տարեկանին փառաւոր ծելով փրկուեցաւ մահանալէն երկու տարի առաջ:

Յիսուսի մայրն ու եղբայրները կը մտածէին, որ Ան խելաւած է: Բայց Հօր նկատմամբ Յիսուսի հնազանդութեան պատճառով անոնք բոլորն ալ ի վերջոյ փրկուեցան եւ Պենտեկոստէի օրը վերնատունն էին: Անոր եղբայր Յակոբոսը դարձաւ Երուսաղէմի եկեղեցւոյ առաջնորդ առաքեալը:

Եթէ մենք զիջինք այն, ինչ որ Աստուած կ'ըսէ մեզի, որպէսզի հաճեցնենք մեր ընտանիքի անդամները, մեր կեանքերէն կը կորսնցնենք թարմ իւղը եւ կը խոչընդոտենք անոնց ազատ ըլլալուն:

### ***Յիսուսի աշակերտները վիրաւորուեցան Անորմէ***

Նախորդ գլուխներէն մէկուն մէջ մանրամասն քննարկեցինք աշակերտներուն տեսակէտը, երբ անոնք վիրաւորուեցան Յիսուսէն: Եկո՛ւր նորէն անդրադառնանք ատոր եւ դիտարկենք այն Յիսուսի տեսակէտէն:

«Եւ Անոր աշակերտներէն շատերը որ լսեցին, ըսին.  
«Նիստ է այդ բանը, ո՞վ կրնայ լսել ատոր»: Բայց երբ որ Յիսուսը գիտցաւ իր անձին մէջ, թէ իր աշակերտները կը տրտնջային ատոր համար, անոնց ըսաւ. «Ատիկա կը գայթակղեցնէ՞ ձեզ»: Ատորմէ յետոյ Անոր աշակերտներէն շատերը ետ գացին եւ այլեւս չէին պտղտեր Անոր հետ»:

– Յովի. 6.61- 62,67

Ամէն ինչ արդէն բաւականին դժուար կ'ընթանար: Կրօնական առաջնորդները կը ծրագրէին Անոր մահը: Յիսուսի հայրենի քաղաքը մերժեց Ձիւնք: Անոր ընտանիքի անդամները կը մտածէին, թէ Ան խելաւած է: Անոր խումբէն շատերը վիրաւորուած հեռացան:

Բայց Յիսուսը կը շարունակէր փոխզիջման չերթալ: Այն մնացած հետետորդներուն Յիսուսը ուղղակի ըսաւ, որ անոնք նոյնպէս ազատ են երթալու համար, եթէ կը ցանկան:

Միակ բանը, որ նշանակութիւն ունէր Յիսուսի համար, Հօր ծրագիրը իրականացնելն էր: Եթէ այդ օրը բոլորը լքէին Ձինք, ու Ան մինակ կեցած մնար, նոյնիսկ ատիկա պիտի չփոխէր Յիսուսի սիրտը: Ան վճռած էր հնազանդիլ Իր Հօրը:

***Յիսուսն վիրաւորուած էին Անոր ամենամտերիմ ընկերներն քանի մը հոգի***

«Եւ հիւանդ մը կար, անունը Ղազարոս՝ Բեթանիայէն, Մարիամին եւ անոր քոյր Մարթային գիւղէն: Մարիամն ալ անիկա էր, որ Տիրոջը իւղով օծեց եւ Անոր ոտքերը իր մազերով սրբեց, որուն եղբայրը՝ Ղազարոսը, հիւանդ էր: Եւ անոր քոյրերը մարդ ուղարկեցին Անոր քով եւ ըսին. «Տէ՛ր, ահա ան, որ Դուն կը սիրես, հիւանդ է»:

– Յովհ. 11.1-3

Յիսուսը կը սիրէր Մարթան, Մարիամն ու Ղազարոսը: Անոնք մտերիմ ընկերներ էին: Յիսուսը ժամանակ անցուցած էր անոնց հետ: Ուշադրութիւն դարձուր Յիսուսի արծազանգին, երբ լուրը հասաւ, թէ Ղազարոսը հիւանդ է.

«Եւ երբ որ լսեց, թէ հիւանդ է, այն ժամանակ երկու օր մնաց հոն, ուր որ էր»:

– Յովհ. 11.6

Յիսուսը գիտէր, որ Ղազարոսի հիւանդութիւնը պիտի յանգեցնէր մահուան: Ատիկա շատ լուրջ հարց էր: Բայց Յիսուսը երկու օր մնաց հոն, ուր որ էր: Երբ Ան վերջապէս եկաւ. Բեթանիա, Ղազարոսը արդէն մահացած էր:

Մարթան եւ Մարիամը ըսին Անոր. «Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, իմ եղբայրը չէր մեռներ» (Յովհ. 11.21,32): Ուրիշ ձեւով ըսելու համար. «Ինչո՞ւ դուն անմիջապէս չեկար. Դուն կրնայիր փրկել զինք»:

Հաւանաբար երկու քոյրերն ալ քիչ մը վիրաւորուած էին: Անոնք մարդ ուղարկած էին Յիսուսի քով, իսկ Ան երկու օր յետաձգեց:

Յիսուսը չարծագանգեց այնպէս, ինչպէս անոնք կ'ակնկալէին: Ան չձգեց ամէն ինչ, այլ հետեւեցաւ Սուրբ Հոգիի առաջնորդութեան: Ասիկա լաւագոյնն էր բոլորի համար: Այնուամենայնիւ, այդ ժամանակ այնպէս կը թուար, թէ Յիսուսը անտարբեր էր:

Շատ յաճախ ծառայողներուն կը վերահսկեն եկեղեցւոյ անդամները: Անոնք կը կարծեն, որ պէտք է ընեն այն ամէնը, ինչ որ ժողովուրդը կը խնդրէ իրենցմէ:

Հոգիով լեցուած եկեղեցւոյ խորհուրդի անդամ մը, որ կորսնցուցած էր իր հովիւը, անգամ մը ըսաւ ինծի. «Մենք հովիւ մը կ'ուզենք, որ կը բաւարարէ մեր կարիքները, մէկը, որ ուղղակի կարենայ առաւօտեան ժամը ութին տունս գալ եւ սուրճ խմել ինծի հետ»: Ես մտածեցի. «*Դուն պիտի գտնես ընկերական աշխատակից, որուն պիտի կարենաս վերահսկել, ոչ թէ անձ մը, որ կ'առաջնորդուի Սուրբ Հոգիով*»: Յետոյ ես տեղեկացայ, որ այս եկեղեցին մէկուկէս տարուան մէջ փոխած է չորս հովիւ:

Երբ ես երիտասարդներու հովիւ էի, իմ հովուութենէն վեց ամիս յետոյ երիտասարդ մը եկաւ քովս: «Դուն պիտի ըլլա՞ս իմ ընկերը,- հարցուց ան,- երիտասարդներու ծառայութեան նախկին հովիւը իմ ընկերն էր»:

Այդ հովիւը երիտասարդներու հետ շատ ընկերական յարաբերութիւններու մէջ եղած էր: Անոնց համար կարելորդ միջոցառումներն էին: Ես գիտէի, թէ ինչ կը խնդրէր երիտասարդը: Ատիկա այն էր, ինչ որ այն խորհուրդի անդամը կ'ուզէր իր հովիւէն:

Ես անոր մէջբերեցի Մատթէոսի 10.41-ը, ուր Յիսուսը կ'ըսէր. «Ով որ մարգարէ կ'ընդունի մարգարէի անունով, ան մարգարէի վարձք կ'առնէ, եւ ով որ արդար կ'ընդունի արդարի անունով, արդարի վարձք կ'առնէ»:

Ես անոր հարցուցի.

–Դուն շատ ընկերներ ունիս, այնպէս չէ՞:

–Այո՛,- պատասխանեց ան:

–Բայց դուն միայն մէկ երիտասարդներու հովիւ ունիս, այնպէս չէ՞:

–Այո՛:

–Ղու կը ցանկաս երիտասարդներու հովիւի՞ վարձք, թէ՞ ընկերոջ մը, որովհետեւ այն, որուն միջոցով կ'ընդունիս զիս, կ'որոշէ այն, ինչ որ պիտի ստանաս Աստուծմէ:

Ան հասկցաւ ինձ:

Շատ ծառայողներ կը վախնան, որ եթէ անոնք չիրականացնեն իրենց ժողովուրդի սպասումները, ատորմով պիտի վիրաւորեն անոնց զգացումները եւ պիտի կորսնցնեն անոնց աջակցութիւնը: Անոնք ինկած են ուրիշները վիրաւորելու վախի ծուղակին մէջ: Անոնց կը վերահսկեն իրենց հարազատ մարդիկ եւ ոչ թէ Աստուած: Որպէս հետեւանք՝ անոնց եկեղեցիներուն մէջ կամ համայնքներուն մէջ կ'իրագործուի յաւիտենական արժէքի փոքր մաս մը:

### ***Յիսուսէն վիրաւորուեցաւ Յովհաննէս Մկրտիչը***

Նոյնիսկ Յովհաննէս Մկրտիչը ունեցաւ Յիսուսէն վիրաւորուելու փորձութիւն:

«Եւ Յովհաննէսին պատմեցին Իր աշակերտները այս բոլոր բաներուն համար: Եւ Յովհաննէսը Իր աշակերտներէն երկուքը կանչեց իրեն քով, ուղարկեց Յիսուսի քով եւ ըսաւ. «Ղո՞ւն ես այն, որ պիտի գայ, թէ ուրիշին սպասենք»: Այն մարդիկն ալ, Անոր քով գալով, ըսին. «Յովհաննէս Մկրտիչը մեզ ուղարկած է Քու քովդ եւ կ'ըսէ՝ Ղո՞ւն ես այն, որ պիտի գայ, թէ՞ ուրիշին սպասենք»:

– Ղուկ. 7.18- 20

Վայրկեան մը սպասեցէ՛ք: Ինչո՞ւ Յովհաննէս Մկրտիչը հարցուց Յիսուսին, թէ արդեօ՞ք Ան է այն Մէկը, որ պիտի գայ՝ Մեսիան: Յովհաննէսը անիկա էր, որ պատրաստեց Անոր ճանապարհը եւ յայտարարեց Յիսուսի ժամանումը. «Ահա Աստուծոյ Գառնուկը, որ կը վերցնէ աշխարհի մեղքը» (Յովհ.1.29): Յովհաննէսը այն միակն էր, որ ըսաւ. «Անիկա է Սուրբ Հոգիով մկրտողը» (Յովհ. 1.33): Ան նոյնիսկ ըսաւ. «Անոր պէտք է աճիլ (աւելնալ), եւ ինձի՝ փոքրանալ» (Յովհ. 3.30): Յովհաննէս Մկրտիչը միակ անձն էր, որ իրապէս գիտէր, թէ այդ ժամանակ ով էր Յիսուսը (ասիկա դեռ յայտնուծ չէր Սիմոն-Պետրոսին):

Ինչո՞ւ ան կը հարցնէ. «Արդեօ՞ք Յիսուսն է Մեսիան, թէ ուրիշ մէկու մը սպասենք»:

Փորձէ՛ք գնել Յովհաննէսի տեղը: Դուս այն մարդն ես, որ գործիք է (սուր, կտրող գործիք) այն բանին մէջ, ինչ որ Աստուած կ'ընէ: Հաւանաբար մարդիկ քեզմէ ծառայութիւն կ'ընդունին: Դուս ունիս երկրի մէջ ամենաշատ համբաւ ունեցող տարածուած ծառայութիւնը: Դուս կ'ապրիս անձնուրաց կեանքով, նոյնիսկ ամուսնացած չես, որպէսզի առաւելագոյն ձեռով օգտագործես քու կոչման ամբողջ ներուժը: Դուս ապրած ես անապատին մէջ՝ ուտելով մորեխներ ու վայրի մեղր, եւ յաճախ ծոմ պահած ես: Դուս պայքարած ես փարիսեցիներու դէմ եւ մեղադրուած ես, որ քու մէջդ դէ ունիս: Ամբողջ կեանքդ դուս կ'անցընես այս եկող Մեսիայի ճանապարհը պատրաստելով:

Հիմա ալ բանտի մէջ ես: Շատ քիչ մարդիկ կու գան քեզ այցելելու, որովհետեւ հիմա քու նախապատրաստած ժողովուրդին ուշադրութիւնը ուղղուած է Յիսուս Նազովրեցիին կողմը: Նոյնիսկ քու աշակերտներն ալ միացած են այս Մարդուն: Միայն քանի մը հոգի մնացած են քեզի ծառայելու: Երբ անոնք կու գան քեզ տեսնելու, կը պատմեն, թէ ինչպէս այս Մարդն ու Անոր աշակերտները կ'ապրին քու կեանքէն շատ տարբեր կեանքով մը: Անոնք կ'ուտեն ու կը խմեն մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ: Անոնք կը խախտեն Շաբաթը եւ նոյնիսկ ծոմ չեն պահեր:

Դուս քեզի կ'ըսես. «Ես տեսայ, թէ ինչպէս Հոգին աղանիի տեսքով իջաւ Անոր վրայ, բայց արդեօ՞ք ասիկա է Մեսիայի վարքագիծը»:

Վիրաւորուած ըլլալու փորձութիւնը աւելի կը մեծնայ, քանի որ դուս բանտին մէջ ես: «Այս Մարդը, որուն համար իմ կեանքը անցուցած եմ Անոր ճանապարհը պատրաստելու համար, նոյնիսկ չէ եկած ու չէ այցելած զիս բանտին մէջ: Եթէ Ան Մեսիան է, ապա ինչո՞ւ զիս դուրս չի հաներ այս բանտէն: Չէ՞ որ ոչ մէկ սխալ բան ըրած եմ»:

Այսպիսով՝ դուս կ'ուղարկես քու հաւատարիմ աշակերտներէն երկուքը՝ Յիսուսին հարցնելու. «Դո՞ւն ես այն Մէկը, որ պիտի գայ, թէ՞ ուրիշին սպասենք»:

Եկո՛ւր նայինք Յիսուսի արծազանգին.

«Եւ այն ժամուն շատեր բժշկեց հիւանդութիւններէն եւ հարուածներէն եւ չար հոգիներէն... եւ շատ կոյրերուն տեսնել շնորհեց: Եւ Յիսուսը պատասխանեց եւ ըսաւ. «Գացէ՛ք Յովհաննէսին պատմեցէ՛ք, ինչ որ տեսաք եւ լսեցիք, որ կոյրերը կը տեսնեն, կաղերը կ'երթան, բորոտները կը սրբուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն, աղքատներուն Աւետարան կը քարոզուի: Եւ երանելի է ան, որ Ինձմէ չի գայթակղիր» (անգլերէնին մէջ՝ երանելի է ան, որ Իմ պատճառով չի վիրաւորուիր):»

– Ղուկ.7.21- 23

Յիսուսի պատասխանը մարգարէական էր: Ան մէջբերում կատարեց Եսայիա մարգարէի գիրքէն, գիրք մը, որ շատ ծանօթ էր Յովհաննէսին: Եսայիա 29.18-էն, 35.4-6 եւ 61.1-էն եղած մէջբերումները ցոյց կու տան, որ չնայած Յովհաննէսի աշակերտները արդէն պարզած էին ամէն ինչ, այնուամենայնիւ անոնք կը սպասէին հարցնել Յիսուսին: Այդ մէջբերումները կը վկայէին, որ Անիկա էր Մեսիան: Յիսուսը ատով չաւարտեց: Ան աւելցուց. «Եւ երանելի է ան, որ չի վիրաւորուիր Իմ պատճառով»:

Յիսուսը կ'ուզէր ըսել. «Յովհաննէ՛ս, Ես գիտեմ, որ դուն չես հասկնար այն ամէնը, ինչ որ տեղի կ'ունենայ քեզի հետ, եւ չես հասկնար Իմ ճանապարհներէն շատերը, բայց մի՛ վիրաւորուիր Ինձմէ այն բանին համար, որ Ես չեմ գործեր այնպէս, ինչպէս դուն կը սպասէիր»: Յիսուսը կը համոզէր Յովհաննէսը, որ ան իր կեանքի եւ ծառայութեան մէջ կատարուածի վերաբերեալ ուրիշներու հասկացողութեամբ զԱստուած չդատէ: Յովհաննէսը ամէն ինչ չէր գիտեր Աստուծոյ ամբողջական ծրագրի մասին այնպէս, ինչպէս որ մենք այսօր չենք գիտեր Աստուծոյ ամբողջական ծրագիրը: Յիսուսը կը քաջալերէր զինք՝ ըսելով. «Դուն ըրած ես այն, ինչ որ պատուէր եղած է քեզի համար: Քու վարձքը շատ մեծ պիտի ըլլայ: Պարգապէս Ինձմէ մի՛ վիրաւորուիր»:



## ՎԻՐԱԲՈՐԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԼՍԵԼՈՒ ՅՈՅՍԻ

Եթէ նոյնիսկ դուրս ալ Յովհաննէս Մկրտիչի պէս վարժուած ըլլալիք Աստուծոյ շատ ուղիներու մէջ, դուրս ալ առիթ պիտի ունենալիք Յիսուսէն վիրաւորուելու: Եթէ դուրս ճշմարտապէս կը սիրես եւ կը հաւատաս Անոր, պիտի պայքարիս, որպէսզի ազատ մնաս վիրաւորութենէն՝ հասկնալով, որ Անոր ճանապարհները աւելի բարձր են, քան քուկդ: Ինչպէս նաեւ, եթէ դուրս կը պատրաստուիս հնազանդիլ Աստուծոյ Հոգիին, մարդիկ պիտի վիրաւորուին քեզմէ: Յիսուսը Յովհաննէս 3.8-ին մէջ ըսաւ. «Քամին ուր կ'ուզէ՝ կը փչէ, եւ անոր ծայնը կը լսես. բայց չես գիտեր, թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ, այսպէս է ամէն Հոգիէն ծնածը»:

Ոմանք քեզի չեն հասկնար, երբ դուրս շարժիս Հոգիին հետ: Առիթ մի՛ տար, որ անոնց տհաճ արծազանգը քեզ ետ պահէ այն բանէն, որուն համար դուրս քու սրտին մէջ գիտես, որ ճիշդ է: Մի՛ կեցներ Հոգիին հոսքը մարդոց ցանկութիւններուն համար: Պետրոսը ասոր մասին կ'ըսէ.

«Արդ Քրիստոս, որ մարմինով մեզի համար չարչարուեցաւ, դուք ալ նոյն մտքով զինուորուեցէք, որ մարմինով չարչարուողը մեղքէն դադրեցաւ: Որ այլեւս ոչ թէ մարդոց ցանկութիւններուն պէս, այլ Աստուծոյ կամքի պէս ապրիք մարմինին մէջ մնացած ժամանակը»:

– Ա. Պետր. 4.1,2

Երբ դուրս կ'ապրիս Աստուծոյ կամքին համեմատ, չես իրագործեր մարդոց ցանկութիւնները, եւ, որպէս հետեւանք, դուրս կը չարչարուիս մարմինին մէջ: Յիսուսը չարչարուեցաւ կրօնական առաջնորդներու կողմէն: Կրօնաւոր մարդիկ կը հաւատան, որ Աստուած կը գործէ միայն իրենց չափանիշներու սահմաններու մէջ: Անոնք կը հաւատան, որ իրենք են միայն այն եզակի մարդիկ, որոնք զԱստուած ունին «իրենց մէջ»: Եթէ Տէրը երկու հազար տարի առաջ Սուրբ Հոգիով առաջնորդուելով վիրաւորեց կրօնաւոր մարդիկ, ապա Անոր հետեւորդներն ալ կը վիրաւորեն զանոնք:

Պօղոս առաքելի հալածանքը լաւ օրինակ մըն է: Գաղատիայի մէջ որոշ մարդիկ լսած էին, որ Պօղոսը զիջած է խաչի Աւետարանը՝ անցնելով կրօնական առաջնորդներու կողմը, որոնք կ'ըսէին, թէ թլփատութիւնը անհրաժեշտ է փրկութեան համար: Բայց Պօղոսը ուղղեց գանոնք: Ան կ'ըսէր. «Նայեցէ՛ք ինձի: Ես ամէն կողմէն կը հալածուիմ կրօնական առաջնորդներու կողմէն: Արդեօ՞ք անոնք այսպէս պիտի վարուէին ինձի հետ, եթէ ես թլփատութիւն քարոզէի: Այն փաստը, որ խաչը փրկութեան միակ ճանապարհն է, կը վիրաւորէ մարդիկ, բայց ասիկա է ճշմարտութիւնը, եւ չկայ ոչ մէկ ճանապարհ, որուն միջոցով կը պատրաստուիմ այլ բան քարոզել» (տե՛ս Գաղատ. 5.11):

Եթէ ռեւէ մէկը մարտահրաւէր կը նետէ Աւետարանի ճշմարտութեան, ապա ժամանակն է վիրաւորուիլ՝ առանց ներողութիւն լսելու յոյսի: Մենք պէտք է մեր սրտին մէջ վճռենք, որ պիտի հնազանդինք Աստուծոյ Հոգիին, եւ նշանակութիւն չունի, թէ ասիկա ինչ կ'արժէ. յետագային ճնշումի տակ ստիպուած չենք ըլլար ընտրութիւն ընել, քանի որ ասիկա արդէն եղած է:



ՅԻՍՈՒՍԸ ԿԸ ՎԻՐԱԲՈՐՈՒԷՐ  
ՈՐՈՇ ՄԱՐԴՈՑ՝ ՀՆԱԶԱՆԴԵԼՈՎ  
ԻՐ ՀՕՐԸ, ԲԱՅՑ ԱՆ ԵՐԲԵՔ  
ՎԻՐԱԲՈՐԱՆՔ ՉՊԱՏՃԱՌԵՑ, ՈՐ  
ԱՏՈՐ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՍՏԱՏԵՐ ԻՐ  
ԻՐԱԲՈՒՆՔՆԵՐԸ

«Ես վերջերս կարդացի Ձեր՝ «Սատանայի խայծը» գիրքը եւ ուղղակի կ'ուզեմ ըսել, որ այն ամբողջովին ազատագրեց զիս իմ կեանքի ոլորտի մը մէջ, որու համար կը մտածէի, թէ երբեք պիտի չազատագրուիմ: Ես ուղղակի կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Ձեզի՝ այս գիրքը գրելու համար, քանի որ այն փոխած է իմ կեանքը»:

– Բ. Ռ., ԹԵՆՆԵՍԻ

## ՅԱՆԿԱՐԾ ՉԳԱՅԹԱԿՂԵՑՆԵՆՔ

*«Այսուհետև այլևս իրար չդատենք, այլ ամելի այս  
դրէք ձեր մտքին մէջ, որ եղբօր գլորում կամ  
գայթակղութիւն չդնէք»:*

– Հռովմ. 14.13

**Մ**ենք հազիւ նոր ամարտեցինք քննարկումը այն մասին, թէ ինչպէս Յիսուսէն կը վիրաւորուէին շատերը երբ Ան կը ճանապարհորդէր ու կը ծառայէր: Կը թուար, թէ ուր որ Ան կ'երթար, մարդիկ կը վիրաւորուէին: Այս գլուխին մէջ ես կ'ուզեմ քննարկել ասոր հակառակ կողմը:

Յիսուսն ու իր աշակերտները հազիւ նոր վերադարձած էին Կափառնայում: Անոնք ամարտած էին ծառայողական շրջապատոյտը եւ ունեցած էին կարճ հանգիստ մը, որուն կարիքը ամելի շատ

էր: Եթէ կար որեւէ վայր, որ կրնար յենակէտ համարուիլ Յիսուսի ծառայութեան համար, ապա ատիկա Կափառնայում քաղաքն էր: Երբ անոնք հոն էին, Սիմոն-Պետրոսին մօտեցաւ պաշտօնեայ մը, որուն յանձնարարուած էր հաւաքել տաճարի հարկը: «Ձեր Վարդապետը երկդրամեանը (տաճարի հարկը) չի՞ վճարեր» (Մատթ. 17.23): Պետրոսը պատասխանեց՝ այո՛, եւ գնաց Յիսուսի հետ քննարկելու: Յիսուսը զգաց հարկահաւաքներու հարցումի իմաստը, այդ պատճառով ալ սկսաւ հարցուփորձ ընել Սիմոն-Պետրոսին. «Քեզի ինչպէ՞ս կ'երեւի, Սիմո՛ն, երկրի թագաւորները որմէ՞ կ'առնեն հարկը կամ տուրքը, իրենց որդիներէ՞ն, թէ՞ օտարներէն»: «Օտարներէն», - պատասխանեց Պետրոսը: «Ապա ուրեմն ազատ են որդիները», - ըսաւ Յիսուսը» (Մատթ. 17.24,26):

Յիսուսը ընդգծեց, որ «որդիները ազատ են»: Անոնք այն մարդիկ չեն, որոնք հարկերը կը վճարեն, այլ մարդիկ, որոնք կը ստանան հարկի օգուտները: Որդիները կ'ապրին պալատի մէջ, որ կը պահուի հարկերով: Որդիները կ'ուտեն թագաւորի սեղանէն եւ կը կրեն թագաւորական հագուստներ, որոնք կ'ապահովեն հարկերը: Անոնք ծրի կ'ապրին եւ ծրի կ'ապահովուին:

Պաշտօնեան կ'ընդունէր տաճարին հարկը: Բայց ո՞վ էր տաճարին թագաւորը կամ տէրը: Որո՞ւն պատուին այն կը կառուցուէր: Պատասխանը մէկ է՝ Հայր Աստուծոյ: Պետրոսը հազիւ նոր Աստուծմէ յայտնութիւն ստացած էր, որ Յիսուսը «Քրիստոսն էր՝ կենդանի Աստուծոյ Որդին»:

Ատոր հիման վրայ ալ Յիսուսը Պետրոսին կ'ըսէ. «Եթէ Ես Անոր Որդին եմ, Ո՞վ է տաճարի Տէրը, արդեօք Ես ազատ չե՞մ տաճարին հարկ վճարելու մէջ»: Անշուշտ, Ան ազատած էր հարկերէն: Հարկը չվճարելու հարցին մէջ Ան բոլորովին արդարացի էր: Սինչդեռ տես, թէ Ան ինչ կ'ըսէ Սիմոն-Պետրոսին.

«Բայց, որպէսզի գանոնք չգայթակղեցնենք (անգլերէնին մէջ՝ գանոնք չփրաւորենք), գնա՛ ծովը եւ կարթը նետէ եւ առաջին դուրս ելլող ձուկը առ, բերանը բաց, եւ սատեր մը պիտի գտնես. այն առ, տուր անոնց Իմ եւ քու տեղը»:

– Մատթ. 17.26

Յիսուսը հազիւ նոր ապացուցած էր Իր ազատութիւնը, բայց որպէսզի չգայթակղեցնէ, Պետրոսին ըսաւ. «Եկ՛ուր վճարենք հարկը»: Ասիկա ալ Յիսուսի ազատութեան մէկ այլ հաստատումն էր, երբ Պետրոսին պատուիրեց երթալ ձկնորսութեան եւ վերցնել առաջին դուրս ելած ձուկը, որուն բերանին մէջ ան դրամ պիտի գտնէր: Հայր Աստուած նոյնիսկ հարկի դրամը ապահովեց:

Յիսուսը երկրի Տէրն է: Ան Աստուծոյ Որդին է: Երկիրը եւ այն ամէնը, որ կայ անոր մէջ, ստեղծուած են Անոր կողմէն ու կ'ենթարկուին Անոր: Հետեւաբար Ան գիտէր, որ դրամը այդ ձուկին բերանի մէջ պիտի ըլլայ: Ան ստիպուած չէր աշխատիլ այդ դրամին համար. Ան Որդին էր: Այնուամենայնիւ, Ան նախընտրեց վճարել հարկը եւ չգայթակղեցնել:

Արդեօ՞ք ասիկա այն նոյն Յիսուսն է, Որ նախորդ գլուխին մէջ «կը վիրաւորէր» մարդիկ եւ ներողութիւն ալ չէր խնդրեր: Ան ապացուցեց, որ Ինքը ազատած է տաճարի հարկէն, բայց ըսաւ. «Զըլլայ թէ գայթակղեցնենք զանոնք, զնա՛ եւ վճարէ՛ հարկը»:

Կը թուայ, թէ ինչ որ անհամատեղելիութիւն կայ, այնպէս չէ՞: Պատասխանը յաջորդ խօսքերուն մէջ է: «Այն ժամուն աշակերտները Յիսուսի քով եկան եւ ըսին. «Ո՞վ մեծ է Երկնքի Արքայութեան մէջ»: Եւ Յիսուսը, Իր քով երեխայ մը կանչելով, զինք կանգնեցուց անոնց մէջտեղը եւ ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեն ձեզի, եթէ դարձի չի գաք եւ չըլլաք երեխաներու պէս, չէք մտներ Երկնքի Արքայութիւնը: Արդ, ով որ իր անձը այս երեխային պէս խոնարհեցնէ, ան մեծ է Երկնքի Արքայութեան մէջ»» (Մատթ. 18.1-4):

Հոս բանալի արտայայտութիւնը ասիկա է. «Ով որ իր անձը խոնարհեցնէ»: Յետոյ Յիսուսը կը մանրամասնէ՝ ըսելով. «Զեզմէ՛ ով որ կամենայ մեծ ըլլալ, թող ձեզի ծառայ ըլլայ... Ինչպէս Մարդու Որդին չեկաւ, որ Իրեն ծառայեն, այլ որ Ինքը ծառայէ եւ շատերուն փոխարէն Իր անձը փրկանք տայ» (Մատթ. 20.26-28):

Ա՛յ քեզի բան: Ինչպիսի՛ յայտարարութիւն: Յիսուսը չեկաւ, որ Իրեն ծառայեն, այլ որ Ինքը ծառայէ: Ան Որդին էր: Ան ազատ էր: Ան մէկու մըն ալ պարտական չէր: Ան չենթարկուեցաւ մարդու մը: Մինչդէռ Ան ընտրեց օգտագործել Իր ազատութիւնը ծառայելու համար:

## ԱԶԱՏԱԳՐՈՒԿԾ՝ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նոր կտակարանին մէջ, որպէս Աստուծոյ որդիներ, մեզ կոչ կ'ուղղուի նմանիլ մեր Եղբօրը, ունենալ այն նոյն վերաբերմունքը, ինչ կը տեսնենք Յիսուսի մէջ:

*«Որովհետեւ դուք ազատութեան համար կանչուած էք, եղբայրներ՝ իմ այն թէ՛ ձեր ազատութիւնը պատճառ չտայ մարմինին. այլ սիրո՛ւ վ՛ ծառայեցէք իրար»:*

– Գաղատ. 5.13

«Ազատութիւն» բառի մէկ այլ տարբերակը «արտօնութիւն» բառն է: Որպէս կենդանի Աստուծոյ որդիներ՝ մենք պէտք չէ մեր ազատութիւնը կամ արտօնութիւնները օգտագործենք մենք մեզի ծառայելու համար: Ազատութիւնը կ'օգտագործուի ուրիշներուն ծառայելու համար: Ծառայելու մէջ ազատութիւն կայ, իսկ ստրկութեան մէջ՝ կապանքներ: Ստրուկը անիկա է, որ ստիպուած է ծառայել, մինչդեռ ծառան անիկա է, որ կ'ապրի ծառայելու համար: Եկո՛ւր տեսնենք քանի մը տարբերութիւններ, որոնք կան ստրուկի եւ ծառայի դիրքերուն միջեւ.

- *Ստրուկը* ստիպողաբար կ'ընէ, իսկ *ծառան*՝ ոչ:
- *Ստրուկը* կ'ընէ պահանջուածի նուազագոյնը, իսկ *ծառան*՝ առաւելագոյնը:
- *Ստրուկը* մէկ քայլ կ'ընէ, իսկ *ծառան*՝ ատելի շատ:
- *Ստրուկը* ինքզինքը կողոպտուած կը զգայ, իսկ *ծառան* առատածեռն է:
- *Ստրուկը* կապուած է, իսկ *ծառան*՝ ազատ:
- *Ստրուկը* կը պայքարի իր իրաւունքներու համար, իսկ *ծառան*՝ ոչ:

Ես տեսած եմ շատ քրիստոնեաներ, որոնք կը ծառայեն նեղացած կեցուածքով: Անոնք դժկամութեամբ կու տան եւ դժգոհութեամբ կը վճարեն իրենց հարկերը, կ'ապրին ինչպէս ստրուկներ՝ օրէնքի տակ, որմէ անոնք ազատած են: Անոնք իրենց սրտերուն մէջ ստրուկներ կը մնան:



Ամենատազնապեցնողը այն է, որ այդ «օրէնքը» բաղկացած է Նոր կտակարանի գրուածքներէն: Անոնք չունին այն «հոգին», որու միջոցով Յիսուսը տուաւ Իր պատուիրանները: Անոնք չեն պատկերացներ, որ ազատագրուած են ծառայելու համար: Ատոր համար ալ կը շարունակեն աւելի շատ պայքարիլ իրենց օգուտին համար, քան թէ ուրիշներուն:

Պօղոսը այս կեցուածքի դէմ պայքարելու համար հռովմայեցիներուն եւ կորնթացիներուն ուղղուած իր ուղերձներուն մէջ վառ օրինակ մը կու տայ: Ան այսպիսի հաւատացեալներու համար ազատութիւնը կը նմանցնէ ուտելիքի: Պօղոսը կոչ կ'ընէ. «Հաւատքի մէջ տկար եղողին ընդունեցէք առանց կարծիքներու վրայ վիճելու: Մէկը կը հաւատայ, թէ ամէն բան կրնայ ուտել, բայց տկարը կանաչեղէն կ'ուտէ» (Հռոմ. 14.1,2):

Յիսուսը պարզաբանած էր, որ այն, ինչ որ կը մտնէ բերանը, ատիկա չէ, որ կը պղծէ, այլ այն, ինչ որ դուրս կու գայ բերանէն: Երբ Ան ըրաւ այս յայտարարութիւնը, ատորմով բոլոր կերակուրները մաքուր դարձուց հաւատացեալին համար (տե՛ս Մարկ. 7.18,19):

Պօղոսը կ'ըսէ, որ կային որոշ հաւատացեալներ, որոնք թոյլ էին իրենց հաւատքի մէջ եւ դեռ չէին կրնար միս ուտել՝ վախճալով, որ ատիկա կրնար կուռքերու զոհի միսէն ըլլալ: Չնայած որ Յիսուսը խօսած էր այդ թեմայով, այս մարդիկ հասկնալի խղճմտանքի պատճառով տակաւին չէին կրնար միս ուտել:

«Արդ կուռքի զոհուած կերակուրներու համար գիտենք, որ կուռքը ոչինչ է աշխարհին մէջ... Բայց մեզի համար մէկ Աստուած կայ՝ Հայրը, Որմէ են ամէն բաները, եւ մենք՝ Անոր համար. եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոս, Որուն միջոցով են ամէն բաները, եւ մենք՝ Անորմով: Սակայն ամէնքը այս գիտութիւնը չունին, որովհետեւ ոմանք կուռքի մասին խղճմտանքով կ'ուտեն, մինչեւ հիմա իբրեւ կուռքերուն զոհուած, եւ անոնց խղճմտանքը տկար ըլլալով կը պղծուի»:

– Ա. Կորնթ. 8.4,6,7

Այդ եկեղեցիներու մէջ աւելի զօրաւոր հաւատքով քրիստո-

նեաները կ'ուտե՛ին կասկածելի ծագում ունեցող միսը աւելի թոյլ հաւատքով քրիստոնեաներու արջեւ: Ասիկա խնդիրի մը արջեւ կանգնեցուց գանոնք, չնայած որ Յիսուսը մաքրած էր այս կերակուրները: Աւելի թոյլերը չէին կրնար թափ տալ իրենցմէ կուռքի գոհասեղանի վրայ գտնուող միսի պատկերը: Աւելի զօրաւոր քրիստոնեաները գիտե՛ին, որ կուռքը ոչինչ է, եւ խղճի ոչ մէկ խայթ ունէ՛ին, երբ կ'ուտե՛ին:

Սակայն, որպէս Նոր կտակարանի հաւատացեալներ, անոնք աւելի շատ կը մտահոգուէին իրենց իրաւունքները պահելու համար, քան թէ իրենց եղբայրները չգայթակղեցնելու: Առանց ասիկա հասկնալու՝ անոնք գայթակղութեան քար դրած էին իրենց աւելի թոյլ եղբայրներու ճանապարհին: Այս պահուածքը չկայ ծառայի սրտի մէջ: Տե՛ս, թէ ինչպէս Պօղոսը կը դիմէր անոնց.

«Այսուհետեւ այլեւս իրար չդատենք, այլ աւելի այս դէք ձեր մտքի մէջ, որ եղբօր գլորում կամ գայթակղութիւն չդնէք... Որովհետեւ Աստուծոյ Արքայութիւնը ուտելիք եւ խմելիք չէ, այլ արդարութիւն եւ խաղաղութիւն եւ ուրախութիւն Սուրբ Հոգիով»:

– Հռովմ. 14.13,17

Պօղոսը կ'ուզէր ըսել. «Եկէ՛ք յիշենք, թէ իրականութեան մէջ ինչ է արքայութիւնը: Արքայութիւնը արդարութիւնն է, խաղաղութիւնը եւ ուրախութիւնը Սուրբ Հոգիին մէջ»: Բոլոր այս առաւելութիւնները հիմնաւորուած չէին այդ նոր հաւատացեալներուն մէջ: Աւելի զօրաւոր հաւատացեալները իրենց ազատութիւնը չէին օգտագործեր ծառայելու համար, այլ կ'օգտագործէին իրենց «իրաւունքներու» պաշտպանութեան համար: Անոնք ունէ՛ին Նոր կտակարանի ազատութեան իրենց գիտութիւնը, բայց գիտութիւնը առանց սիրոյ կը կործանէ: Այս առումով անոնք չունէին Յիսուսի սիրտը: Յիսուսը Իր իրաւունքները ապացուցեց տաճարի հարկին վերաբերեալ՝ Պետրոսին եւ մնացած աշակերտներուն բացատրելով մեր կեանքերը ծառայութեան համար դնելու կարեւորութիւնը: Ան երբեք Իր ազատութիւնը արտօնութիւն չհամարեց, որպէսզի պահանջէ մեր իրաւունքները եւ ուրիշին սայթաքելու եւ գայթակղեցնելու պատճառ դառնայ:

Պօղոսը այս զգուշացումը կու տար անոնց, որոնք ունէին Քրիստոսի մէջ իրենց իրաւունքներու գիտութիւնը՝ չունենալով ծառայելու համար Անոր սիրտը:

«Եւ այն տկար եղբայրը պիտի կորսուի քու գիտութեան պատճառով, որուն համար Քրիստոսը մեռաւ: Եւ այսպէս եղբայրներու դէմ մեղանջելով եւ այն տկարներու խղճմտանքը զարնելով՝ Քրիստոսի դէմ մեղք կը գործէք»:  
 – Ա. Կորնթ. 8.11,12

Մենք կրնանք օգտագործել մեր ազատութիւնը մեղք գործելու համար: Ինչպէ՞ս: Վէրքեր հասցնելով անոնց, որոնք շատ թոյլ են խղճմտանքով՝ պատճառ դառնալով, որ Քրիստոսի փոքրերէն մէկը վիրաւորուի եւ սայթաքի:

### ԳԵՏԻՆ ԴՆԵԼՈՎ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Այն բանէն յետոյ, երբ Յիսուսը հաստատեց Իր ազատութիւնը տաճարի հարկի վերաբերեալ, Ան հոգ կը տանէր Իր աշակերտներու համար եւ անոնց խոնարհութիւնը կարեւորելու պատասխանատուութիւն տուաւ.

«Ով որ գայթակղեցնէ այս փոքրերէն մէկը, որ կը հաւատան Ինծի (անգլերէնին մէջ՝ ով որ պատճառ դառնայ, որ Ինծի հաւատացող այս փոքրերէն մէկը մեղանջէ), աւելի լաւ է անոր, որ իշու մը ջաղացի քար մը վիզէն կախուի, եւ ան ծովի անդունդի մէջ ընկղմի: Վա՛յ աշխարհքիս՝ գայթակղութիւններուն (անգլերէնին մէջ՝ վիրաւորանքներուն) համար, որովհետեւ պէտք է, որ գայթակղութիւնները (անգլերէնին մէջ՝ վիրաւորանքները) գան, սակայն վա՛յ այն մարդուն, որու ձեռքով պիտի գայ գայթակղութիւնը: Եւ եթէ քու ձեռքը կամ ոտքը քեզ կը գայթակղեցնէ, կտրէ՛ գայն եւ քեզմէ մէկ կողմ նետէ. լաւ է դուն քեզ կաղ կամ հաշմանդամ մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք եւ երկու ոտք ունենալ եւ յախտեճական կրակը նետուիլ: Եւ թէ քու աչքը քեզ գայթակղեցնէ, հանէ՛ գայն եւ քեզմէ մէկ կողմ նետէ. լաւ է քեզի մէկ աչքով մտնել կեանքը, քան թէ երկու աչք ունենալ

Եւ կրակի գեհեանը նետուիլ: Ջգո՛յշ եղէք, որ այս փոքրերէն մէկը չանարգէք, որովհետեւ կ'ըսեն ձեզի, որ անոնց հրեշտակները երկինքը միշտ կը տեսնեն Իմ Հօր երեսը, որ երկինքն է»:

– Մատթ. 18.6-10

Մատթէոս Աւետարանի այս ամբողջ գլուխը վիրաւորանքներու եւ գայթակղութիւններու մասին է: Յիսուսը պարզ կ'ըսէ, որ ազատինք այն ամէնէն, ինչ որ պատճառ կը դառնայ, որ մեղք գործենք, եթէ նոյնիսկ ատիկա Նոր կտակարանի քու արտօնութիւններէն մէկն է: Եւ եթէ ատիկա պատճառ կը դառնայ, որ քու եղբայրը մեղանչէ, «կտրէ» ատիկա անոր առջեւ:

Թերեւս պիտի հարցնես, թէ այդ պարագային ինչո՞ւ Յիսուսը կը վիրաւորէր շատերը, ինչպէս տեսանք այս գիրքի նախորդ գլուխին մէջ: Պատասխանը պարզ է: Յիսուսը ոմանց կը վիրաւորէր այն պատճառով, որ կը հնազանդէր Հօրը եւ կը ծառայէր ուրիշներուն: Անոր վիրաւորանքը չէր գար Իր սեփական իրաւունքները պաշտպանելէն:

Փարիսեցիները կը գայթակղէին, երբ Ան կը բժշկէր Շաբաթ օրը: Անոր աշակերտները կը գայթակղէին, քանի որ Յիսուսը կը քարոզէր այն ճշմարտութիւնը, որ ունէր Իր Հայրը: Մարիամն ու Մարթան վիրաւորուեցան, երբ Ան անմիջապէս չեկաւ, որպէսզի բժշկէր Ղազարոսը: Բայց դուն չես գտներ, որ Յիսուսը ուրիշները վիրաւորէր Աստուծոյ ծառայելու համար:

Պօղոսը կորնթացիներուն յղած իր ուղերձին մէջ այս զգուշացումը տուաւ.

«Միայն թէ զգոյշ մնացէք, որ այդ ձեր իշխանութիւնը (անգլերէնի մէջ՝ ազատութիւնը) գայթակղութիւն չըլլայ տկարներուն»:

– Ա. Կորնթ. 8.9

Մեր ազատութիւնը մեզի տրուած է ծառայելու եւ մեր կեանքերը դնելու համար: Մենք պէտք է կառուցենք եւ ոչ թէ կործանենք: Ոչ ալ այդ ազատութիւնը մեզի տրուած է, որ ամէն բան կուտակենք մեր վրայ: Այսօր շատ յաճախ մեր ազատութիւնը կ'օգտագործենք

մեզի համար եւ պատճառ կը դառնանք, որ մարդիկ գայթակղին քրիստոնեաներու ապրելաոճէն:

Նորէն լսէ՛ այն զգուշացումը, որ տրուած է մեզի Կորնթացիս առաջին թուղթի 8.9-ին մէջ. «Միայն թէ զգոյշ մնացէք, որ այդ ձեր ազատութիւնը գայթակղութեան քար չդառնայ տկարներուն համար (անգլերէն թարգմանութենէն)»:

Բերեմ պատուիրանը խախտելու օրինակ մը: Երբ երկրորդ անգամ ծառայողական ճամբորդութեան մեկնեցայ Ինտոնեզիա, ինծի հետ էին Լիզան, երեխաներս եւ դայեակը: Մենք ժամանեցինք Պալիի Տենփասար կղզի, որ կը համարուի հանգստեան գօտի:

Տեղի եկեղեցւոյ երէցներէն մէկը քաղաքի շատ աղմկոտ մասը գտնուող ժամանակակից պանդոկներէն մէկուն սեփականատէրն էր: Մենք երկար ճանապարհ անցած էինք եւ շատ քիչ քնացած էինք: Բաւականին յոգնած էինք: Այդ գիշեր քանի մը անգամ արթնցանք աղմուկներէն եւ շուներու հաջոցէն: Մենք միայն մէկ գիշեր մնացինք այդ կղզիին մէջ եւ շունեցանք այն հանգիստը, որու կարիքը ունէինք: Հետեւեալ օրը շարունակեցինք ճանապարհը դէպի Ճավա կղզի եւ յաջորդ երկու շաբաթը ծառայեցինք շատ խիտ ժամանակացոյցով: Այդ ընթացքին մենք ունեցանք միայն մէկ ազատ օր, եւ աստիկա ճամբորդելու համար էր: Քսանչորս ժամուան ընթացքին մենք հինգ անգամ ծառայեցինք եկեղեցւոյ մը մէջ, որ ունէր երեսուն հազար անդամ:

Ծրագրուած էր, որ ճամբորդութենէն յետոյ մենք պէտք է վերադառնայինք Պալի կղզիով: Հովիւը տեղեկացուց, որ մենք նորէն պէտք է մնայինք այն երէցի հիւրանոցին մէջ: Այդ լարուած շաբաթներէն յետոյ մենք այլեւս չէինք ցանկար նորէն նոյն պայմաններուն մէջ ըլլալ:

Առաւօտեան՝ նախաճաշին, երբ Պալի երթալու համար մենք պէտք է Ճավան լքէինք, սիրալիր տիկին մը առաջարկեց վճարել Պալիի ամենահիանալի հանգստավայրին մէջ մեր մնալու ծախսերը: Ես ոգեւորուեցայ, քանի որ հանգստանալու եւ գեղեցիկ վայրի մը մէջ ըլլալու հնարաւորութիւն պիտի ունենայինք:

Երբ մենք դուրս ելանք ճաշարանէն, որպէսզի հաւաքէինք մեր առարկաները, Լիզան ըսաւ, որ ինքզինքը լաւ չի զգար այդ տիկնոջ առաջարկը ընդունելու համար: Թարգմանիչը եւ ես մտքեր փոխանակեցինք Լիզային հետ եւ ըսինք, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Օդանաւի մէջ Լիզան ըսաւ, որ չի կարծեր, թէ ճիշդ որոշում կայացուցած ենք:

Ես յիմարացայ եւ չլսեցի Լիզային: Երբ հասանք Պալի, ուղեբեռը վերցնելու ժամանակ Լիզան նորէն խօսեցաւ հետս եւ անգամ մը եւս պնդեց իր կարծիքը, բայց ես անտեսեցի այն:

Երբ մենք հանդիպեցանք հովիւին, ես ըսի անոր, որ մեզի հետաքրքրական առաջարկ մը ըրած են եւ ալ չենք ուզեր մնալ երէցի պանդոկի մէջ: Ինծի թուաց, որ հովիւին հաճելի չէ իմ ըսածը, եւ մենք խօսեցանք այդ թեմային շուրջ:

Բարեբախտաբար ան անկեղծացաւ եւ ըսաւ. «Ճո՛ն, ատիկա կը վիրաւորէ երէցն ու անոր ընտանիքը: Անոնք արդէն նախօրօք ձեզի համար պատուիրած են սենեակը եւ պատրաստութիւն տեսած են երեկոյի համար»:

Ես նաեւ բացայայտօրէն վիրաւորած էի հովիւը, որովհետեւ չէի գնահատած այն, ինչ որ անոնք պատրաստած էին մեզի համար: Ես ըսի անոր, որ պիտի մնանք երէցի պանդոկի մէջ եւ պիտի հրաժարինք կնոջ առաջարկէն:

Տէրը աշխատեցաւ հետս իմ կեցուածքին համար: Ես գիտէի, որ հովիւը վիրաւորուած էր: Ես տեսայ, որ իմ իրաւունքները պաշտպանելը վիրաւորած էր այս եղբայրը, եւ ատիկա մեղք էր: Ես անորմէ ներում խնդրեցի: Ան ներեց ինծի: Յոյս ունիմ, որ նորէն այդպէս չեմ վարուիր:

## ՇԻՆՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

«Ապա ուրեմն խաղաղութեան եւ միմեանց շինութեան բաներու ետեւէն երթանք»:

– Հռովմ. 14.19

Մեր նպատակը պէտք է պատճառ չդառնայ, որ ուրիշ մը սայ-

թաքի մեր անձնական ազատութեան պատճառով: Այն, ինչ որ մենք կ'ընենք, կրնայ նոյնիսկ թոյլատրելի ըլլալ՝ համաձայն Սուրբ գիրքին: Բայց դուն քեզի հարցուր. «Ատիկա ի՞նչ, թե՞ ուրիշին շինութեան համար է»:

«Ամէն բան օրինաւոր է ինձի, բայց ամէն բան օգուտ չէ. ամէն բան օրինաւոր է ինձի, բայց ամէն բան շինութիւն չի տար: Ոչ ոք միայն իր անձին օգուտը կը փնտռէ, այլ ամէն մէկը իր ընկերինն ալ... ուրեմն՝ թէ ուտէք, թէ խմէք, թէ ինչ գործ ալ, որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք: Առանց գայթակղութիւն տալու վերաբերիք հրեաներուն, յոյներուն եւ Աստուծոյ եկեղեցիին: Ինչպէս ես ալ ամէն բանով ամէնուն հաճոյ կ'ըլլամ՝ իմ անձին օգուտը չփնտռելով, բայց շատերունը, որ փրկուին»:

– Ա. Կորնթ. 10.23,24, 31- 33

Ես կը քաջալերեմ քեզ, որ թոյլ տաս Սուրբ Հոգիին, որպէսզի Սուրբ գիրքի այս մէջբերման միջոցով գտէ քու կեանքի իւրաքանչիւր ոլորտը: Թո՛յլ տուր Անոր, որ ցոյց տայ քեզի ամէն մէկ պահուրտած շարժառիթ, որ քու եւ ոչ թէ ուրիշի օգուտին համար է: Նշանակութիւն չունի, թէ կեանքի որ ոլորտը դուն կ'ընդունիս, ընդունի՛ր Զինք՝ բոլորի համար որպէս ծառայ ապրելու կոչը:

Օգտագործէ՛ Քրիստոսի մէջ եղած քու ազատութիւնը միւսները ազատելու համար եւ ոչ թէ պնդէ քու սեփական իրաւունքները: Ատիկա Պօղոսի ծառայութեան հրահանգներէն մէկն էր. «Ոչ մէկ բանով գայթակղութիւն (վիրաւորանք) կու տանք, որ պաշտօնը չնախատուի» (Բ. Կորնթ. 6.3):

# ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՐ ՉԻ ԿՐՆԱՐ ՆԵՐԵԼ, ՄՈՌՑԱԾ Է, ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ՈՐՔԱՆ ՄԵԾ ՊԱՐՏՔ ՆԵՐԱԾ Է ԻՐԵՆ

«Մօտ մէկ տարի է, որ ես իմ գրադարանին մէջ ունիմ «Սատանայի խայծը» գիրքը եւ վերջապէս սկսայ այն կարդալ: Ես անմիջապէս կրցայ զանազանել այն հոգին, որ բնակութիւն հաստատած էր իմ կեանքի մէջ: Ես կասկածներու մէջ էի, ատոր համար ալ առաջնորդուեցայ Սուրբ Հոգիէն այս գիրքը կարդալու համար: Որքան շատ կը կարդայի, այնքան շատ կը յանդիմանուէի: Եկեղեցւոյ մէջ հովիւը խնդրեց արջեւ երթալ անոնց, որոնք ինչ որ մէկուն ներելու պէտք ունէին: Ես առանց վարանելու արջեւ գացի, որպէսզի ներեմ անոնց, որոնք, կը զգայի, թէ վիրաւորած են զիս, յատկապէս իմ հայրը: Յետոյ ես խնդրեցի հօրմէս, որ ներէ ինծի: Ես շնորհակալ եմ, որ ան ներեց, իսկ այժմ ես ազա՛տ եմ: Շնորհակալութիւն Ձեզի այս գիրքին համար»:

– Ռ. Փ., ՎԵՐՃԻՆԻԱ



## ԵԹԷ ՉՆԵՐԵՍ, ՉԵՍ ՆԵՐՈՒԻՐ

---

*«Ասոր համար կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ինչ, որ աղօթք ընելով  
խնդրէք, հաւատացէք, թէ պիտի արնէք, եւ պիտի ըլլայ ձե-  
զի: Եւ որ ժամանակ որ կանգնիք՝ աղօթք ընէք, ներեցէք,  
եթէ մէկուն դէմ բան մը ունենաք, որպէսզի ձեր  
Հայրն ալ, որ երկինքն է, ձեր յանցանքը ձգէ ձեզի:  
Բայց եթէ դուք չներէք, ձեր Հայրն ալ, որ երկինքն է, ձեր  
յանցանքը չի ներեր ձեզի»:*

– Մարկ. 11.24-26

**Կ**'ուզեմ մեր ուշադրութիւնը ուղղել այն հետեւանքներուն,  
որոնց կը յանգինք, երբ կը մերժենք մեզմէ հեռացնել վի-  
րաւորութիւնը, եւ թէ ինչպէս ազատագրուիլ ատորմէ:

Յիսուսը գիտէր, թէ ինչ կ'ըսէր. «Բայց եթէ դուք չներէք, ձեր  
Հայրն ալ, որ երկինքն է, ձեզի չի ներեր ձեր յանցանքները»: Մենք

կ'ապրինք մշակոյթի մը մէջ, ուր միշտ չէ, որ կը գիտակցինք այն, ինչ որ կ'ըսենք: Հետեւաբար, մենք չենք հաւատար ուրիշներուն, թէ ինչ նկատի ունին, երբ մեզի ինչ որ բան մը կ'ըսեն: Անծի խօսքը լրջօրէն չ'ընդունուիր:

Ատիկա կը սկսի մանկութենէն: Ծնողը կ'ըսէ երեխային. «Եթէ դուն ասիկա նորէն ընես, կ'ապտակես»: Երեխան ոչ միայն ասիկա նորէն կ'ընէ, այլեւ կը շարունակէ անելի շատ ընել: Երեխան նորէն զգուշացումներ կը ստանայ ծնողէն: Սովորաբար ոչ մէկ շտկող գործողութիւն կ'ըլլայ: Եւ եթէ նոյնիսկ ըլլայ, խոստացածէն անելի մեղմ կամ անելի խիստ տեղի կ'ունենայ, քանի որ ծնողը յուսահատած կ'ըլլայ:

Այդ արծագանգներէն ալ երեխային համար պարզ կը դառնայ, որ դուն քու խօսքին տէրը չես, կամ ալ այն, ինչ որ կ'ըսես, ճշմարիտ չէ: Երեխան կը շփոթի եւ չի կարելորեր ծնողի հեղինակութիւնը: Այս կեցուածքը կը շարունակուի նաեւ անոր կեանքի միւս ոլորտներուն մէջ: Երեխան իր ուսուցիչներուն, ընկերներուն, աւագներուն կը նայի այս նոյն չափորոշիչով: Դառնալով չափահաս՝ ան չի կարելորեր իր ըսած խօսքերը. խոստումներ կու տայ, յայտարարութիւններ կ'ընէ, որոնց չի հետեւիր:

Ահա այդպիսի գրոյցի օրինակ մը: Կը հանդիպին Ճիմն ու Թոմը: Ան կը ճանչնայ Թոմը, բայց անոր հետ հաղորդակցելու առիթ չէ ունեցած: *Ճիմը կը սրտնեղի այդ անսպասելի հանդիպումէն, քանի որ կը շտապէ, իսկ հիմա ստիպուած պէտք է գրոյցի բռնուի:*

Անոնք կը նային միմեանց: Ճիմը կ'ըսէ. «Փա՛ռք Տիրոջը, եղբա՛յր: Հրաշալի է քեզ տեսնել»:

Անոնք քիչ մը կը զրուցեն: Քանի որ Ճիմը կը շտապէր, ան կ'աւարտէ խօսակցութիւնը՝ ըսելով. «Մենք պէտք է օր մը հանդիպինք ճաշի սեղանի շուրջ»:

Նախ՝ Ճիմը ոգեւորուած չէր Թոմը տեսնելուն համար, որովհետեւ կը շտապէր: Երկրորդ՝ ան չէր մտածեր Տիրոջ մասին, իսկ Թոմին այսպէս ողջունեց. «Փա՛ռք Տիրոջը»: Երրորդ՝ Ճիմը ճաշի հրաւերի մտադրութիւն չունէր: Ատիկա խօսակցութիւնը արագ աւարտելու եւ խիղճը հանգստացնելու միջոց էր: Այնպէս որ, այն,

ինչ որ ճիմը ըսաւ այդ գրոյցի ընթացքին, պարապ խօսքեր էին:

Այսպիսի իրավիճակներ տեղի կ'ունենան ամէն օր: Այսօր շատ մարդիկ նկատի չունին այն, ինչ որ կ'ըսեն: Մենք կ'ապրինք այնպիսի ժամանակի մը մէջ, երբ չենք գիտեր, թէ արդեօ՞ք մարդը իր խօսքի տէրն է:

Բայց երբ Յիսուսը կը խօսի, Ան կը ցանկայ, որ Իր ըսածը լրջօրէն ընդունինք: Մենք չենք կրնար Անոր ըսածներուն նայիլ այնպէս, ինչպէս կը նայինք այն հեղինակութիւններուն, որոնք կան մեր կեանքին մէջ: Երբ Յիսուսը ինչ որ բան մը կ'ըսէ, Ան ճիշդ ատիկա ալ նկատի ունի: Ան հաւատարիմ է նոյնիսկ այն ժամանակ, երբ մենք հաւատարիմ չենք: Յիսուսը կը քալէ ճշմարտութեան եւ մաքրութեան այնպիսի մակարդակի մը մէջ, որ վեր է մեր մշակոյթի ու հասարակութեան սահմաններէն: Ատոր համար ալ, երբ Յիսուսը կ'ըսէ՝ բայց եթէ դուք չներէք, ձեր Հայրն ալ, որ երկինքն է, ձեզի չի ներեր ձեր յանցանքները, ճիշդ ատիկա ալ նկատի ունի:

Ան ասոր մասին մէկ անգամ չէ, որ կ'ըսէ: Յիսուսը կը շեշտէր այս զգուշացման կարեւորութիւնը: Եկո՛ւր անդրադառնանք այսպիսի քանի մը յայտարարութիւններու, որոնք Ան ըրաւ տարբեր իրավիճակներու մէջ:

«Որովհետեւ, եթէ դուք մարդոց իրենց յանցանքները ներէք, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի պիտի ներէ: Իսկ եթէ դուք մարդոց չէք ներեր անոնց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի պիտի չներէ ձեր յանցանքները»:

– Մատթ. 6.14,15

Եւ նորէն.

«Արծակեցէ՛ք եւ կ'արծակուիք (ներեցէք, եւ կը ներուի ձեզի)»:

– Ղուկ. 6.37

Կրկին՝ Տէրունական աղօթքին մէջ կը կարդանք.

«Եւ ներէ ձեզի մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն»:

– Մատթ. 6.12

Հետաքրքրական է, թե որքան քրիստոնեաներ կ'ուզեին, որ Աստուած անոնց ներքի այնպէս, ինչպէս իրենք կը ներեն անոնց, որոնք վիրաւորած են զիրենք: Մինչդեռ ճիշդ ասիկա է այն ուղին, որուն միջոցով անոնք ներում կը ստանան: Քանի որ չներելը այդքան տարածուած է եկեղեցիին մէջ, մենք չենք ուզեր Յիսուսի այս խօսքերը լրջօրէն ընդունիլ: Տարածուած է, թէ ոչ, ճշմարտութիւնը չի փոխուիր: Այնպէս, ինչպէս մենք կը ներենք, կ'արծակենք եւ կը վերականգնենք ուրիշ անձ մը, նոյն ծելով ալ մեզի կ'ըլլայ:

Ես լսեցի անսովոր վկայութիւն մը Ֆիլիփինէն ծառայողի մը մասին: Իմ ընկերները, որոնք կը ճանչնային զինք, ինծի ցոյց տուին յօդուած մը, որ կը պատմէր այդ ծառայողի փորձառութիւններուն մասին:

Ան քանի մը տարի հակառակուած էր իր կեանքի համար եղած Աստուծոյ կանչին, քանի որ յաջողակ առեւտրական գործ ունէր: Ան մեծ կարողութիւն դիզած էր: Եւ այդ մարդու անհնազանդութիւնը ի վերջոյ վնասեց զինք. սրտի անբաւարարութեան պատճառով զինք հիւանդանոց կը տեղափոխեն:

Վիրահատութեան ժամանակ ան կը մահանայ եւ ինքզինքը կը տեսնէ երկինքի դարպասներէն դուրս: Հոն կը հանդիպի Յիսուսին, Որ անոր հետ կը խօսէր իր անհնազանդութեան մասին: Ան կը խնդրէ Տիրոջը, որ եթէ Ան երկնցնէ իր կեանքի օրերը, ինքը պիտի ծառայէ Յիսուսին: Տէրը կը համաձայնի: Մինչեւ զինք իր մարմինի մէջ ուղարկելը Տէրը անոր ցոյց կու տայ դժոխքի տեսարանը: Այդ մարդը կը տեսնէ իր զոքանչը, որ կը վառէր դժոխքի բոցերուն մէջ: Ան կ'ապշի. չէ՞ որ այդ կինը ըրած էր «ապաշխարութեան աղօթքը» եւ եկեղեցի յաճախած էր: Ան կը հարցնէ Տիրոջը. «Ինչո՞ւ ան դժոխքի մէջ է»: Տէրը կը պատասխանէ, որ այդ կինը չէր ներած իր բարեկամներէն մէկուն, հետեւաբար ինքն ալ չներուեցաւ:

## ՆԵՐՈՒՄԸ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՃԸ

Լիզան եւ ես մեր ծառայութեան մէջ նոյնպէս տեսած ենք չնեւրելու թակարդի շատ օրինակներ: Երբ ես առաջին անգամ կը ծառայէի Ինտոնէզիայի մէջ, կ'ապրէի հարուստ առեւտրականի մը

տունը: Անոնք փրկուած չէին, բայց այդ առեւտրականն ու անոր ընտանիքի անդամները կը յաճախէին այն եկեղեցին, ուր ես կը ծառայէի:

Այդ մէկ շաբթուան ընթացքին, որ ես անոնց տունն էի, կինը, ամուսինը եւ երեք երեխաները փրկուեցան: Ազատագրում եղաւ, եւ տան ողջ մթնոլորտը փոխուեցաւ: Մեծ ուրախութիւնով լեցուեցաւ անոնց տունը: Երբ անոնք իմացան, որ կնոջս հետ կրկին Ինտոնէզիա պիտի երթայի, հրաւիրեցին նորէն մնալ իրենց տանը եւ պատրաստակամութիւն յայտնեցին նաեւ վճարել իմ երեք երեխաներու ու դայեակի օդանաւի տոմսերու համար:

Մենք եկանք եւ տասը անգամ ծառայեցինք տեղի եկեղեցւոյ մէջ: Ես կը քարոզէի ապաշխարութեան եւ Աստուծոյ ներկայութեան մասին: Մենք Տիրոջ ներկայութիւնը կը զգայինք ծառայութիւններու մէջ, ամենուրէք արցունքներ եւ ազատագրման աղաղակներ էին: Մենք նորէն ծառայեցինք անոնց ողջ ընտանիքին: Առեւտրականի մայրը, որ կ'ապրէր այդ նոյն քաղաքին մէջ, կու գար բոլոր ծառայութիւններուն: Այդ կինը նոյնպէս մեծ գումար ներդրած էր, որպէսզի երեխաներու համար օդանաւի տոմսեր գնէինք: Երբ շաբաթը մօտեցաւ իր աւարտին, այդ կինը ուղիղ նայեցաւ իմ աչքերուն եւ հարցուց. «Ճո՛ւն, ինչո՞ւ ես երբեք չեմ զգացած Աստուծոյ ներկայութիւնը»:

Մենք հազիւ նոր աւարտած էինք նախաճաշը, եւ բոլորն ալ արդէն լքած էին սեղանը: Ան շարունակեց. «Ես ներկայ գտնուած եմ քու ծառայութիւններուն եւ ուշադրութեամբ լսած եմ այն ամէնը, ինչ որ դու ըսած ես: Ես առջեւ եկած եմ ապաշխարելու, մինչդեռ ոչ մէկ անգամ զգացած եմ Աստուծոյ ներկայութիւնը, եւ ընդհանրապէս, ես երբեք չեմ զգացած Աստուծոյ ներկայութիւնը»:

Ես գրուցեցի կնոջ հետ եւ յետոյ ըսի. «Եկո՛ւր աղօթենք քեզի համար, որպէսզի դուն Աստուծոյ Հոգիով լեցուիս»: Ես ձեռքերս դրի անոր վրայ եւ աղօթեցի, որ ան Սուրբ Հոգին ստանայ, բայց Աստուծոյ ներկայութեան զգացողութիւն չկար:

Յետոյ Աստուած խօսեցաւ իմ հոգիին. «Ան չէր ներած իր ամուսինին»:

Ես ձեռքերս ետ քաշեցի անոր վրայէն: Ես գիտէի, որ այդ կնոջ ամուսինը մահացած էր: Նայեցայ անոր ու ըսի. «Տէրը ինձի ցոյց կու տայ, որ դուն չես ներած քու ամուսինին»: «Այո՛, ճիշդ է, բայց ամէն բան ըրած եմ անոր ներելու համար»:

Յետոյ ան պատմեց ինձի իր ամուսինին դաժանութիւններուն մասին: Ես կրցայ տեսնել, թէ ինչու ան կը պայքարէր ամուսինին ներելու համար: Բայց ես ըսի անոր. «Որպէսզի ստանաս Աստուծո՛մէ, դուն պէտք է ներես»: Յետոյ բացատրեցի, թէ Յիսուսը ինչ կը սորվեցնէր ներելու մասին:

«Դուն չես կրնար ամուսինիդ ներել քու սեփական ուժերով: Դուն պէտք է ատիկա բերես Աստուծոյ առջեւ եւ խնդրես, որ ներէ քեզի: Յետոյ դուն կրնաս ներել քու ամուսինին: Կը կամենա՞ս ազատ արձակել քու ամուսինը», - հարցուցի զինք: «Այո՛», - պատասխանեց կինը:

Ես առաջնորդեցի զինք պարզ աղօթքի մը. «Երկնայի՛ն Հայր, Յիսուսի անունով ես կը խնդրեմ Քու ներումը ամուսինիս դէմ ունեցած իմ աններողամտութեան համար: Տէ՛ր, ես գիտեմ, որ չեմ կրնար անոր ներել իմ սեփական ուժերով: Ես արդէն ձախողած եմ, բայց հիմա Քու առջեւ ես իմ սրտէն ազատ կ'արձակեմ իմ ամուսինս: Ես կը ներեմ անոր»:

Երբ ւաւարտեց ինձի հետ աղօթելը, արցունքները սկսան հոսիլ անոր այտերէն:

«Բարձրացո՛ւր ձեռքերդ եւ խօսի՛ր լեզուներով», - ըսի անոր: Առաջին անգամ ան կ'աղօթէր գեղեցիկ երկնային լեզուով: Նախաձաշի սեղանի քով մենք ունեցանք Տիրոջ ներկայութեան գօրաւոր զգացում. մենք լեցուած էինք Աստուծոյ ներկայութեամբ:

Կինը լացաւ մօտ հինգ վայրկեան: Մենք քիչ մըն ալ զրուցեցինք, յետոյ ես քաջալերեցի զինք բաւականութիւն ստանալու Տիրոջ ներկայութենէն: Կինը շարունակեց երկրպագել Տիրոջը: Ես զինք մինակ ձգեցի:

Երբ լուրը հասաւ անոր որդիին եւ հարսին, վերջիններս ցնցուած էին: Որդին կ'ըսէր, որ երբեք չէր տեսած իր մայրը լալով: Այդ կինը ինքն ալ չէր յիշեր, թէ վերջին անգամ երբ լացած էր:

«Նոյնիսկ այն ժամանակ, երբ ամուսինս մահացաւ, ես չլացի», - կ'ըսէր ան:

Այդ երեկոյ՝ ծառայութեան ժամանակ, ան ջուրով մկրտուեցաւ: Յաջորդ երեք օրերուն գեղեցիկ փայլ եւ քաղցր ժպիտ մը կը ճառագայթէր անոր դէմքէն:

Կինը չէր ներած եւ հետեւաբար չներելը զինք բանտարկած էր: Բայց հագիւ որ ան ազատ արձակեց իր ամուսինը եւ ներեց անոր, իր կեանքի մէջ Տիրոջ զօրութիւնը ստացաւ ու Անոր ներկայութիւնը ճանչցաւ:

## ՉՆԵՐՈՂ ԾԱՌԱՆ

Մատթէոս Աւետարանի 18-րդ գլուխի մէջ Յիսուսը աւելի պարզորոշ կը խօսի չներելու եւ վիրաւորութեան ստրկութեան մասին: Ան կը սորվեցնէր աշակերտներուն՝ ինչպէս հաշտուիլ այն եղբօր հետ, որ վիրաւորած է զանոնք (Հաշտութեան թեման մենք կը քննարկենք աւելի ուշ՝ ուրիշ գլուխի մը մէջ):

Պետրոսը հարցուց. «Տէ՛ր, քանի՞ անգամ, եթէ իմ եղբայրը իմ դէմ մեղանչէ, ես ներեմ անոր, մինչեւ եօ՞թը անգամ» (Մատթ. 18.21): Պետրոսը մտածեց, որ ինքը մեծահոգի էր:

Պետրոսը կը սիրէր ծայրայեղութեան դիմել: Ան այն մէկն էր, որ ըսած էր. «Եթէ կամենաս, հոս երեք տաղաւար շինենք, մէկը՝ Քեզի համար, մէկը՝ Մովսէսին, եւ մէկը՝ Եղիային», (տե՛ս Մատթ. 17.4): Այժմ ան ալ կը մտածէր, որ ինքը մեծահոգի է. *«Ես տպաւորութիւն կը ձգեմ Վարդապետի վրայ, որ ես պատրաստ եմ ներելու եօթը անգամ»*:

Բայց Պետրոսը ցնցող պատասխան ստացաւ: Յիսուսը մէկ կողմ նետեց այն, ինչ որ Պետրոսը մեծահոգութիւն կը համարէր. *«Չեմ ըսեր քեզի՝ մինչեւ եօթը անգամ, այլ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»* (Մատթ. 18.21,22): Այսինքն՝ ներէ՛, ինչպէս Աստուած կը ներէ՝ առանց սահմաններու:

Յետոյ Յիսուսը առակ մը պատմեց.

«Ասոր համար Երկնքի Արքայութիւնը նմանեցաւ թագաւոր մարդու մը, որ ուզեց իր ծառաներուն հետ հաշիւ

տեսնել: Եւ երբ որ սկսաւ հաշիւ տեսնել, անոր քով մէկը  
բերուեցաւ տասը հազար քանքար պարտական»:

– Մատթ. 18.23,24

Յիսուսի ըսածի կարեւորութիւնը հասկնալու համար մենք  
պէտք է գիտնանք, թէ ինչ էր քանքարը: Քանքարը չափման միա-  
ւոր էր: Այն կ'օգտագործուէր ոսկին (Բ. Թագ. 12.30), արծաթը  
(Գ. Թագ. 20.39) եւ այլ մետաղներն ու ապրանքները չափելու հա-  
մար: Մէկ քանքարը մօտաւորապէս համարժէք է եօթանասուն-  
հինգ ֆունտի: Ասիկա այն կշիռքն էր, որ մարդը կրնար ունենալ  
(տե՛ս Դ. Թագ. 5.23): Տասը հազար քանքարը մօտաւորապէս  
750 000 ֆունտ է կամ 375 թօն: Այնպէս որ, այս ծառան թագաւոր-  
ին պարտք էր 375 թօն ոսկի:

Ներկայիս ոսկիի արժէքը մօտաւորապէս 375 տոլար է: Այս-  
օրվան շուկայի մէջ ոսկիի մէկ քանքարը կ'արժէր 450 000 տոլար:  
Հետեւաբար, ոսկիի տասը հազար քանքարը կ'արժէ 4.5 միլիար  
տոլար: Այս ծառան իր թագաւորին պարտք էր 4.5 միլիար տոլար:

Յիսուսը հոս շեշտեց, որ այս ծառան ունէր պարտք մը, որ ան  
երբեք ալ չէր կրնար վճարել: Մենք կը կարդանք.

«Բայց որովհետեւ չունէր վճարելու, անոր տէրը հրա-  
մայեց, որ ան, անոր կինը եւ անոր որդիները եւ ամէն  
ինչ, որ ունէր, ծախուի եւ պարտքը վճարուի: Եւ ծառան  
ալ, երեսի վրայ իյնալով, կ'երկրպագէր անոր եւ կ'ըսէր.  
«Տէ՛ր, համբերէ՛ ինձի համար, եւ բոլորը կը հատուցեմ  
քեզի»: Տէ՛րն ալ գթաց այն ծառայի վրայ, զինք արձակեց  
եւ պարտքն ալ շնորհեց անոր»:

– Մատթ. 18.25-27

Այժմ եկո՛ւր զուգահեռներ անցընենք առակի իմաստի եւ վի-  
րաւորութեան միջեւ: Երբ կայ վիրաւորութիւն, կը նշա-  
նակէ՝ կայ պարտք: Դուն լսած ես, որ կ'ըսուի՝ «Ան կը վճարէ ասոր  
համար», այսինքն՝ ներումը կը նմանի պարտք չունենալուն:

Թագաւորը կը ներկայացնէ Հայր Աստուծոյն, Որ այս ծառա-  
յին ներեց այն պարտքը, որ ան չէր կրնար վճարել: Կողոսացիս  
2.13,14-ին մէջ մենք կը գտնենք. «Եւ ձեզի, որ ժամանակ մը մե-



ռած էիք մեղքերու մէջ եւ ձեր մարմինի անթլպատութեան մէջ, Անոր հետ կենդանացուց՝ բոլոր մեղքերը ձեզ շնորհելով: Եւ ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաններով (*պարտքի վկայականը կամ պարտամուրհակը*), որ մեզի հակառակ էր, եւ մէջտեղէն վերցուց գայն եւ խաչափայտի վրայ գամեց»:

Այն պարտքը, որ ներուեցաւ մեզի, հնարաւոր չէր վճարել: Ոչ մէկ ձեւով մենք կրնայինք հատուցել Աստուծոյ այն, ինչ որ պարտք էինք: Մեր վիրաւորութիւնը անյաղթահարելի էր: Ատոր համար ալ Աստուած փրկութիւնը տուաւ որպէս պարգեւ: Յիսուսը վճարեց պարտքի վկայականի դիմաց, որ դէմ էր մեզի: Մենք կրնանք զուգահեռներ տանիլ այս ծառային՝ իր թագաւորի հետ ունեցած փոխյարաբերութեան եւ մեր ու Աստուծոյ հետ ունեցած փոխյարաբերութեան միջեւ:

«Եւ երբ որ այն ծառան դուրս ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ, որ իրեն հարիւր դահեկան պարտական էր, եւ զինք բռնած կը խեղդէր ու կ'ըսէր. «Վճարէ՛ ինձի, ինչ որ պարտական ես»» (Մատթ. 18.28):

Ըստ «Լոկոս» ուսուցողական Աստուածաշունչի՝ մէկ դահեկանը մտաւորապէս հաւասար էր շարքային աշխատողի օրական աշխատավարձին: Այսպիսով՝ այսօրուան հաշուարկով հարիւր դահեկանը կ'արժէ չորս հազար տոլար: Այժմ շարունակէ՛ կարդալ.

«Հիմա այն ծառայակիցը անոր ոտքերը ինկաւ, անոր կ'աղաչէր եւ կ'ըսէր. «Համբերէ՛ ինձի համար, եւ բոլորը պիտի հատուցեմ քեզի»: Բայց ան չէր կամենար, այլ գնաց, զինք բանտը նետեց, մինչեւ որ պարտքը վճարէ»:

– Մատթ. 18.29,30

Անոր ծառայակիցներէն մէկը անոր պարտք էր փոքրիկ գումար մը՝ տարեկան աշխատավարձի մէկ երրորդը: Դուռն ի՞նչ կ'ընէիր, եթէ կորսնցնէիր աշխատավարձքիդ մէկ երրորդը: Բայց յիշէ՛, որ այդ մարդուն ներուած էր 4.5 միլիառի պարտք: Ատիկա ասելի շատ գումար էր, քան ան կրնար շահիլ կեանքի մը ընթացքին:

Վիրաւորանքները, որոնք մենք կը կրենք մէկս միւսին հանդէպ,

կը համեմատուին մեր՝ Աստուծոյ դէմ եղած վիրաւորանքներու հետ այնպէս, ինչպէս 4 000 տոլարը համեմատուեցաւ 4.5 միլիարտ տոլարի հետ: Հնարաւոր է, որ ինչ որ մէկը մեզի հետ վատ վարուած է, բայց ատիկա չի համեմատուիր մեր այն յանցանքներուն հետ, որոնք գործած ենք Աստուծոյ դէմ:

Հնարաւոր է, որ քեզի կը թուայ, թէ ոչ ոք այնքան վատ վիճակի մէջ է, որքան դուն: Բայց դուն չես պատկերացներ, թէ որքան վատ վարուեցան Յիսուսի հետ: Ան անմեղ էր, անմեղ Գառնուկ մը, Որ սպաննուեցաւ:

Այն մարդը, որ չի կրնար ներել, մոռցած է այն մեծ պարտքի մասին, որ ներուած է իրեն: Երբ դուն հասկնաս, որ Յիսուսը քեզ ազատած է յաւիտենական մահէն եւ տանջանքէն, դուն ուրիշները ազատ պիտի արձակես առանց պայմանի: Աւելի վատ բան չկայ, քան կրակի լիճի մէջ յաւիտեան ըլլալը: Հոն չկայ հանգստութիւն, որդը չի մեռնիր, իսկ կրակը չի հանգչիր: Ասիկա էր մեր վերջը, մինչեւ որ Աստուած ներեց մեզի Իր Որդիի՝ Յիսուս Քրիստոսի մահուան միջոցով: Հալելո՛ւ իա: Եթէ քեզի համար դժուար է ներելը, ապա մտածե՛ր՝ դժոխքի իրականութեան մասին եւ Աստուծոյ սիրոյ մասին, որ քեզ փրկեց ատորմէ:

## ԴԱՍԵՐ ՀԱԲԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

Եկե՛ք շարունակենք առակը.

«Երբ որ անոր ծառայակիցները տեսան եղած բաները, շատ տրտմեցան եւ եկան իրենց տիրոջը յայտնեցին բոլոր եղածը: Այն ժամանակ անոր տէրը քովը կանչեց զինք եւ ըսաւ.

«Չա՛ր ծառայ, ես այն բոլոր պարտքը շնորհեցի քեզի, որովհետեւ դուն աղաչեցիր ինձի: Պէտք չէ՞ր, որ դուն ալ քու ծառայակիցին ողորմէիր, ինչպէս որ ես ալ քեզի ողորմեցայ»:

– Մատթ. 18.31- 33

Յիսուսը այս առակի մէջ նկատի չունէր անհաւատները: Ան կը խօսէր թագաւորի ծառաներու մասին: Այս մարդուն արդէն շատ

մեծ պարտք ներուած էր (փրկութիւն), եւ ան կը կոչուէր տիրոջ «ծառայ»: Այն մէկը, որուն ան չներեց, «ծառայակից» էր: Այնպէս որ, մենք կրնանք եզրակացնել, որ ասիկա այն հաւատացեալի մասին է, որ կը մերժէ ներել:

«Եւ անոր տէրը բարկանալով զինք մատնեց դահիճներուն, մինչեւ որ բոլոր պարտքը վճարէ անոր: Այնպէս ալ Իմ երկնաւոր Հայրը պիտի ընէ ձեզի, եթէ դուք ամէն մէկը իր եղբօրը ձեր բոլոր սրտէն չներէք անոնց յանցանքը»:

– Մատթ. 18.34,35

Այս խօսքերը ունին երեք գլխաւոր կէտեր.

1. Չներող ծառան տանջանքի կ'ենթարկուի:
2. Ան պարտաւոր է վճարել սկզբնական պարտքը՝ 375 թօն ոսկին:
3. Հայր Աստուած նոյն կերպով պիտի վարուի ռեւէ հաւատացեալի հետ, որ չի ներեր եղբօր վիրաւորանքը:

### **1. Չներող ծառան տանջանքի կ'ենթարկուի:**

*Ուեպսթըրի* բառարանը այսպէս կը բացատրէ «տանջանք» բառը՝ «մարմինի կամ մտքի չարչարանք» կամ «ուժգին ցաւ պատճառելով պատժել, ստիպողաբար կամ ինքնական սատիստական «հաճոյք» պատճառել (այսինքն՝ հաճոյք ստանալ ուրիշին հոգեկան եւ ֆիզիքական տառապանք պատճառելով):

Այսպիսի տանջանքի դրողները դիւային հոգիներն են: Աստուած «տանջողներուն» թոյլ կու տայ ուժգին ցաւ պատճառել եւ չարչարել մարմինն ու միտքը, նոյնիսկ եթէ մենք հաւատացեալներ ենք: Ես յաճախ աղօթած եմ ծառայութիւններու մէջ այն մարդոց համար, որոնք չեն կրցած ստանալ բժշկութիւն, մխիթարութիւն կամ ազատագրում, եւ այդ բոլորը անոր համար, որ անոնք ազատ չեն արձակած ուրիշները ու չեն ներած անոնց իրենց սրտերու մէջ:

Բժիշկներն ու զիտնականները չներելն ու դառնութիւնը կը կապեն այնպիսի հիւանդութիւններու հետ, ինչպիսիք են յօդախտը եւ

քաղցկեղը: Հոգեկան հիւանդութեան շատ դէպքեր կապուած են չներելու դառնութեան հետ:

Սովորաբար, ներուճը ուրիշ մարդոց սխալը մոռնալն է, բայց երբեմն ատիկա ինքդ քեզ մոռնալն է: Յիսուսը ըսաւ. «Եթէ դուն որեւէ բան ունիս ոեւէ մէկուն դէմ, ներէ՛...» (տե՛ս Մատթ. 5. 23,24): «Ոեւէ մէկը» կը ներառէ նաեւ քեզ: Եթէ Աստուած քեզ ներած է, ո՞վ ես դուն, որ չես ներեր այն մէկուն, որուն Աստուած ներած է, նոյնիսկ եթէ այդ մէկը դուն ես:

## ***2. Չներող ծառան ստիպուած էր վճարել սկզբնական չվճարուած պարտքը:***

Անոր առաջարկուեցաւ ընել անկարելին: Ատիկա նման է այն բանին, որ մեզի առաջարկուէր վճարել այն պարտքի համար, որ Գողգոթայի մէջ վճարեց Յիսուսը: Մենք կը կորսնցնէինք մեր փրկութիւնը:

Կարելի է, որ դուն ըսես. «Մէկ վայրկեան սպասէ՛: Ես կը մտածեմ, որ եթէ մարդը մէկ անգամ աղօթած է ապաշխարութեան աղօթքը եւ իր կեանքը յանձնած է Յիսուսին, Ան երբեք չի կրնար կորսուիլ»:

Եթէ դուն կը հաւատաս աստոր, ապա բացատրէ՛, թէ ինչու Պետրոսը գրեց հետեւեալը.

«Որովհետեւ, եթէ աշխարհի պղծութիւններէն մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի գիտութիւնով փախչողները կրկին անոր մէջ շաղախուած պարտուին, անոնց վերջը չար պիտի ըլլայ, քան թէ առաջինը: Որովհետեւ լաւ էր անոնց համար, որ չճանչնային արդարութեան ճանապարհը, քան թէ ճանչնալէն յետոյ քաշուէին այն սուրբ պատուիրանէն, որ ասանդուեցաւ անոնց»:

– Բ. Պետր. 2.20,21

Պետրոսը կը խօսէր այն մարդոց մասին, որոնք Յիսուս Քրիստոսի փրկութեան միջոցով փախած էին մեղքէն (աշխարհի պղծութիւններէն): Այնուամենայնիւ, անոնք նորէն շաղախուած էին մեղքի մէջ (որ կրնար ըլլալ չներելը) եւ պարտուիլ աստորմէ:

Պարտուած ըլլալ ըսելով՝ Պետրոսը նկատի ունէր, որ անոնք չվերադարձան Տիրոջը եւ չապաշխարեցին: Պետրոսը հաստատեց, որ արդարութենէն շրջուիլը աւելի վատ էր, քան այն երբեք չճանչնալը: Ուրիշ ծելով ըսելու համար՝ Աստուած կ'ըսէ, որ աւելի լաւ է երբեք չփրկուիլ, քան ստանալ յաւիտենական կեանքի պարգեւը եւ յետոյ ատորմէ մշտապէս ետ շրջուիլ:

Յուդան եւս կը նկարագրէր եկեղեցւոյ մէջ գտնուող մարդիկ, որոնք «երկու անգամ մեռած էին» (Յուդա 12,13): Երկու անգամ մեռած ըլլալ կը նշանակէ, որ դուն ինչ որ ժամանակ մեռած էիր առանց Քրիստոսի, յետոյ կենդանացար՝ ընդունելով Ջինք, յետոյ դուն նորէն մահացար՝ մշտապէս հրաժարելով Աստուծոյ ճանապարհներէն:

Մենք կը տեսնենք, որ շատերը պիտի գան Յիսուսի քով, կ'արդարացնեն զիրենք՝ ըսելով. «Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ Քու անունով մարգարէացանք, Քու անունով դէտեր հանեցինք եւ Քու անունով շատ զօրութիւններ գործեցինք: Եւ Ես այն ժամանակ պարզ պիտի ըսեմ անոնց, թէ երբեք ձեզ չեմ ճանչցած, Ինձմէ մէ՛կ կողմ գացէք, ո՛վ անօրէնութիւն գործողներ» (Մատթ. 7.22,23): Անոնք ճանչցած էին Յիսուսը: Անոնք Յիսուսին Տէր կոչած էին եւ հրաշքներ ըրած էին Անոր անունով, բայց Յիսուսը չճանչցաւ զանոնք:

Որո՞նք պիտի ճանչնայ Յիսուսը: Պօղոս առաքեալը կը գրէր. «Բայց եթէ մէկը զԱստուած սիրէ, ան ճանչցուած է Անորմէ» (Ա. Կորնթ. 8.3): Աստուած կը ճանչնայ զանոնք, որոնք կը ճանչնան Ջինք:

Դուն կրնաս ըսել. «Ես կը սիրեմ զԱստուած: Ես պարզապէս չեմ սիրեր այս եղբայրը, որ վիրաւորած է զիս»: Այդ պարագային դուն խաբուած ես եւ չես սիրեր զԱստուած, քանի որ գրուած է. «Եթէ մէկը ըսէ, թէ կը սիրեմ զԱստուած եւ իր եղբայրը ատէ, ան ստախօս է, որովհետեւ ան, որ իր տեսած եղբայրը չի սիրեր, զԱստուած, որ չէ տեսած, ինչպէ՞ս կրնայ սիրել» (Ա. Յովի. 4.20): Խաբուածութիւնը սարսափելի բան է, քանի որ խաբուածը կը հաւատայ իր ողջ սրտով, որ ինքը ճիշդ է: Ան կը հաւատայ, որ ինքը ճանապարհի մը վրայ է, երբ իրականութեան մէջ կը գտնուի մէկ

ուրիշ ճանապարհի մը վրայ: Այն անձը, որ կը մերժէ հնազանդիլ Խօսքին, կը խաբէ իր սիրտը:

Հետաքրքրական չէ՞, որ «շատերը» կ'ակնկալեն մտնել երկինք, բայց պիտի մերժուին, եւ Յիսուսն ալ ըսաւ, որ շատերը վիրաւորուած (գայթակղած) կ'ըլլան վերջին օրերուն (Մատթ. 24.10): Կրնա՞ն այս երկու խումբերը ներառել միեւնոյն մարդիկ:

Որոշ հաւատացեալներ չներելու պատճառով այնքան չարչարուած են, որ յոյս ունին, թէ մահը իրենց հանգստութիւն պիտի բերէ: Բայց ասիկա ճիշդ չէ: Մենք պէտք է հիմա լուծենք չներելու հարցերը, եթէ ոչ, կը կանչուինք վճարելու չվճարուած պարտքի դիմաց:

***3. Հայր Աստուած նոյն ձեւով պիտի վարուի ռեւէ հաւատացեալի հետ, որ կը մերժէ սրտանց ներել, նշանակութիւն չունի, թէ որքան մեծ է վէրքը կամ վիրաւորանքը:***

Յիսուսը յատուկ այնպէս ըրաւ, որ մենք իսկապէս հասկնանք այս առակը: Գրեթէ բոլոր առակներուն մէջ ալ Յիսուսը չէր տար մեկնաբանութիւնը, մինչեւ աշակերտները չխնդրէին ատոր համար: Այս պարագային, այնուամենայնիւ, Ան կ'ուզէր, որ ոչ մէկ պատասխանուած հարցում մնայ դատաստանի խստութեան մասին, դատաստանի, որ պիտի ըլլայ այն մարդոց համար, որոնք չուզեցին ներել:

Մնացած շատ պարագաներու մէջ ալ Յիսուսը հասկնալի կը դարձնէ այն, որ եթէ մենք չներենք, մեզի չի ներուիր: Յիշէ՛, որ Յիսուսը մեզի պէս չէ. Ան ինչ որ կ'ըսէ, ճիշդ ատիկա ալ նկատի ունի: Յաճախ ասիկա չենք գտներ եկեղեցւոյ մէջ: Ընդհակառակը, կ'արդարացուի աններողամտութեան տեղ տալը: Չներելը կը համարուի աւելի փոքրիկ մեղք, քան համասեռամոլութիւնը, շնութիւնը, գողութիւնը, գինովութիւնը եւ այսպէս շարունակ: Բայց անոնք, որոնք չեն ներեր, չեն ժառանգեր Աստուծոյ Թագաւորութիւնը անոնց հետ միասին, որոնք կը գործեն միւս մեղքերը:

Ոմանք կրնան մտածել, որ ասիկա խիստ պատգամ է, բայց ինծի համար ատիկա կը հնչէ որպէս ողորմութեան եւ զգուշացման

պատգամ եւ ոչ թէ դաժան դատաստանի: Արդեօ՞ք դուն կը գերադասես հիմա յանդիմանուիլ Սուրբ Հոգիէն եւ վերապրիլ անկեղծ ապաշխարութիւն ու ներում, թէ՞ կը գերադասես մերժել ներելը եւ Տիրոջմէն լսել այս բառերը. «Հեռո՛ւ գնա»: Այդ ժամանակ ապաշխարելու հնարաւորութիւն չես ունենար:

ՄԵՆՔ ԱՅՆՔԱՆ ՀԵՌՈՒ ՊԷՏՔ Է  
ԸԼԼԱՆՔ ԿՐԷԺԽՆԴԻՐ ԸԼԼԱԼԷՆ, ՈՐ  
ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱՆՔ  
ԿՐԿԻՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՁԵՈՔ  
ԲԵՐԵԼ

«Շնորհակալ եմ Աստուծոյ՝ «Սատանայի խայծը» գրելու Ձեր հնազանդութեան համար: Այս գիրքը այնքան օծուած է, որ Տիրոջ Հոգին կը գործէր ինծի հետ ամբողջ ժամանակ, երբ կը կարդայի, ինչի համար պահանջուեցաւ երկու օր: Այս գիրքը ամբողջութեամբ փոխեց իմ կեանքը: Ես ազատուած եմ վիրաւորանքներու շղթաներէն եւ պիտի շարունակեմ մարզել իմ սիրտը, միտքը ու զգացումները՝ ազատ մնալու համար»:

– Լ.Մ., ՀԱՐԱԲԱՅԻՆ ԳԱՐՕԼԻՆԱ



## ՎՐԷԺԽՆՆԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԱԿԱՐԴ Է

*«Մէկուն չարին տեղ չար մի՛ հատուցէք. ամէն մարդոց  
առջեւ բարի խորհուրդ ունեցէք»:*

– Հռովմ. 12.17

**Ի**նչպէս պարզ տեսանք նախորդ գլուխի մէջ, չներելու վիրաւորութիւններն կրելը կը նմանի ինչ որ մէկուն պարտք ունենալուն: Երբ մարդը վնաս կը կրէ մէկ ուրիշէն, ան հաւատացած է, որ իրեն պարտական են: Ան կը սպասէ որոշակի հատուցման՝ ըլլայ ատիկա դրամի կամ որեւէ այլ բանի միջոցով:

Մեր դատական համակարգը անոր համար է, որպէսզի պաշտպանէ այն մարդոց իրաւունքները, որոնց նկատմամբ սխալ վարուած կամ որոնց վնասած են: Մարդոց կողմէն յառաջացած դատական գործերը կը փորձեն բաւարարել անոնց պա-

հանջները: Երբ մարդը վնաս կրած է մէկ ուրիշէն, մարդկային արդարադատութիւնը կ'ըսէ. «Անոնք պատասխանատուութեան կ'ենթարկուին այն բանի համար, ինչ ըրած են, եւ պիտի հատուցեն, եթէ մեղադրանքը հաստատուի»: Չներող ծառան կը ցանկար, որ իր ծառայակիցը վճարէր իր պարտքը, ասոր համար ան փոխհատուցումը կը փնտռէր օրէնքի դատարանի մէջ: Ասիկա չէ արդարութեան ճանապարհը:

«Ձեր անծերու համար վրէժխնդրութիւն մի՛ ընէք, սիրելիներ՛ր, այլ բարկութեան տեղ տուէք, որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը Իմն է, Ես հատուցումը պիտի տամ», - կ'ըսէ Տէրը»:

– Հռովմ. 12.19

Մեզի՛ Աստուծոյ զաւակներուս համար անարդարացի է, որ մենք անձնապէս վրէժխնդիր ըլլանք: Բայց ասիկա ճիշդ այն է, ինչ մենք կը փնտռենք, երբ կը հրաժարինք ներելէ: Մենք կը ցանկանք, կը փնտռենք, կը ծրագրենք եւ կ'իրագործենք վրէժխնդրութիւնը եւ չենք ներեր այնքան ժամանակ, մինչեւ պարտքը ամբողջութեամբ չվճարուի, եւ միայն մենք կ'որոշենք ընդունելի փոխհատուցումը: Երբ մենք կը փորձենք շտկել մեր նկատմամբ գործուած սխալը, մենք մեզ կը դնենք դատաւորի դիրքի մէջ: Բայց մենք գիտենք, որ

«Մէկն է Օրէնսդիրը (եւ Դատաւորը), որ կրնայ փրկել եւ կորսնցնել. դուն ո՞վ ես, որ ուրիշը կը դատես... Միմեանց մի՛ տրտմեցնէք, եղբայրներ՛ր, որ չդատուիք. ահա Դատաւորը դրան առջեւ կանգնած է»:

– Յակոբ. 4.12, 5.9

Աստուած է արդար Դատաւորը: Ան պիտի անցնէ արդար դատաստանը, բայց Ան պիտի փոխհատուցէ արդարութեան համաձայն: Եթէ ինչ որ մէկը սխալ մը գործած է եւ անկեղծօրէն կ'ապաշխարէ, Գողգոթա լերան վրայ, Յիսուսի ըրած գործը պարտքը կը ջնջէ: Հնարաւոր է, որ ըսես. «Բայց սխալը եղած է իմ դէմ եւ ոչ թէ Յիսուսի»: Այո՛, բայց դուն չես պատկերացներ այն սխալի մեծութիւնը, որ դուն թոյլ տուիր Անոր նկատմամբ: Յիսուսը անմեղ Չոռն մըն էր, Որ ծնաւ առանց մեղքի, մինչդեռ իւրաքանչիւր մարդ

մեղանչած էր եւ դատապարտուած էր մահուան: Մեզմէ իւրաքանչիւրը խախտած է Աստուծոյ օրէնքները, որոնք վեր են երկրի օրէնքներէն: Եթէ արդարադատութիւնը գործէր, ապա մենք բոլորս ալ պէտք է մահուան դատապարտուէինք տիեզերքի բարձրագոյն դատարանի առջեւ:

Հնարաւոր է, որ առիթ չես տուած, որ քեզի հետ սխալ վարուին: Բայց եթէ դուն փորձես համեմատել այն, ինչ որ եղած է քու դէմ, այն ամէնուն հետ, ինչ որ դուն ըրած ես ու ներուած, պիտի տեսնես, որ անհամեմատելի է: Դուն չես կրնար փոխհատուցել նոյնիսկ քու պարտքը: Եթէ դուն քեզ խաբուած կը զգաս, ուրեմն կորսնցուցած ես քու նկատմամբ եղած ողորմութեան հասկացողութիւնը կամ իմաստը:

## ՈՉ ՄԷԿ ՄՈՒԹ ԱՆԿԻՒՆ

Համաձայն Հին կտակարանի ուխտի՝ եթէ դուն յանցանք կը գործէիր մէկուն դէմ, ան օրինական իրաւունք ունէր նոյնը հատուցելու քեզի: Թոյլատրուած էր վերցնել պարտքերը, չարի դիմաց չարով փոխհատուցել (տե՛ս Ղեւտ. 24.19, Ելից 21.23- 25):

Օրէնքը կարեւորագոյնն էր: Յիսուսը տակաւին չէր մահացած զանոնք ազատելու համար: Տե՛ս, թէ ինչպէս Ան կը դիմէ Նոր ուխտի հաւատացեալներուն.

«Լսած էք, որ ըսուեցաւ. «Աչքի տեղ՝ աչք, եւ ակռայի տեղ՝ ակռայ»: Բայց Ես կ'ըսեմ ձեզի՝ Չարին հակառակ մի՛ կենաք, այլ ով որ ապտակ տայ քու աջ երեսին, միւսն ալ անոր դարձուր... Եւ ով որ քեզ պահակ բռնած մէկ մղոն քշէ, անոր հետ երկուքը գնա՛: Քեզմէ բան մը ուզողին տուր, քեզմէ փոխ առնել կամեցողէն երես մի՛ դարձներ»:

– Մատթ. 5.38- 42

Յիսուսը կը վերացնէ որեւէ մութ անկիւն: Փաստօրէն, Ան կ'ըսէ, որ մեր դիրքը վրէժխնդրութենէն շատ հեռու ըլլալն է, որ մենք յօժարակամ բաց ըլլանք՝ հնարաւորութիւն տալով, որ «օգտուին» մեզմէ:

Երբ մենք կը փորձենք շտկել այն սխալը, որ եղած է մեր նկատ-

մամբ, աստորմով մենք մեզ կը դնենք դատաւորի դիրքի մէջ: Մատթէոս 18-րդ գլուխի մէջ չներող ծառան այնպէս ըրաւ, որ բանտ նետեցին իր ծառայակիցը:

Իսկ ի՞նչ եղաւ անոր հետ: Չներող ծառան մատնուեցաւ դահիճներուն, իսկ անոր ընտանիքը վաճառուեցաւ, մինչեւ որ ան կը վճարէր իր ամբողջը պարտքը:

Մենք պէտք է յանձնուինք եւ տեղ տանք արդար Ղատաւորին. Ան արդարութեամբ կը հատուցէ: Միայն Ան արդարութեամբ վրէժխնդիր կ'ըլլայ:

Վիրաւորուածութեան թեմայով ես կը ծառայէի Ֆլորիտայի Թամփա քաղաքի եկեղեցւոյ մէջ: Ծառայութեան վերջաւորութեան կին մը մօտեցաւ ինձի: Ան ըսաւ, որ ինքը ներած էր իր նախկին ամուսինին՝ անոր բոլոր ըրածներուն համար, բայց երբ լսեց վիրաւորանքները ազատ արծակելու մասին խօսքը, հասկցաւ, որ մինչեւ հիմա իր ներսը խաղաղութիւն չունի եւ շատ վատ վիճակի մէջ է:

– Դուն մինչեւ հիմա չես ներած անոր,- մեղմօրէն ըսի կնոջը: Բայց ես ներման արցունքներ թափած եմ,- ըսաւ ան:

– Դուն կրնաս լալ, բայց տակաւին կը շարունակես զինք ազատ չարծակել: Կինը պնդեց, որ ես կը սխալիմ, եւ որ ինքը ներած է նախկին ամուսինին:

– Ես անորմէ ոչինչ կ'ուզեմ: Ես ազատ արծակած եմ զինք,- շարունակեց կինը:

– Ըսէ՛ ինձի, ան ի՞նչ ըրած է քեզի:

– Իմ ամուսինն ու ես եկեղեցւոյ հովիւ էինք: Ան լքեց զիս ու մեր երեք տղաները եւ փախաւ եկեղեցւոյ մէջ աչքի ինկող, գրաւիչ կնոջ մը հետ: Ան ըսաւ, որ արհամարհած է գԱստուած՝ ամուսնանալով իմ հետս, որովհետեւ իրեն համար Աստուծոյ կատարեալ կամքը այդ կնոջ հետ ամուսնանալն էր, որու հետ ալ ան փախաւ: Ամուսինս կ'ըսէր, որ այդ կինը արժէքաւոր էր անոր ծառայութեան մէջ, որովհետեւ ան աւելի շատ աջակցող էր, իսկ ես խոչընդոտ էի: Ամուսինս կը մեղադրէր զիս, թէ ես քննադատող եմ: Ամուսնութեան քայքայման ողջ մեղքը ան դրաւ իմ վրա: Ան երբեք ետ չէ

եկած եւ չէ ընդունած, որ այդ ամէնը իր մեղքով էր:

Այս տղամարդը ակնյայտօրէն խաբուած էր եւ շատ սխալ վարուած էր իր կնոջ ու ընտանիքի հետ: Կինը շատ տառապած էր անոր արարքներէն եւ կը սպասէր, որ ան պիտի հատուցէ պարտքը: Պարտքը ապրուստադրամը կամ երեխաներուն աջակցիլը չէր, քանի որ այդ կնոջ նոր ամուսինը ամէն ինչով կ'ապահովէր զինք: Պարտքը, որ կինը կ'ուզէր նախկին ամուսինէն, այն էր, որ ան իր սխալը ընդունէր: «Դուն չես ներեր անոր, մինչեւ ան չի գայ քովդ եւ չըսէ, որ սխալ էր, որ ատիկա իր մեղքով էր, ոչ թէ քու, եւ յետոյ ալ ներում հայցէ: Այս չիրագործուած հատուցումն է, որ քեզ կապուած պահած է», - ըսի ես:

Եթէ Յիսուսը սպասէր, մինչեւ մենք գայինք Անոր եւ ներողութիւն խնդրէինք՝ ըսելով՝ «Մենք սխալ էինք, Դուն ճիշդ էիր: Ներէ՛ մեզի», ապա մեզի չէր ներեր խաչին վրայ: Երբ Յիսուսը գամուած էր խաչին, աղաղակեց. «Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր, թէ ինչ կ'ընեն» (Ղուկ. 23.34):

Յիսուսը ներեց մեզի նախքան Անոր քով մեր գալն ու խոստովանիլը, որ վիրաւորած ենք Ձինք: Պօղոս ամաքեալի խօսքերը մեզ կը խրատեն. «Ինչպէս Քրիստոսը ձեզի ներեց, այնպէս ալ դուք» (Կողոս. 3.13): «Իրար հետ քաղցր եղէք, գթած՝ իրար ներելով, ինչպէս Աստուած ալ Քրիստոսով ձեզի ներեց» (Եփես. 4.32):

Երբ ես այդ կնոջ ըսի, որ ան իր ամուսինին չի ներեր, մինչեւ որ ան չի գայ ու չըսէ՝ «Ես սխալ էի, դուն՝ ճիշդ», արցունքները հոսեցան անոր աչքերէն: Այն, ինչ որ այդ կինը կ'ուզէր, պզտիկ կ'երեւէր՝ համեմատած այն բոլոր ցաւերու հետ, որ ամուսինը պատճառած էր իրեն եւ իր երեխաներուն: Բայց կինը մարդկային արդարութեան գերութեան մէջ էր: Ան ինքզինքը դատաւոր կարգած էր՝ պահանջելով պարտքի վճարման իր իրաւունքը, եւ կը սպասէր հատուցման: Այս վիրաւորուածութիւնը զինք կը խանգարէր իր նոր ամուսինին հետ փոխյարաբերութիւններու մէջ: Ատիկա նաեւ ազդած էր բոլոր տղամարդ հեղինակութիւններու հետ անոր փոխյարաբերութեան վրայ, որովհետեւ այդ կնոջ նախկին ամուսինը նաեւ իր հովիւր եղած էր:

Յաճախ Յիսուսը մեր սրտերու վիճակը կը նմանցնէ հողին: Մեզի խրատ կը տրուի արմատ նետել եւ հաստատուիլ Աստուծոյ սիրոյ մէջ: Աստուծոյ Խօսքի սերմը յետագային արմատ կը նետէ մեր սրտերու մէջ, կ'աճի եւ վերջաւորութեան կու տայ արդարութեան պտուղ: Այս պտուղը սէրն է, ուրախութիւնը, խաղաղութիւնը, երկայնամտութիւնը, քաղցրութիւնը, բարութիւնը, հաւատարմութիւնը, հեզութիւնը եւ ժուժկալութիւնը (տե՛ս Գաղատ. 5.22,23):

Բայց հողէն կը ծլի միայն այն, ինչ որ ցանուած է: Եթէ մենք պարտքի, չնտրելու եւ վիրաւորանքի սերմեր կը ցանենք, Աստուծոյ սիրոյ փոխարէն մէկ այլ արմատ դուրս կ'ելլէ: Ատիկա կը կոչուի դառնութեան արմատ:

Ֆրենսիս Ֆրանճիսկէն իր գիրքերէն մէկուն մէջ դառնութեան կու տայ այսպիսի գերազանց սահմանում մը. «Դառնութիւնը չիրագործուած վրէժխնդրութիւնն է»: Այն կը յառաջանայ, երբ վրէժխնդրութիւնը չի բաւարարուիր այն աստիճան, ինչպէս մենք կը ցանկանք:

Եբրայեցիս գիրքի հեղինակը անմիջականօրէն կը խօսի այս թեմային մասին:

«Հետեւեցէ՛ք խաղաղութեան ամենուն հետ եւ սրբութեան, որ առանց անոր ոչ ոք Տէրը կը տեսնէ: Զգո՛յշ եղէք, որ մէկը ետ մնացող չըլլայ Աստուծոյ շնորհքէն, որ դառն արմատ մը վեր չբուսնի եւ նեղութիւն տայ, եւ անորմով շատերը պղծուին»:

– Եբր. 12.14,15

Ուշադրութիւն դարձո՛ւր «շատերը կը պղծուին» բառերուն: Հնարաւոր է, որ ասոնք նորէն այն «շատերն» են, որոնց մասին Յիսուսը ըսաւ, որ պիտի վիրաւորուին վերջին օրերուն (տե՛ս Մատթ. 24.10):

Դառնութիւնը արմատ է: Եթէ արմատները կը խնամեն՝ կը ջրեն, կը պաշտպանեն, կը սնուցանեն եւ ուշադրութիւն կը դարձնեն, ատոնք կը խորանան ու կ'ամրանան: Եթէ արմատներու հարցերը արագօրէն չլուծուին, դժուար կ'ըլլայ ատոնք արմատախիլ ընելը:

Վիրաւորանքի ուժը կը շարունակէ աճիլ: Ատոր համար ալ Խօսքը մեզ կը յորդորէ թոյլ չտալ, որ արեգակը մայր մտնէ մեր բարկութեան վրայ (տե՛ս Եփես. 4.26): Այդ պարագային արդարութեան պտուղի փոխարէն մենք կը տեսնենք բարկութեան, գայլոյթի, նախանձի, ատելութեան, վիճաբանութեան եւ տարածայնութեան հունձքը:

Յիսուսը ասոնք չար պտուղներ անուանեց (տե՛ս Մատթ. 7.19,20): Աստուածաշունչը կ'ըսէ, որ եթէ մարդ մը չի հետեւիր խաղաղութեան եւ առիթ կու տայ վիրաւորանքներուն, վերջ ի վերջոյ կը պղծուի: Այն, ինչ որ քու ներսդ թանկարժէք է, ի վերջոյ կը պղծուի չներման պատճառով:

### ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ԹԱԳԱՒՈՐԸ ԿԸ ՊՂԾՈՒԻ

Գիրքի սկիզբը մենք տեսանք, թէ ինչպէս Դաւիթը հաւատարիմ մնաց Սաւուղ թագաւորին նոյնիսկ այն ժամանակ, երբ Սաւուղը հաւատարիմ չէր անոր: Դաւիթը չէր փնտռեր անձնապէս վրէժխնդիր ըլլալ, նոյնիսկ երբ երկու անգամ ատիկա իրագործելու հնարաւորութիւն ընձեռնուեցաւ: Դաւիթը Աստուծոյ սրտի համեմատ մարդ էր: Ան թոյլ տուաւ, որ Աստուած դատաստան ընէ իր եւ Սաւուղի միջեւ: Երբ Աստուծոյ դատաստանը իջաւ Սաւուղի վրայ, Դաւիթը չուրախացաւ: Ան ողբաց Սաւուղի վրայ, քանի որ ոչ մէկ դառնութիւն ունէր անոր նկատմամբ:

Սաւուղի մահէն յետոյ Դաւիթը նստաւ գահին: Ան զօրացուց ազգը, ունեցաւ ռազմական ու նիւթական յաջողութիւններ եւ գահը հաստատուն պահեց: Ան ամուսնացաւ շատ կիներու հետ, որոնք անոր համար շատ երեխաներ ծնան, որոնցմէ են Ամնոնը՝ անոր աւագ որդին, եւ Աբիսողոմը՝ երրորդ որդին:

Դաւիթի որդի Ամնոնը չարութեամբ վիրաւորանք հասցուց իր խորթ քրոջը՝ Թամարին, որ Աբիսողոմի քոյրն էր: Ամնոնը ձեւացուց, թէ հիւանդ է եւ խնդրեց հօրմէն, որ ուղարկէ Թամարը իրեն կերակուր տալու: Երբ Թամարը եկաւ, ան հրամայեց, որ ծառաները դուրս ելլեն, եւ բռնաբարեց զանիկա: Յետոյ Ամնոնը արհամարհեց Թամարը եւ հեռացուց զանիկա իր աչքին առաջէն:

Ամնոնը խայտառակած էր կոյս աղջկայ մը եւ կործանած էր անոր կեանքը (տե՛ս Բ. Թագ. 13):

Առանց որեւէ բառ ըսելու Ամնոնի խորթ եղբայրը՝ Աբիսողոմը, քրոջը իր տունը տարաւ եւ հոգ կը տանէր անոր համար, բայց Թամարը պղծելու համար ան կ'ատէր Ամնոնը:

Աբիսողոմը կ'ակնկալէր, որ հայրը պիտի պատժէր իր խորթ եղբայրը: Դաւիթ թագաւորը խիստ բորբոքեցաւ զայրոյթէն, երբ լսեց Ամնոնի չարութեան մասին, բայց ան ոչ մէկ գործնական քայլ ըրաւ: Աբիսողոմը ցնցուեցաւ իր հօր արդարութեան պակասութեանէն:

Թամարը ժամանակ մը կը կրէր թագաւորական պատմուճան, որ նախօրօք կը պատուիրէր թագաւորի կոյս դուստրերու համար, իսկ հիմա ան պատուած էր ամօթով: Ան գեղեցիկ աղջիկ մըն էր եւ հաւանաբար բարձր յարգանք կը վայելէր ժողովուրդի կողմէն, իսկ հիմա կ'ապրէր մարդոցմէ պահուըտելով եւ չէր կրնար ամուսնանալ, քանի որ այլեւս կոյս չէր:

Ասիկա անարդար էր: Թամարը քնացած էր Ամնոնի քով թագաւորի հրամանով եւ բռնաբարուած էր: Անոր կեանքը խորտակուեցաւ, մինչդեռ այն մարդը, որ զնաց այս պղծութեան, կ'ապրէր այնպէս, կարծես ոչինչ ալ տեղի ունեցած էր: Թամարը կը կրէր այդ ամէնուն ծանրութիւնը, անոր կեանքը քաոսի վերածուած էր:

Ամէն օր Աբիսողոմը կը տեսնէր իր ողբացող քոյրը: Արքայադուստրի կեանքը դարձած էր մղձաւանջ: Աբիսողոմը մէկ տարի սպասեց այն յոյսով, որ հայրը ինչ որ բան պիտի ընէր, բայց Դաւիթը ոչինչ ըրաւ: Աբիսողոմը վիրաւորուած էր իր հօրմէն, իսկ անբարոյական Ամնոնին ան ուղղակի կ'ատէր:

Ամնոնի նկատմամբ երկու տարուան ատելութիւնը Աբիսողոմի մէջ յառաջացուց զինք սպաննելու ցանկութիւն: *«Ես վրէժխնդիր պիտի ըլլամ իմ քրոջ համար, քանի որ իսկական իշխանութիւնը ոչինչ կը ձեռնարկէր»*, - հաւանաբար այսպէս կը մտածէր Աբիսողոմը:

Ան խնճոյք մը կազմակերպեց թագաւորի բոլոր որդիներու համար: Երբ Ամնոնը չէր կասկածէր անոր, Աբիսողոմը սպաննեց



եղբայրը, յետոյ ալ փախաւ Գեսուր: Ամնոնի դէմ անոր վրէժխնդրութիւնը իրագործուեցաւ: Բայց այն վիրաւորուածութիւնը, որ Աբիսողոմը կը կրէր հօր հանդէպ, աւելի կը բոցավառէր, եւ պալաւտէն հեռու ըլլալը աւելի կը թէժացներ այդ զգացումը:

Աբիսողոմի մտքերը թունաւորուած էին դառնութեամբ: Ան դարձաւ Դաւիթի թուլութիւններու հմուտ քննադատը, բայց ան յոյս ունէր, որ հայրը պիտի կանչէր զինք: Դաւիթը դարձեալ ոչինչ ձեռնարկեց: Ասիկա ալ աւելի բորբոքեց Աբիսողոմի զայրոյթը:

*Հաւանաբար Աբիսողոմը այսպէս կը մտածէր. «Ժողովուրդը կ'ողջունէ իմ հօրը, բայց անոնք կոյր են անոր իրական բնոյթի նկատմամբ: Ան ընդամէնը իր «ես»-ը փնտռող մարդ է, որ զԱստուած կ'օգտագործէ որպէս ծածկոց: Ան Սաւուղը թագաւորէն աւելի վատն է: Սաւուղը իր գահը կորսնցուց, որովհետեւ չսպաննեց ամաղեկացիներու թագաւորը եւ խնայեց անոնց լաւագոյն ոչխարներէն ու եզերէն քանի մը հատը: Իմ հայրը շնութիւն ըրաւ իր ամենահաւատարիմ մարդոցմէ մէկու կնոջ հետ, յետոյ ալ իր մեղքը ծածկելու համար սպաննեց այն մարդը, որ հաւատարիմ էր իրեն: Ան մարդասպան է եւ շնացող, ատոր համար ալ ան չպատժեց Ամնոնը: Եւ այս ամէնը ան կը ծածկէ Տէր Աստուծոյ նկատմամբ իր կեղծ պաշտամունքով»:*

Աբիսողոմը Գեսուրի մէջ մնաց երեք տարի: Դաւիթը արդէն հաշտուած էր իր կորուստի հետ: Հովաքը համոզուեցաւ թագաւորի կողմէն, որ Աբիսողոմը տուն բերէ, բայց Դաւիթը դեռ կը շարունակէր հրաժարիլ Աբիսողոմի դէմ առ դէմ հանդիպելէ: Երկու տարիէ աւելի ժամանակ անցաւ, եւ Դաւիթը վերջապէս վերադարձուց Աբիսողոմը: Ան շնորհք գտաւ, եւ զինք նորէն ամբողջական արտօնութիւններ շնորհուեցան: Աբիսողոմի սրտին մէջ կը մնար վիրաւորուածութիւնը:

Աբիսողոմը փորձագէտ էր արտաքինէն: Մինչեւ Ամնոնը սպաննելը «Աբիսողոմը չէր խօսեր Ամնոնին հետ ոչ վատ եւ ոչ լաւ, որովհետեւ Աբիսողոմը կ'ատէր Ամնոնը» (Բ Թագ. 13.22): Շատ մարդիկ կրնան պահել իրենց ծրագիրները, ինչպէս որ Աբիսողոմը կ'ընէր: Այս վիրաւորուած քննադատական կեցուածքը ծածկելով՝ ան սկսաւ դէպի իրեն քաշել բոլոր անոնց, որոնք դժգոհութիւններ

ունեին: Ան իրեն հասանելի դարձուց ողջ Իսրայելը. միշտ ժամանակ կը տրամադէր մարդոց գանգատները լսելուն: Ան կը ցաւէր, քանի որ ամէն ինչ կրնար ուրիշ ձեւով ըլլալ, եթէ ինքը թագաւորը ըլլար: Աբիսողոմը կը դատէր անոնց գործերը՝ ատորմով ցոյց տալով, որ թագաւորը ժամանակ չունէր ժողովուրդի համար: Հաւանաբար ան կը վարէր անոնց դատական գործերը, որովհետեւ կը զգար, որ հայրը արդարութեամբ չէր ծառայէր իր ժողովուրդին:

Կը թուար, թէ Աբիսողոմը մտահոգուած էր ժողովուրդի համար: Աստուածաշունչը կ'ըսէ, որ Աբիսողոմը Իսրայելի սրտերը գողցաւ իր հայր Դաւիթէն: Բայց արդեօ՞ք ան անկեղծօրէն մտահոգուած էր ժողովուրդի համար, թէ՞ կը փնտռէր ուղի մը, որու միջոցով պիտի տապալէր Դաւիթը՝ անոր, որ վիրաւորած էր զինք:

### «ՓՈՐՁԱԳԷՏՆԵՐԸ» ԿՐ ՍԽԱԼԻՆ

Աբիսողոմը Իսրայելը իր կողմը գրաւեց եւ դուրս ելաւ Դաւիթի դէմ: Դաւիթ թագաւորը իր կեանքը փրկելու համար ստիպուած էր Երուսաղէմէն փախչիլ: Կը թուար, թէ Աբիսողոմը պիտի հաստատէր իր սեփական թագաւորութիւնը, բայց... ան սպաննուեցաւ, երբ կը հետապնդէր Դաւիթը, չնայած որ Դաւիթը հրամայած էր ձեռք չտալ անոր:

Փաստօրէն, Աբիսողոմը սպաննուեցաւ իր դառնութեան եւ վիրաւորութեան կողմէն: Մարդ մը, որ այդքան շատ ներուժ ունէր, որ գահի ժառանգորդ էր, մահացաւ իր ծաղկուն տարիքին: Ան մերժեց ձգել այն պարտքը, որ կը կարծէր, թէ իր հայրը ունէր: Աբիսողոմը իր ընթացքը պղծուած աւարտեց:

Եկեղեցւոյ մէջ յաճախ աւագներու օգնականները կը վիրաւորուին այն մարդէն, որուն կը ծառայեն: Անոնք կը դառնան քննադատողներ՝ փորձագէտներ այն ամէնուն մէջ, ինչ որ սխալ կը համարեն իրենց աւագի կամ ալ անոնց քով, որուն որ աչքի առջեւ ունին: Անոնք կը լեցուին վիրաւորանքով, անոնց տեսողութիւնը կ'աղաւաղի, կը սկսին տեսնել Աստուծոյ տեսանկիւնէն ամբողջովին տարբեր, մէկ այլ տեսանկիւնէն:

Այդպիսի ծառայողները կը հաւատան, որ իրենց առաքե-

լուծինը մարդոց անարդար աւագն ազատելն է: Անոնք կը գրաւեն զայրացողներու, դժգոհողներու ու տգէտներու սրտերը, եւ մինչեւ աւագները կը գիտնան այդ ամէնուն մասին, կը հասցնեն պառակտում մտցնել եկեղեցւոյ մէջ կամ ծառայութեան մէջ: Այսպէս վարուեցաւ Աբիսողոմը:

Երբեմն անոնց դիտողութիւնները ճիշդ են: Թերեւս Դաւիթը պէտք է ինչ որ բա՞ն ձեռնարկէր Ամնոնի դէմ: Թերեւս աւագը սխալի ռոյրտնէ՞ր ունի: Ո՞վ է դատաւորը՝ դո՞ւն, թէ՞ Տէրը: Յիշէ՛, որ եթէ դուն բախում կը ցանես, ճիշդ ատիկա ալ պիտի հնծես:

Այն, ինչ որ տեղի ունեցաւ Աբիսողոմի հետ եւ ինչ տեղի կ'ունենայ ժամանակակից ծառայութիւններու մէջ, ընթացք մըն է, որ ժամանակ կը պահանջէ:

Յաճախ մենք չենք գիտակցիր, որ մեր սիրտը մուտք գործած է վիրաւորութիւններ: Երբ դառնութեան արմատը կը զարգանայ, այն գրեթէ աննկատելի է: Բայց երբ այն կը խնամեն, կ'աճի եւ կ'ամրանայ: Ինչպէս Եբրայեցիս նամակի հեղինակը կը խրատէ, մենք պէտք է ուշադիր հետեւինք, «որ դառն արմատ մը վեր չբուսնի եւ նեղութիւն տայ, եւ անորմով շատերը պղծուին» (Եբր. 12.15):

Մենք պէտք է քննենք մեր սրտերը եւ բանանք մեր շտկման համար, քանի որ միայն Անոր Խօսքը կրնայ տեսնել մեր սրտերուն մտածմունքներն ու դիտաւորութիւնները: Սուրբ Հոգին կը յանդիմանէ, երբ կը խօսի մարդու խղճի միջոցով: Մենք պէտք չէ անտեսենք Անոր յանդիմանութիւնը կամ յանգցնենք Անոր: Եթէ ձեզմէ ոեւէ մէկը այսպէս վարուած է, ապա ապաշխարեցէ՛ք Աստուծոյ առջեւ եւ բացէ՛ք ձեր սիրտը Անոր, որպէսզի ուղղէ:

Մէկ անգամ ծառայող մը ինչ որ բան ըրած էր եւ հարցուց, թէ որո՞ւն նման ան գործած է՝ Աբիսողոմի՞, թէ՞ Դաւիթի: Քաղաքի մը մէջ ան ծառայած էր որպէս հովիւի օգնական, եւ հովիւը հեռացուցած էր զինք ծառայութենէն: Կը թուար, թէ այդ աւագ հովիւը կը նախանձէր եւ կը վախճար այս երիտասարդի համար, քանի որ Աստուծոյ ձեռքը անոր վրայ էր:

Մէկ տարի յետոյ այս ծառայողը, որուն հեռացուցած էին, հա-

մոզուած էր, որ Տէրը կ'ուզէր՝ ան եկեղեցի հիմնէ քաղաքի միւս ծայրը:

Ան կ'անցնի գործի, եւ որոշ մարդիկ այն եկեղեցիէն, որ ան լքած էր, կու գան միանալու անոր: Երիտասարդ հովիւի մէջ վախ կար, քանի որ չէր ուզեր գործել որպէս Աբիսողոմ մը, բայց ան ակնյայտօրէն վիրաւորուած չէր իր նախկին աւագէն: Ան նոր եկեղեցին սկսած էր Տիրոջմէն առաջնորդուելով եւ ոչ թէ որպէս պատասխան միւս եկեղեցոյ հոգատարութեան պակասին: Ես անոր ցոյց տուի Աբիսողոմի եւ Դաւիթի միջեւ եղած տարբերութիւնը: Աբիսողոմը կը գողնար ուրիշներու սրտերը, քանի որ ան վիրաւորուած էր իր աւագէն: Դաւիթը կը քաջալերէր ուրիշները, որ հաւատարիմ մնան Սաւուղին, չնայած որ Դաւիթը կը հետապնդուէր Սաւուղին կողմէ: Աբիսողոմը իրեն հետ մարդիկ առաւ, Դաւիթը հեռացաւ միայնակ:

Ես հարցուցի անոր. «Դուն քու եկեղեցին մինա՞կդ լքած ես: Որեւէ բան ըրա՞ծ ես մարդոց քաջալերելու համար, որ գան քեզի հետ կամ աջակցին քեզի»:

«Ես մինակ հեռացած եմ եւ ոչինչ ըրած եմ մարդիկ հետս տանելու համար», - ըսաւ ան:

«Ատիկա հրաշալի է, դուն գործած ես Դաւիթի պէս, միայն թէ համոզուի՛ր, որ մարդիկ, որոնք եկած են քովդ, յանկարծ վիրաւորուած չըլլան քու նախկին հովիւէն, իսկ եթէ վիրաւորուած ըլլան, ապա առաջնորդէ գանոնք դէպի ազատութիւն եւ բժշկութիւն», - խորհուրդ տուի ես:

Այս մարդու եկեղեցին հիմա կը բարգաւաճի: Ես անոր մէջ աւելի շատ գնահատեցի այն, որ ան չէր վախնար իր սիրտը քննելէն: Եւ ոչ միայն ատիկա. ան նաեւ ինքզինքը կ'ենթարկէր Աստուածային խրատին: Այս հովիւի համար աւելի կարեւոր էր, որ ինքը հնազանդէր Աստուծոյ կամքին, քան ապացուցուէր, որ ինքը «ճիշդ» է:

Մի՛ վախնար թոյլ տալ Սուրբ Հոգիին, որ Ան յայտնէ քու մէջ եղած աններողամտութիւնը կամ դառնութիւնը: Որքան երկար դուն պահես ատիկա, այնքան աւելի կ'արմատաւորուի այն, եւ երթալով քու սիրտը աւելի կը խստանայ: Մնա՛ գթասիրտ: Ինչպէ՞ս:

«Ամէն դառնութիւն, բարկութիւն, սրտմտութիւն, աղա-  
ղակ եւ հայիոյութիւն թող վեր առնուի ձեզմէ ամէն չա-  
րութեան հետ, եւ իրար հետ քաղցր եղէք, գթած՝ իրար  
ներելով, ինչպէս Աստուած ալ Քրիստոսով ձեզ ներեց»:

– Եփես. 4.31,32

ՄԱՐՏԱՀՐԱԲԵՐՆԵՐ  
ՆԵՏԵԼՈՎ ԱՆՍՊԱՍԵԼԻ  
ՎԻՐԱԴՈՐԱՆՔՆԵՐՈՒՆ՝ ԴՈՒՆ  
ԱԲԵԼԻ Կ՛ԱՃԻՍ

«Ես ունեցայ «Սատանայի խայծը» գիրքը: Ի՛նչ օրհնություն  
է այս գիրքը: Ես շատերուն առաջարկած եմ կարդալ: Իրա-  
կանութեան մէջ Աստուած օգտագործեց այն իմ կեանքի մէջ:  
Շնորհակալութիւն»:

– Ս. Թ., ՃՈՐՃԻԱ

## ԱԶԱՏ ԹԱԿԱՐԴԷՆ

---

*«Որ ճիշդ ասոր համար անձնապէս ջանք կ'ընեն, որ  
ամէն ժամ մաքուր խղճմտանք ունենամ Աստուծոյ  
արջեւ եւ մարդոց արջեւ»:*

**– Գործք 24.16**

**Վ**իրաւորանքէն ազատ մնալու համար ջանք կը պահանջուի: Պօղոսը այն կը համենատէ մարգուելու հետ: Երբ մենք կը մարզենք մեր մարմինները, վնասուելու հաւանականութիւնը կը քիչնայ: Երբ ես Հաուայեան կղզիներու մէջ էի, լուսանկարելու համար բարձրացայ պատի մը վրայ: Ատորմէ յետոյ ծունկիս մկանները քաշուեցան, եւ ես չորս օր չկրցայ քալել:

«Եթէ դուն կանոնաւոր մարզուէիր, ասիկա տեղի չէր ունենար: Քանի որ քու մկանները մարզուած չեն, դուն ենթակայ ես վնասուելու», - ըսաւ ներքնաբուժը:

Երբ ես արդեն կը կարենայի քալել, ուրիշ մասնագետ մը բացատրեց ինձի. «Դուն պէտք է կատարես այս վարժութիւնները, որպէսզի քու ծունկի մկաններուն լարուածութիւնը անցնի»:

«Վարժեցնել», «մարզել» բառը յունարէն «*askeo*» (ասքէօ) բառն է: Վայնի բացատրական բառարանը «վարժեցնել», «մարզել» բառը այսպէս կը բացատրէ՝ «ցաւցնել, ջանք գործադրել, վարժուիլ մարզանքի կամ կարգապահութեան միջոցով»:

Երբեմն ուրիշները կը վիրաւորեն մեզ, եւ ներելը մեզի համար դժուար չէ. մենք մեր սրտերը վարժեցուցած ենք, եւ վիրաւորանքի վնասուածքները մեզի չեն սպառնար:

Շատերը կը բարձրանային այն պատի վրայ եւ չէին վնասուեր, որովհետեւ մարզուած էին: Նմանապէս շատերը ի վիճակի են հնազանդիլ Աստուծոյ՝ իրենց սրտերը վարժեցնելու ճանապարհով: Մեր հասունութեան աստիճանը կ'որոշէ, թէ որքան անվնաս դուրս պիտի ելլենք վիրաւորանքէն:

Որոշ վիրաւորանքներ պիտի ըլլան աւելի դժուար, քան այն վիրաւորանքները, որոնց համար մենք մարզուած ենք: Գերլարուածութիւնը կրնայ դառնալ վիրաւորուածութեան կամ վնասուածքի պատճառ, որմէ յետոյ մենք ստիպուած կ'ըլլանք մարզուիլ հոգիով, որպէսզի նորէն ազատ ըլլանք եւ բժշկուինք: Ատոր համար ջանքեր կը պահանջուին:

Այս գլուխի մէջ ես պիտի անդրադառնամ այն մեծ վիրաւորանքներուն, որոնց հարցերը լուծելու համար շատ ջանք կը պահանջուի:

Իմ կեանքի մէջ տեղի ունեցաւ դէպք մը, որ կապուած էր ծառայողի մը հետ: Այն մեծ վիրաւորանքը, որ ես վերապրեցայ, միակը չէր, բայց այդ մէկը կը տանջէր զիս մէկ ու կէս տարի: Զիս շրջապատող մարդիկ գիտէին, թէ ինչ տեղի կ'ունենար հետս: Անոնք կը հարցնէին ինձի. «Դուն չե՞ս վիրաւորուիր: Ի՞նչ կը պատրաստուիս ընել: Կը պատրաստուիս մէկ կողմ քաշուիլ եւ ոչինչ ընե՞լ»: Ես կ'ըսէի. «Իմ կեանքի մէջ ամէն ինչ հրաշալի է: Ատիկա չէ ազդած իմ վրայ: Ես կը շարունակեմ առջեւ երթալ իմ կեանքի կոչման մէջ»:

Բայց իմ պատասխանը ուրիշ բան մը չէր, քան՝ հպարտութիւն:



Խիստ վիրաւորուած էի, բայց չէի խոստովանիր նոյնիսկ ես ինծի: Ես ժամեր կ'անցընէի մտորումներու մէջ՝ փորձելով հասկնալ, թէ ինչպէս այս ամէնը պատահեցաւ հետս: Ցնցուած ու անզգայնացած էի: Ես ինձմէ կը վանէի այդ մտքերը, սակայն իրականութեան մէջ թոյլ էի եւ վիրաւորուած:

Անցան ամիսներ: Կը թուար, թէ ամէն ինչ կը չորնայ, ծառա-յութիւնը «հինցած» էր, իմ աղօթքի «մառանը» դատարկ էր, եւ ես տանջանքի մէջ էի: Ամէն օր կը պայքարէի դեւերու դէմ: Ես կը կարծէի, որ այս բոլոր դիմադրութիւնները իմ կոչման պատճառով էին, բայց իրականութեան մէջ այդ տանջանքը կու գար չներելէն:

Ամէն անգամ, երբ կը յայտնուէի այս մարդուն կողքին, կը փախ-չէի՝ զգալով, որ հոգեւոր հարուած կը ստանամ:

Յետոյ եկաւ այն առաւօտը, որ ես երբեք չեմ մոռնար: Ես նստած էի իմ նստարանին եւ կ'աղօթէի:

– Տէ՛ր, ես վիրաւորուած եմ,- հարցուցի ես:

Այս բառերը նոր դուրս ելած էին իմ շուրթերէն, երբ հոգիս խորքէն լսեցի ճիշ մը.

– Այո՛:

Աստուած կ'ուզէր վստահ ըլլալ, որ ես կը գիտակցէի իմ վիրա-ւորուած ըլլալը:

– Աստուած իմ, կը խնդրեմ օգնէ՛ ինծի ազատիլ այս վերքէն ու վիրաւորանքէն. ինծի համար չափազանց դժուար է ասոր հետ գործ ունենալը,- կը խնդրէի ես:

Ասիկա ճիշդ այն էր, ինչ որ Աստուած կ'ուզէր ինձմէ. Ան կ'ու-զէր, որ ես վերջ դնէի իմ ես-ին: Շատ յաճախ մենք կը փորձենք մեր սեփական ուժերով ինչ որ բան ընել: Բայց ատիկա չի նպաստեր մեր հոգեւոր աճին, ընդհակառակը, մենք դիւրութեամբ կրնանք իյնալ:

Բժշկուելու եւ ազատելու համար առաջին քայլը այն է, որ դուն ընդունիս քու վիրաւորուած ըլլալը: Յաճախ հպարտութիւնը չ'ու-զեր, որ մենք ընդունինք մեր վնասուած եւ վիրաւորուած ըլլալը: Այն պահէն, երբ ես ընդունեցի իմ իրական վիճակը, կը փնտռէի

Տէրը եւ բաց էի ուղղումի համար:

Ես զգացի, որ Տէրը կ'ուզէր՝ ես քանի մը օր ծոմ պահեմ: Ծոմապահութիւնը ինձի պիտի դնէր դիրքի մը վրայ, ուր ես զգայուն պիտի ըլլայի Սուրբ Հոգիի ձայնի հանդէպ:

«Ահա ասիկա է ծոմը, որուն ես կը հաւնիմ. լուծէ անիրաւութեան կապանքները, արծակէ՛ լուծի կապերը եւ ջարդուածներուն ազատ թող տուր, եւ ամէն տեսակ լուծ կոտորեցէք»:

– Եսայիա 58.6

Ես պատրաստ էի, որ անիրաւութեան կապանքները քանդուէին, եւ ազատ ըլլայի ճնշումէն:

Քանի մը օր յետոյ ես գացի թաղման արարողութեան: Այն մարդը, որ վիրաւորած էր զիս, նոյնպէս հոն էր: Ես տեսայ զինք եկեղեցւոյ շէնքի ետեւը եւ սկսայ լալ:

–Տէ՛ր, ես կը ներեմ անոր: Ես ազատ կ'արծակեմ զինք այն ամէնուն համար, ինչ որ ան ըրած է:

Անմիջապէս զգացի, որ ծանրութիւնը վերացաւ: Ես ներած էի անոր: Ինչպիսի՛ թեթեւութիւն եկաւ:

Բայց ասիկա ընդամէնը իմ առողջացման ճանապարհի սկիզբն էր: Իմ սրտի մէջ ես ներած էի, բայց չէի հասկցած վերքի մեծութիւնը: Ես դեռ ամբողջութեամբ չէի ապաքինուած եւ կրնայի կրկին վիրաւորուիլ: Ասիկա ֆիզիքական վերքերէն ապաքինուելու նման էր: Ապագայ վիրաւորանքները կանխելու համար ես կարիք ունէի մարզուելու, ամրապնդելու իմ սիրտը, միտքը եւ զգացումները:

## Ի՞ՆՉ Կ'ԸՍԷՔ ՎԻՐԱԴՈՐԱՆՔԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անցան ամիսներ: Ժամանակ առ ժամանակ ես կը պայքարէի նախկին մտքերու դէմ: Երբ իմ ներկայութեամբ կը խօսէին անոր մասին, կը դժգոհէին անորմէ, կամ երբ կը հանդիպէի անոր, կը զգայի, որ վիրաւորանքը տակաւին կար: Ես արագ կը մերժէի այդ մտքերը եւ ատոնք դուրս կը վննտէի (տե՛ս Բ. Կորնթ. 10.5): Վիրաւորանքէն

ազատ մնալու համար ասիկա իմ մարզանքն էր կամ պայքարը:

Վերջապէս ես հարցուցի Տիրոջը, թէ ինչպէս ինքզինքս պաշտպանեմ այս մտքերէն, որպէսզի նորէն ետ չքաշեն դէպի չներելը: Ես գիտէի, որ Ան կը ցանկար ազատութեան բարձր մակարդակ մը ինձի համար, իսկ ես չէի ուզեր իմ կեանքի մնացած մասը ապրիլ վիրաւորուածութիւն կրելով: Տէրը պատուիրեց ինձի աղօթել այն մարդուն համար, որ վիրաւորած էր զիս՝ յիշեցնելով Իր խօսքերը.

«Բայց ես կ'ըսեմ ձեզի. սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթք ըրէ՛ք ձեզ չարչարողներուն եւ ձեզ հալածողներուն համար»:

– Մատթ. 5.44

Այնպէս որ, ես աղօթեցի: Սկիզբը ատիկա «չոր», միապաղաղ ձայն մըն էր՝ առանց զգացումի որեւէ ակնարկի: Պարտաւորութենէն մեկնած՝ ես կ'աւելցնէի. «Տէ՛ր, օրհնէ՛ զինք: Տո՛ւր անոր լաւ օր: Օգնէ՛ անոր այն ամէնուն մէջ, ինչ որ ան կ'ընէ: Յիսուսի՛ անունով, ամէ՛ն»:

Ասիկա շարունակուեցաւ քանի մը շաբաթ: Կը թուար, թէ ինձի համար ուրիշ ելք չկար: Յետոյ առաւօտ մը Տէրը ինձի ըսաւ կարդալ Սաղմոս 35-ը: Ես ոչ մէկ պատկերացում ունէի, թէ ինչ կար Սաղմոս 35-ին մէջ: Բացի եւ սկսայ կարդալ: Երբ ես կարդացի կէսը, տեսայ իմ իրավիճակը:

«Սուտ վկաներ ելան, չգիտցածներս կը հարցնեն ինձի: Բարիքի տեղ չարիք կը հատուցանեն ինձի՝ իմ անձը անժառանգ ընելով»:

– Սաղմոս 35.11,12

Ես կրնայի ինքզինքս նոյնացնել Ղաւթի հետ: Իմ կարծիքով ե՛ւ այդ մարդը, ե՛ւ անոր ընկերներէն քանի մը հոգի ինձի բարիքի փոխարէն չարիք կը հատուցանէին: Իմ անձը, անկասկած, վիշտի մէջ էր:

Աստուած օգտագործեց այս սաղմոսը, որպէսզի ցոյց տայ վերջին քանի մը տարիներու ընթացքին իմ ճակատամարտը: Մէջ-

բերում մը զիս մղեց այնքան բարձր ցատկել, որ գլուխով զարկի առաստաղին: Խօսքը հետտետալ տողերու մասին է.

«Բայց ես քուրձ կը հագնէի անոնց հիւանդանալու ժամանակ. իմ անձը ծոնով կը չարչարէի, բայց իմ աղօթքը իմ ծոցը կը դառնայ: Ես անոնց հետ կը վարուէի ինչպէս իմ բարեկամի եւ իմ եղբօրս հետ եւ տրտմութեամբ կը ցածնայի իր մօր համար սուգ ընողի պէս»:

– Սաղմոս 35.13,14

Դաւիթը կ'ըսէր, որ այս մարդիկ կը փորձէին կործանել իր կեանքը: Անոնք չարութեամբ կը յարձակէին անոր վրայ, երբ ինքը ոչինչ ըրած էր ատոր արժանանալու համար: Յետոյ եկաւ իմ պատասխանը. «Բայց քանի որ ես...»:

Դաւիթին արձագանգը հիմնուած չէր ուրիշներու գործողութիւններու վրայ: Վճռելով ընել այն, ինչ որ ճիշդ էր, ան կ'աղօթէր անոնց համար այնպէս, ըսես անոնք իր մտերիմ եղբայրներն էին, կամ ալ այնպէս, ինչպէս մէկը կ'ողբայ իր մօր վրայ: Աստուած ցոյց տուաւ ինձի, թէ ինչպէս աղօթեմ այդ մարդու համար. «Աղօթէ՛ անոր համար այն, ինչ որ կ'ուզես, որ Ես ընեմ քեզի համար»:

Այդ պահէն իմ աղօթքները ամբողջութեամբ փոխուեցան: Ատոնք լեցուեցան կեանքով: Ես կ'աղօթէի. «Տէ՛ր, Դուս Քեզ աւելի հզօր ձեւով յայտնէ անոր: Օրհնէ՛ զինք Քու ներկայութեամբ: Թո՛ղ տուր անոր աւելի մօտիկէն ճանչնալու Քեզ: Թող ան Քեզմէ՛ բաւականութիւն ստանայ եւ պատիւ բերէ Քու անուան»: Ես կ'աղօթէի այն, ինչ որ կ'ուզէի, որ Աստուած ընէր իմ կեանքին մէջ:

Մէկ ամիս սրտացաւութեամբ աղօթելով անոր համար՝ ես բարձր ձայնով աղաղակեցի. «Ես կ'օրհնեմ քեզ: Ես կը սիրեմ քեզ, Յիսուսի՛ անունով»: Ատիկա ճիշ մըն էր իմ հոգիին խորքէն: Յանուն ինձի անոր համար աղօթող մարդէն ես դարձած էի յանուն անոր աղօթող մարդ: Ես զգացի, որ բժշկութիւնը ամբողջացաւ:

## ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Անցան շատ շաբաթներ, եւ ես այդ մարդը նորէն տեսայ: Անյարմար զգացում մը մնացած էր իմ սրտի մէջ: Ես տակաւին կը

պայքարի քննադատող ըլլալու ցանկութեան դէմ:

– Դուն կարիք ունիս անոր քով երթալ, ճո՛ն,- քաջալերեց զիս կինս: - Ո՛չ, չեմ երթար,- համոզեցի զինք,- հիմա ես բժշկուած եմ:

Բայց ես զգացի, որ Սուրբ Հոգին վկայութիւն չտուաւ այն բանի մէջ համոզուելու համար, ինչ որ ըսի: Ես հարցուցի Տիրոջը, թէ կարիք ունի՞մ անոր քով երթալու: Ան ըսաւ, որ կայ ատոր կարիքը:

Ես ժամադրուեցայ այդ մարդու հետ եւ գացի նուէրով: Ես անձնապէս խոնարհեցայ, խոստովանեցայ իմ սխալ կեցուածքը եւ խնդրեցի անոր ներումը: Մենք հաշտուեցանք, իսկ ներումն ու բժշկութիւնը հոսեցան իմ սրտի մէջ:

Անոր գրասենեակէն դուրս ելայ բժշկուած եւ զօրացած: Ես այլեւս չէի պայքարեր այդ ցաւի դէմ, ոչ ալ քննադատող էի անոր նկատմամբ: Ատորմէ յետոյ մեր փոխյարաբերութիւնները զարգացան, եւ մենք ալ երբեք որեւէ խնդիր չունեցանք: Հանդիպումէն յետոյ Լիզային պատմեցի. «Երբ առաջին անգամ հանդիպեցայ այդ մարդուն, իմ աչքերու մէջ ան ոչ մէկ սխալ բան կրնար ընել: Ես ոչ մէկ մեղք կը տեսնէի անոր մէջ: Ես կը սիրէի զինք, քանի որ կը կարծէի, թէ ան կատարեալ էր: Բայց երբ վիրաւորուած էի, շատ դժուար էր զինք սիրելը. ատիկա կը թելադրէր իմ ունեցած հաւատքի ամէն մէկ մասնիկը»: Այժմ, երբ ես անցած եմ վերականգնման այս գործընթացի միջոցով եւ բժշկուած եմ, ես կը սիրեմ զինք այն նոյն ուժգնութեամբ, երբ առաջին անգամ հանդիպեցայ անոր: Ատիկա հասուն սէր է:

Միտքս եկաւ Սուրբ գիրքի հետեւեալ խօսքը.

«Բայց ամէնէն առաջ սէրը սերտ ունեցէք իրար հետ, որ սէրը կը ծածկէ մեղքերու շատութիւնը»:

– Ա. Պետր. 4.8

Դիւրին է սիրել զանոնք, որոնք մեր աչքերու մէջ չեն կրնար սխալներ գործել: Ատիկա «մեղրամիսի» սէրն է: Այլ բան է սիրել ինչ որ մէկը, երբ կրնանք տեսնել անոր մեղքերը, յատկապէս, երբ ատորմէ տուժած ենք: Աստուծոյ սէրը հասունցուց զիս, ամրապնդեց իմ սիրտը:

Այդ պահին յետոյ նմանատիպ շատ դէպքեր եղած են, բայց այլևս ժամանակ չէ պահանջուած վիրաւորանքը ամբողջութեամբ արծակելու համար: Պատճառը այն է, որ իմ սիրտը մարզուած էր վիրաւորանքէն ազատ մնալու համար:

Անցաւ քանի մը ամիս այն պահին, երբ Աստուած խօսեցաւ հետս մինչեւ այդ մարդու գրասենեակէն ամբողջութեամբ բժշկուած դուրս գալս: Ասիկա մարզուելու ժամանակահատուած էր, որու ընթացքին սիրտս վարժուեցաւ եւ զօրացաւ: Այդ ամիսներու ընթացքին ժամանակ առ ժամանակ ինծի կը թուար, որ ոչ մէկ տեղ կը շարժիմ: Փաստօրէն, ես կը մտահոգուէի, որ երթալով վիճակս աւելի կը վատանայ:

Բայց ես առողջացման հաստատուն ճանապարհի վրայ էի: Տիրոջ Հոգին կ'առաջնորդէր զիս այնպիսի արագութեամբ, որ ես կարենայի դիմակայել: Ասիկա իմ հասունացման գործընթացի մասն էր: Ես չեմ անարգեր այդ փորձառութիւնը եւ շնորհակալ եմ այն աճի համար, որ այդ փորձառութիւնը բերաւ իմ կեանքի մէջ:

## ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Մենք կ'աճինք դժուար ժամանակներու մէջ եւ ոչ թէ դիրին: Տիրոջ հետ մեր ճամբորդութեան մէջ միշտ կը հանդիպինք դժուար յաղթահարելի տեղերու: Մենք չենք կրնար փախչիլ ատոնցմէ. մենք կարիք ունինք դէմ առ դէմ հանդիպելու ատոնց, քանի որ այդ դժուարութիւնները կը կազմեն Անոր մէջ կատարեալ դառնալու գործընթացի մասը: Եթէ դուն ընտրես ատոնցմէ փախչիլը, ատորմով լրջօրէն կը խոչընդոտես քու աճը:

Եթէ դուն յաղթահարես տարաբնոյթ խոչընդոտները, կը դառնաս աւելի զօրաւոր եւ աւելի կարեկցող: Դուն աւելի «կը սիրահարուիս» Յիսուսին: Եթէ դուն դուրս ելած ես նեղութիւններէն եւ քու մէջ չես զգար ուժ, սէր ու կարեկցանք, հաւանաբար դուն չես ապաքինուած վերքերէն: Ապաքինուիլը քու ընտրութիւնն է: Որոշ մարդիկ կը վիրաւորուին եւ երբեք չեն ապաքինուիր: Որքան ալ դաժան կը հնչէ ասիկա, բայց ատիկա անոնց ընտրութիւնն է:

Յիսուսը Իր չարչարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ:

Պետրոսը իր չարչարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ: Պօղոսը իր չարչարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ: Իսկ քու մասին ի՞նչ կ'ըսես: Դուն սորվա՞ծ ես, թէ՞ դաժան ես, կոշտացած, պաղ, դառնացած, գայրացած: Եթէ այո, ուրեմն դուն հնազանդութիւն չես սորված: Ճիշդ է, կան վիրաւորանքներ, որոնք ճիշդ այնպէս չեն հեռանար: Դուն պարտաւոր ես աշխատանք տանիլ՝ ջանալով ազատիլ ատոնցմէ, եւ այդ գործընթացի մէջ դուն կ'աճիս ու կը հասուննաս:

Հասունացումը դիւրութեամբ չի գար: Եթէ ատիկա այդպէս ըլլար, բոլորն ալ ձեռք կը բերէին այն: Քիչերը կեանքի այս մակարդակին կը հասնին իրենց հանդիպած դիմադրութեան պատճառով: Դիմադրութիւնը գոյութիւն ունի, քանի որ մեր հասարակութեան ընթացքը Աստուածային չէ, այլ եսասիրական: Աշխարհը կը կառավարուի «օդի իշխանութեան իշխանի» (Եփես. 2.2) կողմէն: Եւ, որպէս հետեւանք, երբ կը մտնես Քրիստոսի հասունութեան մէջ, կ'ըլլան նեղութիւններ, որոնք կու գան, երբ դէմ կը կանգնիս եսասիրութեան հոսքին:

Պօղոսը վերադարձաւ այն երեք քաղաքները, ուր ան եկեղեցիներ հիմնած էր: Անոր նպատակն էր զօրացնել աշակերտներու անձերը: Իսկ ինչպէ՞ս ան կը զօրացնէր: Պօղոսը կը քաջալերէր զանոնք.

«...յորդորեցին, որ հաստատ մնան հաւատքի մէջ, եւ թէ շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ Արքայութիւնը»:

– Գործք 14.21

Պօղոսը անոնց դիւրին կեանք չխոստացաւ: Ան աշակերտներուն չխոստացաւ աշխարհի չափանիշներուն համապատասխան յաջողութիւն: Ան ցոյց տուաւ, որ եթէ աշակերտները կը պատրաստուէին իրենց ընթացքը աւարտել ուրախութեամբ, պէտք է հանդիպէին շատ դիմադրութիւններու, որոնք ան կ'անուանէր «նեղութիւններ»:

Եթէ դուն կը թիավարես գետի հոսանքին հակառակ, ստիպուած կ'ըլլաս շարունակ թիավարել եւ մեծ ջանք գործադրել, որպէսզի դիմադրես գետի հոսանքին ու առաջ երթաս: Եթէ դուն

դադրեցնես թիավարելը եւ հանգստանաս, վերջ ի վերջոյ կը շարժիս գետի հոսանքի հետ: Այնպէս ալ մենք, եթէ վճռած ենք երթալ Աստուծոյ ճանապարհով, կը հանդիպինք շատ նեղութիւններու: Բոլոր փորձութիւններն ալ կու տան մէկ՝ գլխաւոր հարցումի պատասխանը. «Կը պատրաստուի՞ս կեանքդ ապրիլ այնպէս, ինչպէս աշխարհը կ'ապրի, թէ՞ կը պատրաստուիս ապրիլ անձնուրաց կեանքով»:

Յիշէ՛, որ երբ մենք կը կորսնցնենք մեր կեանքը յանուն Յիսուսի, մենք կը գտնենք Անոր կեանքը: Սորվի՛ր կեդրոնանալ վերջնական արդիւնքի վրայ:

Պետրոսը լաւ կը բացատրէ.

«Սիրելիներ՛, օտար բան մի՛ համարէք այն բորբոքած նեղութիւնը, որ ձեզ փորձելու համար կ'ըլլայ, իբր թէ օտար բան մը կը պատահի ձեզի: Այլ ուրախ եղէք՝ իբրեւ թէ Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ Անոր փառքի յայտնութեան ժամանակին ալ ցնծալով ուրախանաք»:

– Ա. Պետր. 4.12,13

Ուշադրութիւն դարձո՛ւր, որ ան կը համեմատէ չարչարանքի տեսողութիւնը ուրախութեան տեսողութեան հետ: Ինչպէ՞ս կրնաս ուրախանալ, ե՞րբ: Երբ որ Անոր փառքը յայտնուի, դուն կը փառաւորուիս Անոր հետ: Այս փառաւորուելու աստիճանը այնքան է, որքան դուն թոյլ տուած ես Անոր քու ներսը կատարելագործել իր բնաւորութիւնը: Այնպէս որ, մի՛ նայիր վիրաւորանքին: Նայի՛ր գալիք փառքին: Հալելո՛ւ իս:





# ԱԲԵԼԻ ԿԱՐԵՒՈՐ Է ՕԳՆԵԼ ՍԱՅԹԱՔԱԾ ԵՂԲՕՐԸ, ՔԱՆ ԱՊԱՑՈՒՑԵԼ, ՈՐ ԴՈՒՆ ՃԻՇԴ ԵՍ

«Ես տասնութ տարեկան եմ: Ունիմ հրաշալի ընտանիք, ունիմ միայն մայր եւ միմեանց շատ նման երկուորեակ քոյրեր: Ես երբեք չեմ հանդիպած իմ կենսաբանական հորը եւ իմ ողջ կեանքի մէջ աններողամտութեամբ լեցուած եղած եմ անոր հանդէպ: Իմ պապիկը՝ Աստուծոյ բարեպաշտ մարդ մը, տուաւ ինձի «Սատանայի խայծը» գիրքը, որ կարդամ: Այն կարդալէն յետոյ ես պատրաստ էի ամբողջութեամբ ներելու իմ հորը»:

– Ն. Մ., ՆԻԻ ՄԵՔՍԻՔՕ

## ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՆՊԱՏԱԿ

---

*«Լսա՞ծ էք, որ առաջիններուն ըսուեցաւ. «Մի՛ սպաններ, եւ ով որ սպաննէ, պարտական կ'ըլլայ դատաստանին»։ Բայց ես կ'ըսեմ ձեզի, թէ ամէնը, որ զուր տեղը բարկանայ իր եղբոր վրայ, պարտական կ'ըլլայ դատաստանին, եւ ով որ իր եղբորը ըսէ՝ «յիմար», պարտական պիտի ըլլայ ատեանին, եւ ով որ իր եղբորը ըսէ՝ «մորոս» (տխմար, ապուշ, անմիտ), պարտական կ'ըլլայ գեհեճի կրակին։ Արդ, եթէ սեղանի վրայ մատուցես քու ընծան եւ հոն յիշես, թէ քու եղբայրը քեզի դէմ մէկ բան ունի, թո՛ղ հոն քու ընծան սեղանի առջեւ եւ զնա՛ նախ հաշտուի՛ր քու եղբոր հետ եւ յետոյ եկո՛ւր ընծադ մատուցէ՛»։*

**– Մատթ. 5.21- 24**

**Ա**յս մէջբերումը Լեւրան քարոզէն է։ Յիսուսը սկսաւ՝ ըսելով. «Լսա՞ծ էք, որ առաջիններուն ըսուեցաւ...»: Յետոյ Ան կ'ըսէր. «Բայց ես կ'ըսեմ ձեզի...»:

Յիսուսը ամենուրեք Իր պատգամի մէջ կը շարունակէ այս համեմատութիւնը: Նախ՝ Ան մեզի կը բերէ օրէնքը, որ կը համապատասխանէ մեր արտաքին գործողութիւններուն, յետոյ Ան ցոյց կու տայ ատոր կատարումը՝ բերելով այն սրտի մէջ: Այնպէս որ, Աստուծոյ աչքերու մէջ մարդասպանը միայն ան չէ, որ մարդ կը սպաննէ, այլ ան, որ կ'ատէ իր եղբորը: Ինչպիսին դուն քու սրտին մէջ ես, այնպիսին ալ իրականութեան մէջ ես:

Իր քարոզի մէջ այս մասին մէջ Յիսուսը պարզ կը նկարագրէ վիրաւորութեան հետեւանքները: Ան կը լուսաբանէ բարկութեան կամ դառը վիրաւորութիւն կրելու դաժանութիւնը: Եթէ մէկը առանց պատճառի կը բարկանայ իր եղբոր վրայ կամ եղբորը կ'անուանէ «*յիմար*», ան դատաստանի վտանգի մէջ է:

*Ըստ Վայնի բացատրական բառարանին՝ «յիմար»* բառը կը նշանակէ «դատարկագլուխ» կամ տխմար: Ասիկա յանդիմանութեան արտայայտութիւն է, որ կ'օգտագործուէր հրեաներուն մէջ Քրիստոսի ժամանակ: Եթէ բարկութիւնը կը հասնէր այն կէտին, երբ մարդը իր եղբորը կ'անուանէր յիմար, ապա ան դժոխքի վտանգի մէջ էր: *Ըստ Իբրիի՝ «յիմար» կը նշանակէ «ըլլալ անաստուած»*: Յիմարը իր սրտին մէջ կ'ըսէ, որ Աստուած չկայ (տե՛ս Սաղմ. 14.1): Այդ օրերուն եղբորը «յիմար» անուանելը բաւականին լուրջ մեղադրանք էր: Ոչ ոք միւսին կ'ըսէր այսպիսի բան, մինչեւ անոնց մէջ ծնած բարկութիւնը չէր վերածուէր ատելութեան: Ատիկա նոյնն էր, եթէ այսօր եղբորդ ըսես՝ զնա՛ դժոխք:

Յիսուսը անոնց ցոյց կու տար, որ եթէ չլուծուին բարկութեան հարցերը, այն կրնայ տանիլ ատելութեան, եթէ չլուծուին ատելութեան հարցերը, այն անոնց կը դնէ դժոխքի վտանգի մէջ: Յետոյ Ան աւելցուց, որ եթէ Աստուծոյ ընծայ մատուցելու ժամանակ յիշեն, որ իրենց եղբայրը իրենցմէ վիրաւորուած է, անոնց գերագոյն խնդիրը պէտք է ըլլայ գտնել զինք եւ հաշտուիլ:

Ինչո՞ւ մենք պէտք է այդպէս փափաքինք հաշտութեան: Յանուն մե՞զ, թէ՞ յանուն մեր եղբոր: Մենք պէտք է երթանք մեր եղբոր քով, որպէսզի կարենանք օգնել անոր, որ դուրս գայ այդ վիրաւորութենէն: Նոյնիսկ եթէ մենք չենք վիրաւորած զինք, Աստուծոյ սէրը պէտք է թոյլ տայ, որ ան բարկացած մնայ, վիրաւոր-

րանքն դուրս ելլելու եւ վերականգնելու փորձ չընէ: Հնարաւոր է, որ մենք ոչ մէկ սխալ բան ըրած ենք: Ճիշդը կամ սխալը նշանակութիւն չունի: Մեզի համար շատ կարեւոր է, որ օգնենք սայթաքած եղբօրը եւ ոչ թէ ապացուցենք, որ մենք ճիշդ ենք: Կան վիրաւորուածութեան բազմաթիւ բեմագրութիւններ:

Միգուցէ անձը, որ վիրաւորուած է մեզմէ, հաւատացած է, որ մեր վարմունքի մէջ մենք անարդարացի էինք անոր հանդէպ, երբ իրականութեան մէջ անոր ոչ մէկ վնաս հասցուցած ենք: Հնարաւոր է, որ ան ունի ոչ ճշգրիտ տեղեկութիւն, որուն միջոցով ալ յանգած է ոչ ճիշդ եզրակացութեան:

Միւս կողմէն ալ հնարաւոր է, որ ան ունի ճշգրիտ տեղեկութիւն, որմէ ալ յանգած է ոչ ճիշդ եզրակացութեան: Այն, ինչ որ մենք ըսած ենք, հնարաւոր է, չափազանց խեղաթիրուած է՝ անցնելով հաղորդակցութեան զանազան ուղիներով: Չնայած որ մենք վնաս հասցնելու մտադրութիւն չենք ունեցած, մեր խօսքերը եւ գործողութիւնները վիրաւորած են զինք:

Յաճախ մենք մեզ կը դատենք մեր մտադրութիւններէն մեկնելով, իսկ իւրաքանչիւր այլ մարդու՝ ըստ անոնց գործողութիւններու: Հնարաւոր է, որ մարդ մտածէ բան մը, մինչդեռ ըսէ լրիւ ուրիշ բան մը: Երբեմն մեր ճիշդ դրդապատճառները խելացիօրէն պահուած են նոյնիսկ մեզմէ: Մենք կ'ուզենք հաւատալ, որ ատոնք մաքուր են: Բայց երբ մենք կը զտենք մեր մտքերը՝ անցընելով ատոնք Աստուծոյ խօսքի միջոցով, այդ ամէնը կը տեսնենք այլ հարթութեան վրայ:

Եւ վերջապէս, թրեւս մենք մեղք գործած ենք մարդու դէմ: Մենք բարկացած եղած ենք կամ ալ ճնշման տակ ակամայ վիրաւորած ենք զինք: Հնարաւոր է նաեւ, որ այդ մարդը միտումնաւոր այդպէս կը վարուի մեզի հետ, իսկ մենք բարութեամբ կ'արծազանգենք:

Նշանակութիւն չունի, թէ ինչն է պատճառը, որ այս վիրաւորուած մարդու հասկացողութիւնը մթազնած է, եւ ան իր դատողութիւնը հիմնած է ենթադրութիւններու, լսած խօսքերու ու աչքի երեւոյթներու վրայ՝ խաբելով ինքզինքը, նոյնիսկ եթէ համոզուած է, որ զանազանած է մեր իրական դրդապատճառ-

ները: Մենք ինչպե՞ս կրնանք ունենալ ճշգրիտ դատողութիւն առանց ճշգրիտ տեղեկութեան: Մենք պէտք է նրբանկատ ըլլանք այն փաստի նկատմամբ, որ ան իր ողջ սրտով կը հաւատայ, թէ իրեն հետ սխալ վարուած են: Քանի որ անկախ ամէն ինչէն ան համոզուած է, որ մենք վիրաւորած ենք զինք, պէտք է պատրաստակամօրէն խոնարհեցնենք մեզ եւ ներողութիւն խնդրենք:

Յիսուսը մեզ կը խրատէ հաշտուիլ նոյնիսկ այն պարագային, եթէ այդ վիրաւորանքը մեր մեղքով չէ: Խոնարհութեան մէջ քալելը հասունութիւն կը պահանջէ: Առաջին քայլը ընելը յաճախ աւելի դժուար է անոր համար, որ ինքը վիրաւորուած է: Ատոր համար ալ Յիսուսը կ'ըսէ, որ ինքը երթաս այն մարդու քով, որ վիրաւորած է քեզ:

## ՆԵՐՈՒՄ ԽՆԴՐԵԼ ԱՆՈՐՄԷ, ՈՐ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ Է

Պօղոս առաքեալը կ'ըսէր.

«Ապա ուրեմն խաղաղութեան եւ միմեանց շինութեան բաներու ետեւէն երթանք»:

– Հռովմ. 14.19

Ասիկա մեզի ցոյց կու տայ, թէ ինչպէս մօտենանք այն անձին, որուն վիրաւորած ենք: Եթէ մենք կ'ընթանանք յուսահատութեան մէջ, մենք չենք նպաստեր խաղաղութեան եւ դժուար կը դարձնենք ատիկա անոր համար, որ վիրաւորուած է: Մենք պէտք է խաղաղութիւնը պահպանենք խոնարհութեան միջոցով՝ մեր հպարտութեան հաշուին: Ատիկա է միակ ճանապարհը իրական հաշտութիւնը տեսնելու համար: Երբ ես կը փորձէի հաշտութեան եզրեր գտնել այն մարդոց հետ, որոնց վիրաւորած էի, կամ որոնք բարկացած էին իմ վրայ, անոնք կը խուսափէին ինձմէ: Ինձի կ'ըսէին, որ եսասէր եմ, անքաղաքավար, հպարտ, կոպիտ, դաժան եւ նման շատ բաներ:

Իմ բնական արծազանգը հետեւեալն էր. «Ո՛չ, ես այդպիսին չեմ: Դուք ուղղակի չէք հասկնար ինձի»: Բայց երբ ես կը պաշտպանուէի, ատիկա ընդամէնը կը բորբոքէր վիրաւորուածութեան կրակը: Ասիկա խաղաղութեան հետամուտ ըլլալու ճանապարհ

չէ: Մեզի եւ «մեր իրաւունքներու» համար կանգնիլը երբեք իրական խաղաղութիւն չի բերեր:

Ես սորված եմ լռել եւ լսել մարդոց այնքան ժամանակ, մինչեւ անոնք վերջացնեն: Եթէ ես համաձայն չեմ ըլլար անոնց ըսածին հետ, պարզապէս կ'ըսեմ, որ կը յարգեմ անոնց կարծիքը, բայց, հաւանաբար, մենք միմեանց ճիշդ չենք հասկցած: Յետոյ կ'աւելցնեմ, որ կը ցաւիմ զանոնք վիրաւորելու համար:

Կ'ըլլան դէպքեր, որ ես, իրապէս, մեղաւոր կ'ըլլամ մարդոց առջեւ: Ինծի կը մնայ միայն ընդունիլ իմ սխալը եւ ըսել. «Դուք ճիշդ էք: Ես կը խնդրեմ ձեր ներումը»:

Նորէն ըսենք, որ մեր անձը խոնարհեցնելը ուղղակի կը նշանակէ նպաստել հաշտութեան: Ահա թէ ինչու Յիսուսը յաջորդ խօսքերու մէջ ըսաւ.

«Քու ոսոխի հետ շուտով միաբանի՛ր, քանի որ անոր հետ կը ճամբորդես, որ թերեւս ոսոխը քեզ դատաւորին մատնէ, եւ դատաւորը քեզ մատնէ դահիճին, եւ բանտը նետուիս: Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, դուրս չես ելլեր հոնկէ, մինչեւ որ վերջին նաքարակիտը չվճարես»:

– Մատթ. 5.25,26

Հպարտութիւնը կը պաշտպանէ: Խոնարհութիւնը կը համաձայնի եւ կ'ըսէ. «Դուն ճիշդ ես: Ես այդպէս վարուած եմ: Կը խնդրեմ, ներէ՛ ինծի»:

«Բայց վերին իմաստութիւնը նախ եւ առաջ սուրբ է եւ յետոյ խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով եւ բարի պտուղներով լեցուն, անկողմնասէր, անկեղծ»:

– Յակոբ. 3.17

Աստուածային իմաստութիւնը յօժար է հնազանդելու: Երբ հարցը կը վերաբերի անձնական բախումներուն, այն «խստապարանոց» կամ կամակոր չէ: Աստուածային իմաստութեանը ենթարկուող անձը չի վախճար գիջիլ դիմացինին կամ յարգել ուրիշի տեսակէտը, քանի որ ատորմով չի խախտուիր ճշմարտութիւնը:

## ՄՕՏԵՆԱԼ ԱՆՈՐ, ՈՐ ՎԻՐԱԲՈՐԱԾ Է ՔԵՉ

Հիմա, քանի որ մենք քննարկեցինք, թե ինչ պէտք է ընենք, երբ մենք վիրաւորած ենք մեր եղբայրը, եկու՛ր քննարկենք, թե ինչ ընենք, եթէ մեր եղբայրը վիրաւորած է մեզ:

«Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա՛ զինք յանդիմանէ, երբ որ դուն եւ ան մինակ ըլլաք: Եթէ քեզի մտիկ ընէ, քու եղբայրը շահեցար»:

– Մատթ. 18.15

Շատ մարդիկ Սուրբ գիրքի այս խօսքը տարբեր ձեւերով կը կիրառեն, ոչ այն իմաստով, ինչ նկատի ունէր Յիսուսը: Եթէ անոնք վիրաւորուած են, կ'երթան եւ վիրաւորողին կը հակադրուին վրէժխնդրութեան ու բարկութեան հոգիով: Անոնք այս խօսքը կ'օգտագործեն որպէս արդարացում՝ դատապարտելու համար զանիկա, ով վիրաւորած է զանոնք:

Բայց անոնք կը կորսնցնեն այն ամբողջ հիմքը, որուն միջոցով Յիսուսը կը սորվեցնէր երթալ հաշտութեան: Այդ հիմքը դատապարտութեան համար չէ, այլ հաշտեցման: Յիսուսը չ'ուզեր, որ մենք ըսենք մեր եղբօրը, թէ ան որքան վատ վարուած է մեր հանդէպ: Մենք պէտք է հեռացնենք մեր մէջ յառաջացած այն պատմէշը, որ կը խանգարէ մեր փոխյարաբերութեան վերականգնման:

Կրնանք զուգահեռներ տանիլ ասոր եւ այն բանի միջեւ, թէ ինչպէս Աստուած վերականգնեց մեզ Իրեն հետ փոխյարաբերութեան մէջ: Մենք մեղանչած էինք Աստուծոյ դէմ, բայց Ան «յայտնեց Իր սէրը դէպի մեզի, որ երբ որ մենք տակաւին մեղաւոր էինք, Քրիստոսը մեզի համար մեռաւ» (Հռովմ. 5.8): Արդեօ՞ք կը ցանկանք վար դնել մեր ինքնապաշտպանութիւնը եւ մեռնիլ հպարտութեան համար, որպէսզի ներենք այն մարդուն, որ վիրաւորած է մեզ: Աստուած հասաւ մեզի նախքան մեր ներում խնդրելը: Յիսուսը որոշեց ներել մեզի նախքան մեր վիրաւորանքը ընդունիլը:

Նոյնիսկ, երբ Ան մօտեցաւ մեզի, մենք չկրցանք հաշտուիլ Հօր հետ, մինչեւ որ չստացանք Անոր հաշտութեան խօսքը:



«Բայց այն ամէնը Աստուծո՛ւն է, որ մեզ Իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքով եւ մեզ հաշտութեան պաշտօն տուաւ: Որովհետեւ Աստուած էր Քրիստոսի մէջ, որ աշխարհը հաշտեցուց Իրեն հետ, եւ անոնց յանցանքները չհամարեց անոնց եւ հաշտութեան խօսքը մեր մէջ դրաւ: Արդ՝ Քրիստոսի կողմէն պատգամաւորութիւն կ'ընենք, իբրեւ թէ Աստուած կը յորդորէ մեզմով, կ'աղաչենք Քրիստոսի տեղ, հաշտուի՛ք Աստուծոյ հետ»:

– Բ. կորնթ. 5.18-20

Հաշտութեան անհրաժեշտութիւնը կու գայ այն ընդհանուր հիմքէն, որ մենք բոլորս մեղանշած ենք Աստուծոյ դէմ: Մենք չենք ձգտիր հաշտութեան կամ փրկութեան, մինչեւ չիմանանք, որ կայ բաժանութիւն:

Նոր կտակարանի մէջ աշակերտները կը քարոզէին, որ մարդիկ մեղանշած են Աստուծոյ դէմ: Բայց ինչո՞ւ մարդոց կ'ըսէին, որ անոնք մեղք գործած են: Մի՞թէ դատապարտելու համար: Աստուած չի դատապարտեր. «Որովհետեւ Աստուած Իր Որդին չուղարկեց աշխարհ, որ աշխարհը դատէ, այլ որ աշխարհը Անորմով փրկուի» (Յովհ. 3.17): Աւելի ճիշդ չէ՞ զանոնք բերել տեղ մը, ուր անոնք կը հասկնան իրենց վիճակը, կ'ապաշխարեն մեղքերէն եւ ներում կը խնդրեն:

Ի՞նչը մարդուն կ'առաջնորդէ ապաշխարութեան: Պատասխանը կը գտնուի Հռովմայեցիս 2.4-ին մէջ.

«Կամ թէ Անոր քաղցրութեան առատութիւնը, համբերութիւնը եւ երկայնամտութիւնը կ'արհամարհե՞ս՝ չգիտնալով, որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ ապաշխարութեան կը տանի»:

Աստուծոյ քաղցրութիւնը կը տանի մեզ ապաշխարելու: Անոր սէրը մեզ չի ձգեր, որ դատապարտուինք դժոխքի: Ան ապացուցեց Իր սէրը՝ ուղարկելով Յիսուսին՝ Իր միակ Որդիին, Որ մահացաւ խաչի վրայ մեզի համար: Աստուած առաջինը հասաւ՝ անկախ այն բանէն, որ մենք մեղանշած էինք Անոր դէմ: Ան հասաւ ոչ թէ դատապարտելու, այլ վերականգնելու՝ փրկելու համար:

Քանի որ մենք պետք է նմանինք Աստուծոյ (տե՛ս Եփես. 5.1), պետք է հաշտութեան ձեռք մեկնենք այն եղբորը, որ մեղանչած է մեր դէմ: Յիսուսը հաստատեց այսպէս. «Գնա՛ անոր քով եւ ցո՛յց տուր անոր իր մեղքը, ոչ թէ դատապարտէ զինք, այլ հեռացո՛ւր որեւէ բան, որ կը գտնուի ձեր երկուքին միջեւ, եւ այդպիսով եղիր հաշտուած եւ վերականգնուած»: Մեր ներսը եղած Աստուծոյ քաղցրութիւնը մեր եղբորը կը տանի ապաշխարութեան եւ փոխարարութիւններու վերականգնման:

«Արդ կ'աղաչեմ ձեզի ես՝ Տիրոջ համար կապուածս, որ այնպէս երթաք, ինչպէս կը վայելէ այն կոչումին, որուն մէջ կանչուեցաք: Ամէն խոնարհութիւնով, հեզութիւնով եւ երկայնամտութիւնով, սիրով իրար համբերելով, ջանալով Հոգիի միաբանութիւնը պահել խաղաղութեան կապով»:

– Եփես. 4.1-3

Մենք խաղաղութեան այս կապը կը պահպանենք խոնարհութեան, հեզութեան եւ երկայնամտութեան մեր կեցուածքը պահելով եւ սիրով մէկս միւսին թուլութիւնը կրելով: Սիրոյ կապերը կ'ամրանան ատոնց շնորհիւ:

Ես սխալ գործած եմ այն մարդոց հանդէպ, որոնք դատապարտութեամբ հակադրուած են ինձի: Որպէս հետեւանք՝ ես կորսնցուցած եմ անոնց հետ հաշտուելու իմ բոլոր ցանկութիւնները: Փաստօրէն, ես կը մտածէի, թէ անոնք ուղղակի կ'ուզէին՝ ես իմանայի, որ իրենք բարկացած են:

Միւսները, որոնց հանդէպ ես սխալած եմ, իմ քովս եկած են հաշտութեամբ: Ատորմէ՛ յետոյ ես շտապած եմ փոխել իմ վարմունքը եւ ներում խնդրած եմ՝ յաճախ նաեւ չծագելով, որ աւարտեն իրենց ըսելիքը:

Երբեք ինչ որ մէկը եկած է քովդ ու ըսած է. «Ես պարզապէս կ'ուզեմ իմանաս, որ ես կը ներեմ քեզի ոչ թէ որպէս աւելի լաւ ընկեր ու ոչ ալ ինչ որ բանի համար»:

Իսկ յետոյ դուն անոր հայեացքէն հասկցած ես. «Դուն ինձի ներողութիւն պարտք ես»:

Դուն շփոթած կը կանգնիս. անոնք չէին եկած քեզի հետ հաշտուելու, այլ վախցնելու եւ վերահսկելու քեզ:

Մենք պէտք չէ երթանք մեզ վիրաւորող եղբօր քով այնքան ժամանակ, քանի տակաւին չենք որոշած մեր սրտի մէջ ներել անոր՝ նշանակութիւն չտալով, թէ ինչպիսին պիտի ըլլայ անոր արծագանգը: Մենք պէտք է ազատինք անոր նկատմամբ ունեցած թշնամութեան զգացումէն մինչեւ անոր մօտենալը: Եթէ մենք ատիկա չենք ըներ, կը պարտուինք յատկապէս այս բացասական զգացումէն եւ ոչ թէ կը բուժենք, այլ կը վնասենք զինք:

Ի՞նչ տեղի կ'ունենայ, երբ մեր շարժառիթը ճիշդ է, եւ մենք կը փորձենք հաշտուիլ անոր հետ, որ մեղանչած է մեր դէմ, բայց ան չի լսեր:

«Բայց եթէ չլսէ, վե՛ր առ մէկ կամ երկու ուրիշն ալ քեզի հետ, որովհետեւ երկու կամ երեք վկայի բերանով ամէն բան կը հաստատուի: Բայց եթէ անոնց ալ չլսէ, ըսէ՛ եկեղեցիին, ապա եթէ եկեղեցին ալ չլսէ, թող ըլլայ քեզի համար ինչպէս հեթանոս եւ մաքսաւոր»:

– Մատթ. 18.16,17

Այս զգացումներէն իւրաքանչիւրն ալ ունի նոյն նպատակը՝ հաշտութիւն: Ըստ էութեան Յիսուսը կ'ըսէր. «Շարունակ փորձէ՛ք»: Ուշադրութիւն դարձո՛ւր, թէ վիրաւորողը ինչպէս կը ներգրաւուի իւրաքանչիւր քայլին մէջ: Որքան յաճախ մենք կը վերցնենք մարդոց վիրաւորանքները, փոխանակ երթանք անոր քով, որ մեղանչած է մեր դէմ, եւ վարուինք այնպէս, ինչպէս Յիսուսը կ'ըսէ: Պատճառը այն է, որ մեր սրտերու մէջ մենք չենք լուծած վիրաւորանքի հարցերը: Մենք մեզ արդարացած կը զգանք՝ կատարուածը մարդոց ներկայացնելով մեր տեսանկիւնէն: Մեր շարժառիթը կ'ամրապնդէ եւ կը հանգստացնէ մեզ, երբ ուրիշներն ալ կը համաձայնին, թէ որքան վատ վարուած են մեզի հետ: Այսպիսի վարքագիծի մէջ կայ միայն եսասիրութիւն:

## ԱՄԵՆԱԿԱՐԵԻՐԸ

Եթէ Աստուծոյ սէրը դառնայ մեր մշտական շարժառիթը, մենք չենք ձախողիր: Երբ մենք ուրիշները կը սիրենք այն սիրով, որուն միջոցով Յիսուսը սիրեց մեզ, ազատ կ'ըլլանք, եթէ նոյնիսկ տուեալ անձը չի ցանկար հաշտուիլ մեզի հետ: Ուշադիր եղիր Սուրբ գիրքի հետեւեալ խօսքին: Աստուծոյ իմաստութիւնը բոլոր իրավիճակներու մէջ ալ հասանելի է:

«Եթէ կարելի է, որքան ձեզմէ կախուած է, բոլոր մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք»:

– Հռովմ. 12.18

Պօղոսը կ'ըսէ՝ եթէ հնարաւոր է, որովհետեւ պիտի ըլլան ժամանակներ, երբ ուրիշները չեն ցանկար խաղաղութեան մէջ ըլլալ մեզի հետ: Կարելի է նաեւ, որ ըլլան մարդիկ, որոնք հաշտուելու համար կը պահանջեն զիջիլ Տիրոջ հետ մեր փոխյարաբերութիւնը: Նման պարագային անկարելի է վերականգնել այդ փոխյարաբերութիւնը:

Ուշադրութիւն դարձո՛ւր, որ Աստուած կ'ըսէ՝ «...որքան ձեզմէ կախուած է»: Մենք պէտք է ամէն բան ընենք, որպէսզի կարենանք հաշտուիլ տուեալ անձի հետ այնքանով, որքանով հաւատարիմ ենք ճշմարտութեան: Յաճախ մենք փոխյարաբերութիւններու մէջ շատ շուտ կը յանձնուինք:

Ես երբեք չեմ մոռնար այն պահը, երբ ընկեր մը խորհուրդ տուաւ ինձի չհեռանալ շատ վիատեցնող իրավիճակէ մը: «Ճո՛ն, ես գիտեմ, որ դուն կրնաս սուրբգրային հիմքեր գտնել քու հեռու կանգնիլը հիմնաւորելու համար: Նախքան ատիկա ընելը վստահ ե՞ս, որ դուն ատոր համար պայքարած ես աղօթքի մէջ եւ ըրած ես այն ամէնը, ինչ որ կրնայիր ընել, որպէսզի Աստուծոյ խաղաղութիւնը գար այդ իրավիճակի մէջ»:

Յետոյ ան աւելցուց. «Դուն կ'ափսոսաս, եթէ օր մը ետ նայիս եւ հարցնես դուն քեզի, թէ արդեօ՞ք ամէն բան ըրիր այս փոխյարաբերութիւնը փրկելու համար: Աւելի լաւ է համոզուած ըլլալ, որ

դուն ուրիշ ոչ մէկ ելք ունիս եւ ըրիր ամէն ինչ առանց ճշմարտութիւնը զիջելու»:

Ես շատ շնորհակալ էի անոր խորհուրդի համար եւ այն ընդունեցի որպէս Աստուծոյ իմաստութիւն:

Յիշէ՛ Յիսուսի խօսքերը.

«Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, որ անոնք Աստուծոյ որդիներ կը կոչուին»:

– Մատթ. 5.9

Ան չըսաւ՝ երանի՛ խաղաղապահներուն: Խաղաղապահը կը խուսափի հակամարտութենէն եւ ամէն գնով կը պահպանէ խաղաղութիւնը՝ նոյնիսկ երթալով ճշմարտութիւնը զիջելու թիւքին: Բայց այդ խաղաղութիւնը իրական խաղաղութիւն չէ: Այն շօշափելի, մակերեսային խաղաղութիւն է, որ մնայուն չէ: Խաղաղութիւն ընողը կ'ընթանայ սիրոյ եւ հակամարտութեան մէջէն՝ բերելով ճշմարտութիւնը, որպէսզի վերջաւորութեան յարատեւ հաշտութիւնը: Ան չի պահպաներ արիեստական, մակերեսային փոխյարաբերութիւն: Անոր ցանկութիւնը անկեղծութիւնը, ճշմարտութիւնը եւ սէրն են: Խաղաղութիւն ընողը վիրաւորութիւնը չի ծածկեր քաղաքավարութեան ժպիտով: Ան խաղաղութիւն կը ստեղծէ համարձակ սիրով, որ չի կրնար ձախողիլ:

Աստուած այսպէս կը վարուի մարդ արարածի հետ: Ան չի կամենար, որ ոեւէ մէկը կորսուի: Բայց Աստուած ճշմարտութիւնը չի զիջիր փոխյարաբերութիւնը պահպանելու համար: Ան կը փնտռէ իրական հաւատարմութեամբ հաշտութիւն, ոչ թէ մակերեսային յարաբերութիւններ: Ասիկա կը զարգացնէ սիրոյ կապ մը, որ ոչ մէկ չար ուժ կրնայ կտրել: Ան Իր կեանքը դրած է մեզի համար: Մենք ալ պէտք է նոյն ձեւով վարուինք:

Յիշէ՛, որ ճշմարիտ սէրը երբեք չի գոռոզանար, չարը չի մտածեր: Այն իրենինը չի փնտռեր եւ դիւրութեամբ չի վիրաւորուիր (Ա. Կորնթ. 13.5):

Պողոս առաքեալը գրեց, որ այդ սէրը կը յաղթէ բոլոր տեսակի մեղքերուն:

«Եւ ասիկա աղօթք կ'ընեն, որ ձեր սէրն ալ անելի ու անելի հարստանայ գիտութիւնով եւ ամէն հասկացողութիւնով: Որ դուք լաւագոյնը ընտրէք, որ մաքուր ըլլաք եւ առանց գայթակղութեան (անգլերէնի մէջ՝ առանց վիրաւորանքի) Քրիստոսի օրուան մէջ, արդարութեան պտուղներով լեցուած՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով, Աստուծոյ փառքի եւ գովասանքի համար»:

– Փիլիպ. 1.9- 11

Աստուծոյ սէրը վիրաւորուածութեան թակարդի խայծէն ազատելու բանալին է: Ասիկա պէտք է ըլլայ առատ սէր, սէր մը, որ շարունակաբար կ'աճի եւ կ'ամրապնդուի մեր սրտերու մէջ:

Մեր հասարակութեան մէջ այսօր շատերը կողմնակից են մակերեսային սիրոյն, սիրոյ մը, որ կը խօսի, բայց չի գործեր: Այն սէրը, որ կը պահէ մեզ եւ թոյլ չի տար սայթաքիլ, անձնուրաց ձեւով կը դնէ իր կեանքը, նոյնիսկ թշնամիի համար: Երբ մենք ընթանանք այսպիսի սիրոյ մէջ, գայթակղելով չենք կլլեր սատանային խայծը:

# ԿԵՐՋԱԲԱՆ

## ԱՆՑՆԻԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

---

Քանի որ դուն կարդացիր այս գիրքը, Տիրոջ Հոգին, հնարաւոր է, որ քեզի յիշեցուց անցեալի կամ ներկայի այն փոխյարաբերութիւններու մասին, որոնց մէջ դուն ինչ որ բան մը կը պահես ուրիշներու դէմ: Ես զգացած եմ Տիրոջ հրահանգը՝ խնդրելու քեզմէ, որ ինծի հետ աղօթես ազատագրուելու աղօթք մը: Բայց մինչեւ աղօթելը խնդրէ՛ Սուրբ Հոգիէն, որ քեզի հետ քալէ քու անցեալի մէջէն՝ առջեւդ բերելով այն մարդիկը, որոնց դէմ դուն ինչ որ բան մը պահած ես: Հանգիստ կեցի՛ր Անոր առջեւ, երբ Ան ցոյց պիտի տայ, թէ որոնք են անոնք: Դուն պէտք չունիս ինչ որ բան մը փնտռել հոն, ուր ոչինչ կայ: Սուրբ Հոգին պարզորոշ դուրս կը հանէ զանոնք հոնկէ, որու մասին դուն չես ալ կասկածիր: Երբ Ան բացայայտէ, հնարաւոր է, դուն յիշես այն ցաւը, որ վերապրած ես: Մի՛ վախճար: Ան պիտի ըլլայ ճիշդ այն տեղը՝ քու կողքին, որպէսզի հանգստացնէ քեզ:

Երբ դուն ազատ արձակես այդ մարդիկը քու մեղադրանքներէն, անոնցմէ ամէն մէկը պատկերացուր անհատապէս: Ներէ՛ անոնցմէ իւրաքանչիւրին: Փակէ՛ այն պարտքը, որ անոնք ունին քեզի: Յետոյ աղօթէ՛ այս աղօթքը, բայց մի՛ սահմանափակուիր այս բառերով: Օգտագործէ՛ այս աղօթքը որպէս ուղեցոյց եւ առաջնորդուի՛ր Աստուծոյ Հոգիով: «Հա՛յր, Յիսուսի անունով ես կ'ընդունիմ, որ մեղանշած եմ Քու դէմ՝ չներելով անոնց, որոնք վիրաւորած են զիս: Ես կ'ապաշխարեմ եւ կը խնդրեմ Քու ներումը:

Ես նաեւ կ'ընդունիմ անոնց ներելու իմ անկարողութիւնը: Ուստի սրտանց կ'ընտրեմ ներելը: Ըսէ՛ անոնց անունները եւ ազա՛տ արձակէ ամէն մէկը անհատապէս: Այն ամէնուն վրայ, ինչ որ անոնք ըրած են իմ հանդէպ, ես կը հռչակեմ Յիսուսի արեան պաշտպանութիւնը: Անոնք այլեւս ոչ մէկ բան պարտք են ինծի: Ես կը ներեմ իմ դէմ գործած անոնց մեղքերը:

*Երկնայի՛ն Հայր, ինչպէս իմ Տէր Յիսուսը խնդրեց Քեզմէ, որ ներես անոնց, որոնք մեղք գործած էին Իր դէմ, այնպէս ալ ես կ'աղօթեմ, որ ներես անոնց, որոնք մեղք գործած են իմ դէմ: Ես կը խնդրեմ, որ Դուն օրհնես զանոնք եւ առաջնորդես Քեզի հետ ւաելի մտերիմ փոխյարաբերութեան մէջ: Ամէ՛ն»:*

Օրագրի մը մէջ գրի առ այն մարդոց անունները, որոնց դուն ազատ արձակած ես, եւ նշէ՛, որ այդ օրը դուն անոնց ներելու որոշում կայացուցիր:

Դուն պէտք է մարզուիս վիրաւորանքէն ազատ մնալու համար (Կրկին կարդա՛ տասներորդ գլուխը, եթէ չհասկցար այս յայտարարութիւնը): Որոշէ՛ աղօթել անոնց համար այնպէս, ինչպէս կ'աղօթէիր քեզի համար: Օրագիրը պիտի օգնէ քեզի յիշել: Եթէ յիշողութիւնները շարունակեն «ռմբակոծել» քու միտքը, քանդէ՛ ատոնք, ջախջախէ՛ Աստուծոյ Խօսքով եւ հռչակէ՛ ներելու քու որոշումը: Դուն խնդրած ես Աստուծոյ շնորհքը ներելու համար, եւ չներելը այնքան զօրաւոր չէ, որքան Անոր շնորհքը: Եղի՛ր համարձակ եւ պատերազմի՛ր հաւատքի բարի պատերազմը:

Երբ դուն համոզուած ըլլաս, որ քու սիրտը զօրաւոր է եւ հաս-



տատուած, գնա՛ անոնց քով: Յիշէ՛, որ դուն կ'երթաս հաշտութեան նպատակով՝ անո՛նց օգուտ բերելու համար եւ ոչ թէ քեզի (տե՛ս Մատթ. 18.15): Աստուծոյ աչքերու մէջ ասիկա է հաճելին:

«Եւ Անոր, որ կրնայ անարատ պահել ձեզ եւ անկեղծ կեցնել Իր փառքի առջեւ անբիծ ցնծութիւնով: Այն մէկ իմաստուն Աստուծոյ եւ մեր Փրկչին (Տէր Յիսուս Քրիստոսով) փառք եւ մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն (բոլոր դարերէն առաջ) հիմա եւ ամէն յաւիտեաններուն մէջ: Ամէ՛ն»:

– Յուդա 24,25



«Մեսէնճըր Ինթերնեշնլ» ծառայութեան նպատակն է՝ օգնել անհատներուն, ընտանիքներուն, եկեղեցիներուն եւ ազգերուն գիտակցելու եւ վերապրելու Աստուծոյ Խօսքի վերափոխող զօրութիւնը:

Շնորհիւ այս գիտակցման՝ պիտի փոխուին թէ՛ մարդիկ, թէ՛ ամբողջ բնակավայրեր, եւ հասարակութիւնը զործուն կերպով պիտի պայքարի այս աշխարհը կեղեքող անարդարութեան դէմ:



**CloudLibrary.org** կայքը առջանց հարթակ է, որ առիթ կու տայ ամբողջ աշխարհի մէջ գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն ստանալու անվճար թուայնացած ուսումնական նիւթեր՝ իրենց լեզուներով:

Այցելեցէ՛ք **CloudLibrary.org** կայքը եւ օգտուեցէ՛ք ճոն եւ Լիզա Պիվիներու շարք մը այլ նիւթերէն աւելի քան **100** լեզուներով:

Ելեկտրոնային գիրքեր, օտիոյ եւ վիտիոյ ուսուցումներ, օտիոյ գիրքեր, Աստուածաշունչեր...

Կ'ուզէ՞ք անելի՞ն: Տեսաձեղէ՞ք պատկերակը.

[CloudLibrary.org](http://CloudLibrary.org)



# ԱՍՏՈՒԱ՛ՐԸ, Ո՞ՒՐ ԵՍ



Թերեւս անցեալին Աստուած կը խօսեր ձեզի հետ, բայց այժմ Ան կը լռէ: Թերեւս անցեալին դուք առաջ կը շարժէիք հաւատքի մեջ, բայց այժմ չէք գտներ Անոր ներկայութիւնը: Բարի գալո՛ւստ անապատ՝ այն վայրը, որ Աստուծմէ խոստում ստանալու եւ ատիկա իրականացնելու միջեւ է:

Այնուամենայնիւ, բարի լուր մը կայ. անապատը պարզապէս ամայի եւ աննպատակ վայր մը չէ: Աստուած կ'օգտագործէ անապատը, որպէսզի պատրաստէ եւ սպառազինէ ձեզ ձեր կոչման համար, այն պարագային, եթէ դուք ճիշդ անցնիք այն: Հակառակ ընդունուած կարծիքին, դուք չէք անցնիր ձեր կեանքի այս փուլը՝ պարզապէս սպասելով Աստուծոյ: Դուք պետք է կատարէք ձեր բաժին աշխատանքը, որպէսզի անցնիք այն, եւ ձեր աշխատանքը շատ մեծ է: Եթէ դուք չէք ցանկար ժամանակ վատնել՝ շարունակ նոյն տեղը մնալով, կարելոր է գիտնալ, թէ ինչ է անապատը:

Այս բացայտումներով լեցուն գիրքին մեջ հանրաճանաչ հեղինակ ճոն Պիվիրը կը սորվեցնէ ձեզի՝ օգտագործելով կարելոր Աստուածաշնչեան յայտնութիւններ եւ խորհմաստ պատմութիւններ, որոնք կ'օգնեն անցնիլ ձեր կեանքի ամայի եւ դժուարին փուլերը եւ ստանալ այն ամենը, ինչ որ Աստուած պատրաստած է ձեզի համար:

Յաւելեալ ուսումնական նիւթեր բազմաթիւ  
լեզուներով հասանելի են հետեւեալ կայքին մէջ.

CloudLibrary.org

# ԱԶԱՏԻԼ ԹՇՆԱՄԻ ՄԱՅՈՒԹՅՈՒ ԹԱԿԱՐԴԵՆ

«Սատանայի խայծը» գիրքը կը բացայայտե ամենախաբուսիկ թակարդներէն մէկը, որ սատանան կ'օգտագործէ հաւատացեալները Աստուծոյ կամքէն դուրս հանելու համար: Ատիկա վիրաւորաւծութեան թակարդն է: Շատ մարդիկ, որոնք ինկած են սատանայի այս ծուղակը, Նոյնիսկ չեն ալ գիտակցիր ատիկա: Խաբուած մի մար: Դուն կը բախիս վիրաւորանքին, եւ քեզմէ կախուած է, թէ այն ինչպէս կ'ազդէ Աստուծոյ հետ ունեցած քու փոխյարաբերութեան վրայ: Քու արծագանկը կը վճռէ քու ապագան: Եթէ ճիշդ ձեռով դուրս ելլես վիրաւորաւծութեան թակարդէն, դուն պիտի դառնաս անելի զօրաւոր եւ դառնացած պիտի չմնաս: Այս գիրքին մէջ ընդգրկուած են փոխուած այն մարդոց վկայութիւնները, որոնք կարողացած են այս գիրքը, որ ունի քննարկման համար առանձնայատուկ հարցումներ, սուրբգրային խօսքեր ու աղօթքներ:

## Դուն պիտի գտնես այնպիսի հարցումներու պատասխաններ, ինչպիսիք են՝

- Ինչո՞ւ գիս կը ստիպեն պատմել պատմութեան «իմ տեսակիւնը»:
- Ինչպէ՞ս կրնամ ես պայթարիլ կասկածանքի եւ անվստահութեան մտքերու դէմ:
- Ինչպէ՞ս տրբէն վստահիմ անոնց, որոնք խոր վիրաւորանք հասցուցած են ինծի:

Այս գիրքը պիտի օգնէ քեզի ազատիլ թշնամիի «վիրաւորանքի թակարդէն» այնպէս, որ պիտի զօրացնէ քեզ վիրաւորաւծութենէն ազատ մնալու համար, ընդունակ պիտի դարձնէ Աստուծոյ հետ անխոչընդոտ փոխյարաբերութիւն ունենալու:



**Ճոն Պիվիրը** ամենաշատ վաճառք ունեցող գիրքերու հեղինակ է եւ քրիստոնէական համագումարներու հանրաճանաչ քարոզիչ: Ան եւ իր կինը՝ Լիզան, որ Նոյնպէս գիրքերու հեղինակ է, 1990-ին հիմնադրած են Ճոն Պիվիրի ծառայութիւնը, որ աճած ու դարձած է միջազգային ծառայութիւն: Այն կ'ընդգրկէ Նաեւ անոնց ամենշաբաթեայ հեռուստահաղորդումը՝ «The Messenger»: Հաղորդումը կը հեռարձակուի 214 երկիրներու մէջ: Ճոն Պիվիրը բազմաթիւ գիրքերու հեղինակ է՝ «Կտրել երկչոտութիւնը», «Տիրոջ Երկիւղը», «Ծածկոցի տակ» եւ այլն: Ան եւ Լիզան կ'ապրին Քոլորատո Նահանգը իրենց չորս որդիներուն հետ:

Անվճար Ներբեռնումներու եւ տեսակիւթեր դիտելու համար այցելեցէ՛ք [CloudLibrary.org](http://CloudLibrary.org) կայքը:



Cloud Library



Կը ցտանկաց անելի՞ն:  
Տեսանկէք բնութեանդ:



**MESSENGER**  
INTERNATIONAL  
[MessengerInternational.org](http://MessengerInternational.org)

Այս գիրքը տուէր է հեղինակէն  
եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ

